Ուրկէ հայրերն մեր քրմապետ,
Կը կորզէին գաղտնիքին հետ
Մայր Բընութեան, ե՛ւ հրաշագան
Մեծ գաղտնիքը Քու գոյութեան,

Զոր դարեր հին, ամբարիշտ,
 Զըսին մեզի ճիշտ ու ճիշտ՝
 Թէ ի՞նչ էիր. անհուն խորհո՞ւրդ՝
 Կամ առեղծուած մը, անյագուրդ

Մեր մտքերուն ու մտածման
 Առջեւ կանգնած՝ փա՛կ մեծ խորան,
 Որուն օր մը, պիտ' տայիր մեզ
 Բանալ ծածկոյթն ու տեսնել Քեզ
 Ծառերուն տակ այս Դպրատան
 Աղօթական՝ լո՛ւռ վանական

.....
 * * *

Այս ծառերը քըրմական
 Երգ ըլլան թէ շարական,
 Քեզմով առ Քեզ կարկառած
 Բազուկներ են, ո՛վ Աստուած,

Ամէն առտու, լուսաբացին,
 Ու իրկունն ալ, երբ կը յածին
 Ստուերները մութ գիշերուան
 Անոնց թառին, թուփին վըրան:

ՀՄԱՅԵԱԿ ԳՐԱՆԵԱՆ

(Երուսաղէմ, 1909, Ապրիլ 25,
 Ժառանգատրացի պարտէզին մէջ)

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ (Նուիրուած Գարեգին Ա Յովսէփեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին)

Բացուեր է բիբն իմաստուն,
 Վերբերելու գանձն անհուն՝
 Մագաղաթին երակէն
 Եւ սիրտերէն քարերուն:

Աւերներէն մեր մըռայլ,
 Կեանքի աղբիւր դուն անմահ,
 Զայնիդ հըլու՝ արթընցան
 Հազար գըրիչ ու իշխան:

Սիրտըդ եղաւ բաց սեղան,
 Մեռելներուն, ողջերուն,
 Հաղորդուելու խորհուրդէն
 Յաւերժական հայութեան:

Բացուեր է բիբն իմաստուն,
 Մագաղաթին, քարերուն,
 Զանոնք բոլոր անգամ մ'ալ,
 Փռչներէն, դամբանէն,
 Յաւերժութեան տարիր դուն:

ԵՂԻՎԱՐԴ

1947



ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ARMENIAN CHURCH HYMNS

St. Nersess Shnorhali the Graceful (1103-1173),
 Armenian Church Hymnbook, 1936, Jerusalem

Catholicos Nesess IV the Graceful

Looking through the Armenian Church Hymnbook Jerusalem edition of 1936, we mostly encounter the most talented the 12th century Catholicos of Armenia St. Nersess IV Klayetsi, known as Shnorhali (the Graceful), for his spiritual, theological, devotional hymns and prayers of all times. His Encyclicals, on the other hand, comprise a large collection of directives on theological, ecumenical, and disciplinary addresses published as “*Endhanrakan Toughtk*” (Universal Letters).

The Armenian Church *Hymnbook* is enriched immensely by St. Nersess including over 20 lengthy spiritual hymns written with their respective original music, authored and “signed” by him. In most of his hymns his name’s initials appear, and on others the 36 letters of the Armenian alphabet is chosen to begin each stanza. St. Nersess has also eloquently enriched the Armenian Church *Breviary*, the Book of Daily Services, with devotional personal prayers for each hour of the day.

Overall St. Nersess has displayed the Gospel accounts in a unique panoramic style and poetry “on the stage” as it were. The **Creation of the World** and the **Last Week of Jesus’ tragic days** in their minute details, his **Resurrection** and their implications are expressed by way of poetry and music as classified below in five units according to their contents.

1. The Creation of the World and the Resurrection of Christ spread over the seven days of the week.
2. The Last Days of Jesus’ Life on earth, his entry into Jerusalem, the washing of the disciples’ feet, the Last Supper, the betrayal, and the crucifixion.
3. The Sunrise Service and the Services of Peace and Rest.
4. The Battle of Vartanants in 451 AD, Armenia being the first nation to defend Christianity among all nations.
5. Hymns for those fallen asleep, and prayers for the rest of their souls.

UNIT ONE

The Creation of Seven Days of the Week

For **Sunday** St. Nersess wrote a hymn beginning with his names’ six initials for each stanza. It starts with “*Norasdeghdzyl*”, meaning “*From the beginning the Word created anew the heavens and the earth.*” The first two stanzas are for the creation of the world, and the rest for the Resurrection of Christ. For the six weekdays the hymn “*Ararchagan panin hraman*” (*By the Creative Word’s Ordination*) is distributed daily by St. Nersess as follows.

For **Monday**, six verses after the first six letters of the Armenian alphabet, and subse-

quently the following sets of six verses each according to the entire 36 letters. The first six verses are dedicated to the second day of the Creation when God separated the waters from the land and created the Seraphim and the Cherubim, the Archangels and the heavenly Hosts, through which our supplications and prayers are addressed to God.

Tuesday's six stanzas are dedicated to the third day of the Creation and to John the Baptist. They sing praises for the plantation and for Noah who saved men and animals from the flood. They also praise *“the greatest among women”*, Mary the Mother-of-God. Further, *“Christ the ineffable Light and the Holy Spirit”* are invoked together as unified deity, to whom men address their prayers and blessings. St. John the Baptist is invoked once again, who *“even from his mother's womb worshipped God and became the Forerunner (Garabed) and cleansed us from our sins.”*

Wednesday's six stanzas addressed to the fourth day of the Creation are dedicated to the Annunciation of St. Mary, at which time *“the hidden mystery was revealed”* by the Birth of Jesus. St. Nersess calls St. Mary *“the bride offered from the earth to heaven,”* whose intercession is beseeched before her Son Jesus Christ. She is given a special place and called *“the most holy”* who through our supplications shall *“extinguish the fire in the furnace and shall erase our sins by her tears.”* This part of the hymn is concluded with the Gospel episode whereby *“Christ shall save us from the sea of our sins with Peter who was pulled out of the water”* and saved from the waves of the Lake of Galilee.

Thursday's hymn is dedicated to the fifth day of the Creation and is addressed to the Apostles of Christ. The same day, as said in the Book of Genesis, God created life on earth, the animals in the waters and in the air, and later saved the Old Israel from the calamities of the sea and the clouds, and was *“baptized”*. Likewise the Apostles were *“called”* from the Sea of Galilee where they were catching fish. Those fishermen were also *“baptized”* and soon founded churches on behalf of the Son and the Creative Word of God, turning those churches into *“New Zion.”*

The six succeeding stanzas for **Friday** are dedicated to the sixth day of the Creation and to the crucifixion of Christ. On that sixth day God created man, Adam, in His image as the completion of His good deeds, giving him his wife Eve his helper, so that they may enjoy life in paradise. Eve was misled by the treacherous serpent and in turn she deceived Adam, and both were expelled from paradise and the earth was cursed. Nevertheless, says St. Nersess the Graceful, the Father of glories expunged the sins of men by sending His Son, the Lamb of God, who went to the cross for the sake of mankind, saying, *“He elevated us into heaven by the cross, and on the cross he killed the sin and expunged the verdict of death.”*

Saturday's six stanzas are dedicated to the seventh day of the Creation when God rested, calling it *“the day of rest”*. Following the ordinance of the Creator, says St. Nersess, the grace of the Sabbath made us *“to rest with God”*. Remembering those dead in Christ, he further beseeches that Christ may judge them with mercy, and us the living with justice. There is in the hymn the unfailing completion between the dead in Christ and those living in Christ.

UNIT TWO

The Last Days of Jesus' Life

“Aysor Anjarr Lousouyn”

Saint Nersess the Graceful has written this remarkable 36-verse hymn *“Aysor Anjarr lousouyn dzagoumn”* (Today is the rising of the ineffable light) dedicated to the last week of Our

Lord's life on earth. It begins with the first and ends with the last letters of the alphabet, divided into six parts, six stanzas each. The hymn depicts the sad moments of Jesus' last days, step by step, after entering Jerusalem for the last time, cleansing the Temple from the merchants, washing his disciples' feet, eating the Last Supper, and heading to his cross after being betrayed. The Gospel narratives are faithfully introduced and put on a sacred stage with heartfelt melancholic music touching the faithful. They are sung most affectionately during the midnight service on Holy Thursday.

During the mid-night service on Good Friday, the Armenian Church has placed those six groups of the hymns in between the corresponding lengthy readings of the Gospels alternately where related events are recorded. It has been 900 years since St. Nersess has offered his talented hymns, including this one, to strengthen faith among the faithful which in turn have made them vehicles of worship in their daily lives. Singing the "*Aysor anjarr*" hymn we clearly get in touch with the Lord's sufferings and crucifixion. It is important to bear in mind that the hymns are only sung in the classical Armenian. To sing them in the vernacular or in any other language means not to sing them in the first place. The language and the music are intertwined and harmonized reciprocally, and to sing them otherwise is simply abusing the hymns.

"Norokogh Tiezerats" (Who renewed the Universe)

This hymn by St. Nersess comprises 15 stanzas with the author's initials "*Nersessi eh bans ays*" (*Nersess has written these words*). It is written exclusively for Good Friday, where Jesus' "*voluntary crucifixion*" is emphasized. His betrayal and arrest, the sufferings and His death on the cross are included in a different tone, words, and feelings, all together a complete unit geared toward the salvation of mankind in terms of "renewal".

UNIT THREE

Saints Vartanank "Norahrash Psakavor"

"Nersessi Erg" (Song by Nersess)

Saints Vartanank, headed by General Vartan Mamikonian defended Armenian Christianity as a state religion in 451 AD, the first among all nations to do so. St. Nersess Shnorhali wrote his outstanding religious-national hymn "*Norahrash Psakavor*" (*Miraculously Crowned*), addressing to General Vatan Mamikonian and to his commanders individually. It is composed of 10 stanzas according to his name's initials, dedicated to the 1036 warriors who fell during the Battle of Avarair against Persia which enforced Zoroastrianism, the fire worship, against Christianity which had its roots in Armenia since 301 AD. In each stanza the author recalls and praises the commanders of the troops by name invoking their virtuous dedication to Armenia and Christianity with most sensitive words, expressions, and poetry as follows. He also gave the music to this most popular hymn.

Norahrash is the first stanza dedicated to *Vartan the brave martyr*, the hero of the battle.

Yergnavor, the second, to *Knoren the councillor*.

Renakan, the third, to *Artak the brave*.

Srbabayl, the fourth, to *Hmayak dedicated to God the Father*.

Eyakan, the fifth, to *Tajat the incredible*.

Estatsyal, the sixth, to *Vahan the elegant*.

Ee hod anoush, the seventh, to *Arsen the desirable*.

Yerkokumbk harazadok, the eighth, to *Karekin the frontrunner*.

Ramkakan, the ninth, to *1036 martyrs*.

Gohutyamp, the tenth, to *the Armenian Church*.

As shown above the hymn begins with General Vartan Mamikonian and ends with the Mother Church of Armenia. St. Nersess Shnorhali ties together the Nation and the Church closely for which Vartanank fought the battle and never submitted to the fire worship. Among the names of the commanders *Nerseh Kamsarakan* is missing. His name is included by our two contemporary historians Yeghishe and Lazar Parbetsi as one of the commanders-in-chief on the battlefield.

Hymn of Sts. Ghevondyank

“Vor harrachagouyn” (Who from the beginning)

This hymn with six stanzas is dedicated to the Ghvondyan Priests, seven of them, headed by **Catholicos Hovsep Haghotsmetsi** and **Ghvond the Priest**, who took part in the battle of Av-arair. Surviving the war, three years later in 454, all seven were summoned to Ctesiphon, capital of Persia, and martyred. The other five were Priests Moushegh, Arshen, Samuel, and Deacons Kachach and Abraham. In the second stanza the martyred Catholicos Hovsep and Priest Ghevond are praised as those “*who enlightened the brave and valiant soldiers*.”

“Anjarreli Bant Asdevadz” (Thou the Ineffable Word of God)

This hymn with ten alphabetical stanzas, intertwined in all 36 letters, St. Nersess dedicated to the group of seven martyred clergy mentioned above. St. Ghevond is singled out as “*the enlightener of all St. Ghevond vardapet*” who persuaded in his wisdom the volunteers who “*were martyred voluntarily*.” St. Nersess’ favorite metaphor is “*the fire of love*” that he often uses elsewhere. It is revealed here once again as “*the fire enflamed in the saints*,” through which the martyred priests encouraged each other to voluntarily offer their lives. In the same hymn, Catholicos Hovsep Haghotsmetsi is distinguished as “*the first who met his death ahead of the chosen disciples as the good martyred shepherd*.”

UNIT FOUR

The Sunrise, Peace and Rest Services

St. Nerses the Graceful wrote and sang the **Sunrise Service** entirely dedicating it to the LIGHT. It is a journey “to find the way”, and while walking, the Holy Trinity is called and the Three Persons are invoked, the Father, the Son, the Holy Spirit. On the way intercession of Saints, Martyrs, Volunteers, and Ascetics is asked through prayers and songs addressed to the celestial elements from the east to the west, from the north to the south originally geared to the sun and ultimately to the Son of God. The Sunrise Service shows the *WAY* to reach the *TRUTH* through the *LIGHT*.

As the Pontiff of the Armenian Church, St. Nersess was concerned about members of his flock who deviated from the orthodox faith and worshipped the sun, calling themselves “*sons of the sun*” (*arevortik*). In my opinion, he chose to address them in a way that appealed them, thus composing the Sunrise Service using their own words, east and west, north and south, sun and sunlight, in such a way that it enticed those misled to return gradually to the true Light of the True Son of God. I have come to this conclusion based on the concerned remarks St. Nersess has expressed referring to those *Arevortik* repeatedly in his collection of the Encyclicals in the volume mentioned earlier in this article. The Armenian Church sings the Sunrise Service (*Are-*

vakal) during Lent in the early morning to welcome the Light, Jesus Christ.

The Structure of the Service

The Service has four integral parts, the key word being constantly the “*imanali looys*” (the rational light), the inner spiritual light above and beyond the physical light. Comparatively with the sunshine that leads us to safety in the dark, the rational light Christ is needed for our spiritual journey as “*the Light of the World*.” The central hymn in this Service begins with the light, a word repeated 32 times, 17 times only in the opening song “*Light, creator of light, the first light*.” The word “dark” never appears in the entire service. At first the sun is introduced as the creation of God, and next the physical light is acknowledged that shines equally on the righteous and the sinner, whereby our good or evil deeds are revealed.

The four parts of this Service listed below are the integral sections enriched with songs, biddings, and prayers. Biblical readings are all from the Book of Psalms exclusively. No other citations are quoted, a peculiar choice assuring the *personal* nature of the service.

a) The first part has a universal nature, inviting “*all nations from the East to the West, from the North to the South*” to bless the Creator of the world.

b) The second part is intercessional recalling the hermits, the martyrs, and the witnesses to intercede before God through the Son of God and the Holy Spirit.

c) In the third part the Light reappears as the true expression of the three Persons of the Holy Trinity. The attributes of the Light is specified as *justice, wisdom, mercy, and peace*.

d) The last section of the Sunrise Service represents its conclusion with the proclamation of the *Way*, Christ himself, identified also as the *Truth and the Life*.

Peace Service

“Nersessi Erg” (Song by Nersess)

This hymn contains ten stanzas after the numbers of his initials as spelled above. It is a popular hymn known as “*Nayats sirov*” (*Watch us with love*), the core of which is again the life of Jesus as the “*Light of the world*” as seen in the Gospels. The Light is dominant “as the rational radiant” and the “fire of love” that will cleanse the thoughts of our hearts, and instead will shine the light of knowledge in them. The next hymn, “*Ee ken haytsemk*” (*We beseech Thee*) addressed to the Holy Trinity, to the **Father of comfort**, and the **Son** who alleviates us to carry voluntarily the sweet burden as our cross, and finally St. Nersess wishes that the man-loving **Holy Spirit** renews us, asking at the same time mercy on the departed souls.

Rest Service

“Havadov khosdovanim” (In faith I confess)

This prayer is of 24 stanzas for each hour of the day by St. Nersess for exclusively personal use, written in the first person singular. First he recalls the Holy Trinity to bestow upon us their respective divine gifts. The next six are specified for the remission of our sins through self-examination asking the fear of the provident Lord. The believer’s eyes, mouth, ears, heart, hands and feet are asked to perform according to God’s commandments. “*Have mercy on Thy creatures and upon me a manifold sinner*” is the supplication repeated with trust in Christ at the end of each of the 24 verses.

The last three verses are addressed to the Just Judge, to the all-merciful Lord, and to the Glorified Lord. As a conclusion in all of them the intercession of the saints is asked, headed by St. Mary the Mother of God, followed by St. John the Baptist, St. Gregory the Illuminator, the Apostles, the Prophets, and the Patriarchs.

UNIT FIVE

Hymns for the Departed

“Asdvadz Anegh” (Uncreated God)

This hymn is identified as “*Erg Nnchetselots*” (*Hymn for the Asleep*) with three stanzas dedicated to those who are resting in Christ. The first verse begins with “*Uncreated God*”, and ends with the invitation of “*Priests and people*” to sing together for the deceased. The Holy Trinity dominates in this song, God the Father as “*merciful and patient*”, the Son as “*Lord and Savior*,” and the Holy Spirit as “*spring of goodness*.” All three are called repeatedly beseeching “*mercy for the souls who are resting in Christ*.”

The hymn is composed of four groups from the 36 stanzas as a chain, each four being sung according to the two church music tunes, 8 traditionally established tunes independently governing a given hymn. St. Nersess calls the departed as “*servants resigned from the world, whose loved ones pray that Christ accompany them and make them rest in the Father’s dwellings*.” Referring to Lazarus of Bethany’s resurrection from the grave it is said, “*You called Lazarus to come out, giving hope both to the departed and the living alike*.” As a conclusion the last stanza, “*In the upper Jerusalem where the just are gathered*” is very popular and the church sings it during the requiem services adorned with its equally sensitive music.

REVD. DR. ZAVEN ARZOUMANIAN



ԳՐԱԿԱՆ**ՏՈՆԻԿԱՇԷՆ**

(Երևակայական ճամբորդություն պատմության բաղիղներում՝
COVID-19-ի պայմաններում)

Մարդիկ ու քաղաքները զարմանալիօրէն հար ու նման են: Նրանք ծնւում, գոյատեւում ու մեռնում են: Ես գիտէի այդ քաղաքի՝ հայի հիմնած բնակավայրի, կեանքի ու մահուան պատմութիւնը, բայց նորին մեծութիւն ժամանակը եւ նրա արգասիք Covid-19-ը ստիպեցին ուսումնասիրել նաեւ ծնունդը: Իսկ դա գտնւում էր... միջնադարում:

Կար մի գրաբար ձեռագիր յիշատակարան, որը գրել էին հայր ու որդի, եւ որի հետքը կորչում էր Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի պահոցներում, բայց պահպանուել էր ընդօրինակումը: Եւ հէնց դա ինձ համար դարձաւ սկզբնաղբիւր, որը կ'անւանեմ Տոնիկաշէնի յիշատակարան:

Ի՞նչ բան է միջնադարեան ձեռագիրը, ովքե՞ր են հեղինակները: Գրչագիրները՝ հեղինակները եւ ընդօրինակողները, կրթւածութեան տարբեր մակարդակ ունեցող մարդիկ էին, հիմնականում՝ հոգեւորականներ, որոնք շարագրում էին իրենց աչքի տեսածը, երբեմն էլ՝ լսածը: Միեւնոյն պատմական անցքի վերաբերեալ գոյութիւն ունեն զանազան վկայութիւններ, երբեմն՝ հակասական, անստոյգ եւ նոյնիսկ իրարամերժ, այդ իսկ պատճառով իմ սկզբնաղբիւրը ստիպուած էի համագրել այլ ձեռագրերի, այլ յիշատակարանների հետ եւ յանգել տրամաբանական եզրակացութեան:

Տոնիկաշէնի յիշատակարանն սկսում է 1399 թուականից, հեղինակը սեբաստացի դպիր Գրիգորն է: Երբ նա վախճանւում է 1440 թ., գործը շարունակում է որդին՝ Բրուսայում քահանայ ձեռնադրուած Գրիգորը եւ աւարտում 1466 թ., որովհետեւ «նախ պաշտօնս ծանր է եւ բ. ծերացայ իցէ ոչ եւս կարեմ շրջիլ աստ եւ անդ»:

Սկսենք մեր պատումը:

1399 թ. Սեբաստիան մտնում էր բզկտուած Բիւզանդական կայսրութեան Բուլթանիայի իշխանապետութեան մէջ, որի Բրուսա քաղաքում գտնւում էր սուլթան Բայազիտի նստավայրը, իսկ նրա որդի էրթօղլուլը (ըստ բիւզանդացիների՝ Օտոպուլը) Սեբաստիայի կուսակալն էր: Եւ ահա համաշխարհային պատմութեան ամենայայտնի կաղը՝ Լենկ Թեմուրը, իր դեղնամաշկ, շեղաչ ու լայնաճակատ զաւթիչ բանակով Վրաց աշխարհից անցնում է Փոքր Ասիա: Գրիգոր Դպիրը նրան անուանում է «անգութ ճիւղն եւ անհաւատն Լէնտէմիր», «արբանեակն սատանայի», որը Ապրիլի 10-ին «եկն պաշարեաց զգուարճալի քաղաքն մեր Սեբաստիա»:

Այն, ինչ կատարուեց Սեբաստիայի հետ, Գրիգոր Դպիրը հպանցիկ նշում է ողբի տեսքով, այնինչ այլոց յիշատակարաններում փաստուած են աներեւակայելի անողորմութեան սարսափելի տեսարաններ:

Սեբաստիան համարւում էր Փոքր Ասիայի ամենաանառիկ քաղաքներից մէկը: Երեք կողմից պատուած էր ջրալից խրամով եւ միայն արեւմտեան կողմից էր հնարաւոր յարձակում, ինչին եւ պատրաստ էր քաղաքի 12-հազարանոց կայազօրը, որի մէջ մտնում էին 4000 քաջարի հայ ասպետներ:

Լենկթիմուրի զօրապետ, Ակ-Քոչունլու ցեղից Քարա-Օսմանը կիրառեց ռազմական

հնարք, 8000 հոգի 15 օր շարունակ գաղտագողի փորեցին արեւմտեան կողմի պարիսպը, բայց այնպէս, որ չփլուի՝ փորուածքներում տեղադրելով կոճղեր ու գերաններ: Երբ ամէն ինչ պատրաստ էր, Լենկթիմուրը քաղաքին անձնատուր ու զէնընկեց լինելու վերջնագիր ներկայացրեց, խոստանալով մահմեդականներին կեանք շնորհել, իսկ հայ ասպետներին սրախողխող չանել: Մերժում ստանալով, Լենկթիմուրն ազդանշան տուեց այրել փորուածքների գերաններն ու կոճղերը, եւ մէկ հարուածով արեւմտեան կողմի պարիսպն ու աշտարակները փլուզուեցին:

«Արբանեակն սատանայի» կատարեց խոստումը՝ կեանք պարգեւեց մահմեդականներին, գլխատեց միայն կուսակալ էրթօղլուլին: Խոստումին հաւատարիմ մնաց նաեւ հայ ասպետների նկատմամբ. քանի որ խոստացել էր սրախողխող չանել, հրամայեց նրանց գլուխները կապել սրունքներին, անուի նման զառիթափից գլորել մեծ փոսի մէջ ու ողջ-ողջ թաղել:

Լինելով քրիստոնէութեան կատաղի թշնամի, Լենկթիմուրն աւերեց քաղաքի բոլոր եկեղեցիները, հայ կանանց կապել տուեց ձիերի ազիններին ու վազեցրեց, երիտասարդ տղաներին ու աղջիկներին ժողովեց դաշտավայրի մէջ եւ անխնայ կոտորեց, աղքատներին գերեվարեց, իսկ հարուստներին կտտանքների ենթարկեց, որպէսզի տիրանայ նրանց պահած գանձերին. արդիւնքում՝ 12 տոննայ ոսկէ, արծաթէ ու թանկարժէք իրեր ձեռք գցեց եւ ուղարկեց Սամարղանդ:

Ահա այսպիսին էր իրավիճակը, երբ 1400 թ. մայիսեան մի գիշեր խոշոր հողատէր ու մեծահարուստ Տոնիկը իր տուն հրաւիրեց 400 գերդաստանների աւագներին՝ միտք անելու: Ներկայ էին նաեւ անհօտ ու անեկեղեցի մնացած Տէր Կարապետը, Տէր Նշիկը, Տէր Գաբրիէլը եւ, ի հարկէ, Գրիգոր Դպիրը: Անտանելի գոյատեւումից ազատուելու համար որոշուեց թողնել ծննդավայր Սեբաստիան ու գաղթել արեւմուտք՝ Բուլթանիա, Սուլթան Պայազիտի տիրոջներ, եւ տրամաբանութիւնը պարզ էր՝ թշնամու թշնամին բարեկամ էր:

Թէ զաւթիչների դաժանութեան պայմաններում ինչպէս յաջողեցրին, Գրիգոր Դպիրը, ցաւօք, չի նշում, բայց ենթադրում եմ, որ խոշոր կաշառք են տուել ու կարողացել քաղաքից դուրս գալ:

Եւ այսպէս, 400 ընտանիքից բաղկացած քարաւանը՝ Ջոշ Տոնիկի ու քահանաների առաջնորդութեամբ, Մայիսին ճանապարհ ընկաւ: Սեբաստիանի ընտանիքները մըշտապէս աչքի են ընկել բազմածնութեամբ՝ 20-30 հոգանոց գերդաստանը համարւում էր միանգամայն բնական: Եթէ հաշուի առնենք, որ նրանց մի մասը զոհ էր գնացել Լենկթիմուրին, ապա քարաւանը բաղկացած էր առնուազն 1500-2000 հոգուց:

Երկու ամիս անց գաղթականները կանգ առան Սաքարիա եւ Սապոնճի գետերի արանքում, յունաց Սարիու Դոգանի աւանի մօտ: Սեբաստիայից մինչեւ այդտեղ ուղիղ գծով 580 կմ է, բայց չմոռանանք, որ խօսում ենք XIV դ. վերջին տարուայ՝ դարադարձի մասին: Քարաւանում կային ծերեր, կանայք, երեխաներ, որոնց հանգիստ էր պէտք: Եթէ նկատի ունենաք, որ շաբաթը 5 օր են շարժուել, օրական 15 կմ. ու կանգ են առել երկու ամիս անց, կը նշանակի կտրել-անցել են շուրջ 700 կիլոմէթր: Տեսնես ինչպէ՞ս են գրաստներով ու սայլերով անցել սարեր-ձորեր, ինչպէ՞ս են սնուել, ի՞նչ խոշընդոտներ են յաղթահարել...

Վայրը, ուր հասան, գետնարանքում գտնուող անմարդաբնակ, ապրելու համար ոչ պիտանի ճահճախուտ էր եւ պատկանում էր օսմանցի Ֆելզի էֆենտիին: Սա, առաջնորդուելով «Թշնամու թշնամին բարեկամ է» սկզբունքով, այդ վայրը նուիրեց գաղթականներին եւ դարձաւ նրանց հովանաւոր ու պաշտպան: Իսկ տարեցտարի, օրեցօր

իրենց Բիւզանդական կայսրութեան տարածքները կորցնող յոյները, որ ապրում էին անտառապատ բլրի վրայ եւ զբաղւում օճառագործութեամբ, ընդհակառակը՝ խէթ աչքով նայեցին հայերին, առաջնորդուելով «թշնամու բարեկամը թշնամի է» սկզբունքով եւ նրանց էլ համարելով զաւթիչներ:

Բայց դառնանք մեր գաղթականներին: Նրանք վրաններ խփեցին, անտառափայտով ու ծառերի ճիւղերով հիւղակներ սարքեցին եւ սկսեցին աստիճանաբար ճահիճները չորացնել ու տարածքը իւրացնել: Քահանաներն իրենց հետ բերել էին Սուրբ Կարապետի եւ Սուրբ Հռիփսիմէի մասունքները եւ առաջին բանը, որ արեցին, կառուցեցին փայտաշէն մատուռ եւ անուանեցին Սբ. Նշան: Իսկ քանի որ գաղթականների առաջնորդը Զոշ Տոնիկն էր, բնակավայրն անուանուեց Տոնիկաշէն կամ Տոնիկապատ:

Թէ ինչպիսի դժուարութիւններ, չարչարանքներ, զրկանքներ կրեցին գաղթականները, Գրիգոր Դպիրը լռում է: Բայց խօսում է այն մասին, թէ ինչպէս 1404 թ. Սաքարիա գետը ափերից ելաւ, տեղի ունեցաւ հեղեղում, որն աւերեց Տոնիկաշէնի հիւղակները, իսկ ոմանք ջրախեղդ եղան: Պատմում է նաեւ այն մասին, թէ ինչպէս 1416 թ. գոռոզամիտ, անհեռատես ու մոլեռանդ յոյները հեռացան՝ այրելով իրենց աւանն ու անտառապատ լեռը:

Գաղթականները Տոնիկաշէնն ու շրջակայքը վերածեցին բերքառատ տարածքի: Դա պատճառ դարձաւ, որ ոչ միայն հայերի նոր գաղթախմբեր գան Մարաշից, Ակնից, Աւստրո-Հունգարիայից, Պարսկաստանից, այլեւ չէրքեզներ ու վրացիներ, եւ XVI դ. Տոնիկաշէնի դաշտավայրում արդէն կար 125 գիւղ:

Ըստ Տոնիկաշէնի յիշատակարանը շարունակող Տէր Գրիգորի, երբ 1453 թ. սուլթան Մահմէտը գրաւում է Կոստանդնուպոլիսը, երկու տարի անց հրաման է արձակում քանդել վրաններն ու հիւղակները եւ կառուցել փայտէ ու քարէ տներ: Դրա նպատակը գաղթականներին տեղում պահելն էր, նստակեաց դարձնելը: Տոնիկաշէնցիները ենթարկուեցին ու կառուցեցին 600 տուն:

Սկսուեց քրիստոնեաների հալածանքը թուրքերի կողմից. հայերին ու յոյներին արգելուեց ձի կամ էջ հեծնել, կարող էին միայն ջորի նստել, այն էլ՝ շեղակի: 1462 թ. յոյներին արգելուեց մայրենի լեզուով խօսել, իսկ տոնիկաշէնցիները պահպանեցին հայերէնը՝ շնորհիւ Ֆելզի էֆենտու բարեհաճութեան:

Շուրջ 12 հազար բնակչութիւն ունեցող Տոնիկաշէնը շրջակայ գիւղերի համար վերածուեց բերքավաճառութեան շուկայի: Ամէն Երկուշաբթի այստեղ կազմակերպւում էին տոնավաճառներ, եւ թուրքերը 1661 թ. քաղաքը վերանուանեցին Ատապազար, ատա՝ թարգմանաբար կղզի, որովհետեւ գտնւում էր երկու գետի միջակայքում, եւ պազար՝ շուկայ:

Վերելում արդէն ասել եմ, որ Տոնիկաշէնի յիշատակարանն աւարտւում է 1466 թ., դրանից յետոյ՝ աւելի քան չորս դար, Ատապազարի վերածուած Տոնիկաշէնի մասին պատմական աղբիւրները լուռ են: Բայց փաստ է՝ թուրքերը ձեռք գցեցին մի բնակավայր, որ հիմնել, շէնացրել էին հայերը, եւ որի հետ իրենք որեւէ առնչութիւն չէին ունեցել:

* * *

Ես ինքս իմ առաջ երդուել եմ, որ ոտք չեմ դնի Թուրքիա: Որովհետեւ դա ոսոխերկիր է: Որովհետեւ եթէ Ատրպէյճանը թշնամի է հոշակել Հայաստանի Հանրապետութեանը, ապա Թուրքիան՝ ողջ հայ ազգին, ժխտելով իր գործած ցեղասպանութիւնը,

Հանրապետութեան սահմանը փակ պահելով, դիւանագիտական յարաբերութիւններ չհաստատելով ու պայքար մղելով Սփիւռքի դէմ:

Հայաստանի ճամբորդական գրասենեակները, որոնք տուրիստական խմբեր են կազմում ու տանում Արեւմտեան Հայաստան՝ Վան, Մուշ, Սասուն, Տիգրանակերտ, յուշ են վաճառում, պատմական յուշի բիզնես են անում: Բայց չեմ հասկանում այն հայրենակիցներին, որոնք մեկնում են այդ խմբերով: Իբր՝ ի՞նչ: Կարօտա՞խտ փարատել: Ինչպէ՞ս կարելի է կարօտ տածել մի վայրի հանդէպ, որտեղ չես ծնուել ու երբեւէ չես ապրել: Ստորացուելու զգացում չե՞ն ապրում թանգարանի վերածուած Ախթամարի Սուրբ Խաչ եկեղեցու պատերին տեսնելով սպիտակ կիսալուսնով եւ աստղով թուրքական կարմիր դրօշները: Եւ դեռ դրա համար վճարում են՝ ի նպաստ Թուրքիայի պետական գանձարանի:

Այո, երդուել եմ, որ ոտք չեմ դնի Թուրքիա ու երդումս խախտած չեմ լինի Covid-19-ի ժամանակ երեւակայական ճամբորդութիւն կատարելով: Ես ուզում եմ Ատապազարը տեսնել ու դրա համար նախապատրաստուել եմ:

Նախ, ունկերիս խոռոչների մէջ մտցրել եմ երկու փոքրիկ ռետինէ խցաններ՝ ականջափակեր, որովհետեւ չեմ կարող, ի վիճակի չեմ լսելու թուրքերէն գէթ մէկ բառ: Թուրքերէնն ինձ համար, առաջին հերթին, ցեղասպանների՝ գլխատողների, անդամահատողների, առեւանգիչների, բռնաբարողների, ողջ-ողջ այրողների, մանուկներին կամրջից նետողների լեզու է, եւ ես չեմ ուզում այն լսել:

Հագնուած եմ տուրիստի պէս ու ձեռքիս պլանշետ է, որտեղ կան մի քարտէզ ու բազմաթիւ հին լուսանկարներ:

Յայտնում եմ Կոստանդնուպոլսի Հայտարփաշա կայարանում, որտեղից գնացք պիտի նստեմ: Ամենուր, ամէն քայլափոխի Թուրքիայի դրօշներն են: Ոչ մի ձայն չեմ լսում, բայց թուրքերը յանկարծ քարանուծ-կանգնում են. երեւի մուեզդինը Այա Սոֆիայից ազան է կանչում:

Երանի՜ ընչացքներս էլ փակ լինէին ու չզգայի քարափին բախուող Մարմարայի թոյլ ալիքների գաղջը: Այդ հեղձուկն ինձ յիշեցնում է 1915-ի Ապրիլի 11-ը, երբ Պոլսոյ հայաբնակ տներից գիշերով հաւաքեցին, «ծաղկաքաղ» արեցին շուրջ 250 մտաւորականների, հոգեւորականների, յեղափոխականների, պետական ծառայողների, վաճառականների ու միանգամայն պատահական մարդկանց եւ ասկյարների հսկողութեամբ բերեցին այստեղ՝ գնացքով Չանկրի աքսորելու:

Մօտենում եմ տոմսարկղին եւ խնդրում Ատապազարի տոմս տալ: Խօսում եմ ռուսերէն (այստեղ մեծ մասը ռուսերէն հասկանում է), չեմ լսում տոմսավաճառ թրքուհին ինչ է ասում, բայց ափումս յայտնում է տոմսակը:

Այստեղից օրական 10 շարժակազմ է գնում Ատապազար: Տարածութիւնը 125 կմ է, եւ 1 ժամ 38 րոպէ անց տեղ եմ հասնելու:

Պլացկարտ վագոնը մարդաշատ չէ՝ մի քանի թուրքեր, որոնք ակնապիշ նայում են տուրիստին: Վագոնի բոլոր լուսամուտների ապակիներին թուրքական թափանցիկ դրօշն է՝ աստղն ու կիսալուսինը:

Երբ գնացքը շարժում է, նայում եմ պատուհանից դուրս ու կրկին մտաբերում 1915-ի Ապրիլը: Նրանց գնացքը ուրիշ էր: Վագոնի դռները փակ էին, պատուհանները՝ անթափանց, եւ հսկում էին սուրհուրդները:

Ահա դէմ դիմաց ու կողք կողքի նստած են Կոմիտաս ու Գրիգորիս վարդապետնե-

րը, «Սապահ» թերթի խմբագրապետ Տիրան Քէլէկեանն ու բժիշկ Վահրամ Թորգոմեանը: Տոքթորն անասելի տխուր է, գլուխը կախ, արցունքոտ աչքերով տրտնջում է, որ այլեւս չի տեսնի ընտանիքի անդամներին: Կոմիտասն անընդհատ քաջալերում է ընկճեալին, եւ դա նրա՝ հոգեւորականի պարտականութիւնն է, որ կատարում է:

Ես գիտեմ աքսորականներից գրեթէ իւրաքանչիւրի գործն ու ճակատագիրը, բայց գիտեիրքը բաւարար չէ, ես անկարող եմ վերապրել բնագդարձակ թուրքի պատճառած սարսափներն ու այն յուսալքութիւնը, որ նրանք զգացին իրենց մաշկի վրայ:

...Գնացքն անցնում է չքնաղ Իզմիթն ու Պարտիզակը եւ կանգ առնում Ատապազարում: Այս նոյն երկաթուղագծով կարելի է հասնել Էսկիշէհիր, ապա՝ Թուրքիայի մայրաքաղաք՝ Անգարա, այդտեղից անյայտ ճանապարհները կը տանեն Զանկրի եւ Այաշ, որտեղ անբուժելի հոգեկան խանգարմունք ունեցաւ Կոմիտաս վարդապետն ու սրախողխող եղան բազմաթիւ բանաստեղծներ, արձակագիրներ, բժիշկներ, հասարակական գործիչներ, պետական պաշտօնեաներ եւ պատահական մարդիկ: (Այդպիսին էր մէկը, որի անուն-ազգանունը համընկել էր յեղափոխական գործչի, ու սխալմամբ ձերբակալուել էր: Արդէն Այաշի բանտում պարզուեց, որ հիւանդոտ աչքերով ու հնամաշ շորերով այդ մարդը շնասպան է: Պոլսի փողոցներում ազատօրէն թրեւ եկող շներին բռնում-սատկացնում էր, պոչերը կտրում, որպէս ապացոյց ներկայացնում թաղապետարան եւ ամէն պոչի համար ստանում 60 փարայ: Օրական՝ 5-10 շուն, եւ դա էր մարդու արհեստը: Բանաստեղծ Սիամանթօ, «Ազատամարտի» խմբագրապետ, գրող Ռուբէն Զարդարեան, բժիշկ Նազարէթ Տաղաւարեան, հասարակական գործիչներ, երեսփոխաններ եւ... շնասպան: Դա այնքան վիրաւորական էր, որ բժիշկ Նազգաշեանը նրա անունից հեռագիր ուղարկեց Թալէաթին, եւ մի քանի օր անց շնահաւաքն ազատ արձակուեց): Բոլորի դժբախտութեան պատճառը մէկն էր՝ նրանք հայ էին:

Իջնում եմ կառամատոյց ու նայում շուրջս: Ապա հանում եմ պլանշետս ու թերթում կայարանի հին լուսանկարները:

Առաջին շոգեկառքը Պոլսից 4-5 ժամում այստեղ հասաւ 1897-ին, իսկ կայարանը գտնւում էր քաղաքից մօտ 5 կմ. հեռաւորութեան վրայ:

Երկաթուղու գործարկումը յեղափոխական նշանակութիւն ունեցաւ Ատապազարի համար, նոր առաջընթացի հիմք հանդիսացաւ: Հայութիւնը հնարաւորութիւն ստացաւ իր բերքն ու բարիքը, զանազան ապրանքները վաճառքի տանելու ոչ միայն Պոլիս, այլեւ հասցնելու Նիկոմիդիայի ծովեզերք. քաղաքը հարստացաւ:

Բայց այս կայարանն ինձ համար վերջի սկզբի խորհրդանիշն է: Երբ 1915 թ. Յուլիսի 18-ին սկսուեց հայութեան տեղահանութիւնը, նրանց՝ աւելի քան 20 հազար հոգու, բերեցին այստեղ, երեք օրուայ ընթացքում՝ ունեզրկելուց, թալանելուց յետոյ, անասունների պէս լցրին ապրանքատար վագոններ, ու գնացքները տարան երկրի խորքերը: Երեք տարուայ ընթացքում 3/4-ը կոտորուեց, իսկ 1918-ին Տէր-Զօրից այս նոյն կայարան վերադարձաւ շուրջ 4000 հոգի:

Կայարանից դուրս գալիս անմիջապէս տեսնում եմ Աթաթուրքի՝ դրօշներով զարդարուն եռահարկ թանգարանը: Այդպիսի թանգարաններ կան Թուրքիայի գրեթէ բոլոր քիչ թէ շատ կարեւոր քաղաքներում, ասես յիշեցում, թէ ում երկրում ես գտնւում: Ինձ այդ յիշեցումը պէտք չէ, ես գիտեմ, որ գտնւում եմ իմ ժողովրդի եւս մէկ դահճի երկրում: Որովհետեւ այն, ինչ չարուեց Թալէաթի օրօք, այո՛, խօսքը բուն քաղաքում կոտորածի մասին է, արեց Քէմալը:

1921 թ. անգլիացիները լքեցին Ատապազարը եւ քաղաքում տեղակայուած յունական զօրքին խորհուրդ տուեցին հեռանալ Իզմիթ: Զօրքի հետ քաղաքը թողեցին նա-

եւ ցեղասպանի վերապրած հայերը, բայց ոչ բոլորը, 600 հոգի որոշեցին մնալ ու յուլայ գնալ թուրքական նոր իշխանութեան հետ: Ինչպիսի՜ պարզամտութիւն... Նրանք հաւաքուեցին ազգապատկան բաղնիքի մօտ՝ պատրաստուելով ողջունելու քէմալականներին: Փրփրաբերան ասկյարները տեղնուտեղը իսկական սպանդ իրականացրին՝ զընդակահարեցին, սրախողխող արեցին 468 տղամարդու, կնոջ, տարեցի ու երեխայի: Ողջ մնաց 132 հոգի:

Ահա այդ ջարդի կազմակերպչի թանգարանն է աչքիս առաջ:

Ի՞նչ գիտեմ ես արդի Ատապազարի մասին: Սաքարիա մարզի կենտրոնն է, ունի շուրջ 400 հազար բնակիչ, մեքենաշինական-բանուորական քաղաք է, թողարկում է կոմբայն ու տրակտոր, ճապոնական «Տոյոտա» ատոմոբիլային արտադրութիւն ունի: Զարգացած են փայտամշակումն ու քիմիական արդիւնաբերութիւնը, շրջակայքի հանքերից ստացւում են երկաթ, ցինկ ու պղինձ, ամէն տարի հաւաքւում է պտուղ-բանջարեղենի առատ բերք: Կան նաեւ շաքարի գործարան, մետաքսի ու տեքստիլի ֆաբրիկաներ: Եթէ շարժուես Իզմիթի ուղղութեամբ, կը հանդիպես Սապանջա լճին, որի ափերին գտնւում են շքեղ հիւրանոցներ, ռեստորաններ, մեծահարուստ ստամբուլցիների առանձնատներ: Բայց այդ ամէնն ինձ չի հետաքրքրում:

Ատապազարի ծնունդ են երկու հոգի, որոնցով թուրքերը հպարտանում են: Մէկը «Բոսֆորի ցուլ» մականուամբ ֆուտպօլիստ Հաքան Շուքիրն է, որի հարսանիքը 1995 թ. ուղիղ եթերով հեռարձակւում էր թուրքական պետական հեռուստատեսութեամբ: Նա 2002-ին հաւաքականի կազմում նուաճեց աշխարհի առաջնութեան բրոնզէ մետալ, իսկ 2011-ին «Ազատութիւն եւ զարգացում» կուսակցութիւնից դարձաւ մեջլիսի անդամ: Միւսը Թուրքիայի պատմութեան մէջ ուժեղագոյն շախմատիստուհի Պեթուլ Ճեմրէ Եըլտըզն է՝ երկրի առաջին կին գրոսմայստերը եւ բազմակի չեմպիոնը:

Բայց նրանք էլ ինձ չեն հետաքրքրում, որովհետեւ ես կարող եմ հպարտանալ այլ աղաբազարցիներով, զոր օրինակ՝ «Պոլիս եւ իր դերը» քառահատոր աշխատութեան հեղինակ, պատմաբան ու գրող Յակոբ Սիրունիով, արձակագիրներ Շաւարշ Նարդունիով ու Վարդան Եղիշէեանով, ֆրանսիական Դիմադրութեան շարժման անդամ, Օսմենցիմի եւ Բուխենվալդի համակենտրոնացման ճամբարներից վերապրած Միհրան Մալիեանով, Փարիզի հանրայայտ «Ֆեբիւս» լուսանկարչատան հիմնադիր Յակոբ Սեմերջեանով, Ատիս-Ապեպայից Զիբուտի երկաթուղի կառուցած Սուրէն Զաքրեանով: Եւ ուրիշներով, կարող եմ այս շարքը շարունակել, բայց հիմա դա նշանակութիւն չունի:

Թերթում եմ պլանշետը ու նայում քարտէզին: Դա այնքան էլ քարտէզ չէ, աւելի ճիշտ՝ ամենեւին քարտէզ չէ, դա ցեղասպանի վերապրած ոմն աղաբազարցու յիշողութեամբ վերարտադրուած, ձեռքով գծուած յատակագիծ է, որով էլ առաջնորդուելու եմ:

Քանի որ երկաթգիծը ժամանակին անցնում էր քաղաքի կողքով, բնականաբար, ըստ տրամաբանութեան, ես պիտի քայլեմ դէպի կենտրոն, այնտեղ, ուր ապրում էին հայերը:

Թուրքերը զարմանքով ինձ են նայում, որովհետեւ զբօսաշրջիկի համար քաղաքը ոչ մի տեսարժան վայր չունի, բացառութեամբ 553 թ. Յուստինիանոսի կառուցած 429 մ երկարութեամբ ու հնգակամար կամրջի, որը թուրքերն անուանում են Բեշքյոփրու:

Ես քայլում եմ փողոցներով ու նայում շէնքերին. դրանք ճարտարապետական ոչ մի իւրայատկութիւն չունեն, հիմնականում իրար նման եռաշարկ ու քառաշարկ քառակուսի շինութիւններ են: Եւ դա էլ ունի իր բացատրութիւնը. ի սկզբանէ Զոշ Տոնիկն ու նրա գաղթականներն էին ճահիճները չորացրել, հետեւաբար հողային հիմքը այն-

քան փափուկ է, որ անհնար է բարձրադարձ շենքեր կառուցել: Հայերի տներն էլ էին առաւելագոյնը եռադարձ ու փայտաշէն, բայց ունէին մի առանձնայատկութիւն:

Յեղասպանութիւն վերապրած Նուարդ Փեսքինը այսպիսի քառատող ունի.

Այդպէ՛ս... կ'ապրի մէր սէրը յաւերժական յուշերով,
Գիւղին զմրուխտ ծոցին մէջ, ուր փարինե՛ր քովէ քով,
Հիւղակները մէր խարխուլ, բաղեղածածկ հրուանդան,
Ջոյգ մը անքիծ, անպսակ սէրերու պէս կը միմա՛ն...

«Հիւղակ» ու «բաղեղածածկ» բառերը պատահական չեն: Հայոց տները չափազանց ճաշակով զարդարուած էին ծաղկահիւսերով: Ատապազարի հայկական թաղամասերը իսկական ծաղկանոցների էին նման: Ամենայետին տնակի տիրոջից մինչեւ բարեկեցիկ քաղաքացին ծաղկի սիրահարներ էին: Պատուհանների առջեւ շարուած թաղարներից բացի, պատերն ի վեր խիտ առ խիտ մագլցում էին այծտերեւուկների (հանըմ-էլի) եւ յասմիկի լայն «գորգեր», որոնք իրենց բուրմունքով ու երփներանգութեամբ տօնական օրուայ հմայիչ տպաւորութիւն էին գործում: Յատկապէս աչքի էին զարնում մանարանատէրեր Պետրոս Մուրատեանի եւ Յովհաննէս Ճրկաեանի տները, որոնք Պոլսի առանձնատների նման բարձրագիր ու գեղեցիկ էին: Յաւելեմ նաեւ, որ քաղաքի բոլոր պետական ու մասնաւոր դիտարժան շենքերը կառուցել, իսկ փողոցներն ու խճուղիները սալադատակել էր ճարտարապետ Վարդերես Էֆենտին:

* * *

Ահա եւ քաղաքի կենտրոնական մասը: Թափառականի պէս թրեւ եմ գալիս եւ ինձ թւում է, թէ քայլում եմ հայոց գլխաւոր փողոցով կամ Զարիսի փողոցով:

Ատապազարի թագաւորը Աստուած էր, զուր չէ, որ հայերն իրենց քաղաքն անուանում էին «Աստուածարեալ» (իմա՝ Աստուծոյ ստեղծած):

Այն աստիճանի Քրիստոսապաշտ էին, որ ունէին չորս եկեղեցի եւ դրանց շուրջ էլ ապրում էին. Ս. Հրեշտակապետը՝ Մալաշըլար թաղում, Ս. Կարապետը՝ Նեմշելեր (կամ Նեմցելեր՝ «նեմեց» բառից, ինչը վկայում էր, որ այդտեղի բնակիչների նախնիները ներգաղթել էին Աւստրո-Հունգարիայից), Ս. Լուսաւորիչը՝ Քուրթուլուշ եւ Ս. Ստեփանոսը՝ Գազելլեր թաղերում: Իւրաքանչիւր եկեղեցի ունէր առանձին-առանձին արական եւ իգական վարժարաններ. այսպէս, Ս. Հրեշտակապետը՝ Արամեան ու Գայիանեան, Ս. Կարապետը՝ Ներսէսեան ու Սանդիստեան, Ս. Լուսաւորիչը՝ Ռուբինեան ու Հռիփսիմեան, Ս. Ստեփանոսը՝ Մեսրոպեան ու Նունեան:

Եկեղեցի եւ վարժարան ունենալը պարզ բացատրութիւն ունէր. առաջինը՝ ինքնութիւնը, տեսակը, քրիստոնէական արժէքները պահպանելու, երկրորդը՝ մրցակցային առաւելութիւններ ձեռք բերելու լաւագոյն կոռուաններն էին: Այս վարժարանների աշակերտների ընդհանուր թիւը 3000 էր:

1909 թ. բացուեց տղաների Կենտրոնական երկրորդական վարժարանը, 1912-ին՝ աղջիկների դասընթացը: Գործում էին «Մանուշակ» մանկապարտէզ-նախակրթարանը, բողոքականների հայուհեաց իգական գիշերօթիկ վարժարանը, հայուհեաց աւետարանական «Աղանատուն» վարժարանը, Կրթասիրաց ընկերութիւնը, Ընթերցասիրաց միութիւնը՝ հարուստ գրադարան-ընթերցարանով: Համամտութեան համար ասեմ, որ թուրքերն ունէին մէկ մեդրեսէ՝ 30-40 աշակերտով:

Պլանշետիս մէջ փնտռում եմ եկեղեցիների լուսանկարներ եւ գտնում ընդամենը

Ս. Հրեշտակապետի հազիւ նշմարելի զանգակատունը եւ բողոքականների եկեղեցու կիսատ պատկերը:

Քաղաքի շրջակայքում կային հայաբնակ գիւղեր, որոնք նոյնպէս ունէին եկեղեցիներ ու վարժարաններ: Դիցուք, Սափանջայում, ուր բնակւում էին մետաքսագործութեամբ, գորգագործութեամբ եւ այլ արհեստներով զբաղուող շուրջ հազար հայեր, Ս. Աստուածածին եկեղեցին, կից ունէր Արամեան վարժարանը, Հայոց գիւղում՝ Էրմենիքյոյում, եւ Հովիւ գիւղում, գտնւում էին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Ս. Կարապետ եկեղեցիները, դրանց կից՝ Վահանեան վարժարանը: Զուբուրքյոյում էր Ս. Աստուածածին եկեղեցին, Գեղամ գիւղում՝ Ս. Յովհաննէս եկեղեցին եւ Յովհաննէս վարժարանը: Արամը-Քըզըլջըք գիւղն ունէր Ս. Ստեփանոս եկեղեցին եւ Արամեան դպրոցը, Ֆընդըքըլը՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին եւ Մեսրոպեան վարժարանը, Ֆերիզլին՝ Ս. Աստուածածին եկեղեցին եւ Ռուբինեան վարժարանը, Դամըքը՝ Ս. Ստեփանոս եկեղեցին եւ Ստեփանոսեան վարժարանը, Էլմալը գիւղը՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին ու Լուսաւորչեան վարժարանը, Քողուքփելիթը՝ Ս. Գեղամեան եկեղեցին եւ Գեղամեան վարժարանը, Բըշըքըլը՝ Ս. Զաքարեան եկեղեցին եւ Զաքարեան վարժարանը: Ընդհանուր առմամբ 1902-1912 թթ. Ատապազարում ու շրջակայ գիւղերում կային 18 եկեղեցի եւ 21 վարժարան:

Քայլում եմ ու հայեացքով եկեղեցի փնտռում. բնականաբար՝ ոչ մէկը գոյութիւն չունի, թուրքերը բոլորը քանդել-աւերել են:

Աւերել կամ բռնազաւթել են նաեւ դրանց կից դպրոցները, որոնք լաւագոյնն էին որպէս շինութիւն:

Զուր չէ, որ աշակերտներից մէկը այսպիսի պարզունակ տողեր գրեց.

Ա՛հ, խրէցին մէզ, դպրոց ջան,

Ծոցէդ ձեռքեր դաւաճան,

Ու մէր միտքը մնաց սևցանք,

Կարօտովդ մաշեցանք:

Ես նայում եմ ուսուցիչների, աշակերտների, մանկապարտէզների երեխաների քարացած, լուռ, բայց խօսուն դէմքերին: Բազմադարեայ գէնը հպւում է նեարդերիս, եւ ունկերիս մէջ լսում եմ նրանց ձայները: Նրանք պատմում են, որ իրենցից եւ ոչ ոք բնական մահով չի մահացել: Ոմանք գնդակահարուել են, ոմանք՝ տապարահարուել, Տէր-Զօրի ճանապարհին քաղցից ու ծարաւից անշնչացել, աղջիկները՝ բռնաբարուել կամ առեւանգուել, մանուկները՝ նետուել կամուրջներից կամ մահմեդականացուել: Զայնե՛ր, փակշուրթ ձայնե՛ր, գոցբերան հառաչանքնե՛ր, որոնք միայն մէկ բան են խնդրում՝ չմոռանալ իրենց...

Եկեղեցուց ու կրթութիւնից զատ, կար եւս մի գործօն, որը ինքնապաշտպանական բնոյթ ունէր. դա առեւտրային, արտադրա-տնտեսական գործունէութիւնն էր, եւ այդ ասպարէզում ադաբազարցի հայը գերիշխող դիրք էր գրաւում:

Քաղաքի կենտրոնում գտնւում էր լայնատարած շուկան: Հնում այն փայտաշէն էր եղել, բայց XIX դ. վերջին հրոյ ճարակ էր դարձել, եւ հայերը կառուցել էին նորը՝ քարից: Շուկան շրջապատուած էր թուրքական թաղամասերով, սակայն հիւսիսային ծայրից մինչեւ հիւսիս-արեւելք աղեղնաձեւ փռուած էին հայկական թաղամասերը: Շուկան շարունակւում էր Դարղըճի տակ կոշուող փողոցով, որի աջ ու ձախ կողմերում տեղաւորուած էին բուն շուկայում մահմեդականների կողմից արգելուած խանութները՝ ձկան, խոզի մսի, ծխախոտի, պտղի ու պարէնի վաճառանոցները, ինչպէս նաեւ գինե-

տունը: Այս փողոցի 100-120 խանութներից միայն մի քանիսն էին պատկանում յոյներին, մնացյալը՝ հայերին, եւ գէթ մէկ թուրք խանութպան չկար: Իսկ բուն շուկան մօտաւորապէս հետեւեալ պատկերն ունէր. 80 %-ը՝ հայ, 10 %-ը՝ թուրք, 5 %-ը՝ յոյն, 2 %-ը՝ հրեայ ու 3 %-ը՝ այլազգիներ: Անգամ շուկայի լեզուն էր հայերէն, եւ թուրքերից շատերը ստիպուած հայերէն էին սովորել:

Ատապազարը յատկապէս աչքի էր ընկնում շերամաբուծութեամբ ու ծխախոտի մշակութեամբ: Առաջինը տարեկան 3 մլն, իսկ երկրորդը 1 մլն ղուրուշի գումար էր բերում ժողովրդին, որովհետեւ 1879 թ. մետաքսի ութ մանարանները, որոնց մեծ մասը հայերին էր պատկանում, աշխատանք էին տրամադրում հարիրաւոր կանանց ու աղջիկներին: Մինչեւ 1915 թ. Ատապազարում մետաքսի մանարանները պատկանում էին հետեւեալ անձանց եւ ընկերութիւններին. Պետրոս Մուրատեան, Պողոս Մուրատեան, «Անդրանիկ Չարխեան եղբայրներ» ընկերութիւն, «Արթաքի Մետարեան-Արաբզադ» Սայիդ ընկ., «Յակոբ Տալլերեան-Համիդ պէյ ընկ.», «Սուրէն Գուլումճեան եղբայրներ» ընկերութիւն, «Մկրտիչ Զրկայեան ընկ.», «Շահինեան եղբայրներ», Անբարլեան, Կարապետ Թոփուզեան: Այսինքն, 11 մանարաններից 9-ը հայապատկան էին, 2-ը՝ հայ-թուրքական:

Շերամաբուծութիւնը, բնականաբար, յանգեցրեց մանուֆակտուրայի արտադրութեան, որը նոյնպէս ամբողջութեամբ հայերի ձեռքում էր: Նրանք էին Անդրանիկ Թարիկեանը, «Եղիաեան-Ֆեսլեան ընկ.», Սարգիս Զաղճեանը, Անդրանիկ Նազարէթեանը, Յակոբ Գարազալփականը, «Միսաք Կոճիկեան եւ որդիք» ընկերութիւնը, Կարապետ Գարազալփականը, «Մ. եւ Տ. Գամճեան եղբայրներ» ընկերութիւնը, Յովհաննէս Փանշուկեանը, Մաղաք Մաղաքեանը, Գեսաբեկեան եղբայրները եւ այլք:

Ատապազարը հիմնականում արտադրում էր ցորեն, քաթան, ծխախոտ, մետաքս, ատաղձ, սոխ, սխտոր, գետնախնձոր ու պտուղներ, անգամ... հաւկիթ: Գլխաւոր արտահանող վաճառականներն ու ֆիրմաներն էին «Յակոբ Տալլերեան եւ ընկ.», Թագաւոր Աշճեանը, «Արթաքի Միտարեան եւ ընկ.», «Ա. Ալիքսանեան եղբարք», Սրապեան եղբայրները, Մուստաֆա Դիարբեքիրլին, Յանկո Ակալիդիսը: Սրանցից բացի, կային մի շարք երկրորդական վաճառականներ, որոնք վերոյիշեալների վարկաւորմամբ կամ նրանց համար էին աշխատում: Օրինակ, քաթանը փոքրաքանակ գնող 6-7 առեւտրականները Իզմիտում այն 2,5-3,5 ղուրուշով վաճառում էին մեծաքանակ վաճառականներին, որոնք էլ իրենց հերթին արտահանում էին Եւրոպա, մասնաւորապէս՝ Մարսել, Լոնտոն ու Համբուրգ:

Յաւելէնք նաեւ, որ Ատապազարում միայն Օսմանեան կայսերական բանկն ունէր մասնաճիւղ, այնինչ միւս բոլոր վարկատուները հայեր էին: Հայապատկան հաստատութիւններ էին նաեւ տեղական այն երկու բանկերը, որոնք հիմնուել էին 1908-ի սահմանադրութիւնից յետոյ՝ երկու բաժնետիրական ընկերութիւնների կողմից:

Ուշագրաւ է նաեւ արհեստների բնագաւառում հայերի գերակայ դիրքը: Եթէ մըսագործները, հացթուխները, ոսկերիչները, կահագործները, հիւսները, որմնադիրները բացառապէս հայեր էին, եւ մասնաւորապէս կը յիշատակուի ճարտարապետ շինարար Հայկ Զինարեանը եւ իր երեք զաւակները՝ Զաքարը, Յարութիւնը եւ Օննիկը, նրանք բազմաթիւ շինութիւններ բարձրացուցած են հայոց գլխաւոր փողոցին վրայ, իսկ յոյները՝ աղիւսագործներ ու բրուտներ, ապա թուրքերը զբաղւում էին սարաջութեամբ՝ գրաստների կաշուէ պարագաների պատրաստմամբ ու լեբլեքիշութեամբ: Նըշանաւոր եղած են նաեւ կաշէգործութեան եւ կօշիկի արտադրութեան մէջ՝ Դաւիթեան՝ Խաշմանեան՝ Գալայճեան՝ Սարազեան ընտանիքները, իսկ Զգօն Զաւուշեան՝ Նուպար Շիրինեան՝ Վարդգէս Շահինեան՝ Ստեփան Անոյշեան ընտանիքները մանուֆակտու-

րայի արտագրությունն էլ առուծախի առեւտուրին մէջ:

Քաղաքի հայոց տնտեսական բարւոք վիճակը, յատկապէս 1908 թ. Օսմանեան սահմանադրութեան ընդունումից յետոյ, յանգեցրեց ազգային աներեւակայելի առաջընթացի: Ձեւաւորուեցին աւելի քան 50 կրթական, մշակութային, տնտեսական, մարզական, բարեսիրական ընկերութիւններ, թատերախմբեր, երգչախումբ: Հիւրախաղերով քանիցս Ատապազար ժամանեցին Աբելեանի, Արմենեանի ու Զարիֆեանի թատերախմբերը եւ ներկայացումներ տուեցին Հալիմ էֆենտու շերամանոցի շէնքում: 1910-ից լոյս էր տեսնում «Երկիր» թերթը, 1912-ից «Իւթանիա» շաբաթաթերթը՝ «Ատրուշան» տպարանում:

Ահա այսպէս, Աստուծոյ հովանու ներքոյ ընթանում էր աշխատասէր, կրթասէր, հիւրասէր ազաբազարցի հայի կեանքը, երբ վրայ հասաւ 1915-ը...

* * *

Դեռեւս պատերազմի նախօրեակին Թալէաթը Ատապազար էր ուղարկել Հէլիմ Պէյ անուամբ մի գազանի: 1915-ի Յունիսի կէսերին սա 300 երեւելի հայերին՝ երեք կուսակցութիւնների անդամների, մտաւորականների, ձեռնարկատէրերի, վաճառականների եւ արհեստավարների, հաւաքեց-լցրեց Ս. Կարապետ ու Ս. Հրեշտակապետ եկեղեցիները եւ ահաւոր ծեծուշարդի ենթարկելով՝ պահանջեց յանձնել հայութեան մօտ գտնուող գէնքը: Զէնքերը հաւաքելուց 4-5 օր անց պաշտօնապէս յայտարարուեց, որ քաղաքի բոլոր հայերը ժամանակաւորապէս տեղափոխուելու են մօտակայ գիւղերը եւ յետոյ նորից վերադառնալու են: Մեկնելու համար տրուած էր միայն երկու օր ժամանակ: Քաղաքի 4000 տուն հայութիւնը մի օրուայ մէջ տներից դուրս թափուեց, ովքեր ձիու, եզան կառքեր ունէին, ամենաանհրաժեշտ իրերն արդէն բարձած, ճանապարհ էին ընկել էսքիշեհիւրի ուղղութեամբ, իսկ մնացեալներն իրենց իրերը տեղափոխում էին կայարան՝ երկաթուղով գնալու համար: Ոմանք թանկարժէք զարդերն ու ոսկեղէնը թաղեցին հողի մէջ, միւսներն ունեցուածքի զգալի մասը յանձնեցին թուրքերին այն յոյսով, որ կը վերադառնան ու հետ կը ստանան:

Այն, ինչ կատարուեց յետագայում, գրել եմ սկզբում, Ատապազար «ժամանելիս», բայց լրացնեմ գրող ու հրապարակախօս Ենովք Արմէնի խօսքով. «Քսան հազար հոգի հաշուող հայ ազգաբնակչութիւնը ոտքի է: Մարդկային էակներու ծփուն ծով մը, որուն ալիքները բազմաձեւ գալարումներով կը թաւալին՝ ողբի հեծծիւններով, անէծքի մորմնաշիւններով, անզօր կատաղութեան յուսահատական մրմունջներով: Կիզիչ արեւը ծաղր կը ցանէ տարաբախտ արկածեալներու գլխուն: Սեւ ճակատագիրին հեռանկարէն զարհուրած, անոնք յաշտուած են արդէն մահուան՝ դէպի ուր կը քշուին: Գիտակցութիւնը ունին վաղուան արիւնոտ արհաւիրքներուն, որոնց անզոհը մղձաւանջի պէս կը տանջէ միտքերը, բայց որոնցմէ ազատագրուելու յոյսի աղօտ նշոյլը անգամ չեն տեսներ: Անորոշ, անգիտակից, աննպատակ տատանումի կոհակներու է վերածուած բովանդակ ժողովուրդը, տուներէն փողոցները թափած, համազանգուած բռնազաղթի բեկորներու թշուառութիւնով, ոչխարի հօտի բաժան-բաժան խումբերու պէս՝ որոնք հովիւ չունին, մեծամասնաբար կին ու տղայ, անխնամ տարազներով զգեստավոր, դեռ ճամբայ չելած աղքատ, քանի որ չեն գիտեր թէ ի՞նչ գոյք առնելու են եւ ի՞նչ թողելու են, ամէն ինչ լքելու դատապարտուած, կահ ու կարասի տուններէ դուրս հանուելով փողոցները փռուած՝ ծախուելու համար, մինչ գնորդ չկայ, անօթի, անսուղ, չոր հաց կրծելով, քանի որ խոհանոց չկայ, եւ հարկադրուած երեք օրուան մէջ կայարանը գրտնուելով կառախումբ մտնելու, կենդանիի երկյարկ վակոններու մէջ, նախիրի պէս խառնիխուռն, վրայ-վրայ, ընտանիքի անդամները իրարմէ խզուած, աճապարանքով,

հելիհել, վազնիվազ կայարան հասնելու համար, վաղը բոպիկ քալելով այն ճամբաները, որոնք հալածական աքսորուածները դէպի անշրդի անապատները կ'առաջնորդեն, որպէսզի հոն արեւէ խանձած, ծարաւէ պապակած, անօթութենէ հիւծած, յոգնութենէ կմախացած, իյնան մահուան մանգաղէն հնծուելով, եթէ մինչեւ հող, ճամբան հրաշքով ազատած են՝ կողոպուտի, թալանի կեղեքումներէն, կոտորածի համաշարդերէն, եաթաղաններով խողխողուող ողջակէզներու արիւնի գետերէն:

Քաղաքին մէջ կը տիրէ «վերջին դատաստան»-ի ցնորեցուցիչ տեսարաններուն ամենէն վայրագներուն մղձաւանջը»:

Այո, մարդիկ ու քաղաքները զարմանալիօրէն յար ու նման են՝ ծնւում, ապրում ու մեռնում են:

Հայն իր արդար քրտինքով հիմնեց Տոնիկաշէնը: Յետոյ թուրքն անունը դարձրեց Ատապազար, բայց հիմնադիր հայը մնաց: Այդ քաղաքի 520 տարուայ գոյութիւնից յետոյ թուրքը որոշեց... հային վերացնել ու քաղաքը պահել: Տեղահանեց, բնաջնջեց, բռնաքշեց, հայի ներկայութեան հետքն անգամ սրբեց:

Ատապազարը մեռեալների քաղաք է: Հայը, մարդը կայ, քաղաքը մեռած է:

ԽԱՉԱՏՈՒՐ ԴԱԴԱՅԵԱՆ

Հայոց տնտեսական մշակոյթի տեսաբան,
հրապարակախօս



ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ԴԱԽԻԹ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼԱԽԱՅ ՈՐԴՈՒ «ԿԱՆՈՆԱԿԱՆ ԱՐԷՆՍԴՐՈՒԹԵԱՆ» ԳՐԱԲԱՐԵԱՆ ԴԱՐՁՈՒԱԾՔՆԵՐԸ

XI-XII դարերի հայ մատենագրության նշանակալի եւ եզակի արժեքներից է Դա-
ւիթ վարդապետ Ալաւկայ Որդու կանոնագիրքը, որը հայ իրաւագիտութեան առաջին
աշխարհիկ օրէնսդրութիւնն է: Դաւիթ Ալաւկայ Որդու կենսագրութեան վերաբեր-
եալ տեղեկութիւնները սուղ են: Յայտնի է, որ ծնունդ է 1065 թուականին Մեծ Հայքի
Ուտիք նահանգի Գանձակ քաղաքում: Ստացել է հիմնարար կրթութիւն, հմտացել աստ-
ւածաբանութեան բնագաւառում, զբաղուել մանկավարժութեամբ: Նրան շնորհել են
վարդապետի աստիճան: Կիրակոս Գանձակեցին նրան անուանել է «սուրբ լուսաւորիչ»,
իսկ աւելի ուշ շրջանի մատենագիր Ազարիա վարդապետ Սասնեցին՝ «Կանոնատառս
սուրբ վարդապետ Դաւիթ»¹:

Դաւիթ Ալաւկայ Որդին իր կանոնագիրքը, որը կոչւում է «Կանոնական արէնս-
դրութիւն», շարադրել է 1130 թուականին՝ ի պատասխան Արքայութիւն անունը կրող
քահանայի հարցումների: Կանոնագիրքը անմիջապէս մտել է շրջանառութեան մէջ եւ
տարածուել հայ կեանքի բոլոր բնագաւառներում: Այդ իրողութիւնը հաւաստում են
նրա կրտսեր ժամանակակիցներ Վարդան Արեւելցին, Կիրակոս Գանձակեցին, Ստե-
փանոս Օրբելեանը, Մխիթար Այրիվանեցին եւ այլք²:

«Կանոնական արէնսդրութիւն»-ը բաղկացած է «Նախադրութիւն»-ից եւ 97 յօդ-
ւածներից: Հեղինակը դրանք շարադրել է վաղուց ի վեր գործածութեան մէջ գտնուող
սովորութային իրաւունքի նորմերի խստագոյն եւ մանրակրկիտ հաշուառմամբ: «Աւ-
րէնսդրութեան» սկզբնաղբիւր են եղել Աստուածաշունչը, մասնաւորապէս՝ Մովսէս
մարգարէին վերագրուող Հին Կտակարանի Հնգամատեանը, հայ կանոնական եւ սովո-
րութական իրաւունքը, եկեղեցու հայրերի համապատասխան երկասիրութիւններն ու
ժողովրդական աւանդութիւնները³:

Կանոնագիրքը բացառիկ ու արժէքաւոր վկայութիւններ է պարունակում ժամա-
նակի հայոց կենցաղի, վարքութեան, սովորոյթների, քրէական ու քաղաքացիական
իրաւունքի նորմերի ըմբռնումների մասին:

Կանոնագիրքը պարզ, հասկանալի եւ յաճախ մանրամասն բացատրութիւններով
անդրադարձել է ժամանակի անբարոյ բարքերին, դատապարտել հմայութիւններն ու
սնահաւատութիւնները, աղանդաւորականութիւնը, անառակութիւնը եւ կեղծ բարե-
պաշտութիւնը: Այսինքն՝ այս երկը ժամանակի լեզուամտածողութեան բացայայտման
յոյժ արժէքաւոր աղբիւր է, իսկ դարձուածքները լեզուամտածողութեան իւրայատկու-
թիւնների դասական վկայութիւններ են:

«Կանոնական արէնսդրութեան» դարձուածային միաւորները մենք քննել ենք

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 116:

² Մատենագիրք Հայոց, հատոր ԺԶ, Երեւան, 2012, էջ 675:

³ Սաֆարեան Գ. Հ., Դաւիթ Ալաւկայ Որդու իրաւա-փառական հայեացքները, Պատմա-բանասիրական հան-
դէս, 1988, № 4 , էջ 115:

նախ ըստ բաղադրիչների քանակի, ապա՝ ըստ գերադաս անդամի իմաստային բովանդակության: «Կանոնական արէքսպրոսիւթիւն»-ից դուրս ենք գրել մօտ 110 դարձուածք եւ դարձուածային արտայայտութիւն:

Դարձուածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերաիմաստաւորւած կապակցութիւն է, ուր բաղադրիչ բառերի ինքնուրոյնութիւնը ձեւական է, շարահիւսական կապը՝ մթազնած: Դարձուածքը իր իմաստա-քերականական առանձնայատկութիւններով ու տարբերակուած յատկանիշներով լեզուական առանձնայատուկ միաւոր է, իսկ դարձուածաբանութիւնը լեզուաբանութեան ինքնուրոյն համակարգ, գիտաճիւղ⁴: Որպէս լեզուական երեւոյթ, դարձուածք յատուկ է գրեթէ բոլոր լեզուներին, բայց իւրաքանչիւր լեզուում այն ունի իր առանձին, միայն տուեալ լեզուին յատուկ դրսեւորումն ու ձեւաւորումը, որի համար շատ կարեւոր նշանակութիւն ունեն ինչպէս արտա-լեզուաբանական, այնպէս էլ ազգա-լեզուաբանական գործօնները⁵: Դարձուածաբանութիւնը սերտօրէն կապուած է տրամաբանութեան, ազգա-հոգեբանութեան հետ, որովհետեւ դարձուածքի առաջացումը արդիւնք է փոփոխուած տարբեր ընկալումների:

Գրաբարեան դարձուածքներն ունեն մի շարք առանձնայատկութիւններ, որոնք հետեւանք են նոր հայերէնում՝ աշխարհաբարում, կատարուած փոփոխութիւնների, իսկ խորքային մակարդակում արտայայտում են հայութեան մտածողութեան մէջ կատարուած տեղաշարժեր:

Ըստ դարձուածային միաւորների (ԴՄ) բաղադրիչների քանակի՝ ընդունուած է տարբերակել նուազագոյնը երկանդամ կառուցներ, որովհետեւ դարձուածքը նախ եւ առաջ կայուն բառակապակցութիւն է՝ վերաիմաստաւորուած բաղադրիչներով, ապա եռանդամ, քառանդամ եւ աւելի՝ տուեալ լեզուում հնարաւոր շարահիւսական յարաբերութիւնների համապատասխան⁶:

Վերլուծելով «Կանոնական արէքսպրոսիւթիւն» երկի դարձուածքներն ըստ բաղադրիչների քանակի՝ պարզ է դառնում, որ այստեղ գերակշռում են երկանդամ եւ եռանդամ բայական կամ անուանական ԴՄ-ները: Բերենք բնութագրիչ օրինակներ՝ նշելով, որ նախդիրները համարել ենք ԴՄ-ների ինքնուրոյն բաղադրիչներ, որոնք ունեն եւ ձեւային, եւ բովանդակային տարբերակիչ դեր:

Երկանդամ անուանական դարձուածքներ՝ երկիւղ Աստուծոյ, ծնունդ փրկական, կառուցումն մտաց, մասունք բանի, կամացն Աստուծոյ (էջ 679)-երկնայինի հանդէպ վախ, Աստծոյ ծնունդ, խորհրդածութիւն, խօսքի մասեր, Աստծոյ կամքերը, մարմնաւոր կեանք (էջ 686)-աշխարհիկ կեանք, **սուրբ խորհուրդ** (էջ 689)-Աստծոյ կամք եւ այն: Նշենք, որ անուանական դարձուածքներն իրենց քանակով եւ կիրառութեամբ էապէս զիջում են բայական ԴՄ-ներին:

Երկանդամ բայական դարձուածքներ՝ անծնունդ մնալ, խելամուտ լինել, (էջ 679)-անպտուղ լինել, ողջախոհ լինել, **նշանակ տալ, յանձն առնել, սեղանն մատուցանել, յաղարկանել** (էջ 680)-ակնարկել, ստանձնել, սեղան գցել, իմաստ հաղորդել, **անհամութիւն համեմել, անփոյտ առնել, գիտութեամբ լինել** (էջ 681)-անիմաստը իմաստաւորել, անտեսել, իմաստնանալ, **պէտս առնուլ, սիրտն առնել** (էջ 683)-պիտանի դարձնել, ցան-

⁴ Հմմտ. **Բաղիկեան Խ.**, Ժամանակակից հայերէնի դարձուածային միաւորները, Երեւան, 1986, **Բաղիկեան Խ.** Դարձուածային ոճաբանութիւն, Երեւան, 2000:

⁵ **Բեղիբեան Պ. Ս.**, Ժամանակակից հայերէնի դարձուածաբանութիւն, Երեւան, 1973, էջ 216:

⁶ **Դիլբարեան Ն. Հ.**, Բարսէղ Կեսարացու «Գիրք Պահոցի» գրաբար թարգմանութեան դարձուածքների իմաստա-կառուցումային բնութագիրը, «Բանբեր Երեւանի համալսարանի. Բանասիրութիւն», 2020, № 1 (31), էջ 41-42:

կանալ, **հուպ լինել** (էջ 684)-հասու լինել, **մերձ հասուցանել** (էջ 685)-մօտեցնել, **կին առնուլ** (էջ 686)-ամուսնանալ, **տեսանել աչաք, խորհուրդս խառնել** (էջ 687)-աչքով տեսնել, խորհրդակցել, **առնել յանգէտս** (էջ 688)-յիմար ձեւանալ, **հաղորդ տալ** (էջ 689)-իրազեկել, **վերաբերութիւն առնուլ** (էջ 690)-վերաբերմունք ստանալ, **աղաթս առնել, շնորհուկս առնել** (694)-աղօթել, մեծարուել, **արտաքս ելանիցել** (էջ 696)-ծնուել, **մերձ կալ** (էջ 698)-մերձենալ, **դեպ լինել** (էջ 718)-պատահել եւ այլն:

Եռանդամ ԴՄ-ները հիմնականում բայական են, անուանական կառույցները խիստ սակաւ են: Դրանց հետաքրքիր օրինակները ներկայացնում ենք միասին:

Եռանդամ դարձուածքներ՝ ունել ի գիտութիւն (էջ 680)-հասու լինել, **ի բաց հանել, ընկենուլ ի սպաս, ի բաց ընկենուլ, քակել ի հիմանց** (էջ 681)-բացայայտել, ծառայութեան դնել, դէն նետել, **հիմնայատակ քանդել, ի բաց կտրել, ի ներքո կալնուլ** (էջ 682)-դէն նետել, բացայայտել, **ի չափ հասանել, ի պէտս բերել** (էջ 684)-չափահաս դառնալ, կառավարել, **ի բաց խորտակել, դիցեն ի պէտս** (էջ 685)-ջարդուիշուր անել, մտաւոր կարիքի համար կիրառել, **ի բաց կալ** (էջ 686)-հեռու մնալ, **ի բաց խտտել** (էջ 684)-մերժել, **ի ներքս մտանել, ի բաց կալ, ի բաց թողուլ** (էջ 690)-մուտք գործել, հեռացւել, թոյլատրել, **արկանել ի բերան** (էջ 692)-բերանը գցել, **գնալ ի գինըմպութիւն** (էջ 694)-հարբել, **անկանել ի քունն** (էջ 696)-քնել, **հաւանեցուցէ բանիւ, ի գիրկս առնուլ** (էջ 696)-խօսքով հաւանել, գրկել, **ի մարմնի հաղորդեսցի** (էջ 699)-մարմնից հաղորդուել, **այրն կին արասցել, զսողոմացոցն գործել** (էջ 700)-ամուսնուն կին բերել, խառնաշփոթ ստեղծել, **զպսակն ապականելոյ** (էջ 701)-դավաճանել եւ այլն:

Մեր քննած բնագրում վկայուած են նաեւ մի քանի քառանդամ դարձուածքներ՝ **հիմնականում զ եւ ի նախդիրների կիրառութեամբ ստեղծուած, ինչպէս՝ վերստին ածել իւղովն սրբութեան** (էջ 685)-մաքրագործել, **առնուլ ի պէտս խորհրդոյն** (էջ 685)-խորհուրդ հարցնել, **զշնութիւն զսողոմական** (էջ 686)-անբարոյականութիւն, **խորհուրդ բանին առաջի արկանել** (էջ 687)-խորհուրդ տալ, **ի միմեանց բերան ածել** (էջ 692)-իրար բերան գցել, **Աստուած ի սիրտն հայի** (էջ 695)-Աստուած սրտին է նայում:

«Կանոնական արէնսդրութիւն» երկում գտել ենք նաեւ գրաբարին բնորոշ դարձւածային բայական յարադրութիւն, որտեղ բայը եւ նրա լրացումը նոյնարմատ են՝ **երկնել երկ** (էջ 679)-հիանալի ստեղծագործութիւն ստեղծել: Բայց նշենք, որ նման կառույցի ԴՄ-ներ «Կանոնական արէնսդրութեան» մէջ այլեւս չեն հանդիպում, քանի որ երկի լեզուն խիստ տարբերում է դասական գրաբարից:

Արդի հայերէնի դարձուածքների վիճակագրական պատկերը նկարագրելիս Խ. Բաղիկեանը նշում է. «Ինչքան աւելանում է դարձուածի բաղադրիչների քանակը, այնքան պակասում է նման կառույցների թիւը»⁷:

Դրաբարի առումով գրեթէ համարժէք յարաբերակցութիւն ունենք նաեւ «Կանոնական արէնսդրութեան» ԴՄ-ների կառուցատիպերի նկարագրութեան ժամանակ:

Երկում թուով գերակշռում են եռանդամ դարձուածքները, բայց նրանց քանակը համադրելի է երկանդամ միաւորներին: Ընդ որում՝ երկանդամ դարձուածները հիմնականում կազմուած են **առնել, լինել, ունել** բայերով եւ անուն կամ մակբայ խօսքի մասերի միջոցով, որոնք արտայայտում են բայ-ստորոգեալ եւ խնդիր կամ պարագայ շարահիւսակաւ կապը: Անուանական դարձուածքների դէպքում որոշիչ-որոշեալ կամ յատկացուցիչ-յատկացեալ կապն փոխաբերական կապակցութիւններ ունենք: Եռանդամ դարձուածները հիմնականում կազմուած են **ի** նախդրից եւ գոյականների թեքւած ձեւերից:

⁷ Բաղիկեան Խ., Ժամանակակից հայերէնի դարձուածային միաւորները, Երևան, 1986, էջ 206:

Դաւիթ վարդապետ Ալաւկայ Որդու «Կանոնական արէնսդրութիւն» երկից առանձնացուած ԴՄ-ի իմաստաբանական դասակարգումը հետաքրքիր օրինաչափութիւններ է բացայայտում: Բնութագրենք ԴՄ-ները՝ ըստ իմաստային դաշտերի՝ հաշուի առնելով դրանց գերակայ բաղադրիչի իմաստային բովանդակութիւնը եւ արտայայտուող ընդհանուր նշանակութիւնը: Դատա-իրաւական այս հնագոյն փաստաթղթում գերակայում են հետեւեալ իմաստային դաշտերին պատկանող միաւորներից կազմուած կառուցները՝

1. Մարմնամասեր նշանակող բառերից ստեղծուած ԴՄ-ներ՝ տեսանել աչաւք (էջ 687), ականջաւք լսել (էջ 688), արկանել ի բերան (էջ 692), ի միմյանց բերան ածել (էջ 692), աքոյ տալ (էջ 694), ոտն ոչ շարժել (էջ 694), ի գիրկս առնուլ (էջ 696), արկանել զլեզուն ի բերան (էջ 699), ի մարմնի հաղորդեսցի (էջ 699) եւ այլն:

2. Ֆիզիքական գործողութիւններ արտայայտող բառերից կազմուած ԴՄ-ներ՝ դիրազիր առնել (էջ 679), սեղանն մատուցանել (էջ 679), յաղ արկանել (էջ 679), թոյլ տալ (էջ 680), ածել ի պէտս (էջ 683), ի բաց շրջել (էջ 683), պէտս առնուլ (էջ 683), հուպ լինել (էջ 684), արտաքոյ կալ (էջ 691), աշխատ առնել (էջ 694), այրն կին արասցել (էջ 700), անկար գոլ (էջ 708), այց առնել (էջ 720) եւ այլն:

3. Միտք, գիտելիք եւ խօսք նշանակող բառերից կազմուած ԴՄ-ներ՝ ի խորհուրդ ածել (էջ 679), ունել ի գիտութիւն (էջ 679), ընկալնուլ մտի (էջ 679) գիտութեամբ լինել (էջ 682), խորհուրդս խառնել (էջ 687), առնել յանգէտս (էջ 688), գիտութեամբ ուտել (էջ 704) եւ այլն:

4. Շարժում, տեղափոխութիւն, փոխադրում նշանակող բառերից ստեղծուած ԴՄ-ներ՝ ի բաց ընկենուլ (էջ 682), ի բաց հանել (էջ 683), ի բաց խտտորել (էջ 683), մերձ հասուցանել (էջ 685) եւ այլն:

5. Տուն, տեղ, բնակավայր նշանակող բառերից կազմուած ԴՄ-ներ՝ արտաքոյ կացուցանել (էջ 687), մտանել յաշխարհս եւ այլն:

Ընդհանրացնելով մեր վիճակագրական արդիւնքները՝ նշենք, որ ամենամեծ թիւն են կազմում մարմնամասերից եւ ֆիզիքական գործողութիւններ ու միտք, մտածողութիւն, խօսք արտայայտող բառերից բաղադրուած ԴՄ-ները:

Մեր քննած որոշ դարձուածքներ յաճախ տարբեր օրէնքներում կիրառուած են տարբեր նշանակութիւններով: Դարձուածքի բովանդակային պլանի փոփոխութիւնները, մեր կարծիքով, պայմանաւորուած են խօսքը աւելի տպաւորիչ, բազմանշանակ դարձնելու համար: «Կանոնական արէնսդրութեան» վկայուած դարձուածքների իմաստային հարստութիւնը ցոյց տալու համար բերենք բնագրային մի քանի հետաքրքիր օրինակներ.

ա) «Իսկ եթէ ոք գիտաց եւ անփոյթ արար աներկեղութեամբ, և աւր պահեսցէ ծծնդրաւ»:

«Ապա եթէ արհամարհէ եւ անփոյթ առնէ զայս, նզովի ի կեանս եւ ի մահ» (էջ 687)

«Ապա թէ գիտուն էր եւ ի ծուլութենէ կամ յոխ պահելոյ անփոյթ արար կամ արտաքոյ կամ ի պատարագին, զայսցանէ որ դրեցաւ, լուծցի ի կարգէ քահանայութեան» (էջ 693)

Անփոյթ առնուլ դարձուածքը մեր բերած հատուածներում արտայայտում է հետեւեալ երեք իմաստները՝ 1) անյարգալից վերաբերմունք ցուցաբերել, 2) անտեսել, 3) քամահրել,

բ) «Այլ թէ պղծեալ կերակրոց կամ յըմպելեաց ոք յանգէտս կերիցէ կամ ըմպիցէ, քահանայ ութ աւր արտաքոյ կայցէ ի սրբութենէ խորհրդոյ եւ ապա հաղորդեսցի»: (էջ 682)

«Այլ թէ երկուուրեայ նշխարաւ ոք մատուց յանգէտս, Գ շաբաթ արտաքոյ կացցէ նովին կարգաւն»: (էջ 688)

Առաջին նախադասութեան մէջ արտաքոյ կալ դարձուածն ունի «զրկուել» իմաստը, երկրորդում՝ «պատժուել» իմաստը: Սրանք երկուսն էլ ունեն բովանդակային փոխկապակցուածութիւն, բայց եւ միեւնոյն ժամանակ որոշակի տարանջատում, որն էլ երեւան է գալիս տարբեր համատեքստերում:

գ) «Այլ թէ ջրախառն մատուցանէ յանգէտս, մինչեւ ցբաշխումնն, ուր եւ գիտասցէ, ի բաց թողեալ եւ այլ մի մատուցէ»: (էջ 688)

«Իսկ եթէ սովորութեամբ արասցէ զայս, զժամն ամենեւին ի բաց թողցէ մինչեւ ապաշխարեալ զղշասցի»: (էջ 690)

Ի բաց թողուլ դարձուածքը մեր բերած հատուածներում արտայայտում է հետեւեալ երկու իմաստները՝ 1) ներել, 2) ազատել, թոյլատրել իմաստները:

դ) «Իսկ ի ցնեքս անկեալ փայտն այրեսցին եւ խեցին խորտակեսցի, իսկ երկաթեղէնք պղինձն, արծաթն, ոսկեղէնքն մի՛ խորտակեսցին, այլ ջեռցին միայն հրով եւ սուրբ են»: (էջ 681)

«Իսկ թէ գինի ունելով նաւն ի ցնեքս անկանի, գինին հեղցի եւ նաւքն քակտի եւ զքարինսն յայլ պէտս առցեն»: (էջ 683)

Առաջին նախադասութեան մէջ ի ցնեքս անկանել դարձուածքը ունի թափուել, ներս գցել իմաստները:

ե) «Եթէ ի լեսածն անկցի ցամաք, եթէ պակաս իցէ չափ լղեր չորից կամ հնգից, ամանաւն ի բաց հանցեն»: (էջ 681)

«Եթէ ի վերայ չոր բանջարի սատակի մուկն, թէ յովով է, զվերայն ի բաց հանեալ եւ այլն սուրբ է»: (էջ 682)

«Ապա թէ ի միս կամ ի պանիր կամ յիւղ ըմբռեալ իցեն, զըմբռնեալն կտրեսցեն եւ ի բաց հանցեն եւ զայլն լուսցեն եւ կերիցեն»: (էջ 684)

Ի բաց հանել դարձուածքը կարող է արտայայտել երեք 1) դուրս թողնել, 2) բացայայտել 3) նշել, արձանագրել իմաստները:

Ուսումնասիրութիւնը ցոյց տուեց նաեւ, որ «Կանոնական արէնսդրութեան» մէջ մեզ հանդիպած ԴՄ-ներից դարձուածաբանական բառարանում վկայուած է մի փոքր մասը:

ՎԱՐԴՈՒՇԻ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Երեւանի պետական համալսարանի Հայ բանասիրութեան ֆակուլտետի ուսանողուհի

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ**ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱԳՈՒ «ԳԻՐՔ ՊԱՀՈՅ» ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԵՐԿԻ
ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

Հայ Առաքելական եկեղեցու համաքրիստոնէական տօնելի սուրբ հայրերից («Երկոտասան վարդապետք»), ընդհանրական եկեղեցու նշանաւոր հայրապետներից երեւելի Բարսեղ Կեսարացին ծնունել է 329 թ. Կեսարիայում (Կապադովկիայ)՝ քրիստոնէական բարեպաշտութեամբ եւ առաքինութեամբ հռչակուած յոյն քրիստոնէայ մեծահարուստ եւ ազնուական ընտանիքում: Նա յայտնի է նաեւ Սուրբ Բարսեղ, Բարսեղ Մեծ անուններով. «Ընդհանուր եկեղեցու պատմութեան մէջ Բարսեղ Կեսարացին կոչուել է Մեծն Բարսեղ եւ երկրորդ Աթանաս»¹:

Ընդհանրական եկեղեցու եւ համաքրիստոնէական աստուածաբանական մտքի պատմութեան մէջ Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նիւսացին եւ Գրիգոր Նազիանզացին յայտնի են «Կապադովկեան հայրեր» կամ «Երեք մեծ կապադովկիացիներ» անունով. նրանց առաջնորդը Բարսեղ Կեսարացին էր:

Բարսեղ Կեսարացին թողել է հարուստ գրական ժառանգութիւն՝ մեկնութիւններ, դաւանաբանական, ծիսագիտական, կանոնադրական գործեր, ճառեր, ներբողներ, քարոզներ, զրոյցներ, նամակներ: Նրա ստեղծագործութիւնների մէջ իւրայատուկ տեղ ունեն աստուածաշնչեան մեկնութիւնները: Դրանցից առաւել յայտնի է ինը ճառից բաղկացած «Վեցօրեայք»-ը, որը, ըստ Ծննդոց գրքի (1.1-26) Արարչագործութեան վեց օրերի աստուածաբանական, փիլիսոփայական, բնագիտական մեկնութիւնն է:

Հայագէտների տեսակէտներն ու կարծիքները Կեսարացու ստեղծագործութեան թարգմանութեան մասին ի մի է բերել հայագէտ Կ. Մուրադեանը: Նա փորձել է պարզել, թէ ինչպիսի «Գրչագիր վկայութիւններ կան Կեսարացու գործերի հայերէն թարգմանութիւնների մասին»²: Իր այս ուսումնասիրութեան մէջ Կ. Մուրադեանը նշում է, որ Կեսարացու գործերի հայերէն թարգմանութիւնների վերաբերեալ յիշատակութիւններ կան ՆՃԲ-ում, այս հարցին անդրադարձել են նաեւ նշանաւոր հայագէտներ Գ. Զարփահանալեանը, Ա. Ակինեանը, Ա. Սուքրեանը, Հ. Գաթրճեանը եւ ուրիշներ՝ ամրագրելով այն տեսակէտը, որ Բարսեղ Կեսարացու գործերը սկսուել են թարգմանուել դեռեւս V դ.: Յիշատակում են Բարսեղ Կեսարացու գործերի թարգմանիչներից մի քանիսի անունները՝ Խոսրով թարգմանիչ, Դաւիթ Տարօնացի, Ստեփանոս Սիւնեցի, որոնց մասին հանգամանալից տեղեկութիւններ կարող ենք քաղել Կ. Մուրադեանի ուսումնասիրութիւնից:

Սուրբ Բարսեղ Կեսարացու գործերի հայերէն թարգմանութեամբ առաջինը զբաղւել է Ս. Սահակ Պարթեւը «իր ձեռքով» եւ կամ նրա «խորհրդով» ուրիշները³:

Այսպիսով, Բարսեղ Կեսարացու երկերը հայերէն են թարգմանուել 5-րդ դարից

¹ Հատիտեան Ա., Սուրբ Բարսեղ Հայրապետ Կեսարացի. ժամանակաշրջանը, կեանքն ու գործունէութիւնը, Էջմիածին հանդէս, 1977, էջ 27:

² Մուրադեան Կ., Գրչագիր վկայութիւններ Կեսարացու գործերի հայերէն թարգմանութեան մասին, Լաբեր Հասարակական Գիտութիւնների, № 10, էջ 50:

³ Մուրադեան Կ., Բարսեղ Կեսարացին եւ նրա «Վեցօրեան» հայ մատենագրութեան մէջ, Երեւան, 1976, էջ 26:

սկսած: Երեւանի Մատենադարանում են զետեղուած նրա՝ աւելի քան 200 հին ու նոր գրչագիր մատենաներ: Յայտնի են Բարսեղ Մեծի հայերէն թարգմանուած երկերից «Վեցօրեայք»-ը (առաջին անգամ տպագրուել է Վենետիկում, 1830 թ.), «Պատարագամատոյցք»-ը (1897 թ.), «Գիրք հարցողաց»-ը, «Պահոց» ճգնակեցական հրահանգների ժողովածուն, կանոններ, աղօթքներ եւ այլն: Նրա մի քանի ճառեր եւ գործերից որոշ հատուածներ են պահպանուել Տիմոթէոս Կուզի «Հակաճառութիւն» երկում, «Կնիք հաւատոյ» ժողովածուում եւ այլուր:

Հայ թարգմանական մատենագրութեան նշանաւոր գործերից է Բարսեղ Կեսարացու «Պահոց գիրքը» («Գիրք պահոց»): Որոշ ձեռագրերում, ինչպէս նաեւ տպագրական գրականութեան մէջ հանդիպում են նաեւ այս գրքի Վասն պահոց, Պահոց անունները: «Այն բովանդակում է հեղինակի հիմնականում ճառական-մեկնողական գործերը (ոչ բոլորը), ինչպէս նաեւ որոշ թղթեր եւ դաւանական բնոյթի հարցումներ (ընդհանուր հաշուով 33 բնագիր): Ժողովածուի կազմութեան ժամանակի ու հանգամանքների, նիւթերի ընտրութեան ու դասդասման մասին որեւէ ուղղակի յիշատակարան-յիշատակագրութիւն չի պահպանուել»⁴: Ենթադրում է, որ ժողովածուն կազմուել է 650-660-ական թթ.: Երկը «Պահոց գիրք» է կոչուել ըստ առաջագիր «Յաղագս պահոց» ճառի:

Այժմ յայտնի են «Պահոց գրքի» աւելի քան 50 ամբողջական եւ թերի ընդօրինակութիւններ: Զեռագրական ամենահարուստ շտեմարանը Մաշտոցեան Մատենադարանն է, որտեղ էլ պահուում են գրքի շուրջ 30 գրչագրերը: Բարսեղ Կեսարացու նշեալ գրքի ընդօրինակութիւններ կան նաեւ Վենետիկի, Երուսաղէմի, Վիեննայի, Նոր Զուղայի եւ այլ ձեռագրատներում. ընդհանուր առմամբ 22 ձեռագիր: «Պահոց գրքի»՝ հայագիտութեանը յայտնի հնագոյն ձեռագիրը (№ 251, 1172 թ.) պահուում է Մխիթարեան միաբանութեան Վենետիկի մատենադարանում: Իսկ Երուսաղէմում գրտնուող 6 ձեռագրերում պահպանուած է միայն ժողովածուի առաջին ճառը:

Մենք օգտուել ենք Կ. Մուրադեանի հեղինակած քննական բնագրից. «Սոյն հրատարակութեան հիմքում ընկած են Մաշտոցեան Մատենադարանի բոլոր ձեռագրերը, ինչպէս նաեւ Վենետիկի նշուած հնագոյն երկաթագիրը»⁵:

Կ. Մուրադեանի կազմած սոյն ժողովածուն ընդգրկում է 33 թարգմանական բնագիր՝ ճառ, թուղթ, մեկնութիւն, հարցում: Բարսեղ Կեսարացու՝ «Պահոց գրքում» զետեղուած ճառերն ունեն դաւանաբանական, քարոզչական, վարքագրական, բարոյագիտական, կանոնագիտական, ծիսագիտական, մանկավարժական բովանդակութիւն: Նրա այս ստեղծագործութիւնները, մինչ այս ժողովածուն, միասնական, ամբողջական տարբերակով չեն հրատարակուել. սոյն հաւաքածուն Կեսարացու վերոնշեալ գործերի առաջին համահաւաք ամբողջութիւնն է:

Հայագիտութեան մէջ արձանագրուել է, որ Ագաթանգեղոսը, Փաւստոս Բուզանդը եւ այլք օգտուել են Կեսարացու ծիսական-արարողական ժանրի գործերից: «Պահոց գրքի» հետքեր կան 5-13-րդ դդ. հայ ինքնուրոյն գրականութեան մէջ, յատկապէս Սահակ Պարթեւի, Մովսէս Խօրենացու, Յ. Մանդակունու, Յովհ. Օձնեցու, Ստ. Սիւնեցու, Գր. Նարեկացու, Ստ. Ասողիկի, Վ. Այգեկցու, Վանական Տաւուշեցու, Յովհ. Երզնկացու եւ այլոց դաւանաբանական երկերում: Այս վկայութիւններից ելնելով հարկ է նշել, որ Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց» աշխատութեան գրաբարեան թարգմանութիւնը պատկանում է Ա շրջանի թարգմանութիւնների շարքին՝ վկայակոչուած լինելով դեռեւս 5-րդ դարի հայ մատենագիրների բնագրերում արդէն իսկ հայերէն թարգմանութեամբ:

⁴ Հմմտ. Մուրադեան Կ. // Բարսեղ Կեսարացի, Գիրք պահոց, Էջմիածին, 2008, էջ 7:

⁵ Մուրադեան Կ. // Բարսեղ Կեսարացի, նշուած աշխ., էջ 8:

Երկը հայերէն է թարգմանուել գրերի գիւտից գրեթէ անմիջապէս յետոյ, քանի որ, ինչպէս արդէն նշեցինք, երկը տարբեր բնոյթի գործերի ժողովածու է, որտեղ ընդգրկուած են թղթեր, ճառեր, հարց ու պատասխաններ, որոնք, թարգմանելուց բացի, անհրաժեշտ էր ի մի բերել, խմբաւորել «Գիրք պահոց» վերնագրի ներքոյ՝ որպէս մէկ գիրք:

Բարսեղ Կեսարացու եւ նրա գործերի մասին ամփոփ մեր շարադրանքը եզրափակենք հետեւեալ դիպուկ մէջբերումով. «Որքա՛ն ճիշտ ու գեղեցիկ է ասել ս. Գրիգոր Նազիանզացին, երբ 370 թուականին Կեսարացու Կապադովկիայի Աթոռի վրայ մետրոպոլիտի ընտրութեան առիթով որոշ հակառակորդներ եւ հերետիկոսներ, նախանձից դրդուած, դէմ էին այդ ընտրութեանը. «Բարսեղը, տկար է, այո՛, բայց մենք հոգեւոր առաջնորդ եւ կրօնի ուսուցիչ ենք ընտրում եւ ոչ թէ՛ ըմբշամարտ»»⁶:

Այժմ անդրադառնանք մեր ուսումնասիրութեան բուն խնդրին՝ Կեսարացու երկի գրաբարեան թարգմանութեան հոլովական համակարգի իւրայատկութիւններին:

Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց» երկը, որը դասուում է նախայունաբան շրջանի թարգմանութիւնների շարքը, եզակի է իր ոճով եւ քերականական-շարահիւսական կառուցներով: Հմուտ թարգմանիչները ջանք չեն խնայել երկի լեզուն մատչելի, միաժամանակ գրաբարեան հիմնական քերականական օրինաչափութիւնները պահպանելով՝ գեղարուեստական պատկերներ ստեղծելու, խօսքն առաւել դիպուկ դարձնելու համար:

Նախ՝ երկու խօսք գրաբարեան հոլովական համակարգի մասին:

«Առարկաների, երեւոյթների ու նրանց յատկանիշների անունների բառական զանազան փոփոխութիւնները դրսեւորելու համար լեզուն ունի տարբեր միջոցներ: Դրանցից մէկը հոլովումն է, որի շնորհիւ անունները նախադասութեան մէջ բառային փոփոխութիւններ են կրում»⁷:

Գրաբարի քերականութեան պատմութեան մէջ հոլովների ըմբռնման տարբեր տեսակէտներ են եղել: Որոշ քերականներ ընդունում էին վեց, հոլով, ոմանք՝ տասը միւսները՝ եօթ հոլով: Հիմնականում ընդունուած էին՝ ուղղական, սեռական, տրական, բացառական, գործիական, ներգոյական հոլովները: Վերջինը՝ ներգոյականը, որոշ քերականներ չեն առանձնացրել իբրեւ առանձին հոլով, համարելով, որ այն նախդրային կիրառութիւն ունի եւ եթէ ընդունուի այս հոլովը, ապա պիտի քերականութեան մէջ մըտցնել նաեւ նախդիրներով կազմուող պատմական, պարառական, կոչական հոլովները: Գաբրիէլ Աւետիքեանը 1815 թ. հրատարակած իր «Քերականութիւն հայկական» գրքում պատմական, պարառական, ներգոյական եւ կոչական հոլովներ չի համարում: Նրա առաջարկութիւնը ընդունում է նաեւ Ա. Աբրահամեանը: Ահա թէ ինչպէս է Ա. Աբրահամեանը հաստատում Աւետիքեանի տեսակէտի իրաւացի լինելը. «Այդ մերժուած հոլովներից 3-ը նախդրաւոր կապակցութիւններ են... Հոլովը որպէս քերականական կարգ հանդէս է գալիս քերականական ձեւի ու բովանդակութեան միասնութեամբ, ուստի այն որոշելիս պէտք է նկատի ունենալ ձեւա-իմաստային յատկանիշները: Այս պատկերացմամբ մօտենալով խնդրին՝ չի կարելի յիշեալ չորս «հոլովներ»-ը ընդունել որպէս առանձին հոլովաձեւեր»⁸:

Առաջնորդուելով այս դիրքորոշմամբ՝ մենք եւս վեց հոլովի տեսութեամբ ենք քնննել Կեսարացու երկի գրաբարեան թարգմանութեան հոլովման համակարգը:

Գրաբարում հոլովուում էին գոյականները, ածականները, թուականները, դե-

⁶ Յատիտեան Ա., Սուրբ Բարսեղ Կեսարացու գործերի հայերէն թարգմանութիւնները, Էջմիածին հանդէս, 1977, էջ 32:

⁷ Աբրահամեան Ա., Գրաբարի ձեռնարկ, Երեւան, 1976, էջ 15:

⁸ Նոյն տեղում, էջ 16:

րանունները, դերբայները: Լինելով թեքական լեզու՝ մեր հին մայրենին հարուստ էր հոլովիչների համակարգով, քերականական համաձայնութեամբ: Հին հայերէնում ունենք կանոնաւոր (պարզ եւ խառն) եւ անկանոն (զարտուղի) հոլովումներ:

Հոլովման վերաբերեալ Վ. Առաքելեանն իր «Գրաբարի քերականութիւն» աշխատութեան մէջ նշում է հետեւեալը. «Գրաբարի հոլովումը բաժանուած է երկու հիմնական խմբի՝ ձայնաւոր եւ բաղաձայն: Սրանք միմեանցից տարբերուած են նրանով, որ դրուած են ձայնաւոր հիմքերի վրայ, իսկ բաղաձայնական հոլովման մէջ հոլովական վերջաւորութիւնը միանում է բաղաձայնական հիմքին: Հոլովման ժամանակ բառը երեք մասի է բաժանուած՝ հիմք, հիմքի ձայնաւոր կամ բաղաձայն հնչիւն եւ հոլովական վերջաւորութիւն»⁹:

Քանի որ մեր ուսումնասիրութեան առարկայ երկը թարգմանութիւն է յունարէնից, ուստի հարկ է նշել նաեւ յունարէնի նմանողութեամբ գրաբար ներմուծուած հոլովաձեւերի մասին: Ինչպէս փաստում է Վ. Առաքելեանը՝ «Դասական գրաբարում յունական յատուկ անունների գործածութեան ընթացքում թափանցել են հայերէնին խորթ յունական հայցական եւ կոչական հոլովաձեւերը, որոնք ուղղականից տարբերուած են»¹⁰:

Ուղղական հոլովը բառի ուղիղ ձեւն է՝ յօդով կամ առանց յօդի գործածութեան: Յոգնակին կազմուած է ք վերջաւորութեամբ:

Եզակի հայցականը նման է եզակի ուղղականին, եթէ կիրառուած է անորոշ առումով, իսկ որոշեալ առումով կիրառուելիս բառասկզբում աւելանում է զ նախդիրը: Յոգնակի հայցականն ունի ւ վերջաւորութիւնը:

Սեռական-տրական հոլովը եզակի թուում կազմուած է ուղղականից՝ հոլովիչ ձայնաւորի եւ վերջաւորութեան աւելացմամբ, կամ էլ՝ հնչիւնափոխութեամբ: Յոգնակի սեռական-տրականի վերջաւորութիւնն է ց: Այս կանոնից շեղուած են անկանոն հոլովման պատկանող բառերը:

Բացառական հոլովը կազմուած է ի նախդիր + սեռական/տրականի վերջաւորութիւն կաղապարով: Յոգնակի թուում ստանում է ց վերջաւորութիւնը:

Գործիական հոլովը կազմուած է վ, լ, ք վերջաւորութիւններով, որոնք դրուած են հիմքի ձայնաւորի/բաղաձայնի վրայ: Յոգնակիի կազմութեան ժամանակ աւելանում է ք մասնիկը:

Ներգոյական հոլովը կազմուած է ի նախդրով՝ եզակի թուում՝ տրականից կամ հայցականից (այ, ոյ, ու-այ խառը հոլովման ենթարկուող բառերի դէպքում), իսկ յոգնակին կազմուած է յոգնակի հայցականից:

Կեսարացու երկում վկայուած է բոլոր խօսքի մասերի հոլովական ձեւերի բազմազանութիւնը՝ գոյականներ, ածականներ, թուականներ եւ դերանուններ:

Ուղղական եւ հայցական հոլովների եզակի եւ յոգնակի կազմութեան դէպքերում որեւէ առանձնաշատկութիւն կամ օրինաչափութիւններից էական շեղումներ չենք արձանագրել: Հայցական հոլովաձեւը կարող էր կիրառուել եւ որոշեալ, եւ անորոշ առումներով, այսինքն՝ եւ զ նախդրով, եւ աննախդիր: «Քանզի տնկէաց այգի նոյ եւ արբ ի պտղոյն, եւ արբեցաւ ոչ գինեսէր, այլ անփորձ չափոյ ընդունելութեանն» (էջ 61): «Ասացաւ առ հարսն, որ ասացաւ, իսկ անորդիքն գինէ մեզ բարեդէմ պատճառս ազանութեան առաջի արկանիցեն» (էջ 162):

⁹ Առաքելեան Վ., Գրաբարի քերականութիւն, Երեւան, 2010, էջ 17:

¹⁰ Նոյն տեղում, էջ 85:

Սեռական-տրական հոլովի վերաբերեալ ընդգծենք հետեւեալը. որոշ անձնանուններում բառավերջի յ-ն, որը հոլովակազմիչ էր **ո** եւ **ա** հոլովիչների պարագայում, երբեմն վկայուած չէ՝ Նսայէայ (էջ 54) յատկանունան դէպքում ծանօթագրութիւնների մէջ տրուած է նաեւ Նսայէա տարբերակը, որը ցոյց է տալիս տուեալ ժամանակաշրջանում բառավերջի յ-ին վերաբերող գրաբարեան կանոնի ուժը կորցնելը: Ա հոլովման վերաբերեալ Գ. Զահուկեանը նշում է, որ այն «Նոր ձեռքբերում է՝ կազմաւորուած փոխառեալ անունների բազայի վրայ»¹¹: Նսայի անձնանունը, լինելով փոխառեալ, ունէր սեռական-տրականի կազմութեան իւրայատկութիւն: Գրաբարին բնորոշ օրինաչափութիւն է եղել ա հոլովման բառերի սեռական հոլովի յ վերջաւորութեան լիահունչ արտասանութիւնը, ինչով էլ պայմանաւորուած է եղել բառի ուղիղ եւ թեք ձեւերի տարբերութիւնը: Սակայն այս կանոնը լեզուի պատմական զարգացման ընթացքում դադարել է գործելուց: Այսպիսով՝ «Մի դէպքում ա-ը հանդէս է գալիս իբրեւ լրիւ սեռականի վերջաւորութիւն՝ ուժեղ անուանական շեշտումով. Արշակ-Արշակայ, երկրորդ դէպքում ունենք անուանական շեշտուած ա, որին աւելանում է յ վերջաւորութիւնը. Յուդա-Յուդայ»¹²:

Բերենք սեռական-տրական հոլովաձեւի կազմութեան բնագրային այլ օրինակներ՝ ի ցոյց դնելու դասական գրաբարի կանոնների թուլացումը, որն ապացուցում է որոշ թարգմանական հատուածների՝ 7-րդ դարից յետոյ ընկած ժամանակաշրջանին պատկանելը. աղբառոյ (էջ 127), աղիւծոց (էջ 66), աղիւծոց (էջ 67), այրոյն (էջ 64), գագաթան (էջ 62), գիւնոյ (էջ 61), դուզնաւոյ (էջ 143), երայեցոց (էջ 103), թագուհոյ (էջ 103), ժամանակեայ (էջ 113), մաւր (էջ 63), մահու (էջ 375), մարդկանց (էջ 139), միայնոյ (էջ 112), ցորենոց (էջ 139): Քննենք բերուած օրինակները:

Անկանոն հոլովման պատկանող բառերից են այրոյ (էջ 64), մաւր (էջ 63) բառերը: Երկրորդ բառը կիրառուած է ըստ գրաբարեան կանոնի՝ մայր-մաւր, այնինչ առաջին դէպքում ունենք այր բառի ակնյայտ կանոնաւորում: Զարտուղի հոլովման ենթարկուող այր բառը հոլովուում էր ն վերջադրական հոլովակերտի միջոցով, իսկ այ երկբարբառը պարզեցւում է՝ ալ>այ: Հետեւաբար՝ այս բառի սեռական-տրական հոլովաձեւն էր առն, իսկ Կեսարացու երկի գրաբարեան թարգմանութեան մէջ այն կանոնաւորուած է ոյ հոլովիչով՝ այրոյ: Ահա բնագրային նախադասութիւնը՝ «Պահել ոչ ետ այրոյն զմանուկն՝ զաւաւոր եղեալ ընդդէմ մահու պահովն» (էջ 64):

Ի-ա խառն արտաքին հոլովման է պատկանում աղբառ բառը, որը «Գիրք պահոց»-ում սեռական հոլովը կազմել է աղբառոյ (էջ 127) ձեւով: Ի-ա խառն հոլովումը «Գրաբարի ամենատարածուած հոլովումներից է. այս հոլովման ենթարկուում են ձեւային տարբերակում չունեցող բազմաթիւ գոյականներ եւ ածականներ՝ ագահ, ազատ, աղբառ...»¹³: Ըստ կանոնի՝ այս բառի սեռական-տրականը պիտի լինէր աղբառի, սակայն ունենք ը հոլովմանը բնորոշ վերջաւորութիւն: Պէտք է նաեւ նկատի ունենալ, որ ի-ա խառն հոլովման բառերը միջին հայերէնում անցնում են ի վերջադրական հոլովման. այսինքն՝ Կեսարացու երկում կիրառուած այս հոլովաձեւը, ամենայն հաւանականութեամբ, լեզուի խօսակցական կամ բարբառային բառաշերտերի ազդեցութեամբ է կազմուել:

Ա ներդրական հոլովման է ենթարկուում մարդ բառը, երբ ունենում է -իկ մասնիկը, «Ըստ որում՝ թեք հոլովներում հանդէս է գալիս եզակի ձեւով, սակայն արտայայտում է

¹¹ Զահուկեան Գ., Հին հայերէնի հոլովման սխաւմը եւ նրա ծագումը, Երեւան, 1959, էջ 225:

¹² Առաքելեան Վ., նշուած աշխ., էջ 27:

¹³ Արաքեան Ա., Դիլբարեան Ն., Իզբաշեան Ա., // Դիլբարեան Ն., Հայոց լեզուի պատմութիւն, Երեւան, 2017, էջ 325:

հաւաքական իմաստ»¹⁴։ Հարկ է նշել, որ այս բառը հոլովուում է նաեւ ոչ հոլովիչով, եթէ իկ մասնիկը չունի՝ մարդ/մարդ - մարդոյ/մարդոց։ Այնինչ՝ մեր ուսումնասիրութեան առարկայ երկուսն առկայ է մարդկանոց (էջ 139) հոլովածելը, որն իր մէջ ներառել է իկ մասնիկը եւ միաժամանակ հոլովուել ոչ հոլովիչով, եւ, դեռ աւելին, գերճշգրտամբ, ստացել է Ն, ինչպէս ոչ եւ ու-ա հոլովման ի յանգով բառերը։ Այս երեւոյթը եւս կարելի է համարել ժամանակի ժողովրդա-խօսակցական լեզուի ազդեցութիւն, թէեւ չենք կարող բացատրել նաեւ գրչագրական վրիպակը։

Ուշագրաւ է ևս պարզ հոլովիչով հոլովուող բառերի կիրառութիւնը Կեսարացու երկում՝ դուգնափոյ (էջ 143), երալեցոյ (էջ 103), թագունոյ (էջ 103), ցորենոյ (էջ 139)։ Նշուած այն ձեւերը, որոնք իրենց կազմում ունեն ւ մասնիկը, ծանօթագրութիւններում յիշատակուած են առանց դրա՝ դուգնափոյ (էջ 143), երալեցոյ (էջ 103), ցորենոյ (էջ 139), իսկ նրանք, որոնք չունեն ւ՝ յիշատակուած են ւ-ով՝ թագունոյ (էջ 103)։ Տուեալ դէպքում ակնյայտ է դասական գրաբարեան հոլովման կանոնների խառնակումը նախամիջին շրջանի գրաբարում։ Հայերէնի զարգացման յետագայ ընթացքում բառավերջի ի>ւ հնչիւնափոխութիւնը ու հոլովիչի ազդեցութեամբ դադարում է գործել, եւ ի-ն ոչ-ից առաջ ընկնում է։

Մեր ուսումնասիրած թարգմանական երկում հոլովական տարածելութիւնների պատճառ համարել ենք նաեւ բնագրի լեզուն՝ յունարէնը։ Ձեւաբանական, աւելի որոշակի՝ հոլովական յունաբանութիւններին մանրամասն անդրադարձել է Գ. Մուրադեանն իր «Յունաբանութիւնները դասական հայերէնում»¹⁵ մենագրութեան մէջ։ Նա նշում է, որ տրական հոլովի համար յոյժ կիրառելի էր «ոււմ» վերջաւորութիւնը, «Յունաբան դպրոցի երկրորդ եւ երրորդ խմբի թարգմանութիւններում «ոււմ»-ը լայնօրէն օգտագործուել է գոյականների, ածականների եւ դերբայների հետ։ Երբեմն նոյն դերում հանդէս է եկել նաեւ է՛լ աւելի հազուադէպ «ոջ» վերջաւորութիւնը։ Այս նորամուծութեան նպատակն, անշուշտ, եզակի սեռականի եւ տրականի տարբերակումն է»¹⁶։ Կեսարացու երկում հանդիպող նմանատիպ բառերից են՝ յառաջնում (էջ 131), փութացելում (էջ 370), յեկաթում (էջ 421-422), յեկորոյում (էջ 131), յեթմեորոյում (էջ 57), յորպիսի մարմնում (էջ 437), ի գիւնոյ (էջ 79), ի խորոյ կայսն (էջ 109), ի մարմնում (էջ 421-422), ի նորում (էջ 125), ի տարոյ (էջ 68)։ Սրանք, փաստօրէն, իրենցից ներկայացնում են ներգոյականի կազմութեան իւրօրինակ ձեւեր՝ ի նախդիր + տրական կաղապարով։ Փաստօրէն, գրաբարի նախամիջին շրջանում արդէն ձեւաւորուել էին աշխարհաբարեան ներգոյական հոլովի -ում մասնիկի կիրառութեան դէպքերը։

Անդրադառնանք բացառական հոլովի գործածութեան բնագրային օրինակներին. ի յալրեցուցանողէն (էջ 111), ի կնոջ (էջ 361), ի հիւանդութենէն (էջ 60), ի մարդկանէն (էջ 461), ի յանչափութենէն (էջ 102), ի սոցունց անկարութենէն (էջ 112), ի Տեառնէն (էջ 115), իմեմէն (էջ 325), յորմէն (էջ 137), որովայնէն (էջ 67), հայհոյութենէն (էջ 263)։ Կանոնաւոր ձեւերին զուգահեռ՝ բերուած օրինակներում ունենք նաեւ բնութագրական շեղումներ։ Յաճախադէպ են կրկնակի նախդիրների կիրառութեան դէպքերը, մասնաւորապէս՝ ձայնաւորով սկսուող բառերի դէպքում՝ յալրեցուցանողէն (էջ 111), ի յանչափութենէն (էջ 102)։ Հանդիպում է նաեւ առանց ի նախդրի՝ իմեմէն (էջ 325) ձեւով կազմուած բացառական հոլովով գերանունը, որովայնէն (էջ 67), հայհոյութենէն (էջ 263) գոյականները։ Արձանագրենք, որ բացառականի կազմութիւնը պարզեցման միտում ունէր. կորցնում էր նախդիրը։

¹⁴ Արքահամնան Ա., նշուած աշխ., էջ 32։

¹⁵ Մուրադեան Գ., Յունաբանութիւնները դասական հայերէնում, Երեւան, 2010, էջ 101։

¹⁶ Նոյն տեղում, էջ 101։

Գտել ենք նաեւ բացառականի կազմութեան հնագոյն հետաքրքիր կառոյց՝ յերկնուստ (էջ 437): «Բացառականի համար պատահում է երբեմն ուստ վերջաւորութիւնը... Սրանք մեծ մասամբ մակբայական կազմութիւններ են»¹⁷: Այս տիպի կառոյցները կարող էին ստեղծուել նաեւ յունարէնի նմանութեամբ, թէեւ հայկաբան ծագումը բացառւած չէ:

Առաւել բազմազան են գործիական հոլովի կազմութեան ձեւերը Կեսարացու գրաբար թարգմանութեան լեզուում: Բերենք գրաբարեան գործիականի կազմութեան եւ դասական, եւ յետդասական զարտուղի օրինակներ՝ առաւստաւ (էջ 96), բարիոն (էջ 110), գիմեալ (էջ 101), գիմուլ (էջ 102), գոյիւ (էջ 136), թնամեալ (էջ 92), իմաստիւ (էջ 109), լսելով (էջ 110), հաշտեցուցանողալ (էջ 92), ձեղումը (էջ 120), ձեռում (էջ 144), ումալ (էջ 55), մարալ (էջ 62), նշանալ (էջ 62), նուազիւ (էջ 131), շնորհալ (էջ 147), ոտիւ (էջ 96), շարեալ (էջ 91), վերակացուալ (էջ 92), տերալ (էջ 94), Քրիստոսի Յիսուսի (էջ 94):

Այս թարգմանութեան լեզուն աներկբայ վկայում է, որ ը-ա խառն հոլովման միաձուլումը ը հոլովման հետ 7-րդ դարում արդէն ընթանում էր. «Գիրք պահոց»-ում հաւասարապէս կիրառելի են գինի բառի գործիականի գիմեալ (էջ 101) եւ գիմուլ (էջ 102) տարբերակները:

Հետաքրքրական է առաւստնով՝ ծանօթագրութեան մէջ առաւստնով (էջ 93) կառոյցը, որն արտայայտում է յոգնակի գործիականի իմաստ: ն-ի առկայութիւնը բառում վկայում է նրա՝ յոգնակերտ մասնիկի մասին՝ առաւստնի, այս ձեւին էլ գումարուել է նաեւ գրաբարեան ք-ն՝ առաւստներով: Նման կառոյցները խօսակցական-բարբառային լեզուի եւ գրական գրաբարի փոխազդեցութեան արդիւնք են:

Շնորհալ (էջ 147) բառի համար իբրեւ գործիական յիշատակում է նաեւ շնորհիւ կանոնաւոր հոլովաձեւը: Այսինքն՝ ունենք նաեւ ը-ա եւ ը հոլովումների միաձուլման հետքեր. 7-րդ դարում ակնյայտ էր խառն հոլովումների վերացման իրողութիւնը, հայերէնի հոլովական համակարգը գնում էր դէպի անշեղ պարզեցում:

Ներգոյական հոլովի կիրառութեան մեզ հանդիպած հետաքրքիր օրինակներից են հետեւեալները՝ ի սրտին (էջ 2643), ի մերում սիրտս (էջ 203), ի յազմականութիւն (էջ 115), ի յաղաթս (էջ 106), ի պատերազմունս (էջ 63), ի պահքս (էջ 77), ի ջերինս (էջ 109), ի սրտի բում (էջ 110), յեկեղեցոյ (էջ 115), յերիս ամս (էջ 129): Նշենք, որ «Եզակի ներգոյականը նման է մասամբ եզակի հայցականին, մասամբ եզակի տրականին, երբեմն նոյն բառը երկուսին եւս, մասամբ էլ առանձին կազմութիւն ունի, օրինակ՝ ի ջուր, ի քաղաքի, յայգուջ = ջրում, քաղաքում, այգում»¹⁸: Իսկ յոգնակի ներգոյականը հիմնականում նման է յոգնակի հայցականին: Սակայն այս ընդհանրական կանոնից բազմաթիւ շեղումներ կան մեր քննած բնագրում: Այսպէս՝ ի բոց (էջ 70) ներգոյականի համար նշում է նաեւ ի բոցոյ տարբերակը, որը դասական գրաբարում բացառականի հոլովաձեւ էր: Սակայն քանի որ ծանօթագրութիւններում նշուած են կանոնաւոր ձեւերը, մենք այս տիպի շեղումները կարող ենք համարել գրչագրական վրիպակներ, գրիչների գրագիտութեան եւ գրաբարի իմացութեան մակարդակը միանշանակ չի եղել: Ինչպէս բացառական հոլովի դէպքում, ունենք ներգոյականի կազմութիւններ կրկնակի նախդրով՝ ի յազմականութիւն (էջ 115), ի յաղաթս (էջ 106), որտեղ ձայնաւորով սկսուող բառերը ստացել են ի նախդիրը՝ մի դէպքում այն դարձել է յ, ինչպէս եւ պէտք է լինէր, եւ բացի դրանից՝ այդ յ-ից առաջ աւելացրել են եւս մէկ ի նախդիր: Գէրճզարտումներ են կատարել:

¹⁷ Աբեղեան Մ., Երկեր Զ, Գրաբարի փերականութիւն, Երեւան, 1974, էջ 758:

¹⁸ Նոյն տեղում, էջ 759:

Քննենք նաեւ Կեսարացու թարգմանական երկում գրաբարեան դերանուանական հոլովման դրսեւորումները: Նախ եւ առաջ նշենք, որ դերանուանական հոլովման են պատկանում անձնական (ես, դու, նա իմֆն, իւր), ցուցական (այս, այդ, այն, սոյն, նոյն, դոյն, սա, դա, նա) դերանունները, անորոշ դերանուններից ումն, ուֆ-ը՝ «եզակի թւում մինչեւ գործիականը դերանուանական հոլովմամբ, իսկ եզակի գործիականից՝ անուանական ա ներդրական հոլովմամբ»¹⁹, իմն, ինչ-ը, հարցա-յարաբերական դերանուններից ո/ով-ը, որը «արտայայտում է միայն անձերի իմաստ, գրաբարում պատկանում է դերանուանական հոլովման, չունի գործիական հոլով, այն փոխարինում է որ դերանուան եզակի եւ յոգնակի գործիականներով՝ որով/որովք»²⁰ եւ իրանիշ զի, զինչ ձեւերը:

Անձնական դերանունների վերաբերեալ ընդգծենք. «Անձնական դերանունները դերանուանական հոլովման դասական օրինակ են՝ տարահիմքութեամբ, եզակի թւում սեռական եւ տրական հոլովների տարբերակմամբ»²¹: Դերանուանական հոլովման դէպքում սեռական հոլովի համար հիմնականում իբրեւ ցուցիչ ունենք -ր հոլովակերտը, տրականում՝ -մ, բացառականում՝ -է, գործիականում՝ -ւ, -վ կամ -բ:

Բերենք դերանուանական հոլովման պատկանող տարբեր դերանունների բնագրային տարածուած օրինակներ՝ Քանգի որով կարծէին զնա խափանեալ, նովիմբ երեւեցան, նանապարհ առնել ելիցն (էջ 196), ...ամենայն իրաւ նոբաւ առ ի յիւրեանց վարին կամս (էջ 168), ...եկեալ մաղթ զայսաւոն ինֆն եւ վաղիւն Տեառնն (էջ 432). այստեղ ունենք իմֆն անձնական դերանուան բարբառային տրականը, որին զուգահեռ՝ այլ ձեռագրում տրուած է կանոնաւոր իմֆեան ձեւը, ...Ընդէ՛ր ոչ զմատաւոր տնանկութիւնն յայնց պատնառաց լուծանես, ...ամենեմբ այսօօֆ առաւել պայծառանայ (էջ 250). տուեալ օրինակում որոշեալ ամենֆն/ամենեմբան դերանուան կանոնաւոր գործիականն է եւ այս ցուցականի յոգնակի բարբառային գործիականը, որի փոխարէն այլ ձեռագրում վրկայուած է կանոնական այսոֆիւմ ձեւը, ուստի կարող ենք եզրակացնել, որ գրչագրական կանոնաւորում է: Չաւֆ կենդանագրացն ի կարատութենէն սննդեան ոնգացն կամ յումեֆ սպիոյ եւ ի կարեութենէ ի բնութենէս... (էջ 199) ...որպէս իւիք ծաղկաւ... (էջ 407), ...Ո՛ւմ վայ, ո՛ւմ ամբոխ... ո՛յր կապուտակ աչք... (էջ 101) եւ այլն:

Ինչպէս ակնյայտ է բերուած օրինակներից՝ Կեսարացու երկի թարգմանիչները հիմնականում պահպանել են գրաբարեան դերանուանական հոլովման համակարգի օրինաչափութիւնները, զուգաձեւութիւններն այս պարագայում շատ աւելի փոքրաթիւ են, որը վկայում է յետդասական շրջանում դերանուանական հոլովման համակարգի առաւել կայուն լինելու մասին՝ ի հակակշիռ անուանական հոլովման համակարգի, որտեղ բարբառային եւ խօսակցական կանոնաւորումներն ու հնչիւնափոխութիւնները աւելի մեծաթիւ էին եւ տարածուած:

Ամփոփելով մեր աշխատանքի այս բաժինը՝ մէջբերենք Վ. Առաքելեանի դիտարկումը. «Շատ անգամ ձեռագիր արտագրողները մի տեսակ արհեստաւոր գրիչներ էին, լաւ ձեռագիր ունեցողներ, որոնք արտագրութեան ժամանակ ակամայից փոխում էին այս կամ այն բառի հոլովումն՝ ըստ հոլովման իրենց կենդանի ըմբռնման եւ առաւել եւս որոշ հոլովումների նմանութեան շփոթումներով»²²: Ահա թէ որտեղից են գալիս տարբեր հոլովաձեւերի շփոթմունքները, մի հոլովի գործածութիւն մէկ ուրիշի փոխարէն, նոյնիսկ՝ դեռեւս անյայտ եւ միակ կիրառութիւնն ունեցող հոլովակազմութեան օրինակ-

¹⁹ Աբաջեան Ա., Դիլբարեան Ն., Յուգրաշեան Ա., // Դիլբարեան Ն., նշուած աշխ., էջ 377:

²⁰ Դիլբարեան Ն., նշուած աշխ., էջ 379:

²¹ Աբաջեան Ա., Դիլբարեան Ն., Յուգրաշեան Ա., // Դիլբարեան Ն., նշուած աշխ., էջ 362:

²² Առաքելեան Վ., նշուած աշխ., էջ 80:

ներ:

Այնուամենայնիւ, «Գիրք պահոց»-ում թէեւ կային հոլովակագմութեան տարաբնոյթ գուգածեւութիւններ ու շեղումներ օրինաչափութիւններից, սակայն դրանք այնքան մեծաթիւ չէին. գրքի լեզուն դասական եւ յետդասական գրաբարի միախառնման ուշագրաւ դրսեւորում է: Կեսարացու երկի թարգմանիչները հմտօրէն միաձուլել են յետգրաբարեան քերականական կանոններով լեզուն ընթերցող-ժողովրդի համար հասկանալի կառոյցների հետ՝ համեմելով տարբեր ոճական շերտերին պատկանող բառերով ու բառաձեւերով, թարգմանութեանը հաղորդելով մեծ արժէք ուսումնասիրութիւններ կատարելու դիտանկիւնից:

Թէեւ երկի բնագիրը յունարէն է, սակայն հայերէն թարգմանութիւնը բնաւ չի զիջում բնագրին, աւելին՝ ունի պատկերաւորութիւն եւ ինքնօրինակութիւն. յունարէնը չի կարողացել իր ճնշող ազդեցութիւնն ունենալ նոր բառերի ստեղծման գործում՝ շնորհիւ բազմահմուտ, լեզուագէտ եւ հայրէնասէր թարգմանիչների տաղանդի: Մեր հետազօտութիւնն աներկբայ վկայում է, որ «Գիրք պահոց»-ը բարձրարժէք հայկաբան թարգմանութիւն է:

ԶԻՆԱ ՕՀԱՆԵԱՆ

Երեւանի պետական համալսարանի Հայ բանասիրութեան ֆակուլտետի մագիստրոս



ԾԻՍԱԿԱՆ**ՇՈՒՇՊԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՍՐԲԱՎԱՅՐԵՐՈՒՄ****Մուտք**

Խորհրդային տարիներին իշխանութեան գործադրած բոլոր հնարաւոր միջոցների հետեւանքով հսկայական արհեստական անջրպետ գոյացաւ ժողովրդի եւ եկեղեցու միջեւ, ընդհուպ այն աստիճանի, որ հաւատացեալ, մկրտուած ժողովուրդը չէր ընկալում որպէս հէնց ինքը՝ եկեղեցին, իսկ եկեղեցին ընկալուեց զուտ իբրեւ ծիսական ինչ-որ շէնք կամ եկեղեցի ասելով սկսեցին հասկանալ միայն հոգեւոր դասը կամ հոգեւորականութիւնը, յաճախ նոյնիսկ դարձաւ յուշարձան, թանգարան, երբեմն պահեստ:

Այս մարդածին անջրպետի ժամանակաշրջանում ժողովուրդը պահպանում էր իր հաւատքն այնպէս, ինչպէս յիշում էր իր նախնիներից, ինչպէս ինքն էր հասկացել եւ ընկալել՝ խորացնելով ժողովրդական քրիստոնէական դրսեւորումները: Յետ-խորհրդային երեսուն տարիներից յետոյ էլ ժողովուրդը շարունակում է պահպանել իր աւանդոյթներն ու ընկալումները, որոնք երբեմն կարող են չհամընկնել Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու պաշտօնական դաւանաբանութեան հետ:

Այդպիսի մի երեւոյթի անդրադարձ է եւ քննութեան փորձ այս աշխատանքը: Յօդուածում անրադարձ կը կատարուի ժողովրդական սրբավայրերում լայն կիրառութիւն ունեցող տարատեսակ գործուածքներին, որոնք ունեն ընդհանուր «շուշպայ» անուանումը:

Աշխատանքում ամփոփուած են ՀՀ մի շարք՝ Արագածոտն, Շիրակ, Կոտայք, Արմաւիր եւ Գեղարքունիք մարզերում կատարուած դաշտային ազգագրական նիւթերի տուեալները¹: 2019 թ. Շիրակի եւ 2020 թ. ամբողջ դաշտային աշխատանքները կատարւել են «Calouste Gulbenkian foundation» հիմնադրամի օժանդակութեամբ:

ԻճԷ Է նշանակում «շուշպայ»

Ըստ Հ. Աճառեանի՝ «Շուշպայ, շուշպայ» բառը փոխառութիւն է ասոր. šušēppā - «գլխի ծածկոյթ, քող» բառից, որն էլ իր հերթին առաջացել է ասուր-բաբել. šusuppu, šusubbu նոյն իմաստով բառից: «Շուշպայ» նշանակում է «սկիհը մաքրելու կամ ծածկելու շոր, սրբոց մասունքներու պատանք»²:

Աճառեանն իր բացատրութիւնը վերցրել է «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանից, որտեղ «շուշպան» բացատրում է այսպէս. «Շուշպայ - Մաքուր կտաւ

¹ Սիմոնեան Լ., Յովհաննիսեան Կ., Դաշտային ազգագրական նիւթ (յետագայում՝ ԴԱՆ), Արագածոտն, Գեղարքունիք, Շիրակ, Կոտայք, Արարատ, Վայոց ձոր, 2011-2019: Սիմոնեան Լ., Յակոբեան Հ., Յովհաննիսեան Կ., ԴԱՆ, Արարատ, 2016, Սիմոնեան Լ., Յովհաննիսեան Կ., Աւետիսեան Լ., ԴԱՆ, Գեղարքունիք, Շիրակ, Արագածոտն, 2016-2019: Յակոբեան Հ., Յովհաննիսեան Կ., ԴԱՆ, Շիրակ, Արմաւիր, 2019-2020: Սիմոնեան Լ., Յակոբեան Հ., Յովհաննիսեան Կ., Ղազարեան Գ., ԴԱՆ, Արագածոտն, Գեղարքունիք, Կոտայք, 2020:

² Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, հ. Գ., Երեւան, 1977, էջ 537:

որպէս սնդոն³ սուրբ սեղանոյ եւ որպէս մաքրիչ սկիւղ»⁴:

Ինչպէս իր աղբիւրը, այնպէս էլ Աճառեանը որպէս «շուշպայ» բառի այդ իմաստով գործածութիւն յղում են «Մաշտ. ջահկ.», ինչը, հաւանաբար, նշանակում է Ղազար Զահկեցի կաթողիկոսի խմբագրած «Մաշտոց» ծիսամատեանը: Եթէ ճիշտ է «ջահկ.»-ը հասկանալ որպէս Զահկեցի, ապա «շուշպայ, շուշպայ» բառը պաշտօնապէս առաջին անգամ հանդիպում է 18-րդ դարում:

Ստ. Մալխասեանը դասակարգում է «շուշպայ» բառի կիրառութիւնը. «Շուշպայ, շուշպայ - ասոր. գլխի ծածկոց, քօղ: 1. Սկիհ մաքրելու կամ ծածկելու մաքուր կտաւ, 2. սրբերի մասունքների կամ աւետարանի պատատան, 3. սաւան կամ նման շորեղէն:

Շուշպայել (միայն երկրորդ իմաստի դէպքում - **Կ. Յ.**)՝ մասունքը, խաչը եւ աւետարանը շուշպայի մէջ փաթեթել»⁵:

Այսինքն Մալխասեանցը բերում է նաեւ «շուշպայ»-ի աւելի լայն կիրառութիւնը, այն է առհասարակ սաւան կամ նման կտորեղէն:

Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեանը աւելի է մանրամասնում, «Շուշպայ - Մաքուր կտաւի կտոր, որ սկիհի տակ է դրում կամ սկիհը մաքրելու համար է, որով նոյնանում է մարմնակալի ու մաքրիչի հետ: Բայց գործածում է նաեւ դաստառակ բառի իմաստով, երբեմն էլ սփռոցի իմաստով, եւ հետեւաբար կարող ենք ասել, թէ շուշպան ընդհանուր իմաստ ունի եւ սեղանի վրայ գործածուած բոլոր կտաւները կարելի է շուշպայ հասկանալ»⁶:

Ըստ Օրմանեանի «շուշպայ»-ն կիրառում է նաեւ «դաստառակ» իմաստով, ուստի փորձենք հասկանալ ի՞նչ է այն նշանակում:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» համաձայն «դաստառակ» նշանակում է վարձակ, թաշկինակ, անձեռոցիկ, ձեռքի սրբիչ⁷:

Իսկ ըստ Աճառեանի՝ «դաստառակ - պարսկ. ձեռքի թաշկինակ: Ջնջոց, ձեռքի սրբիչ, անձեռոց: Բարբառային. խմորը ծածկելու, հաց փաթեթելու շոր, հարսի վրայի ծածկոց»⁸:

Աւելի մանրամասնում է Մալխասեանցը. «Դաստառակ - պարսկ. ձեռքի թաշկինակ: 1. Թաշկինակ, 2. երեսսրբիչ, 3. Անձեռագործ դաստառակ, կտաւ, որի վրայ ըստ աւանդութեան նկարուած է Քրիստոսի պատկերը՝ անձեռագործ կերպով: 4. Կտաւ, որ փռում են խմորի երեսին»⁹:

Եւ վերջապէս, Օրմանեանը բացատրում է մանրամասնօրէն եւ արդէն եկեղեցա-

³ Սնդոն - սնդուս, պարսկ. մետաքսեայ նուրբ կերպաս, մետաքսեայ կտոր, ներկայումս գործ է ածում նշանակելու համար որեւէ գործուածք, որ ողորկած՝ փայլուն երես ունի, **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Երեւան, 1944, հ. 4, էջ 235:

⁴ **Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Ազեքեան Մ.**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ., Վենետիկ, 1837, էջ 491:

⁵ **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Երեւան, 1944, հ. 3, էջ 536:

⁶ **Օրմանեան Արք. Մաղաքիա**, Դիսական բառարան, Երեւան, 1992, էջ 107: Մարմնակալ - Պատարագի ժամանակ սկիհի տակ յատուկ դրած մաքուր կտաւ կամ զարդարուն փոքրիկ դաստառակ (նոյն տեղում, էջ 102): Նոյնիմաստ է գորփուրային - լատին. մարմնական, թարգմ. մօտ.՝ մարմնակալ: Այս բառը չի կիրառուում, մարմնակալ ասելով հասկանում ենք որեւէ զարդարուն կտաւ, ընտիր կերպասէ, կամ ասեղնագործուած (ծիսականօրէն) մաքուր սպաւմ՝ շափատր մեծութեանը, որը պատարագի ժամանակ սկիհի տակ է փռում ի պատիւ եւ ի յարգանք սրբութեան (նոյն տեղում, էջ 68): «Գորփուրայ»-ն որպէս «շուշպայ»-ի հոմանիշ տրուած է Նոր բառգիրք հայկազեան լեզուի, էջ 491, սակայն ըստ Օրմանեանի՝ 20-րդ դարի սկզբներին այլեւ չի կիրառուում:

⁷ **Նոր բառգիրք հայկազեան լեզուի**, հ. Ա., էջ 599:

⁸ **Հայերէն արմատական բառարան**, հ. Ա., էջ 627-628:

⁹ **Հայերէն բացատրական բառարան**, հ. 1, էջ 492:

կան՝ սրբավայրում տուեալ իրի գործածութեան ուղղափառ դաւանաբանական հենքը: Հստ նրա, «Դաստառակը ձեռքում բռնելու գործածելի կտաւ կամ պաստառ է: Իրականում քառակուսի կամ քառանկիւնի պաստառ է, եզրերը կարուած կամ գործուած, ծայրերը կամ անկիւնները ասեղնագործուած ու զարդարուած: Զանազան տեսակների են լինում: Կան քառանկիւնի երկարներ՝ ծայրերը զարդարուն ձեռքը սրբելու համար, կան մեծ քառակուսիներ, թէ եզրերը, եւ թէ անկիւնները գործուած, որոնք գործածուած են իբրեւ ծրար կամ ծածկոյթ, կան միջակ չափով քառակուսիներ՝ նոյնպէս զարդարուած, սպասքը բռնելու համար, կան աւելի փոքրերը, որեւէ այլ բան գործածելու համար: Սրանք բոլորն էլ միեւնոյն անուան տակ են հասկացուած: Բարեպաշտուհիների՝ յատկապէս ձեռագործի վարժուող սկսնակ օրիորդների կողմից եկեղեցուն են նուիրում եւ գործածուած են ըստ հարկի: Օրհնութիւն չունեն, բայց չպէտք է մէկ անգամ եկեղեցուն նուիրուած եւ սուրբ կիրառութեան համար յատկացուած իրերը գործածել անխտիր իբրեւ հասարակ զարդ՝ ամէն բանի համար»¹⁰:

Այսինքն Օրմանեանի բացատրութեամբ եկեղեցում գործածուող բոլոր կտորեղէնները ընդհանուր առմամբ կոչւում են դաստառակ, որը նոյնիմաստ է շուշպային: Դաստառակի բացատրութեան մէջ կան ժողովրդական սրբավայրերի կտորեղէնի բոլոր տեսակները, որին ժողովուրդն այսօր անուանում է «շուշպայ»: Բնականաբար, ժողովրդական սրբավայրում կիրառուող շուշպաները նոյնպէս օրհնութիւն չունեն, սակայն սրբավայրի ամենասրբազան իրերի ընկալումն ունեն: Շուշպայի՝ ժողովրդական քրիստոնէական եւ պաշտօնական քրիստոնէական ծիսական գործածութեան ու ընկալման ամենակարեւոր տարբերութիւնն այն է, որ ժողովրդական սրբավայրերում շուշպան ունի շատ էական ծիսական նշանակութիւն, այլ ոչ թէ օգտագործուած է որպէս ծածկոյթ, սրբիչ, ծրար կամ մաքրիչ:

Դաստառակը, բացի եկեղեցական-սրբավայրային նշանակութիւնից, ժողովրդի մէջ ունեցել է նաեւ որոշակի կենցաղային կիրառութիւն, սակայն որքան էլ այն լինէր կենցաղային, վերաբերում էր ամենասրբազան երեւոյթներին՝ խմորին եւ հացին:

Այսօր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում «դաստառակ» բառը չի օգտագործուում, իսկ «շուշպան» այն կտորն է, որով բռնում են կամ որի վրայ դնում են խաչերը, աւետարանները, սրբապատկերները, մասունքները¹¹:

Շուշպայի ժողովրդական ընկալումները եւ տեսակները

Այցելելով ցանկացած փակ սրբավայր (որեւէ կառոյց, որը ծածկ ունի)՝ կարելի է նկատել բազմաթիւ եւ բազմապիսի կտորեղէններ ու գործուածքներ, որոնք դրուած են սուրբ սեղանին, պատերի երկայնքով զուգահեռ անցկացրած պարանների վրայ, կախուած են սրբավայրի սիւներին խփած մեխերից, ծածկում են խաչքարերի, դեկորատիւ քարէ ինչ-ինչ բեկորների վերնամասերը, դրանց մէջ են փաթաթուած սրբավայրի պաշտամունքային առարկաները եւ այլն: Այդ կտորեղէններն ու գործուածքները տարատեսակ սրբանկարների (կանոնիկ եւ ոչ կանոնիկ), խաչերի, Աւետարանների եւ կրօնական բովանդակութեան գրքոյկների եւ այլ առարկաների հետ կազմում են սրբավայրի նուիրատուութիւնները: Ժողովրդական քրիստոնէական սրբավայրում այսպէս գործածուող վերոնշեալ կտորեղէնը եւ գործուածք-նուիրատուութիւնները կոչւում են շուշպայ: Որքան շատ են շուշպաները, այնքան աւելի հին ու սիրուած է սրբավայրը, յաճախ դրանք հաւաքում եւ պահում են յատուկ արկղերի կամ սնդուկների մէջ, քանի որ բոլորը հնարաւոր չէ ի տես տեղաւորել սրբավայրում:

¹⁰ Ծիսական բառարան, էջ 71:

¹¹ Տեղեկութեան համար շնորհակալութիւն եմ յայտնում Տէր Առնակ Քահանայ Յարութիւնեանին:

ՀՀ-ում կարելի է հանդիպել շուշպայ բառի անուանման նաեւ այլ տարբերակ: Այսպէս Գեղարքունիքի Արծուաքար գիւղում շուշպային անուանեցին «կաբլուխ»: Բարբառագետ պ.գ.դ. Հ. Մեսրոպեանի հետ քննարկել ենք բառի ժագումը եւ եկել եզրակացութեան, որ այն թիւրքական լեզուներից փոխառեալ «ղափլուղ» (վարագոյր) բառն է, որը Բայազետի բարբառային տարածքի Արծուաքարի խօսուածքում ենթարկուել է համակարգային հնչիւնափոխութեան եւ գործածուել է «կաբլուխ» տարբերակով¹²:

Վերոնշեալից պարզ է, որ գործուածք-կտորեղէնները կամ շուշպաները նուիրատուութիւններ էին: Այդ նուիրատուութիւնները կարելի է բաժանել երկու մասի՝ ա. այն առարկաները, որոնք նուիրաբերում են սրբավայրին յատուկ փափաքով այցելութեան՝ ուխտի ժամանակ եւ բ. այն առարկաները, որոնք նուիրաբերում են փափաքը՝ ուխտը իրականանալուց յետոյ: Շուշպաներ կարող են նուիրաբերել երկուսի դէպքում էլ:

Ի տարբերութիւն նկարների (հազուադէպ բացառութեամբ, յատկապէս եթէ նկարը արուած է ձեռքով, այլ ոչ յայտնի որեւէ նկարի վերատպութիւն է), խաչերի, Աւետարանների եւ այլ նուիրատուութիւնների, շուշպաների վրայ առկայ են ասեղնագործած կամ ներկով, գրիչով գրուած մակագրութիւններ: Այս մակագրութիւններում հիմնականում նշուել է, թէ դրանք ո՞ւմ կողմից են նուիրաբերուել, ո՞ւմ են ուղղուած՝ որպէս կանոն՝ տուեալ սրբավայրի սրբին¹³, ո՞ւմ են խնդրում աջակցել, երբեմն կարող են լինել աղօթքներ եւ բարեմաղթանքներ:

Շուշպաները քառանկիւն (հազուադէպ՝ նաեւ եռանկիւնի) պաստառներ են, որոնք կարող են լինել ասեղնագործած՝ երբ վրան ասեղնագործած են նաշխեր, խաչեր եւ գրութիւններ, կարուած՝ երբ սպիտակ կտորի վրայ կարմիր խաչ է կարուած, նկարազարդուած՝ երբ վրան ձեռքով պատկեր է նկարուած (մատիտով, գրիչով, ներկերով), գործարանային արտադրանք՝ շալեր եւ գլխաշորեր («շուշպայ» բառի ասորերէն ուղիղ իմաստով¹⁴): Որոշ դէպքերում շուշպաները ծրարանման կարուած փոքր պարկեր են, որտեղ պահում են պաշտամունքի առարկայ հանդիսացող գրքեր կամ մասունքներ:

Ամենայն հաւանականութեամբ նկարազարդուած շուշպաները իրենց ձեւով շատ մօտ են Քրիստոսի եւ Ս. Աստուածածնի անձեռակերտ դաստառակների իմաստաբանութեանը: Ստ. Մալխասեանի մօտ «դաստառակ»-ի բացատրութիւնների մէջ է նաեւ՝ «անձեռագործ դաստառակ, կտաւ, որի վրայ ըստ աւանդութեան նկարուած է Քրիստոսի պատկերը՝ անձեռագործ կերպով: Խօսքը Յիսուսի կենդանագիր պատկերի մասին է (Աբգար թագաւորի սուրհանդակ-նկարիչ Անանի կողմից նկարուած դաստառակը), որի առասպելը յիշատակում է Մովսէս Խորենացին¹⁵: Ս. Աստուածածնի անձեռակերտ դաստառակի մասին պատմութիւնը յայտնի է Վանի շրջանում գտնուող Հոգւոց վանքի առասպելից: Ահա այդ հատուածը. «Երբ Մարյամ հիվանդացաւ, բոլոր աշակերտներ այնտեղն էին, մինակ Բարթողեմէյոս գնացեր էր շրջաններ: Մայրամ, իր մահանալ գուշակելով՝ կանչեց աշակերտներին, հայտնեց իր մահ, իսկ իմացաւ, որ Բարթողեմէյոս այստեղն է, որովհետեւ իրար շատ էին սիրում: Կանչեց Պողոսին, ըսաւ. «Բերեք ինձ մի թաստարակ (քառակուսի կտաւ)»: Առեց կտաւ, պարզեց երեսի, կենդանակիր պատկեր նկարվեց կտավի վրան: Ու հայտնեց բոլորին. «Երբ Բարթող կուգա, անպատճառ սա պատկեր նրան տաք»¹⁶:

¹² Քննարկման համար շնորհակալութիւն եմ յայտնում Բ.գ.դ. բարբառագէտ Հ. Մեսրոպեանին:

¹³ Յանախ շուշպայի վրայի մակագրութիւնից եմք իմանում սրբավայրի անուանումը:

¹⁴ Հայերէն արմատական բառարան, հ. Գ., էջ 537:

¹⁵ Մովսէս Խորենացի, Հայոց Պատմութիւն, աշխ.՝ Ստ. Մալխասեանցի, Երեւան, 1981, էջ 178:

¹⁶ Աբրահամ Աբրահամեան, Վանի Սուրբ Հոգւոց վանքի կոնդակի պատմութիւնը, ՀՀ Ազգային արխիւ, ֆոնդ 1336, Յուցակ 7, գործ 954, ք., 025150-025165:

Ժողովրդական սրբավայրերում ձեռքով նկարազարդուած սպիտակ քառակուսի կտանները նոյնպէս կոչւում են շուշպայ, եւ դրանց վրայ պատկերուած է Քրիստոս կամ Ս. Աստուածածինը: Այսինքն Քրիստոսի եւ Ս. Աստուածածնի պատկերման աւանդոյթը եւ ընկալումը կտաւի վրայ որպէս սրբապատկեր դարերի ընթացքում պահպանուել է Ժողովրդի մէջ, եւ այսօր էլ լայնօրէն տարածուած է սրբավայրերում: Ըստ Տարագրոսի. «Տախտակի վրայ շատ հազուագիւտ դէպքերում էին նկարում, աւելի շատ նկարում էին կտաւի վրայ, յենուելով այն առասպելի վրայ, թէ Քրիստոսի դաստառակը նկարուել էր կտաւի վրայ, եւ դրա համար եկեղեցում սրբերի նկարները թղթի վրայ նկարածը չէր ընդունուում»¹⁷:

Շուշպաներն այնքան սրբազան լինելու համարում ունեն մարդկանց շրջանում առ այսօր, որ յատուկ խնամք են պահանջում: Տարին մէկ անգամ կամ, երբ շուշպաները տեսքից ընկնում են, դրանք լուացւում են: Լուանում են անպայման նոր տաշտի կամ, առաւել յաճախ, խմորի տաշտի մէջ, քանի որ այն ամենամաքուր սպասքն է, եւ, հաւանաբար, այն պատճառով, որ հնուց անտի հայ Ժողովրդի մօտ հացը, հացի տաշտը սրբազան են դիտարկուել¹⁸, ուստի սրբազան առարկայ շուշպան հացի տաշտում լուանալը պատահական չպէտք է դիտել: Դեռ վերջերս շուշպաները լուանում էին միայն չամուսնացած, կոյս (ազապ) աղջիկները, սակայն այսօր այդ արգելքն այնքան էլ խստութեամբ չի պահուում: Քանի որ շուշպաները ամենասրբազան առարկաներից են, ապա բնականաբար սրբազան առարկային պէտք է դիպչի մաքուր, անմեղ մարդը՝ այս հաշուի առնելով հասկանալի է դառնում կոյսի գործօնը:

Լուանում են առանց օճառի, որոշ դէպքերում՝ մաքուր ջրով, որոշ դէպքերում՝ լուացքի փոշիով: Թւում է թէ լուացքի փոշին կիրառուում է այն պարզ պատճառով, որ օճառի արգելքի ժամանակ դեռ փոշին չկար, ուստի արգելքը չի տարածուում փոշու վրայ: Լուանալուց եւ չորացնելուց յետոյ շուշպաներն արդուկում են եւ տեղաւորում իրենց տեղերում՝ սրբավայրի մէջ: Օգտագործուած ջուրը թափում են ծառերի տակ, պատերի վրայ կամ տալիս են խմելու գառներին եւ հորթերին, ջուրը ոչ մի դէպքում չի կարելի թափել այլ տեղերում, քանի որ այն կարող են «կոխել» մարդիկ եւ կենդանիները՝ անարգելով այն¹⁹:

Բացառիկ դէպքերում կայ շուշպայ լուանալու, չորացնելու եւ իրենց տեղերը դրնելու ժամային արգելք՝ այդ գործողութիւնները պէտք է արուեն մինչեւ մութն ընկնելը, այսինքն միայն արեւի լոյսի ներքոյ: Այդ իսկ պատճառով այդ գործողութիւնը սկսում են

¹⁷ Յովհաննիսեան Ա., Վարպետաց վարպետ Տարագրոսը, Հայկազեան հայագիտական հանդէս, Պէյրուք, հատոր ԼԱ, 2011, էջ 669:

¹⁸ Հացի սրբազանութեան մասին է վկայում այն, որ Ժողովրդական ընկալումներում հացն ունէր յատուկ հացի հրեշտակ, որին յիշում էին հաց թխելու ժամանակ: Օրինակ. «Հաց, հացի հրեշտակ, // Արդար եզան վաստակ, // Ելնաք բարեխօս առ Աստուած», **Քենաէ**, Բուլանըլի կամ Հարֆ գաւառ, Ազգագրական հանդէս, Զ., Թիֆլիս, 1900, էջ 9: Հացի տաշտի սրբազանութեան մասին է վկայում այն, որ նոր մկրտուած երեխային «միտունից հանում են» լողացնելով հացի տաշտի մէջ, իսկ ջուրը թափում են թոնրի կամ օճախի մէջ, որպէս սուրբ տեղեր, քանի որ այդ ջրի մէջ է գտնուում միտունի մնացորդներ: Օրինակ. **Լալայեան Ե.**, Բորչալուի գաւառ, Ազգագրական հանդէս, IX, Թիֆլիս, 1902, էջ 257:

¹⁹ Ծիսական հետաքրքիր նմանութիւն կայ շուշպաների եւ «մառասնակոյի» եղած մանկիկի լուացման միջեւ: Ոսկեհասկում մեր գրանցած նիւթի համաձայն. «Քառասնակոյի եղած երեխային բերում են սրբի (Գրիգոր Նարեկ) տուն լողացնելու: Յատուկ տաշտի մէջ երեխայի ձեռքերն ու երեսը երեք անգամ լուանում է տան տիկինը: Մի օր յետոյ տան անդամը երեխային տանը՝ մաքուր տաշտի մէջ առանց օճառ լողացնում է: Ինչից յետոյ քառասնակոյին անցնում է: Խորհրդանշական առումով՝ սրբի տանը «կնքում» են, իսկ հայրական տանը «միտունից» հանում են: Լուացած ջուրը լցնում են ծառի տակ»: Հաշուի առնելով խորհրդային անաստուածութեան շրջանում հոգեւոր կարիքների բաւարարման համար եկեղեցուց զրկուած լինելու հանգամանք, վերոնշեալը կարելի է դիտել որպէս եկեղեցական խորհրդակատարութեան կրկնօրինակման դրսեւորում: **Յակոբեան Հ., Յովհաննիսեան Ա.,** ԴԱՆ, Շիրակ, Ոսկեհասկ, 2019, ասացող Խորշոտեան Նորայր, 1958 թ.:

վաղ առաւօտից²⁰: Կարելի է ենթադրել, որ այս դէպքում գործ ունենք «Արեգակն արդար, Յիսուս Քրիստոս» ընկալման հետ: Ամենայն հաւանականութեամբ, աւանդոյթը գալիս է նախաքրիստոնէական ժամանակների արեւապաշտութեան դրսեւորումներից, ինչը չի հակասում «Արեգակն արդար»-ին: Սակայն որեւէ պատմական յիշատակութիւններ շուշպաների գործածման եւ լուսցման մասին նախաքրիստոնէական ժամանակներից չկան: Ժողովրդական հաւատալիքների համաձայն գիշերը պատկանում էր անդին աշխարհին, սովորական գործերի համար կային գիշերային արգելքներ: Կարող ենք բերել ժողովրդական այսպիսի ասացուածք. «Առաւօտուայ բանը բանի, գիշերուայ՝ դեւ խանգարի»²¹:

Շուշպաները չի կարելի հեռացնել սրբավայրից, ինչ-որ գեղագիտական պատճառներից ելնելով, կամ վերցնել՝ առանց ստոյգ նպատակի, քանի որ տուեալ սրբավայրի «սուրբը» կարող է պատժել՝ դրանք պատկանում են սրբին, այլ ոչ թէ սրբավայրի տիրոջը: Քանի որ յաճախ շուշպաները որեւէ անձի անունից կամ որեւէ անձի համար են նուիրում սրբավայրին, ապա դրանք կարող են կարուած լինել ընտանիքի իւրաքանչ-իւր անդամի անունով:

Հետաքրքրական է մեր դաշտային ազգագրական աշխատանքների ժամանակ մեզ հանդիպած այս դիպուածը, երբ տան տիկինը իր ձեռքով շուշպաները կարել է ընտանիքի անդամների համար, բացառութեամբ հարսի, «քանի որ նորեկ էր եւ դեռ ընտանիքի անդամ չէր համարւում»²²:

Շուշպաների յօդուածում մատնանշուած ծրար-շուշպաների կամ մասունքների եւ սուրբ գրքերի համար պատեան ծառայող, որպէս փաթաթան օգտագործուող շուշպաների պարագայում ունենք դրանք չլուանալու հանգամանք, իսկ մաշուելու դէպքում դրանք փոխարինւում են նորերով: Երբեմն, երբ սրբազան առարկաները պարուրող շուշպան նորով է փոխարինւում, դա պատճառաբանւում է տուեալ «սրբի» օգնութեամբ ծանր հիւանդութիւնից կամ մեծ փորձանքից ազատուող անձի անուանական նուէրով, ինչը «սրբի» տերը²³ չի կարող մերժել: Որոշ դէպքերում էլ սրբազան առարկան շարունակում է, երբեմն տասնեակ տարիներ ի վեր, պահպանուել այն շուշպայի մէջ, որով այն բերուել է ներկայ սրբավայրը:

Երբ շուշպաներն այնքան են մաշուում, որ այլեւս հնարաւոր չէ պահել, ապա դրանք ոչնչացւում են: Սակայն այստեղ եւս կան յատուկ ծէսեր: Մաշուած շուշպաները միայն այրւում են, իսկ մոխիրը կրկին թափում են ծառերի տակ կամ թաղում են հողի մէջ՝ այգում կամ եկեղեցու բակում:

Շուշպաներով կատարուող ծէսերը

Ի հարկէ, ժողովրդական քրիստոնէութեան մէջ սրբազան առարկայի համարում ունեցող շուշպան չէր կարող չօգտագործուել զանազան ծէսերում: Այդ ծէսերից թերեւս ամենատարածուածը կապուած է զաւակատուութեան հետ: Յայտնի զաւակատու սրբավայրերի շուշպաները ամուլ կանայք, ուխտից յետոյ, կապում են իրենց մէջքներին որպէս գօտի եւ վերադառնում են տուն՝ 30-40 օր, երբեմն մինչեւ երեք ամիս պահելով

²⁰ Յակոբեան Հ., Յովհաննիսեան Կ., ԴԱՆ, Շիրակ, Գեաթ, 2019, ասացող Օսան Ամիրխանեան, 1938 թ.:

²¹ Նազարեան Ա., Էջմիածնի եւ Աշտարակի բամանխատքին, Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի արխիւ, Ա. Նազարեանի ֆոնդ, թղթ. 1, էջ 123: Յերեկուայ եւ գիշերուայ մասին ժողովրդական հաւատալիքների մասին մանրամասն տե՛ս՝ Սիմոնեան Լ., Հայ ժողովրդական տոմար, Ատենախօսութիւն պատմական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճանի համար, Երեւան, 2012, էջ 156-160:

²² Յակոբեան Հ., Յովհաննիսեան Կ., ԴԱՆ, Շիրակ, Այգաբաց, 2019, ասացող Հեղինէ Ներիցեան, 1959 թ.:

²³ «Սրբի տէր» ասելով նկատի է առնւում այն ընտանիքը, տոհմը կամ դրանց անդամը, ում սեփական տարածում է գտնւում սրբավայրը, ուխտատեղին:

իրենց մօտ: Այդ շուշպաները կարելի է հանել միայն լողանալուց եւ քնելուց, ընդ որում այդ ժամանակ դրանք դրուում են բարձի տակ՝ փաստօրէն, քնած ժամանակ գտնուելով գլխի տակ: Ժամանակը լրանալուց յետոյ շուշպան պէտք է վերադարձնել սրբավայր, հետը որպէս ընծայ բերելով եւս մէկ շուշպայ՝ ժողովրդի լեզուով ասած՝ «գոյգած»: Զաւակ ունենալուց յետոյ, յաճախ, կախուած այս կամ այն սրբավայրում ընդունուած «կանոններից», խնդրողները եօթ տարի այցելում են սրբավայրը, որից յետոյ կրկին անգամ նուէր են բերում շուշպայ եւ մատաղ են անում:

Քանի որ գօտկատեղային մասում է գտնուում պորտն ու արգանդը, կնոջ մէջքակապուծիւնը զաւակատուութեան այդ երկու կարեւորագոյն կէտերն են ամրապնդում, այսինքն շուշպայի սրբազան զօրութիւնը հզօրացնում է, նեցուկ ու ապաւէն է դառնում այդ կէտերի համար:

Միւս տարածուած ծէսն է շուշպայի օգնութեամբ բժշկումը: Սրբավայրի շուշպաները կապում են ցաւացող գլխին, քսում են մարմնի ցաւացող, հիւանդ տեղերին, վերքերին: Որոշ դէպքերում՝ գորտնուկների եւ ոտքերի ցաւի պարագաներում, գորտնուկը կամ ցաւացող ոտքերը շփում են սրբավայրի աւելով, յետոյ սրբում են շուշպայով, եւ դրանք, ըստ ժողովրդական քրիստոնէական հաւատալիքների, բուժում են: Երբեմն շուշպայի զօրութիւնը կրկնապատկուում է սրբավայրի սրբազան այլ առարկաների՝ խաչերի եւ սուրբ գրքերի միջոցով:

Տարածուած է բանակ գնալիս զինգրքոյկի մէջ, գրպանում կամ ծոցում պահել շուշպայից կտրուած մի կտոր: Նոյնն անում են արտասահման մեկնելիս: Շուշպայից փոքր հատուած, որպէս կանոն, կտրում է սրբավայրը խնամող կինը կամ ընտանիքի մայրը: Այս դէպքերում շուշպան ունի պահպանիչ զօրութիւն:

«Սրբազան» շուշպան, ըստ հաւատալիքների, կարող է մաքրագերծել ջուրը եւ երկարակեցութիւն ապահովել: Այսպէս, ասացողի պատմելով. «Եղսան տատս (տատի սկեսուրը) ապրեց 96 տարի եւ շատ հանգիստ մահացաւ՝ իր սիրած թթի ծառի տակ նստած, սրբի մօտ: Ամբողջ կեանքը խմել է միայն շուշպայի ջուրը: Շուշպան իջեցնում էր ջրի մէջ եւ խմում էր միայն շուշպայի մէջ հաւաքուած ջուրը»²⁴:

Իւրայատուկ ծէս է շուշպան ննջեցեալի կրծքին կամ ծոցը դնելը եւ հետը թաղելը՝ «դա օրհնութիւն է մահացածի համար»²⁵: Այսպիսի բնոյթ ունեցող սրբավայրի դէպքում շուշպան չի կարելի օգտագործել ցաւերը դարմանելու համար, ըստ ասացողի. «Մի օր մի գիւղացի գալիս, մտնում է սրբավայր, առանց հարցնելու վերցնում է շուշպան ու կապում գլխին, որ գլխացաւն անցնի: Սուրբը բարկանում է, այդ մարդուն «տալիս է գետնով»: Մամիկը (ասացողի տատին՝ սրբավայրի խնամողը) գալիս է, մի կերպ շուշպան հանում է այդ մարդու գլխից, իրեն էլ բարձրացնում՝ կանգնացնում է»²⁶:

Շուշպան, որպէս սրբազան առարկայ, զօրաւոր ներգործմամբ էլ աւելի է բարձրացնում սրբազան արարողութեան զօրաւոր լինելու ընկալումը: Այսպէս, որոշ դէպքերում. «Երբ օրհնած աղը տալիս են գառին, ականջից արին են հանում՝ քսում մատաղի տիրոջ ճակատին, սրբավայրի տէրը ձեռքում բռնած շուշպայով խաչակնքում է գառանն ու մատաղի տիրոջը, ասելով՝ «մատաղն ընդունելի լինի»²⁷: Այստեղ եւս, հաւանաբար, գործ ունենք եկեղեցական արարողութեան ժողովրդական դրսեւորման

²⁴ Յակոբեան Հ., Յովհաննիսեան Կ., ԴԱՆ, Արմաիր, Շէնաւան, 2020, ասացող՝ Լեոնիկ Սիմոնեան, 1968:

²⁵ Սիմոնեան Լ., Յակոբեան Հ., Յովհաննիսեան Կ., Ղազարեան Գ., ԴԱՆ, Արագածոտն, Հարթաւան, 2020, ասացող՝ Սուրէն Յակոբեան, 1936:

²⁶ Նոյն տեղում:

²⁷ Սիմոնեան Լ., Յակոբեան Հ., Յովհաննիսեան Կ., Ղազարեան Գ., ԴԱՆ, Արագածոտն, Մուլֆի, 2020, ասացող՝ Դարեգին Տէր-Պողոսյան, 1936:

կամ կրկնօրինակման հետ: «Սրբի» տէրը ստանձնում է հոգեւորականի դերը, բայց, բանի որ նա չունի հոգեւորականի պաշտօնը, ապա նրա խաչակնքմանը զօրութիւն է տալիս սրբազան շուշպան:

Որոշ դէպքերում, շուշպայ կարող են անուանուել կարմիր, աւելի քիչ դէպքերում նաեւ կանաչ երկար ժապաւէններ: Այսպէս, Շիրակի Գեղանիստ գիւղում սրբավայրերում տարածուած են կարմիր-կանաչ ժապաւէնները՝ նորափեսայի կոսքանդի նմանութեամբ: Գիւղացիները յստակ բացատրութիւն չտուեցին, ասելով, որ դրանք նոյնպէս շուշպաներ են եւ նուիրում են սրբավայրին²⁸: Շիրակի Սարատակ գիւղի Թուխ Մանուկ սրբավայրում բազմաթիւ կարմիր ժապաւէնների վրայ գրուած էին պատանիների անուններ, որոնք ծառայել կամ դեռեւս ծառայում էին բանակում: Այդ անուանակիր ժապաւէն-շուշպաները բանակ գնալուց առաջ բերել էին իրենք գնացողները կամ յետոյ բերել էին ուրիշները՝ բանակում ծառայող իրենց ընկերների համար²⁹:

Թերեւս շուշպայի սրբազանութեան ընկալումը պայմանաւորուած է այն հանգամանքով, որ այն սերտօրէն առնչում է սրբազան առարկաներին՝ սուրբ գրքեր, մասունքներ, խաչեր, սրբապատկերներ, նոյնիսկ հաց եւ խմոր: Շուշպաները ոչ միայն պահպանում են այդ սրբազան առարկաները, այլեւ դրանց հետ շփուելուց զօրութիւն ունենալու համարում են ունենում:

Եզրակացութիւն

Շուշպաների սերտ առնչութիւնը սրբազան իրերի եւ մասունքների հետ պայմանաւորում է դրանց ընկալումը որպէս սրբազան առարկաներ: Շուշպաները լայնօրէն օգտագործւում են ծէսերում, եւ գոյութիւն ունեն դրանց հետ վարուելու յատուկ կանոններ:

Բաւական յաճախ ժողովրդական քրիստոնէութեան որոշ ծէսեր եւ արարողութիւններ կրկնօրինակում են պաշտօնական եկեղեցու կամ քրիստոնէական ծէսերն ու արարողութիւնները, որտեղ քահանային փոխարինում է «սրբի» տէրը, որը իր զօրութիւնը, շնորհքը ստացել է անմիջապէս սրբից կամ սրբավայրում գտնուող սրբազան առարկայից: Սրբի տէր-ծիսակատարի այդ գործառնութիւն անմիջապէս ի յայտ է գալիս հէնց շուշպաների հետ նրա վարուելաձեւից, որը կարելի է դիտարկել շուշպայով խաչակնքելու, յատուկ տաշտի մէջ «քառասունքակոխ» եղած երեխային «կնքելու» եւ այլ գործողութիւնների մէջ: Այս միտումը յատկապէս ուժեղացել է խորհրդային կարգերի ժամանակ, երբ արհեստականօրէն խզուել էր կապը ժողովրդի եւ Եկեղեցու միջեւ:

Միւս կողմից, ոչ միայն եկեղեցական արարողութիւններն ու ընկալումներն էին իւրօրինակ ձեւով տեղ գտնում ժողովրդական քրիստոնէութեան մէջ, այլեւ հակառակը՝ ժողովրդական ընկալումներն էին ներմուծում եկեղեցական կենցաղ: Դրա վառ ապացոյցն այն է, որ այսօր Հայ Առաքելական Եկեղեցում չի գործածւում «ղաստառակ» բառը, եւ խաչերը, աւետարանները, սրբապատկերները ծածկում եւ բռնում են գործածքեղէնով, որը կոչւում է «շուշպայ», ինչը, թերեւս, պէտք է համարել ժողովրդական աւանդութիւնի ազդեցութիւն:

ԿԱՐԷՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան
ինստիտուտի գիտաշխատող, Մաշտոցեան Մատենադարան

²⁸ Սիմոնեան Լ., Յակոբեան Հ., Յովհաննիսեան Կ., Ղազարեան Գ., ԴԱՆ, Շիրակ, Գեղանիստ, 2020:

²⁹ Սիմոնեան Լ., Յովհաննիսեան Կ., ԴԱՆ, Շիրակ, Սարատակ, 2016:

ԿՐՕՆԱԿԱՆ

**ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱԴՈՒՆՔՆԵՐԸ
Բ.**

Կարելի է ըսել որ այս աղօթքը ձեռնադրութեան ամենէն էական աղօթքն է, որուն միջոցաւ եպիսկոպոսը ամենէն բացորոշ կերպով կը թուէ քահանայական գլխաւոր պարտաւորութիւններն ու իրաւունքները, որոնք ձեռնադրութեան ընթացքին կը տրուին ընծայեալին: Այս աղօթքը քահանային պարտականութեան հրովարտակն է եւ պէտք է ընդունինք հետեւեալ երկու կարծիքներէն մէկը. կա՛մ այս աղօթքին միջնորդութեամբ իւրաքանչիւր քահանայի յանձնուած պարտաւորութիւններն ու իրաւունքը իրական շնորհներ են, զորս պէտք է ամէն բարեխիղճ քահանայ մշակէ եւ արդիւնաւորէ այնքան ատեն որ կենդանի է (այլ խօսքով, քահանայութիւնը միայն Կիրակի օր մը տեղի չունենար ձեռնադրութեամբ, այլ ցկեանս մշակուելիք եւ կատարելագործուելիք կոչում մըն է: Քահանան մէկ օրուայ ընթացքին կը ձեռնադրուի քահանայ, բայց քահանայ ըլլալը ցկեանս կատարուելիք պարտականութիւն մըն է), կա՛մ քահանայական ձեռնադրութիւնը խաղ մըն է, կատակերգութիւն մը: Եպիսկոպոսը իր ձեռքը նորընծային վրայ դնելով՝ կ'աղօթէ նախ որ աստուածային շնորհը առաջնորդէ եւ զօրացնէ ընծայեալը, որպէսզի «կացցէ հաստատուն և անաւատ ի գործս փառանայութեան»:

Ա. Մայր Մաշտոցը ամենէն առաջ եւ ամենէն կարեւորը կը համարէ քարոզութիւնը¹: «Եղիցի սա մշակ առանց ամօթոյ, ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեան, սերմանել զկենդանաւոր և զուղղափառ հաւատս առաքելական Եկեղեցւոյ յամենայն լսողս»: Ոչ ոք կրնայ կասկած ունենալ այս պաշտօնին կարեւորութեան մասին: Այս խօսքերը առնուած են Պօղոս Առաքեալի Տիմոթէոսի ուղղուած նամակէն (Բ. Տիմ. 2.15), ուր առաքեալը կը խրատէ երիտասարդ եպիսկոպոսին՝ «մի բանակոխ լինել յոչինչ պէտս», այլ իր բոլոր ոյժը նուիրէ Ս. Աւետարանի քարոզութեան, որուն համար ձեռնադրուած է: Ուստի մեր Եկեղեցին, Տիմոթէոսի ուղղուած այս խօսքերով եւ քահանաները պաշտօնի կոչելով՝ կ'ուղէ մեզի հասկցնել որ քահանայական պաշտօնի առաջին եւ ամենէն կարեւոր պարտքն է քարոզել զբանն ճշմարտութեան: Այլ խօսքով, ամէն քահանայ այնքան որքան պարտաւոր է քարոզել, նոյնքան եւ իրաւունք ունի քարոզելու «զուղղափառ հաւատս առաքելական Եկեղեցւոյ յամենայն լսողս», որքան Տիմոթէոս ունէր կամ որքան ոեւէ մէկ ուրիշ ժամանակակից եպիսկոպոս կամ Աւետարանին արտօնեալ քարոզիչ կրնայ ունենալ: Քահանայութիւնը ոչինչ է եթէ ոչ Աւետարանի քարոզութիւնը իր լրութեամբ եւ ամբողջութեամբ, որ քահանայական աստիճանի ամենէն էական եւ առաջնակարգ տարրը կը կազմէ: Գօսացեալ եւ անկենդան է այն կրօնական հաստատութիւնը՝ Քրիստոսի հիմնած հաստատութենէն օտար է այն Եկեղեցին, որուն քահանաները անդադար չեն քարոզեր եւ չեն հետեւիր իրենց Երկնաւոր Վարդապետին, որ երեք տարի անընդհատ քարոզեց եւ ոչ մէկ պատուիրան այնքան ստիպողական կերպով

¹ Հոգեւորականի փարզակալ գործունէութեան մասին տե՛ս նաեւ **Գարեգին Բ. Կաթողիկոս**, Համառօտ Ձեռնարկ Հովուական Աստուածաբանութեան, Եկեղեցւոյ Պաշտօնեան որպէս Փարոզիչ (էջ 223 - 255): Իւսափանչիւր փառանայական թեկնածու, իր ուսումնական աշխատանքին մէջ, ամենէն մեծ կարեւորութիւնը պէտք է տայ փարզակալ իր կարողութիւններուն լաւ եւ հաստատ հիմքերու վրայ դրուած աշխատանքին: Մեր կարծիքով, այն փառանայութեան թեկնածուն, որ իր ուսումնական աշխատանքին եւ դասերուն այս կէտին մէջ չի յաջողիր, պէտք չէ ձեռնադրուի, մինչեւ այս կարողութիւնը բարելաւուի, **ԼՈՅՍ** 1905, թիւ 3, էջ 49 - 54:

աւանդեց իր Եկեղեցւոյ եւ հետեւորդներուն որքան քարոզութեան պատուէրը:

Բ. Քահանայական երկրորդ շնորհքը յանուն Յիսուսի ախտաւորները բժշկելն է, մեր Տիրոջ եւ սրբազան առաքեալներուն օրինակով: Որովհետեւ այս շնորհքին արդիւնաւոր գործունէութիւնը կախում ունի քահանային եւ հիւանդին անձնական հաւատքէն, դժուար է յաջողութեան աստիճան դնել այդ գործունէութեան վրայ, ինչպէս նաեւ դժուար է ստուգել եւ տեսնել քահանային քարոզչական գործունէութեան արդիւնքները: Քահանային պարտականութիւնն է իր ունեցած իշխանութիւնը ի գործ դնել իր քարոզութեան, ինչպէս նաեւ իր բժշկութեան առաքելութեան մէջ, իսկ արդիւնքը կամ յաջողութիւնը այդ առաքելութեան ձգել Աստուծոյ:

Գ. Ձեռնադրութեան աղօթքին միջոցաւ քահանային շնորհուած երրորդ պաշտօնն է Մկրտութեան խորհուրդը² կատարել: Արդարեւ գիտենք Գործք Առաքելոց գիրքէն որ Ս. Փիլիպպոս՝ եօթը սարկաւազներէն մին, որ ո՛չ առաքելութեան եւ ո՛չ երէցութեան (քահանայութեան) աստիճան ունէր, Սամարիոյ մէջ շատեր մկրտեց, բայց դրոշմելու կամ Սուրբ Հոգւոյն շնորհքները պարգեւելու իրաւունք չունէր, եւ այս պատճառաւ Երուսաղէմէն հրաւիրեց Ս. Պետրոս եւ Ս. Յովհաննէս առաքեալները, «որք եկեալ՝ եղին զձեռս ի վերայ նոցա (այսինքն, նորոգ մկրտելոցն), և առնուին Հոգին Սուրբ»: Նոյնպէս նկատի պէտք է առնենք որ Ս. Մկրտութեան խորհուրդը կարելի է վաւերաբար մատակարարել ոեւէ աշխարհական անհատի կողմէ (մինչեւ իսկ ի հարկին՝ կանանց կողմէ): Նոյնը կարելի է ըսել նաեւ բժշկութեան պաշտօնին մասին: Բայց Եկեղեցւոյ բարեկարգութեան համար, մանաւանդ որ ներկայ սովորութեան համեմատ Ս. Մկրտութեան հետ սերտ կապուած է քահանայական աստիճանին միայն յատուկ Դրոշմի սուրբ խորհուրդը: Բժշկութեան եւ Մկրտութեան պաշտօնները մասնաւորապէս քահանաներուն յատուկ է եւ ուրիշներուն (բացի ստիպողական եւ մանաւանդ մահուան վտանգի պարագաներուն) խիստ կերպով արգիւրուած է եւ յանցաւորը կրնայ եկեղեցական-կանոնական պատիժներու ենթարկուիլ:

Դ. Քրիստոնէական Եկեղեցւոյ ամենէն նուիրական հասարակաց աղօթքը՝ Քրիստոսի սուրբ Մարմնին եւ Արեան փրկարար խորհուրդին³ մատակարարութիւնն է, որուն հետ սերտ կերպով առնչուած է ժողովուրդին խոստովանութիւնը լսելու եւ արձակելու խորհուրդը⁴: Այս սուրբ պաշտօնը այնքան կարեւոր է, որ արժանի է մասնաւոր եւ սիստեմատիք ուսումնասիրութեան: Յօդուածիս բուն նիւթին առ ի լուսաբանութիւն կ'արժէ ըսել որ Ս. Պատարագը միմիայն քահանայական աստիճան ունեցող անձերուն վերապահուած է եւ ոեւէ աշխարհական կամ եկեղեցական ստորին աստիճան ունեցող անձ մը (սարկաւազ կիսասարկաւազ, դպիր) չի կրնան վաւերաբար կատարել այս սուրբ խորհուրդը:

Ե. Ս. Պատարագի եւ Ս. Մկրտութեան գլխաւոր եւ փրկարար խորհուրդները մասնաւոր կերպով յիշելէ յետոյ, Եկեղեցւոյ մնացեալ խորհուրդներն ու քահանայական պարտաւորութիւնները ի մի խմբելով՝ Ձեռնադրութեան Մաշտոցը զանոնք կը կոչէ «այլ

² Գարեգին Բ. Կաթողիկոս իր «Համառօտ Ձեռնարկ Հովուական Աստուածաբանութեան» գրքին մէջ (էջ 211-221), յստակօրէն կ'ընդգծէ հոգեւոր հովիւին պարտականութիւններէն մին՝ ծիսակատարութիւնը, որպէս հայ Բանանային կարեւոր պարտականութիւններէն մէկը՝ հիմնուած Հին Կտակարանեան Ահարոնեան Բանանաներուն կերպին, ինչպէս նաեւ եկեղեցական արարողութեանց կամ ծէսերուն հմուտ անձ, որ պէտք է ծէսին լաւ կատարման մթնոլորտը ստեղծէ, ըմբռնէ ծէսին իմաստը եւ անոր կատարման պայմանները (դժբախտաբար կարգ մը Բանանաներ, ըստ կամս փոփոխութիւններ կը կատարեն ծիսակատարութիւններու մէջ): Տե՛ս նաեւ Գրիգոր Վրդ. Չիֆչեանի դասախօսութիւնը՝ «Մէսիս Վերաբժեւորումը Եկեղեցւոյ Այսօրուան Կեանքին Մէջ», խօսուած Քահանայից Համագումարին աոիթով, էջ 103-131:

³ Ազնաւորեան Արք. Զարեհ, «գլխաւորապէս Տեսնել», էջ 297:

⁴ «Պատարագ Բառին Ստուգաբանութիւնը», ԼՈՅՍ, 1905, թիւ 27, էջ 653-654:

ամենայն կարգս փահանայութեան»։ Եկեղեցական պաշտամունքներու վերաբերեալ մի քանի ընթերցուածներ եւ արարողութիւններ կան, որոնք Եկեղեցւոյ բարեկարգութեան համար քահանաներուն վերապահուած են։ Թէեւ ոեւէ աշխարհական կրնայ որեւէ առտընին կամ իբրեւ աղօթատեղի չօծուած սենեակի կամ սրահի մը մէջ, կամ ստիպուած պարագային, երբ քահանայ չգտնուիր, նոյնիսկ օծուած եկեղեցւոյ մէջ յիշեալ աղօթքներն ու մաղթանքները կատարել, բայց եւ այնպէս քահանայական աստիճան չունեցող անձերուն համար կանոնական օրէնքով արգիւտուած է հասարակաց պաշտամունքի այս արարողութիւններուն ձեռնամուխ ըլլալ եւ կարգաւ այն աղօթքներն ու ընթերցուածները, որոնք քահանաներուն յատուկ են. օրինակի համար, ժամերգութեանց գըլխաւոր աղօթքներն ու մաղթանքները, Ս. Աւետարան կարգաւ, օրհնութիւն տալը, վերաբերում կատարելը եւ այլն, որոնց մանրամասնութիւնները եկեղեցական մատեաններէ (Ժամագիրք, Տօնացոյց, Մաշտոց եւ այլն) եւ կանոնական օրէնքներէ ստուգելու է, եւ մասամբ Ձեռնադրութեան յետագայ արարողութեան մէջ յիշուած են։ Բայց այս յօդուածին գրութեան նպատակը վերոյիշեալ հինգ կարեւոր պաշտօնները յիշատակելն էր։

Ձեռնադրութիւնը կը կատարուի այս աղօթքով եւ յետագայ ընթերցուածները, աղօթքները, խորհրդաւոր արարողութիւնները (զգեստաւորում եւ օծում), այս հիմնական աղօթքին ընդլայնումն ու շեշտումն են։

Ձեռնադրութեան հիմնական աղօթքի վերջաւորութեան, եպիսկոպոսը նորընծային ձախ ուսէն կախուած սարկաւագութեան ուրարին ետեւի ծայրը բռնելով դէպի աջ ուսը կը բերէ լծանման՝ արտասանելով. «Առ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի լուծը, որովհետեւ անոր լուծը փաղցր է եւ բեռը՝ փոքր» (Մատթ. 11:29-30)։ Ուրարը Քրիստոսի լուծն է, զոր սարկաւագը կէս չափով միայն ձախ ուսին վրայ) կրելու կոչուած է, իսկ քահանան՝ ամբողջովին, կատարեալ գիտակցութեամբ եւ անթերի պատասխանատուութեամբ իր վրայ կ'առնէ, որովհետեւ Քրիստոսի փոխանորդութեան ահաւոր պաշտօնը պիտի կատարէ մարդոց առջեւ եւ Սուրբ Հոգիէն պիտի առնէ Աւետարանի քարոզութեան եւ սուրբ խորհուրդները մատակարարելու լիազօր իշխանութիւնը։ Քահանան իր բարի կամ յոռի պաշտօնավարութեան համար ուղղակի Աստուծոյ պատասխանատու է։ «Յայսմնեւ պատիւ քո և պատիւ ոչ լիցի ըստ աշխարհականաց, այլ ըստ հրեշտակաց կացելոց և անկելոց⁵։ Զի թէ արժանաւոր կարգիդ լինիս, ընդ հրեշտակս է դասակարգութիւն քո, իսկ եթէ անկանիս, ընդ անկեալ դեւսն է պատիւ քո և ոչ ընդ այլ մեղաւորսն։ Վասն որոյ ասէ մարգարէն, ի գործս մարդկան չեն նոքա, և ըստ մարդկան ոչ տանջեսցին։ Եւ ոչ թէ այսչափ միայն, այլ ի վեր քան զհրեշտակս իշխանութիւն ունի փահանայն, զի աստուածագործ լինի՝ զգործ Քրիստոսի կատարելով եւայլ⁶։

Այլ խորհրդաւոր լծորդութեան կը յաջորդեն Եզեկիէլի, Մաղաքիայի եւ Եսայիի մարգարէական ընթերցուածները, Պետրոսի Առաջին Կաթողիկէաց (Ա. Պետրոս 5.1-4) եւ Տիմոթէոսի (Ա. Տիմ. 1.12-17) թուղթերը, եւ Ղուկասի Աւետարանի հատուածը (Ղուկ. 4.16-21)։ Այս բոլորը լծագրութեան կամ ուրարի նուիրման խորհուրդը կը մեկնեն, եւ անստերիւր փաստ կ'ընծայեն թէ ըստ Հայց. Եկեղեցւոյ մտածելակերպին, քահանային գլխաւոր պաշտօնն է՝ ուսուցանել, քարոզել եւ Աստուծոյ պատգամը յայտնել մարդոց՝ հաւատացեալներուն։ Եզեկիէլ մարգարէէն կը կարգան.

«Այսպէս կ'ըսէ Տէր. Մարդու Որդի, քեզ Իսրայէլի տան պատասխանատու նշանակեցի։ Եւ ինձմէ պիտի լսես պատգամները եւ պիտի սպառնաս անոնց իմ կողմէ։ Երբ որ անօրէնին ըսեմ թէ մահուամբ պիտի մեռնի եւ դուն

⁵ Աշքեան Պատրիարք Խորէն, «Կենցաղ Եկեղեցականաց» էջ 159-169։

⁶ Մայր Մաշտոց, Կանոնադրութիւն Եպիսկոպոսին ի վերայ նուիրելոյն ի փահանայութիւն, Կ. Պոլիս, էջ 254։

չգզուշացնես զինք և շիօսիս իրեն որ իր անօրէն շար համբաներէն ետ դառնայ և ապրի, և անօրէնը իր անօրէնութեան մէջ մեռնի, անոր արիւնը բուձեռեռեղ պիտի պահանջեմ» (Եզեկիել 3.17-19):

Մաղաքիա մարգարէէն առնուած են այս գեղեցիկ եւ քահանայի պարտաւորութիւններն երեւան բերող խօսքերը.

«Այսպէս կ'ըսէ Տէր, իմ ուխտս էր անոր հետ՝ կեանքի եւ խաղաղութեան եւ անոր տոփ երկիր՝ երկնշէտու Ինձմէ՛ եւ Իմ անուան երեսէն խորշին: Ճըշմարտութեան օրէնքը անոր բերնին մէջ էին, եւ անիրաւութիւնը անոր շրթումներուն վրայ տեղ չգտաւ, խաղաղութեամբ եւ ուղղութեամբ իմ հետս գնաց եւ շատերը անիրաւութենէ ետ դարձուց: Որովհետեւ քահանային շրթումները պիտի գիտութեան զգուշացնեն եւ անոր բերնէն օրէնք պիտի խընդրեն, որովհետեւ ան ամենակալ Աստուծոյ հրեշտակն է» (Մաղաքիա 2.5-6):

Եսայի մարգարէէն առնուած է այն հռչակաւոր հատուածը, զոր Յիսուս կարգաց Նազարէթի ժողովրդանոցին մէջ, երբ Եսայիի մարգարէութեան մատեանը ներկայացուցին, ինչպէս ամենէն վերջը կարգացուած հատուածն է, որ նոյն դէպքը կը նկարագրէ.

«Տիրոջ Հոգին իմ վրաս է, որուն համար իսկ զիս օծեց: Աղփասներուն աւետարանելու դրկեց զիս, սրտաբեկները բժշկելու, գերիներուն թողութիւն փառոզելու, կոյրերուն տեսողութիւն տալու, մեր Աստուծոյ եւ Տիրոջ տարին եւ հատուցման օրը հռչակելու, միախառնելու բոլոր սգաւորները: Մեղաւորները [վիրաւորութեան] թողութեան մէջ արձակելու, փառոզելու Տիրոջ ընդունելի տարին եւ հատուցման օրը» (Եսայի 61.1):

Առաքելական թուղթերէն առնուած կտորներն ալ քահանայութեան եւ ընդհանրապէս հովուական պաշտօնի վերաբերեալ խրատներ կը պարունակեն: Ապա ուրեմն այս լծադրութեան արարողութիւնը եւ վերոյիշեալ բոլոր ընթերցուածները անգամ մը եւս կը հաստատեն քահանայի քարոզչութեան պաշտօնը, ինչ որ արդէն անժխտելի կերպով աւանդուած էր նախապէս՝ ձեռնադրութեան բուն աղօթքի միջոցին:

Զանց առնելով ձեռնադրութեան միւս արարողութիւնները, որոնք այս առիթով կատարուած Ս. Պատարագին հետ առաւել կամ նուազ չափով կապակցութիւն ունին, եւ «Աստուած Մեծ» քարոզն ու յաջորդող «Տէր Աստուած զօրութեանց» աղօթքը, որոնք մինչեւ այս րոպէն կատարուած աղօթքներուն մայր մտածումը կը վերբերեն, «Յիսուս Քրիստոս, հայեաց ի ծառայս քո», աղօթքէն փոքրիկ հատուած մը պէտք է յառաջ բերենք: Քահանայական փիլիոնը նորընծային վրայ կը ձգեն եւ սպասարկող սարկաւազը քահանայական զգեստները ձեռքը առած եպիսկոպոսին առջեւ՝ առընթեր նորընծային կը կանգնի, մինչ եպիսկոպոսը աղօթքը կը կարդայ: Այս աղօթքին գլխաւոր միտքն է հայցել Աստուծոյ օրհնութիւնը նորընծային համար, որպէսզի անոր անձին վրայ հաստատուին այն գերբնական զօրութիւնները որ ձեռնադրութեան շնորհիւ ընդունեց: Եպիսկոպոսը մասնաւորաբար կը խնդրէ որ այն նուիրական եւ խորհրդաւոր զգեստները, որոնցմով ան պիտի զգեստաւորուի շուտով եւ իր ամբողջ պաշտօնավարութեան պիտի հագուի՝ ներշնչեն իր մէջ այն բարոյական եւ հոգեւոր բարեմասնութիւնները, որոնց խորհրդաւոր նշանակութիւններն են ատոնք:

«Հագցո՛ւր ասոր ուրախութեան պատմունանը եւ փառքերու հանդերձը. Ասոր մէջ վարէ [Քու սէրդ] բոլոր ժուժկալութեամբ. ցոյց ասոր թէ ինչպէս բարի գործերը կը կատարուին՝ ճգնաւոր եւ գործունեայ կերպով. պարկեշտութեամբ, աղօթասիրութեամբ, սրբութեամբ, եւ անարատութեամբ պահելու

ֆահանայությունը անբիծ, հեզ, խոնարհ, սուրբ: Եւ այս բոլորին հետ միասին պահէ զինք սուրբ վարքերու ընթացքին մէջ եւ անարատութեամբ եւ օրհնութեամբ պահելու Քու հանդիման համար»:

Աղօթքին երկրորդ մասին մէջ, քահանայական զգեստները կը նմանցնէ որպէս «զպատմունանն և զարտախորական Ահարոնի և որդոց նորա, զծաղկեայ պատմունանն Յովսէփայ» եւ «զմաշկեակն Եղիայի, յորոյ ձեռն հանգեալ հոգին Եղիայի ի վերայ Եղիսէի»: Նոր Ուխտի քահանայական զգեստները կը նկատէ որպէս կատարումը Նսայիի մարգարէութեան, թէ՛ «Ո՛վ է սա՝ որ դիմեալ գայ յեղովմայ, գեղեցիկ պատմունանաւ և բուռն զօրութեամբ»:

Եւ ապա կ'աւելցնէ հետեւեալ կարեւոր եւ նշանակալից խօսքերը.

«Քու կողմէ կոչուածին հիմա շնորհէ եկեղեցւոյ տնտեսութեան վերակացութիւնը, համարձակութեամբ խօսելու Քու Աւետարանիդ կեանք տուող խորհուրդը, Քու շնչովդ գրուած կտակարաններուդ հետեւելու արագաթռիչ մտքի ընթացքով. եւ երբ ժամանակը գայ, որպէսզի աստուածային այս խօսքերուն մեկնութիւնը կատարելու, թող ասոր հասնի Քու գրութիւնդ, խօսելով արժանը, պիտանին եւ հանելին, Քու աստուածութեանդ փառքին եւ գովեստին եւ Քու Կաթողիկէ Եկեղեցիիդ լիութեան համար: Տարածէ ասոր վրայ բոլր ամենամերձ ձեռքդ եւ զօրացուր զինք Քու գրութեանդ շնորհով: Ասոր մտքէն փարատէ մոռացութեան եւ թմրութեան մշուշը, ապափնելով զինք եւ բարձրացուր զինք երկրի կեանքէն դէպի երկինք: Լուսաւորէ ասոր մէջ անգամ մը եւս անստուեր ծագումը Քու հզօր Աստուածութեանդ գիտութիւնը, արժանի ըլլալու առնելու եւ ուսուցանելու որպէս օրինակ աստուածասէր բարի ունկնդիրներուն»:

Այս գեղեցիկ աղօթքը տարակոյսի ամէն նշոյլ կը փարատէ: Նոյնիսկ եթէ առանց այս աղօթքին, անկողմնակալ ընթերցողը պիտի անդրադառնար թէ ի՞նչն է քահանային առաջին եւ գլխաւոր պարտաւորութիւնը: Եթէ մինչեւ հիմա կարդացուած աղօթքներէն եւ արարողութիւններէն լիովին չհասկցանք քահանային առաջին եւ ամենէն կարեւոր պարտաւորութիւնը, այս աղօթքը անայլալօրէն եւ առանց ոեւէ երկդիմութեան կը հաստատէ թէ նորընծան կոչուած է այլեւս «ի գործ վերակացութեան խորհրդոյ Եկեղեցւոյ» եւ այլ վերակացութեան պաշտօնը պիտի կատարէ յետ այսու «համարձակութեամբ խօսելու Քու Աւետարանիդ կեանք տուող խորհուրդը, Քու շնչովդ գրուած կտակարաններուդ հետեւելու արագաթռիչ մտքի ընթացքով. եւ երբ ժամանակը գայ, որպէսզի աստուածային այս խօսքերուն մեկնութիւնը կատարելու, թող ասոր հասնի Քու գրութիւնդ, խօսելով արժանը, պիտանին եւ հանելին, Քու աստուածութեանդ փառքին եւ գովեստին եւ Քու Կաթողիկէ Եկեղեցիիդ լիութեան համար»:

Հոգ չէ թէ ներկայ սովորութիւնը ի՞նչ է⁷. քահանաներուն պաշտօնն է իրենց ապրելակերպով, վարուելակերպով եւ կենցաղով⁸ ցոյց տալ, հիմնուած պաշտօնական աղբիւրներու վրայ, թէ ինչպիսի իրական, աստուածային եւ գերբնական շնորհներ կը տրուին քահանային, մանաւանդ ՀԱՅ քահանային⁹: Ձեռնադրութեան ամբողջ կարգը, եւ գրեթէ պէտք եղածէն աւելի այս

⁷ Կարգ մը թեմերու մէջ, կարգ մը ֆահանաներ աւելի մտահոգուած եւ զբաղուած են նիւթական հարստութեամբ, քան հոգեւոր հարստութեամբ ի հակադրութիւն Քրիստոսի պատուին (Մտք. 6.21): Մտահոգ իրենց վարձու տուներով եւ տնտեսական հաշիւներով, այս յատուկ ֆահանաներ ֆահանայութեան կու տան շատ գէշ անուն: Այս մասին տե՛ս նաեւ Անուշաւան Մ. Վրդ. Դանիէլեանի դասախօսութիւնը Քահանայից Համագումարին առիթով (էջ 60-81), «Ինչպէ՞ս Կը Հասկնանք Հայ Հոգեւորականին Այսօրուան Դերը Մեր Ժողովուրդի Կեանքին Մէջ»:

⁸ Աշրգեան Պատրիարք Խորէն, «Կենցաղ Եկեղեցականաց», էջ 67-83:

⁹ Գարեգին Բ. Կաթողիկոս իր «Համառօտ Ձեռնարկ Հովուական Աստուածաբանութեան» գրքին մէջ, «Հովիւին Անձը» բաժնին մէջ (էջ 169-191) մանրամասնօրէն կը բացատրէ թէ ով է հովիւը, ով է հայ ֆահանան, ինչպէս պէտք է պատրաստուի եւայլն: Տե՛ս նաեւ ԼՈՅՍ Շաբաթաբեր, 1906, էջ 890-893, «Հոգեւոր Հովիւ» յոդուածը:

աղօթքը, ցոյց կու տայ որ քահանային իրական պաշտօնն է գերազանցապէս՝ Բանին Քարոզութիւնը¹⁰: Հայ քահանան պարտի այս իրաւունքը գործածել ոչ միայն պատահաբար, այս ինչ կամ այն ինչ պայմանի տակ, այլ պարտի անդադար եւ անպայման (եւ առաւել քան իր այլ քահանայական, հովուական գործերը) «խօսիլ համարձակութեամբ զկենդանաւոր խորհուրդ աւետեաց աւետարանին», այսինքն՝ քարոզել աստուածաբանական եւ վարդապետական¹¹ լիութիւն մեկնութեամբ, «հետեւել արագաթիչ ընթացիմ մտաց ընդ անհուն ասպարէզս բոյինաշունչ կտակարանաց»: Մէկ խօսքով, քահանային գլխաւոր եւ էական պաշտօնն է Ս. Աւետարանի քարոզութիւնը իր ամբողջութեամբ եւ կատարելութեամբ. կ'ուզէք «խրատական ծանուցում» կոչեցէք, կ'ուզէք բեմասացութիւն եւ ատենաբանութիւն անուանեցէք, կ'ուզէք գալիլիացի ձկնորսներու զեղչուկ եւ անյարիր ոճով խօսակցութիւն նշանակէք, կ'ուզէք Դեմոսթենէսի ճարտարաբանութեամբ ճառեցէք, ամէն հայ քահանայի Աստուծոյ յանձնուած է՝ Ս. Աւետարանը եւ Ս. Աւետարանի ազատ եւ լիազօր քարոզութեան պաշտօն եւ իրաւունք, «զոր ոչ մահը, ոչ կեանքը, ոչ հրեշտակները եւ ոչ իշխանութիւնները ... եւ ոչ այլ արարած կրնայ իր ձեռքէն կամ իր անձէն բաժնել»:

Ինչպէս արդէն տեսանք, քահանայագործութեան լիազօր եւ կատարեալ իշխանութիւնը տրուեցաւ ձեռնադրութեան գլխաւոր աղօթքով: Այս վերջին արարողութիւնները ձեռնադրութեան աստիճանին հանդիսաւորութիւն եւ ազնուութիւն կ'աւելցնեն: Ժողովրդական հասկցողութեամբ, քահանայական զգեստներու զգեստաւորմամբ, օծմամբ եւ անուան փոփոխութեամբ, քահանայական աստիճանի իսկական շնորհումը տեղի կ'ունենայ, այսուհանդերձ գիտնալու ենք որ առանց զգեստաւորման եւ օծման՝ քահանայութեան շնորհքը արդէն լիովին տրուած է, եւ այս յաւելումը (որքան որ անհրաժեշտ է եւ անոր զանցառութիւնը կանոնական ծանր յանցանք կը համարուի), երկրորդական կարեւորութիւն ունի: Այս զգալի նշաններով, եպիսկոպոսը կը հաստատէ եւ կը կրկնէ արդէն ձեռնադրութեամբ շնորհուած արտօնութիւնները: Քահանայական զգեստը, որով նորընծան պիտի սկսի Ս. Պատարագ մատուցանել եւ այլ սրբազան խորհուրդներ կատարել, եպիսկոպոսը կը հազցնէ ձեռնադրեալին, իւրաքանչիւր զգեստի խորհրդաւոր նշանակութիւնները յայտարարելով. «Առ քեզ սաղաւարտ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի ձեռքէն», անգամ մը եւս շեշտելով որ թէպէտ եպիսկոպոսը կը պաշտօնավարէ ձեռնադրութեան ժամանակ, բայց աստիճան տուողը մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոսն է: Ինչպէս սաղաւարտին, նոյնպէս շուրջարը նորընծային վրայ ձգելով, եպիսկոպոսը կ'ըսէ «Մեր Տէր Յիսուս Քրիստոս քեզ կը հազցնէ փրկութեան հագուստը», կամ գօտին կապելու միջոցին, ան կ'ըսէ «Առ քեզ իշխանութիւն Սուրբ Հոգիէն՝ կապելու եւ արձակելու»: Ի վերջոյ, իբրեւ վերջնական հաստատութիւն եւ կնիք այս նուիրական ու խորհրդաւոր արարողութեանց, ինչպէս նաեւ այս գերբնական զօրութեանց եւ շնորհներուն, եպիսկոպոսը սուրբ միւռոնով կ'օծէ նորընծային ճակատն ու ձեռքերը, Հին Ուխտի Ահարոնեան քահանաներուն նմանութեամբ եւ Նոր Կտակարանեան Սաւուղին նման, ձեռնադրեալին անունը կը փոխէ նոր անունով (Սաւուղը դարձաւ Պօղոս,

¹⁰ Մեր եկեղեցւոյ Ս. Պատարագը, որ երկու հիմնական մասերէ կը բաղկանայ՝ Պատարագ Բանին եւ Պատարագ Հաւատացելոց, առաջին բաժինը Քահանային գլխաւոր պաշտօններէն մէկն է՝ Բանին Քարոզութիւնը: Իսկ երկրորդը՝ Քրիստոսի փրկարար Մարմինն եւ Արեան մատուցումը: Համաձայն հին սովորութեան, քարոզը տեղի կ'ունենար Ս. Աւետարանի ընթերցումէն անմիջապէս ետք եւ Նիկիական Հանգանակէն անմիջապէս առաջ, երբ պատարագիչը կը բացատրէր, կը մեկնաբանէր, կը լուսաբանէր հատուածը: Դժբախտաբար, մանաւանդ վերջին գրեթէ հարիւրամեակին, քարոզին «տեղ»-ը «Հայր Մեր»-էն առաջ եղաւ, որովհետեւ բաւարար ժողովուրդ եկեղեցի չէին յաճախած, եւ կարգ մը եկեղեցիներու մէջ, մանաւանդ Մեծ Պահքի ժամանակ, քարոզը Ս. Պատարագի աւարտին եւ Հոգեհանգստեան պաշտօնէն առաջ տեղի կ'ունենայ:

¹¹ Այս մասին տե՛ս նաեւ Բարգէն Ա. Աթոռակից Կաթողիկոսի «Վարդապետական Աստիճանները Հայ եկեղեցիէն Ներս» յօդուածաշարքը (ԼՈՅՍ շաբաթաթերթ, 1906, էջեր 54-60, 78-82, 102-106, 176-182, 414-419, 486-492, 577-580, 601-610, 665-668, 688-691, 738-743, 1177-1185, 1206-1213):

Սիմոնը դարձավ Պետրոս եւայլն):

ԱՄՓՈՓՈՒՄ

Նախ՝ քահանայական պարտաւորութեանց եւ իրաւունքներուն օրինագիրքը համարելով Ձեռնադրութեան Մաշտոցը՝ Ձեռնադրութեան բուն աղօթքին մէջ յիշուած հինգ կէտերը կը կազմեն իւրաքանչիւր ձեռնադրուողի պարտականութիւններուն ու իրաւունքներուն բովանդակութիւնը:

Երկրորդ՝ քրիստոնեայ քահանաները սրբազան առաքեալներուն օրինաւոր յաջորդներն են, Աւետարանի քարոզութեան¹² եւ Եկեղեցւոյ բոլոր խորհուրդներու մատակարարման մէջ, ի բաց առեալ Եկեղեցւոյ վերին հսկողութիւնը, որ եպիսկոպոսներուն վերապահեալ է:

Երրորդ՝ ամբողջ Նոր Կտակարանը եւ նախկին Եկեղեցւոյ պատմութիւնը կը վրկայեն որ քահանային գլխաւոր պաշտօնն է Ս. Աւետարանի քարոզութիւնը եւ Հայ Եկեղեցին Ձեռնադրութեան միջոցաւ ամենէն մեծ կարեւորութիւնը կու տայ այդ պաշտօնին եւ Մաշտոցին մէջ նշանակուած ընթերցուածներուն, աղօթքներուն եւ արարողութիւններուն անհամեմատ մեծամասնութիւնը կ'ակնարկէ քահանային այդ առաքելական եւ աւետարանական գործունէութեան:

Չորրորդ՝ Հայ Եկեղեցին, հաւատարիմ Ընդհանրական Եկեղեցւոյ աւանդութեան քահանայութեան սուրբ կարգը եւ անոր միջոցաւ քահանայագործութեան շնորհուած բոլոր իրաւունքները անշնչելի կը համարէ:

Հինգերորդ՝ Հայ Եկեղեցին Սրբութիւն եւ Իմաստութիւն կը պահանջէ իր քահանաներէն, որոնց չափն ու աստիճանը լիովին եւ յստակ կերպով ընդգծուած է թէ՛ Կոշման արարողութեան եւ թէ՛ Ձեռնադրութեան ընթացքին եւ միայն այս յատկութեանց հիման վրայ մեր Եկեղեցին քահանային կը շնորհէ վերոյիշեալ առաքելական իշխանութիւնները:

* * *

Երախտագիտութեան անհուն զգացումով պիտի վարձատրուած զգամ զիս, եթէ կրցայ քահանայական պաշտօնին գլխաւոր պարագաները բացատրել եւ թերեւս քաջալերել մեր պատուական քահանաներէն ոմանք, որպէսզի կարողանան տեսնել իրենց աստիճանին ահաւոր եւ սուրբ վեհութիւնը, զգալ թէ ինչքա՛ն ահեղ եւ պատասխանատու պաշտօն առած են իրենց վրայ, այլ սակայն ինչքա՛ն անարժան եւ թերի կը գտնուին այդ սուրբ կոշման մէջ:

Մեր նպատակը քահանային հովուական բազմակողմանի պարտականութեանց մանրամասնութեանց մէջ մտնելը չէր, այլ՝ Մաշտոցի ձեռնադրութեան կարգին քննութիւնը: Հետեւաբար, չուզեցինք յիշել թէ քահանան իբրեւ ժողովուրդին հայրը¹³ ի՛նչ մասնաւոր պարտք ունի անհատ հաւատացեալներուն հանդէպ, անոնց ուրախութեանց եւ դժբախտութեանց, առողջութեան եւ հիւանդութեան միջոցին, հարուստին եւ աղքատին հանդէպ ունենալով միեւնոյն բարիացակամութիւնը¹⁴, բարեպաշտին եւ անառակին հանդէպ ունենալով միեւնոյն ներողամտութիւնը¹⁵, գիտունին եւ տգէտին

¹² Տե՛ս նաեւ Նարեկ Եպս. Ալեմէգեանի Աստուածաշնչական սերտողութիւնը Բ. Տիմ. 4.6-14 համարներուն (էջ 93-102), Քահանայից Համագումարին ժամանակ:

¹³ «Հոգեւոր Հովիւր», ԼՈՅՍ, 1906, թիւ 38, էջ 890-893:

¹⁴ Աշըգեան Պատրիարք Խորէն, «Կենցաղ Եկեղեցականաց» էջ 55-66:

¹⁵ Տե՛ս նաեւ ԼՈՅՍ Շաբաթաթերթի 1905-ի հետեւեալ յօդուածաւարքը «Ինչո՞ւ ժողովուրդը Կ'ուժանայ Եկեղեցի-կն», թիւ 24, էջ 569-571, թիւ 25, էջ 595-599, թիւ 26, էջ 619-623, թիւ 27, էջ 650-653:


հանդէպ ունենալով միեւնոյն համբերութիւնը¹⁶: Արդարեւ, այս բոլորը ամփոփուած են Ձեռնադրութեան իրաւունքներուն եւ իշխանութիւններուն մէջ, սակայն այդքան դիւրին չէ այդ բոլորը կանոններու վերածել: Այն քահանան, որ ձեռնադրութեան այս հիմնական պայմանները լաւ հասկցած է, հովուական մնացեալ պարտաւորութիւնները ինքնիրէն կը տեսնէ եւ կը դասաւորէ¹⁷:

Թերեւս յօդուածս նաեւ խրախոյս ըլլայ մեր ոչ-եկեղեցական (աշխարհական) եղբայրներուն, որպէսզի տեսնելով քահանայական աստիճանին վսեմութիւնը, այնպէս ինչպէս մեր Եկեղեցին կ'ըմբռնէ եւ կը հասկնայ, աւելի հոգ տանին անոր բարձրացման¹⁸: Տեսանք թէ իւրաքանչիւր քահանայի ձեռնադրութեան պատասխանատուութեան մեծագոյն մասը աշխարհականներուն կը պատկանի որ կը վկայէ անոր՝ քահանային իմաստութեան եւ Սրբութեան մասին: Մեր ժողովուրդը պէտք է գիտնայ թէ ամէն քրիստոնեայ հաւատացեալ նոյնքան շահ եւ պարտաւորութիւն ունի Եկեղեցւոյ տարածման եւ պայծառութեան նկատմամբ, որքան, եթէ ոչ աւելի քան ռեւէ քահանայ, եպիսկոպոս կամ կաթողիկոս: Քահանան մասնաւորապէս ժողովուրդին կը պատկանի եւ ժողովուրդին պարտքն է փնտռել, գտնել եւ ձեռնադրել տալ միմիայն այնպիսիներ, որոնք ունին մեր Եկեղեցւոյ պահանջող յատկութիւնները¹⁹: Ժողովուրդին նուիրական պարտքն է հոգ տանիլ, կրթել եւ դաստիարակել (Կիրակնօրեայ Դպրոցներու խողովակով եւ նուիրապետական Աթոռներու հոգեւոր դպրանոցներուն եւ Քահանայից Դասընթացքներուն միջոցաւ) այդ սուրբ աստիճանին համար արժանաւոր անձեր, որպէսզի ժողովուրդը շատիպուի, լաւագոյնին չգոյութեան պատճառով, անյարմար եւ անարժան մարդիկ բարձրացնել քահանայութեան աստիճանին:

ՆԱԽԱՍԱՐԴ ՄԱՐՏՈՅԵԱՆ

Փրօֆ. փիլիսոփայութեան եւ բաղդատական կրօններու

Վերջ



¹⁶ Աշրգեան Պատրիարք Խորէն, «Կենցաղ Եկեղեցականաց» էջ 93-104:

¹⁷ Հետաքրքրական է կարդալ նաեւ ԼՈՅՍ Շաքաթաթերթի 1905-ի հետեւեալ յօդուածաշարքը «Ինչպէ՞ս կը Տափնայ ժողովուրդը Իր Եկեղեցւոյն», թիւ 33, էջ 788-792, թիւ 34, էջ 811-814, թիւ 36, էջ 853-858, թիւ 37, 889-897, թիւ 38, էջ 901-903, թիւ 40, էջ 950-954, թիւ 41, էջ 980-986, թիւ 42, էջ 1000-1002:

¹⁸ Ազնաւորեան Արք. Զարեհ, «գլխաւորապէս Տեսնել», էջ 297-298:

¹⁹ Նոյն տեղում, էջ 296:

ԿՐՕՆԱԿԱՆ

ՄՈՓԵՐ

Յիսուսի ծննդեան նախօրեակին, արեւելքի կարգ մը երկիրներէն երեք մոգեր կու գան Երուսաղէմ, ստուգելու համար այն արտասովոր ծնունդը որուն աստղը տեսած էին իրենք: Այս պարագան տիեզերական հանգամանք մը կ'ընծայէ Յիսուսի ծննդեան, զայն տարածելով բովանդակ մարդկութեան հասկացողութեան:

Այդ որոնումը նոր չէր, դարեր լեցուած էին այդ տագնապով: Լոյս որոնելու այդ ըղձանքը յաւիտենական է, այսօր եւս այդ տագնապը աւելի քան երբեք սուր է, հակառակ երկինքը նուաճելու մեր բոլոր յաւակնութիւններուն, հակառակ երկիրը մեզ գերի ըրած ըլլալու մեր ստոյգ մեծամտութեան: Խորքը չէ փոխուած այլ ձեւը միայն: Աստղը լոյսի պաշտամունքին խորհուրդն է, վասնզի մոգերը տիեզերքի տաճարին քուրմերն էին, արգոնաւորդները լոյսին, երջանկութեան, մեծ գաղափարական դրութեանց խուզարկուներ: Այս որոնումը, արդիւնք հոգեկան պէտքերու, կը նախադրէ ընկերային կեանքի վատասերում եւ անկանոնութիւն, եւ այդ ձգտումին նպատակը եղած է միշտ նուաճելու նիւթին տիրապետութիւնը, եւ մեղմելու մարդկային տառապանքը: Բոլոր կրօնները, եւ մարդկային բոլոր սխրագործութիւնները իրենց զսպանակ ունեցած են յաւիտենական այդ իրողութիւնը, Ծնունդէն առաջ եւ Ծնունդէն վերջ:

Մարդկային հոգին միշտ որոնեց լոյսը, եւ անոր մէջ խորհրդանշեց այն ինչ որ քիչ անգամ կը բացատրուի, որ էոյթն է կրօններու եւ իմաստասիրութեան, անորակելի զըսպանակը գիտութեան: Լոյսը առաջին շնորհն է ստեղծագործութեան:

Մեծ բարեկարգիչ Զրադաշտ յաւիտենական կոչած էր լոյսը: Տիեզերքի Տէրը լոյս էր, եւ մարդկային հոգին յաւիտենական արգոնաւորդն այդ լոյսին:

Բոլոր ժամանակներու աստղագէտներն ու մոգերը քուրմերը եղած են լոյսի այդ սպասին: Այս ըմբռնումով մոգերը կը դառնան աւելի քան սիրելի ու խորհրդաւոր, ինչպէս նաեւ այժմէական, վասնզի լոյսին տենչը կիրքն է միայն ազնուական հոգիներուն, եւ երջանկութիւնը՝ լոյսի զգեստ մը մեր դժբախտ մարմիններուն վրայ:

Պիտի ուզէի փորձ մը ընել, ցոյց տալու թէ ինչպէս այդ ձգտումը կ'իրանայ աստուածայայտնութեան նախօրին, արեւելքի կարգ մը երկիրներու մէջ:

Ըսի թէ այդ որոնումը, այդ տագնապը, արդիւնք էին մարդկային ապերջանկութեան, ընկերային վատասերման, եւ որ իրողութիւն մը ըլլալէ աւելի բան մըն էր Արեւելքի մէջ, որուն դարաւոր պատմութիւնը մեզի ծանօթ է իր քմայքոտ, հեւքոտ ու արիւնոտ պատկերախաղերով: Ուր կեանքը մահուան կշռոյթով քալած է, ուր կիրքն ու գազանութիւնը միշտ վարձատրուած են, եւ անարդարութիւնները անպատիժ մնացած, մարդը մղելով այս բոլորը ըմբռնելու անխորտակելի ձգտումին, որուն արտայայտիչներն են քիչ մը բոլոր կրօնները: Մահէն անդին տեսնելը մարդ սորված է մահուան ճիրաններուն ներքեւ:

Այն օրերուն մարդը աւելի դժբախտ էր. մարդկային ընկերութիւնը բաղկացած էր երկու իրարամերժ եզրերէ, իշխողներէ եւ գերիներէ, հարուստներէ եւ աղքատներէ, գիտուններէ եւ տգէտներէ:

Ճիշդ է թէ նախապատմական աղջամուղջին, Արեւելքի մէջ առաջին անգամ վառւեցան մարդկային քաղաքակրթութեան ճրագները. այդ լոյսերու հայրենիք հանդիսա-

ցան հեռաւոր Հնդկաստան, Եգիպտոս, եւ հարաւային քանի մը գետահովիտներ, ուր նախնական մարդը աւելի մեծ յարմարութիւններ գտաւ բնութեան դէմ կռուելու, իր կացութիւնը բարւոքելու, եւ ստեղծելու քաղաքակրթութիւններ, որոնց փառաւոր մնացորդներու վրայ աշխարհ ցարդ հիացումով չէ դադրած նայելէ:

Բայց ի՞նչ էր այդ քաղաքակրթութեան ոգին, ի՞նչ կու տար ան տառապակոծ բազմութեան որ իբրեւ ստրուկը կը ջանար եւ կը նիւթէր միայն պետութեան փառքին համար: Մարդերու այդ մեծ զանգուածը մէկ պարտականութիւն ունէր միայն՝ աշխատիլ, եւ մէկ պարտաւորութիւն՝ հնազանդիլ: Արեւելքի այդ հարուստ եւ արգասաբեր երկիրներում յաճախ յեղաշրջումներ եղան, բայց բոլորն ալ վերէն կը սկսէին, եւ չէին հասներ զանգուածին: Նիւթական քաղաքակրթութեան մը արդիւնք եղող հսկայ քաղաքներ, բուրգեր, եւ յիշատակարաններ, ամուր մինչեւ այսօր, պերճախօս վկաններն են անորակելի դժբախտութեան մը:

Չկար հասարակական եւ անհատական զարգացման գաղափար, եւ ոեւէ ընդնշմարում ազատութեան մասին. ամէն տեղ բռնութեան լուծն էր ծանրացած, զանգուածները հազիւ կը տարբերէին անասուններէն:

Աւանդութիւնը թէեւ անյարիր, բայց չծերացող պատմութիւնն է ժողովուրդներու, երբեմն աւելի լայն չափով խտացուցած իր մէջ դարերու ոգին: Եւ աւանդութիւնը այդ մոգերը կը բերէ մարդկային փարթամ կեդրոններէն, հինցած քաղաքակրթութիւններու ոստաններէն, խորհրդաւոր ու հեռու Հնդկաստանէն, Միջագետքէն, եւ ոսկի գետերու, ու արի-արիներու երկիր Պարսկաստանէն: Համատարած այդ խաւարին մէջ իբրեւ սպասման խորհրդանիշ կը կենան անոնք, աւանդապահները ոչ միայն հին կրօնին, իմաստութեան եւ գիտութեան, այլեւ միտքն ու խղճմտանքը մարդկութեան, տառապագին թրթռացումը իր կարիքներուն, արգոնաւորդներ երջանկութեան, փնտելով երկնքին վրայ մարդկային ճակատագիրը լուսաւորող աստղեր, ա՛յն ինչ որ երկիրը չի տար:

Ու մութ բայց խորհրդաւոր գիշերուան մը միջոցին, ինչպէս կը պատմեն գիրքեր, անոնք երկնակամարին վրայ կը նշմարեն անսովոր լոյս մը: Խաղաղ ու գեղեցիկ են արեւելքի գիշերները, իրենց մոյգ կապոյտով եւ աստղերով, եւ խորհուրդին ու վսեմին սիրահար հոգիները հոն գտած են միշտ դոյզն կազդոյրն ու սփոփանքը իրենց տենչերուն: Արեւելքի երկինքները միշտ հայելիացուցած են իրենց խաղաղ խորութիւններուն մէջ այն ինչ որ անպարագելի է տարածութեամբ եւ անչափելի ժամանակով, խորունկ լռութեամբ, զերթ մահ, բայց կենդանի յաւիտենականութեամբ, նման լոյսի: Մի՛ զարմանաք որ կատարելութիւնն ու յաւիտենականութիւնը խորհրդանշուին երկինքով ու լոյսով, մի՛ զարմանաք երբ երկինքը ցուցուի իբրեւ աթոռ կեանքի յաղթանակին, մի՛ զարմանաք որ երկնակամարը պճնող աստղերը իրենց խորհրդաւոր շարժումներով կարենան հեզել մարդկային ապագան, իր խորհրդաւոր ճակատագիրը: Մոգերը այդ երկնագրութիւնները կարգացող դպրապետներ են հին աշխարհի: Նոր աստղը գտնուած բանալին է երկինքներու դարպասին, մարդկային ապագայ երջանկութեան:

Զգած Արեւելքի խաղաղ գիշերները, ձգած իրենց աստղադիտարաններն ու աստղերը հէքեաթ գեղեցկութեամբ մոգեր կը հետապնդեն Աստղը օրերով ու գիշերներով: Ամէն տեղ ուր լոյսը կ'առաջնորդէ զիրենք, կը տեսնուի ու կը զգացուի մարդկային խորունկ թշուառութիւն: Աւագով ծածկուած խրճիթներէն մինչեւ բերդերն ու ապաստանարաններն իշխաններու, պալատներու շքեղութենէն մինչեւ բարձունքները բուրգերուն, նոյն լացն է որ կը լսուի: Եւ Աստղի պայծառ բայց տխուր լոյսին մէջ երկնքէն հեռացող երկիրը կը նմանի մխիթարութեան կարօտ ցաւի տան մը:

This huge volume, originally with 660 parchment folios, measuring 70 by 55 cm. each, was hand-written in 1202 AD, as reported in the main colophon of the Book. It was kept in the Monastery of the Holy Apostles in Mush until 1917. In 1204, as we read in the colophon, the *Jarrendir of Mush* was stolen from Erzenjan by a Turk judge in Babert and soon was sold to the Monastery of the Holy Apostles for 4,000 silvers, raised by the inhabitants of Mush and the clergy of the Monastery. Seven centuries later the odyssey of this unique and most precious *Jarrendir* began. In 1917 the volume was considered stolen from the Monastery after 700 years of safety, as the members of the convent could not locate the Large Book anywhere in the monastic premises. Soon, two Armenian exiled emigrant women, who spent an overnight in the Monastery on their way to the Syrian deserts, noticed a large book left on the floor, not knowing what it was. Because of its unusual size and weight, they decided to divide the book into two, and take the one half with them, and wrap the other safely in one of their coats to be buried in the Armenian Church yard in Erzeroum.

The Destiny

The brave women continued their way both as emigrants and as “pilgrims.” Arriving in Tbilisi, Georgia, they handed the half of the *Jarrendir* to the Armenian Ethnographic Society. Two years later, somehow, the second half of this Miracle Book “resurrected” from its burial site and reunited with its twin brother. Today, the reunited *Jarrendir of Mush* is the pride of the Armenian people, the Armenian Church, and above all, the privilege of Mesrob Mashtots Matenadaran, the Depository of Ancient Armenian Manuscripts of Yerevan, where it is displayed under its classified number 7721, as the **largest** among the thousands, hugging the smallest

manuscript on its bosom.

The History

As said earlier, the Book originally contained 660 parchment folios, but as it shows today the number of the folios are 601. From those remaining, 17 folios are treasured in the Mekhitarist Monastery in Venice and one folio with the Brotherhood in Vienna. Later, in 1977, the Matenadaran of Yerevan acquired two folios from the Lenin Library of Moscow and attached them to the Book. According to manuscript scholars and specialists each folio was the skin of a calf, and accordingly over 600 calves sacrificed their lives and sanctified their skins as parchments on which the Armenian *yerghatakir* scripts still shine since 1202 AD. The scribe is named in the main colophon as Vartan Garnetsi who worked diligently for three years and accomplished it in 1202, some 820 years ago in the Avag Monastery of Erzenjan. The artistic illustrations as recorded in the same colophon were rendered by Stepanos the Illustrator, by the orders of Asdvadzatur, chief of the city of Babert.

As for the rescue of the second half of the *Jarrendir of Mush*, it was by a sheer accident and out of the blue sky as it were that in 1919 was put on sale in Baku, where a Polish military officer sold the unknown parchment volume to the Armenian Benevolent Society, soon to be identified as the other half of the huge manuscript, now “risen” from the yard of the Armenian Church in Erzeroum. Since then the two twin brothers reunited forever.

The Victorious Manuscript

Today, one hundred and three years later, the Armenian nation reminisce the victory of one of the most unique resources of our national culture, one in its kind, a venture of unsurpassed pride for our Church of Armenia and Nation, following a torturous exile, and yet rescued by two brave women whose names even remain unknown to us, but surely written in the Heavenly Book.

REVD. DR. ZAVEN ARZOUMANIAN



ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ «ՍԻՈՆ»-Ի****ՆՈՐ ՇՐՋԱՆ****1927 – 2020****1981****ԱՅԼԵԻԱՅԼԸ**

Յովհաննէս-Պօղոս Բ. Պապ.- Կոչ՝ «Խաղաղութեան օր»-ուան առթիւ – 14:

Գ. Ճ.- Նոր տարին – 30:

Գ.- Եկեղեցիներու միութեան եօթնեակը Երուսաղէմի մէջ – 53:

Հայկ Մելքոնեան.- Նորից եկեղեցական միջանի հարցերի շուրջ – 229, 274:

Պատրիարքական Կոնդակ՝ Հ. Բ. Ը. Միութեան 75-ամեակին առթիւ – 2:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա.-ի Ծննդեան քարոզը – 5:

Քրիստոնեայ կրօնապետներու տարեկան այցը Իսրայէլի Վսեմ. Նախագահին – 56:

Ամանորի Հանդէս Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի – 58:

Գնահատական նամակներ՝ ուղղուած «Սիոն»-ի հմբադրութեան – 59, 83:

Հայկական տոհմիկ տարազներու ցուցադրութիւն – 62:

Խոհք եւ խօսք – Սուրբ Երուսաղէմ.- Կարէն Քահանայ – 83:

- Բաբգէն Ա. Քհնյ. Մագսուտեան – 84:

Յաւակցական հեռագիրներ, նամակներ – 89:

Հաղորդագրութիւն Միաբանական Ընդհանուր Ժողովի – 93:

Կենսագրութիւն՝ Տ. Գարեգին Արքեպս. Գազանճեանի – 94:

Ընտրութիւն Յունաց Պատրիարքի – 95:

Պատմական վկայագիր մը Հ. Բ. Ը. Միութեանէն – 109:

Հ. Բ. Ը. Միութեան տրուած Կոնդակներէ մէջբերումներ – 118:

Նոր Հոգեւոր Հովիւներ՝ Եւրոպայի նորակազմ Հայ գաղութներուն – 131:

Տարեկակի հանդիսութիւնք Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի – 139:

Հեռագիրներ՝ Ս. Պապին վրայ կատարուած մահափորձին առթիւ – 140:

Ապրիլեան Յուշատօն – 142:

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնական Վարչութեան Ժողովը – 224:

Կեանքը Ժառանգաւորաց Վարժարանէն ներս – 234, 281:

«Լուսամատեան» – 247:

Հոգշ. Տ. Աղան Ծ. Վրդ. Պալիօղեան՝ նորընտիր Առաջնորդ Աւստրալիոյ – 279:

Համբաւաւոր նկարիչ Արտաւազդ Պէրպէրեան մեր մէջ – 280:

Յանկ «Սիոն»-ի հմբադրութեան եւ Գ. Կիւլպէնկեան Մատենադարանին կողմէ ստացուած գիրքերու (Յաւելուած) – 99, 189, 237, 285:

Բարեպաշտական նուէրներ – 284:

Յանկ նիւթոց 1981 տարւոյ – 285:

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

Մաղաքիա Արքեպս. Օրմանեան.- Տեսական Աստուածաբանութիւն – 73, 166, 204, 263:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ն. Արք. Ծովական.- Հայերէն հնատիպներու թուականները – 37:

- Մեսրոպ Դպիր Խիզանցի – 79:

- Հայրապետ Դպիր Զուղայեցի – 129:

- Ատոմ Վրդ. Մոկացի – 176:

- Արիստակէս Վրդ. Սեբաստացի – 210:

- Պատմական արձանագրութիւն մը – 267:

Յ. Ս. Անասեան.- Ստեփանոս Սալմաստեցի – 38:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

- Վահան Թէքէեան.- Հայու հոգին – 34:
 Քու յիշատակդ այս գիշեր – 128:
 Անունդ – 170:
 Մ. Մանուկեան (Թրգմ. Վահան Թէքէեան).-
 The Armenian soul – 35:
 - Your memory to-night – 128:
 - Your name – 171:
 - Քառեակներ – 77, 207:
 Ո՞վ է հոս – 78:
 Գ. Ճարտար.- Օրերուն տուածը – 36:
 - Անցեալս – 36:
 - Շքերթին դէմ – 78:
 - Հոգիս պարսպեալ – 129:
 - Անցեալ, ներկայ, ապագայ – 172:
 - Աշնանամուտ – 208:
 - Վերջակէտ – 267:
 Սիւլվա Կապուտիկեան.- Նոր քառեակներ – 206:
 Եղիվարդ.- Արարատեան դաշտ – 258:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

- Գէորգ Ս. Ճինիվիզեան.- «Քրիստոս՝ մեր Ս.
 Պատարագը» (Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեան) – 50:
 Ն. Արքեպս. Ծովական.- «Signs of the Judge-
 ment, Onamastica Sacra, The generations from
 Adam» – 216:
 - «Տաղեր եւ Գանձեր» Գր. Նարեկացի – 273:
 Մահրամ Մավեան.- «Լուսամատեան» – 252:

ԳՐԱԿԱՆ

- Կ. Միհրանեան.- Ես սիրեցի – 173:
 Գ. Ճարտար.- Անկապ խոհեր – 173:
 - Գեղօն ի պատիւ Հայերէն լեզուի տառերուն
 եւ բառերուն – 209:
 - Եղիվարդ՝ բանաստեղծ Պատրիարքը Երու-
 սաղէմի – 254:
 Շահէ Արքեպս. Աճէմեան.- Յառաջաբան
 («Լուսամատեան»-ի) – 248:
 Ստեփան Վրդ. Միսեան.- «Յիսուսի եղբայր-
 ները» – 221:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

- Ե.- Անդրադարձումներ – 21, 66, 106, 150,
 194, 242:

ԿՐՕՆԱԿԱՆ

- Անուշաւան Վրդ. Զղջանեան.- Ամանոր – 25:
 Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեան.- Տէրունական
 Աղօթքը՝ Քրիստոսի շարձարանաց մէջ – 27:
 - Գորովագուծ Աստուածամայր – 161:
 Նորայր Արքեպս.- Համակեցութիւն – 70:
 - Երանի որ ունիցի զաւակ ի Հայաստան –
 122:
 Զգօն Եպս. Տէր-Յակոբեան.- Կարմիր Կիրա-
 կի – 123:
 - Ածու փոքր – 156:
 - Անկէզ մորենին – 199:
 - Յեղափոխութիւն մը – 261:
 Գէորգ Ս. Ճինիվիզեան.- Կատարելութիւն –
 126:
 - Կրօնական պարտականութիւն – 202:
 Եղիվարդ.- Աշխարհի ստեղծագործութիւնը
 - 249:
 - Եզեկիէլ մարգարէի տեսիլքը – 251:
 Հայկ Մելքոնեան.- Նորից եկեղեցական մի
 քանի հարցերի շուրջ – 229, 274:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

- Ն. Արք. Ծովական.- Մաշկեւոր – 49:
 - Աղջոց Վանք – 177:
 - Դերձկի Վանք – 178:

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

- Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեան.- Թորոս Ռօս-
 լին – 218:

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

- Ա. Յ. Սրճունի (Հրատ).- Ի յարութիւնն Ղա-
 զարու – 179, 212:
 - Մեծի Երկուշաբթին, ի թզենին եւ յԱդամ
 - 269:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳՐԵՐ

- Ամեն. Ս. Պատրիարք Հօր Ծննդեան պատ-
 գամը Բեթղէհէմի Ս. Այրէն – 7:
 Շնորհաւորագիր՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա.
 Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսէն – 102:
 Շնորհաւորագիր՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Խորէն Ա. Մե-
 ծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոսէն –
 11, 103:
 Շնորհաւորական գիր՝ Վատիկանէն – 12:
 Շնորհաւորական գիր՝ Ռուսաց Պիմէն Պա-

տըրիարքէն – 12:

Շնորհաւորական գիր՝ Քէնթըրպըրիի Արքեպիսկոպոսէն – 13, 104:

Շնորհաւորական գիր՝ Վսեմ, Տիար Ալեքս Մանուկեանէն – 13, 104:

Շ.- Շնորհաւորական խօսք՝ Հ. Բ. Ը. Միութեան 75-ամեակին առիթով – 110:

Շնորհաւորական հեռագիրներ՝ յղուած Ս. Աթոռէն – 10, 105:

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ

Գ.- Աւետում – 71:

- Այցեւորութիւն Եղիսաբեթի – 164:

«ՍԻՈՆ»-Ի

ԼՈՒՍԱՔԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Աբեղաներու քարոզխօսութեան մասին – 52:
Յոյն-Օրթոտոքս Եկեղեցւոյ վարչակարգի մասին – 82:

«Անդաստան»-ի արարողութեան մասին – 142:

Ինչո՞ւ եկեղեցիներու խորանները դէպի արեւելք կը նային – 142:

Ինչո՞ւ Ադամ սուրբերու կարգը անցած է – 184:

Ո՞ր Տոմարը աւելի համաձայն է լուսնական ամսուն – 184:

Սրբոց տօնակատարութեան մասին – 185:

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Լուրեր Անթիլիասէն – 52:

Ս. Յակոբեանց Տաճարի զանգակատան շինութիւն – 81:

Ս. Կիրակոս մանկան մասունքը – 81:

Քէմանչիստ Ռուբէն – 81:

Տ. Բաբգէն Աթոռակից Կաթողիկոս – 141:

Բարեգործականի Քսանեհինգամեակը – 141:

Տ. Թորգոմ Պատրիարքի ընտրութիւնը – 183:

Հիճազի Թագաւորի յուղարկաւորութիւնը – 183:

Կիւլպէնկեան Մատենադարան – 183:

Հանգիստ Ամեն. Տ. Դամիանոս Պատրիարքի Յունաց – 233:

Երկու Միաբան Վարդապետներ Անգլիա կ'երթան – 233:

Նուիրատուութիւն – 233:

Ուխտաւորութիւն ի Ռամլէ – 278:

Տ. Թորգոմ Պատրիարքի Գահակալութիւնը – 278:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Յունուար-Փետրուար – 60:

Մարտ-Ապրիլ – 96:

Մայիս-Յունիս – 144:

Յուլիս-Օգոստոս – 185:

Սեպտեմբեր-Հոկտեմբեր – 235:

Նոյեմբեր-Դեկտեմբեր – 282:

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

Սահակ Գալայճեան,- Տարեկան Տեղեկագիր Կիւլպէնկեան Մատենադարանի – 63:

Կիրեղ Եպս. Գաբրիէան,- Տարեկան Տեղեկագիր Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի – 132:

ՏԵՐՈՒՆԻ

Հանգիստ Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան – 86:

Տ. Պսակ Արքեպս. Թումայեան – 188:

1982

ԱՅԼԵԻԱՅԼԸ

Յովհաննէս-Պողոս Բ. Պապ,- Կոչ՝ «Խաղաղութեան օր»-ուան առթիւ – 12:

Գ.- Եկեղեցիներու միութեան եօթնեակը Երուսաղէմի մէջ – 52:

Սահակ Գալայճեան,- Յիսնամեակ բացման Կիւլպէնկեան Մատենադարանի – 218:

Ռուբէն Վրդ. Յովակիմեան,- Հայ ժողովուր-

դի Ապրիլ 24-ը – 78:

Նշան Արագեան (Թրգմ. Գ. Ճ.),- Հայ եւ Յոյն Ուղղափառ Եկեղեցիներու դաւանանքը եւ անոր տարբերութիւնները – 141:

Վարդանանց տօնակատարութիւն – 26:

Ձեռնադրութիւն Աբեղայի – 54:

Աչքի վիրաբուժական գործողութիւն Ամեն.

Ս. Պատրիարք Հօր – 55:

Նորապսակ Տ. Աղան Եպս. Պալիօզեան մեր

մէջ – 55:

Կեանքը ժառանգաւորաց Վարժարանէն
ներս – 56, 103:

Զեկոյց – 101:

Ձեռնադրութիւն Սարկաւագաց – 102:

Զեկոյց Հ. Բ. Ը. Միութեան – 110:

Կոնդակ՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայ-
րապետէն – 114:

Կենսագրական գիծեր՝ Յակոբ Նալեան Պա-
տրիարքի – 116:

Ամսվերջի Հանդէս ժառանգաւորաց Վար-
ժարանի եւ Ընծայարանի – 159:

Ամսվերջի հանդիսութիւնք Ս. Թարգման-
չաց Երկրորդական Վարժարանի – 161:

Հաղորդագրութիւն: Ամեն. Ս. Պատրիար-
քին այցը Վատիկան – 214:

Աւստրիոյ Կարտինալին Ֆ. Քէօնիկի այցե-
լութիւնը – 216:

Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան մեր
մէջ – 225:

Յանկ «Սիրոն»-ի Խմբագրութեան եւ Գ. Կիւլ-
պէնկեան Մատենադարանին կողմէ ստաց-
ւած գիրքերու (Յաւելուած) – 62, 111, 165, 226:

Բարեպաշտական նուէրներ – 225:

Յանկ նիւթոց 1982 տարւոյ – 230:

ԱՍՏՈՒԱԾԱՔԱՆԱԿԱՆ

Մաղաքիա Արքեպս. Օրմանեան.- Տեսա-
կան Աստուածաբանութիւն – 36, 80, 126, 178:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ն. Արք. Ծովական.- Զաքարիա Երէց Վանե-
ցի, Աւանցի – 86:

- Յակոբ Եպս. Նետրարենց – 135:

- Մանրապատում – 189:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Գ. Ճարտար.- Յիսնամեակ – 40:

- Կը սիրեմ... – 85:

- Վիշտն է նորէն... – 130:

- Տարեփակ – 188:

Ռուբէն Վրդ. Յովակիմեան.- Փառք անմահ-
ներին – 83:

Մ. Մանուկեան.- Քառեակներ – 84:

- (Թրգմ.) Զայլտ Հարոլտի ուղեւորութիւնը
(Լորտ Պայրընի) – 186:

Եզովպոս.- Եթէ – 129:

Նազարէթ Պ. Զափատարեան.- Զօն (Հ. Բ. Ը.
Միութեան) – 131:

- Ս. Ստեփանոսին – 189:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Ն. Արքեպս. Ծովական.- «The Armenian Trans-
lation of Deuteronomy» – 45:

Գ. Ճարտար.- «Պանդուխտի մորմոքներ»
«Վշտամատեան» – 148:

- «Կեանքը գեղեցիկ է» – 210:

ԳՐԱԿԱՆ

Ռուբէն Վրդ. Յովակիմեան.- Լորտ Պայրըն
Վենետիկի մէջ – 133:

Կ. Միհրանեան.- Ես պաշտեցի – 134:

Սիփան Վրդ. Միսեան.- Հայ գրականութեան
զարգացումը Հայ Եկեղեցւոյ միջոցաւ – 183:

Մարտիրոս Մինասեան.- Կոմիտաս Վարդա-
պետ, նամակներ Վիեննայի Միթիթարեաննե-
րին – 198:

Նամականի՝ Յակոբ Նալեան Պատրիարքի
– 119:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ե.- Անդրադարձումներ – 21:

- Մեր հոգեւոր հունձքը – 72:

Թ. Ե. Գ.- Ճառ՝ Միաբանական Ժողովին – 170:

ԿՐՕՆԱԿԱՆ

Շահէ Արքեպս. Աճէմեան.- Վարդանանք – 26:

Զգօն Եպս. Տէր-Յակոբեան.- Աննման սուր-
բը (Յովհաննէս Մկրտիչ) – 29:

- Ս. Աստուածածին եւ Օրհնութիւն խաղողի
– 122:

- Լոյս ի լուսոյ – 174:

Ռուբէն Վրդ. Յովակիմեան.- Ամանորի պատ-
գամ – 33:

Հայկ Մեքրոնեան.- Նորից եկեղեցական մի
քանի հարցերի շուրջ – 47, 97, 144, 204:

Գէորգ Ս. Ճինիվիզեան.- Մի՛ երկնչիք – 76:

Ստեփան Վրդ. Միսեան.- Հոգեգալուստ –
124:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

Ն. Արք. Ծովական.- Եղրդուտի Ս. Յովհան-
նու Վանք – 139:

ՀԻՆ ԷՋԵՐ

Ծովական (Հրատ.) - Տաղ Սրբոց Քառասնի-
ցըն ի Սեբաստ: Ստեփանոս - 91:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Ա. Յ. Սրճունի (Հրատ.) - Մեծի Երկուշաբ-
թին, ի թղենին եւ յԱդամ - 41, 87:

Ն. Արք. Ծովական. - Կորիւն Վարդապետի
երկերը - 191:

ՇՆՈՐՀԱՆՈՐԱԳՐԵՐ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն
Ա. - ի Ծննդեան քարոզը - 2:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն
Ա. - ի Զատիկական քարոզը - 66:

Ամեն. Ա. Պատրիարք Հօր Ծննդեան պատ-
գամը Բեթղեհէմի Ա. Այրէն - 4:

Շնորհաւորական հեռագիրներ՝ յղուած Ա.
Աթոռէն - 7, 71:

Շնորհաւորագիր՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կա-
թողիկոսարանէն - 8, 69:

Շնորհաւորական գիր՝ Սրբ. Պապէն - 9:

Շնորհաւորական գիր՝ Ռուսաց Պիմէն Պա-
տրիարքէն - 9, 70:

Շնորհաւորական գիր՝ Քէնթըրպլըրիի Ար-
քեպիսկոպոսէն - 10:

Շնորհաւորական գիր՝ Վսեմ. Տիար Ալեքս
Մանուկեանէն - 10:

Շնորհաւորական գիր՝ Գ. Կիւլպէնկեան Հիմ-
նարկ. Նախագահէն - 11:

Շնորհաւորական գիր՝ Պոմպէյի Հայոց Թա-
ղական Խորհուրդէն - 11:

ՊԱՏՄԱԿԱՆ

Ռուբէն Վրդ. Յովակիմեան. - Յովսէփ էմին
- 194:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ղեւոնդ Եպս. Դուրեան. - Զմիւռնիոյ աղէ-

տին շուրջ համառօտ տեղեկագիր - 92, 136:

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ

Գ. - Ծնունդ Տեառն - 34:

- Եղեկիա թագաւորը - 75:

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Դոհաբանական մաղթանք - 51:

Հովուական այցելութիւններ - 51:

«Հասկ» ամսագիր - 100:

Ոսկան Պէյ Մարտիկեանի պատասխանը -
100:

Զէթինեան կտակ - 100:

Մահ Պր. Ֆրէտերիք Մուրատի - 100:

Վսեմ. Գալուստ Պէյ Կիւլպէնկեանի հրաժա-
րականը - 158:

Ընտրութիւն Ամենայն Հայոց Հայրապետի
- 158:

Ա. Թարգմանչաց Վարժարանի անդրանիկ
հունձքը - 158:

Զեւնադրութիւն շորս աբեղաներու - 213:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Յունուար-Փետրուար - 58:

Մարտ-Մայիս - 104:

Յունիս-Օգոստոս - 162:

Սեպտեմբեր-Դեկտեմբեր - 221:

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Սահակ Գալայճեան. - Տեղեկագիր Կիւլպէն-
կեան Մատենադարանի - 61:

Կիրեղ Եպս. Գաբրիէան. - Տարեկան Տեղե-
կագիր Ա. Թարգմանչաց Երկրորդական Վար-
ժարանի - 150:

ՏԵՐՈՒՆԻ

Հայկունի Մայրապետ Պէշիբեան - 60:

Փրօֆ. Լեւոն Խաչիկեան - 109:

1983**ԱՅԼԵՒԱՅԼԸ**

Յովհաննէս-Պօղոս Բ. Պապ. - Կոչ՝ «Խաղաղու-
թեան օր»-ուան առթիւ - 20:

Գէորգ Ա. Ճինիվիզեան. - Տօնացուցային
կարգ մը վրէպներու մասին - 45:

Գ. - Եկեղեցիներու միութեան եօթնեակը
Երուսաղէմի մէջ - 51:

Գ. Ճարտար.- Երէջ գրչեղբօր մը պայծառ յիշատակին – 54:

Վահան Բժշկեան.- Ուսումնասիրութիւն շարականաց – 97, 172, 230:

Պատրիարքական Կոնդակ՝ ուղղուած Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանի – 2:

Կենսագրական գիծեր Խորէն Վեհափառի – 15:

Ամանորի Հանդէս Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի – 53:

68-րդ Տարեդարձ Ապրիլեան Եղեռնի – 103:

Ամաւերջի Հանդէս Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի – 104:

Ամաւերջի հանդիսութիւնք Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի – 117:

Զեկոյց՝ Հ. Բ. Ը. Միութեան – 123:

Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանի ուղերձը – 137:

Զեռնագրութիւններ Ս. Աթոռոյս հովանիին տակ – 177:

Գերշ. Տ. Սերովբէ Արքեպս. Մանուկեան պարգեւատրուած Ֆրանսական Կառավարութեան շքանշանով – 183:

Մ. Հայկենցի խօսած դամբանականը (Տքթ. Մկրտիչեանի մահուան առթիւ) – 186:

Յանկ «Սիոն»-ի Խմբագրութեան եւ Գ. Կիւլպէնկեան Մատենադարանին կողմէ ստացւած գիրքերու (Յաւելուած) – 61, 124, 189, 239:

Բարեպաշտական նուէրներ – 301:

Յանկ նիւթոյ 1983 տարւոյ:

ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆԱԿԱՆ

Մաղաքիա Արքեպս. Օրմանեան.- Տեսական Աստուածաբանութիւն – 29, 78, 141, 202:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ն. Արք. Ծովական.- Զորրորդ գիրք Մովսիս Խորենացոյ – 151:

- Դ. Դարու հայերէնը – 211:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Մ. Մանուկեան (Թրգմ.).- Զայլտ Հարուտի ուղեւորութիւնը (Լորտ Պայրընի) – 33, 82, 144, 206:

- Եկուր երբեմն – 299:

Գ. Ճարտար.- Կամուրջը – 37:

- Հազար յարգանք... – 86:

- Փակուած դռներ – 148:

- Լուին աղօթք – 210:

Աշտիշատ.- Յակոբ Օշականին – 298:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Գէորգ Ս. Ճինիվիզեան.- «Հայ Մանրանկարչութիւնը եւ Թորոս Ռօսլին» (Վաչէ Խ. Վրդ.-ի) – 100:

- «Հող, Մարդ եւ Գիր» (Գարեգին Բ. Կաթողիկոսի) – 234:

ԳՐԱԿԱՆ

Կ. Միհրանեան.- Ես կարօտցայ – 32:

Գ. Ճարտար.- Հպանցիկ ակնարկ մը Սփիւռքահայ գրականութեան վրայ – 149:

Յ. Օշական.- «Մնացորդաց» – 274:

- «Ծակ - պտուկը» – 278:

- «Մաթիկ Մելիքխանեանց» – 282:

- Դանիէլ Վարուժան – 287:

- Հայ գրականութեան նահատակը – 294:

Իսահակ Ծ. Վրդ. Ղազարեան.- Ալեւոր գրագէտը – 290:

Կենսագրական գիծեր Յակոբ Օշականի – 270:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ե.- Խորէն Շինարար – 10:

- Օշական երէկ եւ այսօր – 242:

Կարապետ Եպիսկոպոս.- Ս. Միւռնի օրհնութիւնը – 130, 194:

ԿՐՕՆԱԿԱՆ

Ռուբէն Վրդ. Յովակիմեան.- Ամանորի պատգամ – 28:

Գէորգ Ս. Ճինիվիզեան.- Գերազանց Յոբելեանը (Քրիստոսի Խաչելութեան եւ Յարութեան 1950-ամեակին առիթով) – 74:

- Հոգեւոր կեանք – 139:

- Աստուծոյ արդարութիւնը – 200:

Սիփան Վրդ. Միսեան.- Ս. Յովհաննէս Ոսկեբերանի ուսուցումը աղօթքի մասին – 76:

Գ. Ճ.- Համառօտ եւ բաղդատական ակնարկ՝ մեր եւ քոյր Եկեղեցիներու Տօնացոյցերուն վրայ եւ Սաղմական աւանդութիւններ – 167, 226:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

Ն. Արք. Ծովական.- Երկայն Ընկուզեաց վանք – 41:

- Ծպատայ Վանք – 42:
- Խլպաշի Վանք, Ս. Կարապետ – 42:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

- Ն. Արք. Ծովական.- Կորիւն Վարդապետի երկերը – 38, 87, 152:
- Մատենագրութիւն Յակոբ Օշականի – 272:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳՐԵՐ

- Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա.-ի Ծննդեան քարոզը – 4:
- Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա.-ի Զատիկական քարոզը – 66:
- Ամեն, Ս. Պատրիարք Հօր Ծննդեան պատգամը Բեթղէհէմի Ս. Այրէն – 6:
- Ս. Զատիկի պատգամ – 68:
- Շնորհաւորական գիր՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանէն – 16:
- Շնորհաւորական գիր՝ Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսէն – 17:
- Շնորհաւորական գիր՝ Ռուսաց Պիմէն Պատրիարքէն – 18, 74:
- Շնորհաւորական հեռագիրներ՝ յղուած Ս. Աթոռէն – 19, 73:

ՊԱՏՄԱԿԱՆ

- Ռուբէն Վրդ. Յովակիմեան.- Մխիթարեանները – 43:
- Գրիգոր Նարեկացի – 155, 219:
- Ն. Արք. Ծովական.- Մարիուն (Մարիամ) թագուհի – 90:
- Սաղիմական տարեգրութիւն – 214:
- Սիփիան Վրդ. Մխսեան (Թրգմ.).- Վարագայ Վանքին կողոպուտը եւ արեղաներուն չարչարանքը – 160:
- Տիգրան Ս. Քրիշեան.- Մասնաւոր պատմագրութիւն Ս. Նշանի Վանուց Սեբաստիոյ – 163, 224:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

- Ռուբէն Վրդ. Յովակիմեան.- Յարութիւն Քննչ. Շմաւոնեան – 92:

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

- Կիլիկիոյ Վեհ. Տ. Բաբգէն Ա. Աթոռակից Կաթողիկոսին այցելութիւնը – 50:
- Վախճանում Հ. Յակոբոս Վ. Տաշեանի – 50:
- Մանր լուրեր – 102:
- Երանաշնորհ Տ. Եղիշէ Դուրեան Պատրիարքի շիրմին շինութիւնը – 176:
- Հայաստանի հանրագիտարանը – 176:
- Ամեն, Ս. Պատրիարք Հօր այցը Ամման – 176:
- Հանդէս Հարիւրամեայ Յոբելեանի Ս. Յակոբեանց Տպարանին – 236:

«ՍԻՈՆ»-Ի

ԼՈՒՍԱՔԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- Աշխարհի ստեղծագործութեան թուակաւոր մասին – 102:
- Շաբաթապահութեան մասին – 175:
- Քաւարանի մասին – 175:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

- Յունուար-Մարտ – 56:
- Ապրիլ-Յունիս – 118:
- Յուլիս-Սեպտեմբեր – 179:
- Հոկտեմբեր-Նոյեմբեր – 237:
- Դեկտեմբեր – 300:

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

- Սահակ Գալայճեան.- Տարեկան Տեղեկագիր Երուսաղէմի Կիւլպէնկեան Մատենադարանի – 60:
- Կիւրեղ Եպս. Գաբրիէան.- Տարեկան Տեղեկագիր Ս. Թարգմանչաց Երկրորդական վարժարանի – 107:

ՏԵՐՈՒՆԻ

- Վահրամ Մավեան – 55:
- Վահրամ Մավեանի յիշատակին – 184:
- Հոգեհանգստեան պաշտամունք – 55:
- Տքթ. Վարդգէս Մկրտիչեան – 185:
- Գ.- Վահէ Հայկ – 187:

1984

ԱՅԼԵՒԱՅԼԸ

- Վազգէն Ա. Կաթողիկոս.- Հայրապետական

Կոնդակ – 194:

Յովհաննէս-Պօղոս Բ. Պապ.- Կոչ՝ «Խաղա-

ղութեան օր»-ուան առթիւ – 12:

Գ. Ճ.- Համառօտ եւ բաղդատական ակնարկ՝ մեր եւ քոյր եկեղեցիներու Տօնացոյցերուն վրայ եւ Սաղիմական աւանդութիւններ – 46, 94, 171, 231:

Վահան Բժշկեան,- Ուսումնասիրութիւն շարականաց – 50, 98, 176, 223:

Գ.- Եկեղեցիներու միութեան եօթնեակը Երուսաղէմի մէջ – 54:

- Տիրամօր տարիքը Փրկչին ծննդեան ատեն – 152:

Իսահակ Ծ. Վրդ. Ղազարեան,- Նորայր Արքեպս. Պողարեան – 236:

Ամանորի Հանդէս Ժառ. Վարժարանի եւ Ընծայարանի – 56:

Ամավերջի հանդիսութիւնք Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի – 114:

69-րդ Տարեդարձ Ապրիլեան Եղեռնի – 118:

Հարիւրամեակ ծննդեան Դանիէլ Վարուժանի – 242:

Զեկոյց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան – 119:

Բարեպաշտական նուէրներ – 249:

Յանկ «Սիոն»-ի Խմբագրութեան եւ Գ. Կիւլպէնկեան Մատենադարանին կողմէ ստացւած գիրքերու (Յաւելուած) – 62, 124, 187, 249:

Յանկ նիւթոց 1984 տարւոյ – 253:

ԱՍՏՈՒԱԾԱՔԱՆԱԿԱՆ

Մաղաքիա Արքեպս. Օրմանեան,- Տեսական Աստուածաբանութիւն – 36, 76, 142, 201:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ն. Արք. Ծովական,- Մանրապատում – 161:

Մարտիրոս Մինասեան (Հրաւ.),- Հրաչեայ Աճառեանի նամակները Վիեննայի Մխիթարեաններին – 166, 227:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Մ. Մանուկեան,- Սերովբէ Արք. Մանուկեանի յիշատակին – 29:

- (Թրգմ.),- Զայլտ Հարոլտի ուղեւորութիւնը (Լորտ Պայրլնի) – 81, 146, 205:

Գ. Ճարտար,- Լոին աղօթք – 39:

- Մռայլ խոհեր – 85:

- Ամբարում – 151:

- Մօրս յիշատակին – 209:

- Մտածումի փշրանքներ – 209:

Յովհաննէս Շիրազ,- Արձան Աբովեանին – 80:

- * * * – 80:

Ռէնաթօ Մէնաշչի,- Սուրբ Յակոբ – 150:

Նազարէթ Պ. Զափատարեան,- Երուսաղէմ վիրաւոր – 152:

- Գովերգութիւն հայրենի – 210:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Գ. Ճարտար,- «Անաւարտ խաղ» – 102:

- «Դէմքեր՝ որոնց հետ դէմ առ դէմ եկայ» – 181:

- «Լեռներ վիհերու մէջ» – 239:

- «Բոցեր» եւ «Հողէն Երկինք» – 241:

Ծովական,- «Ստեփանոս Դաշտեցի» – 180:

- «Մայր Յուցակ Հայերէն Զեռագրաց Մ. Տ. Կիլիկիոյ Կաթողիկոսութեան» – 238:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ե.- Սերովբէ խոհեմազարդ – 19:

Թորգոմ Պատրիարք,- Պատգամ եւ ոչ պատմութիւն – 72:

- Բարեկարգութիւն Հայց. եկեղեցւոյ – 130, 196:

ԿՐՕՆԱԿԱՆ

Ռուբէն Վրդ. Յովակիմեան,- Ամանորի պատգամ – 33:

- «Խաղաղութիւն ձեզի» – 75:

- «Խաղաղութիւն ամենեցուն» – 139:

- Բեթղեհէմի Մանուկը – 214:

Գէորգ Ս. Ժինիվիզեան,- Փրկչին ծնունդը – 34:

- Նուարսակի դաշինքը (1500-ամեակին առիթով) – 35:

- Խօսքին ոյժը – 140:

- Ուրախ ըլլալ – 141:

- Կեղծաւորութիւն – 199:

- Ապաշխարութիւն – 200:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

Ն. Արք. Ծովական,- Ս. Յակոբեանց Վանք, Երուսաղէմ – 40, 86, 153, 219:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Ա. Յ. Սրճունի (Հրաւ.),- Ի գերեզմանն աստուած ծընկալ – 163, 211:

ՇՆՈՐՀԱՆՈՐԱԳՐԵՐ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Տ. Վազգէն Ա.-ի Ծննդեան քարոզը – 2:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Տ. Վազգէն Ա.-ի Զատկական քարոզը – 66:

Ամեն. Ս. Պատրիարք Հօր Ծննդեան պատգամը Բեթղեհէմի Ս. Այրէն – 5:

- Ս. Զատիկի պատգամ – 68:

Շնորհաւորական գիր՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանէն – 8, 69:

Շնորհաւորական գիր՝ Ռուսաց Պիմէն Պատրիարքէն – 9:

Շնորհաւորական գիր՝ Վատիկանէն – 10, 70:

Շնորհաւորական գիր՝ Քէնթըրպըրիի Արքեպիսկոպոսէն – 10, 70:

Շնորհաւորական հեռագիրներ՝ յղուած Ս. Աթոռէն – 11, 71:

ՊԱՏՄԱԿԱՆ

Տիգրան Ս. Քիրիշեան.- Մասնաւոր պատմագրութիւն Ս. Նշան Վանուց Սեբաստիոյ – 44, 91, 157, 216:

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Եղերամահ վախճան Տ. Ղեւոնդ Արքեպս. Դուրեանի – 53:

Յոբէլեան՝ բանաստեղծ Վահան Թէքէեանի – 54:

Պր. Գալուստ Կիւլպէնկեան մեր մէջ – 54:

Մահ Թորոս Թորամանեանի – 117:

Տ. Եղիշէ Դուրեան Պատրիարքի աճիւններու փոխադրութիւնը – 183:

Մահ Կարապետ Մելգոնեանի – 183:

Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյ սալայատակումը – 183:

Արարողութիւնք բացման դամբարանի Հոգելոյս Տ. Եղիշէ Ս. Պատրիարքի Դուրեան – 244:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Յունուար-Մարտ – 57:

Ապրիլ-Յունիս-120:

Յուլիս-Սեպտեմբեր – 184:

Հոկտեմբեր-Դեկտեմբեր – 245:

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

Սահակ Գալայճեան.- Տարեկան Տեղեկագիր Երուսաղէմի Կիւլպէնկեան Մատենադարանի – 61, 248:

Կիրեղ Եպս. Գաբրիկեան.- Տարեկան Տեղեկագիր Ս. Թարգմանչաց Երկրորդական վարժարանի – 104:

ՏԵՐՈՒՆԻ

Տ. Սերովբէ Արքեպս. Մանուկեան (Կննսագրական գիծեր) – 32:

Արմենակ Դուլյումճեան.- Մտերմիկ խօսակցութիւն յետ մահու – 25:

Գ. Ճարտար.- «Տեսուչ Հայր սուրբը» – 30:

Արայ Գալայճեան.- Ներսէս Թամամեան – 115:

1985**ԱՅԼԵՒԱՅԼՔ**

Վահան Բժշկեան.- Ուսումնասիրութիւն շարականաց – 49, 195, 356:

Գ. Ճ.- Համառօտ եւ բաղդատական ակնարկ՝ մեր եւ քոյր Եկեղեցիներու Տօնացոյցներուն վրայ եւ Սաղիմական աւանդութիւններ – 52, 191:

Գ.- Եկեղեցիներու միութեան եօթնեակը Երուսաղէմի մէջ – 55:

Թորգոմ Փօսթանճեան.- Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի լուսաբանութիւնները – 146:

Շ. Ք. Պ.- Դատաստանագիրք Շնորհ Պատրիարք Գալուստեանի – 234:

Ե.- Վերաբացուող վէրքեր – 241:

Սահակ Գալայճեան.- Երեսնամեակ մահուան Գալուստ Կիւլպէնկեանի – 372:

Ամանորի Հանդէս Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի – 62:

Շաբաթօրեայ երեկոյթներ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի – 63:

Տարեկան հանդիսութիւնք Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի – 213:

Ինքնակենսագրութիւն Սերովբէ Վրդ. Սամուէլեանի – 308, 361:

Զեկոյց՝ Հարաւային Ֆրանսայի Առաջնորդարանի – 219:

Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան մեր

մէջ – 315:

Բարեպաշտական նուէրներ – 370:

Յանկ «Սիոն»-ի հմբագրութեան եւ Գ. Կիւլ-պէնկեան Մատենադարանին կողմէ ստացւած գիրքերու (Յաւելուած) – 63, 221, 281, 373:

Յանկ նիւթոց 1985 տարւոյ – 378:

ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆԱԿԱՆ

Մաղաքիա Արքեպս. Օրմանեան.- Տեսական Աստուածաբանութիւն – 22, 160, 247:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ն. Արք. Ծովական.- Յաղագս զանազանութեան բնութեան եւ անձնաւորութեան – 175:

- Գրիգոր Աբդ. էլմէլիքենց – 302:

- Խաչատուր Քհնյ. Զուղայեցի – 303:

- Մանրապատում – 342:

Մարտիրոս Մինասեան (Հրաւ.)- Հրաշեայ Աճառեանի նամակները Վիեննայի Մխիթարեաններին – 42, 188, 272, 304, 353:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Եղիվարդ.- Անձկութիւն – 29:

- Շարք՝ Նոր Խորտակման Գիշերներու – 149, 255, 293, 331:

Հմայեակ Գրանեան.- Ծնունդի շարական – 33:

Գ. Ճարտար.- Ծերանոցի մատրան մէջ – 34:

- Պայծառ օրեր – 174:

- Անվերնագիր – 174:

- Խոհեր – 301:

- Քառեակներ – 341:

Մ. Մանուկեան (Թրգմ.)- Զայլտ Հարողտի ուղեւորութիւնը – 170, 338:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Ն. Արք. Ծովական.- «Հայերէն Զեռագրերի Յիշատակարաններ ԺԳ. դար» – 198:

- «Համառօտ Տեսութիւն Քերականի» Յովհաննէս Ծործորեցի – 364:

Գ. Ճարտար.- «Ծննդավայր Կորուսեալ» (Եղ. Պօյաճեանի) – 199:

- «Ի խորոց սրտի» (Լեւոն Վարդանի) – 199:

- «Ծուլէն ծուլէն երիզներ» (Պէպօ Սիմոնեանի) – 310:

ԳՐԱԿԱՆ

Գ. Ճարտար.- Ծննդեան դարագարձ երեք

վաղամեռիկ քերթողներու – 365:

ԽՄԱԳՐԱԿԱՆ

Ե.- «Երուսաղէմի տաճնապը» – 11, 137, 226, 286, 318:

Նօթք եւ նիշք – 276:

Թորգոմ Պատրիարք.- «Բարեկարգութիւն Հայց. Եկեղեցւոյ» – 17, 142, 323:

ԿՐՕՆԱԿԱՆ

Ռուբէն Վրդ. Յովակիմեան.- Ամանորի պատգամ – 26:

Գէորգ Ս. Ճինիվիզեան.- Հաւատքի դերը – 168:

- Օտարական մը Յուդայի մասին – 166:

- Տիրամայրը (Ծննդեան 2000-ամեակին առիթով) – 253:

- Ս. Յովսէփ – 291:

- Գայթակղութիւն – 329:

- Սէր եւ երկիւղ – 330:

ՀԱՅ ՆԿԱՐՈՂՆԵՐ

Ն. Արք. Ծովական.- ԺԱ. - ԺԳ. դարերու հայ նկարողներ – 349:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

Ն. Արք. Ծովական.- Ս. Յակոբեանց Վանք, Երուսաղէմ – 45, 176:

ՀԻՆ ՅՈՒՇԵՐ

Նամականի Կ. Պոլսոյ Տ. Զաւէն Պատրիարքի – 35, 181, 344:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳՐԵՐ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա.-ի Ծննդեան քարոզը – 2:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա.-ի Զատիկական քարոզը – 130:

Ամեն. Ս. Պատրիարք Հօր Ծննդեան պատգամը Բեթղէհէմի Ս. Այրէն – 4:

Շնորհաւորական գիր՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետէն – 132:

Շնորհաւորական գիր՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանէն – 8, 133:

Շնորհաւորական գիր՝ Ռուսաց Պիմէն Պատրիարքէն – 134:

Շնորհաւորական գիր՝ Վատիկանէն – 9, 134:

Շնորհաւորական գիր՝ Քէնթրըպլըրիի Արքեպիսկոպոսէն – 9:

Շնորհաւորական գիր՝ Փօրթուկալի Օրթոտոքս Առաջնորդէն – 135:

Շնորհաւորական հեռագիրներ՝ յղուած Ս. Աթոռէն – 10, 136:

ՊԱՏՄԱԿԱՆ

Տիգրան Ս. Քիրիշեան.- Մասնաւոր պատմագրութիւն Ս. Նշան Վանուց Սեբաստիոյ – 39, 185:

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Առաջին հանդէս ԺԵ. դարադարձի Աստուածաշունչի Հայերէն թարգմանութեան – 57:

Երկրորդ հանդէս... – 202:

Երրորդ եւ վերջին հանդէս... – 367:

Երուսաղէմ – Անթիլիաս – 201:

Նոր ձեռնադրութիւններ – 276:

Հանգիստ Տ. Կոմիտաս Վարդապետի – 312:

Հանգիստ Շահէ Արք. Գասպարեանի – 368:

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ

Խալիլ Ճիպրան (Հայացող Գ. Արք. Գազանձեան).- Սիմոն՝ որ Պետրոս կոչուեցաւ – 27:

«ՍԻՈՆ»-Ի

ԼՈՒՍԱՔԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մեր Եկեղեցւոյ տօնակարգի մասին – 201:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Յունուար-Մարտ – 58:

Մայիս-Օգոստոս – 214:

Սեպտեմբեր – 278:

Հոկտեմբեր – 312:

Նոյեմբեր-Դեկտեմբեր – 368:

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

Կիրեղ Եպս. Գաբրիէան.- Տարեկան Տեղեկագիր Ս. Թարգմանչաց Երկրորդական վարժարանի – 203:

Սահակ Գալայճեան.- Տարեկան Տեղեկագիր Երուսաղէմի Կիւլպէնկեան Մատենադարանի – 377:

ՏԵՐՈՒՆԻ

Տ. Իսահակ Ծ. Վրդ. Ղազարեան – 220:

Հանգիստ Ս. Աթոռոյս Դիւանապետ Տիար Կարպիս Հինդլեանի – 279:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԷՆ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

(Շար. 3)



ՅՈՐԵԼԵԱՆ**ԼՈՅՍԻ ԵՒ ՈՒՐԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԸ****(Առնօ Բաբաջանեանի ծննդեան 100-ամեակի առթիւ)**

«Երբեք չի յաջողում լինել այնպէս երջանիկ, ինչպէս այն
 ժամերին, երբ աշխարհներ ոչ մի ազատ թուէ չի թողնում»:

ԺԱՆ ԱՆՐԻ ՖԱԲՐ

«Ես ազատ ժամեր չունեմ եւ չեմ էլ ունեցել: Ամբողջ կեանքում նման եմ եղել պաշարուած ամրոցի: Այո՛, ես պաշարուած եմ հնչիւններով: Քուն թէ արթուն զօղանքների մէջ եմ: Մի՛ զարմացէք, եթէ ասեմ, որ իմ տեսած երազներն էլ հնչիւնների հետ են կապւած: Այդ հնչիւններից ես ընտրում եմ սրտահաճները եւ երգեր յօրինում: Ինձ համար ազատ ժամ ունենալ՝ նշանակում է կտրուել հնչիւններից, որ նոյնն է՝ թէ հրաժեշտ տալ կեանքին»¹:

1983 թ.-ի Նոյեմբերի 11-ին, Առնօ Բաբաջանեանը ազատագրուելով հնչիւնների պաշարումից՝ ունեցաւ այդ ազատ ժամը. կտրուեց հնչիւններից, ասել է թէ, հրաժեշտ տուեց կեանքին՝ թողնելով հսկայական հոգեւոր ժառանգութիւն, որը յաւակնում է ընդմիջտ ապրել սերունդների հետ՝ բաշխելով նրանց խինդ ու երջանկութիւն, սնելով նրանց հոգեւոր աշխարհը լոյսով ու ջերմութեամբ: Նրա ստեղծած ամէն մի հնչիւն յաւերժական արժէք է դարձել նախ եւ առաջ այն պատճառով, որ, իր իսկ խոստովանութեամբ, ծնուել է յոյգերից եւ կոշտած է եղել արթնացնել ունկնդրի զգացմունքները, ինչպէս ինքն էր ասում. «ցնցել նրա հոգին, ձգտումը՝ լոյսին, գեղեցիկին, բարութեանը»:

Ռուս անուանի բանաստեղծ Սերգէյ Դեմէնտևի բնորոշմամբ. «Նա մարդ էր, ով սիրահարուած էր կեանքին: Նրա մէջ այնքան յումոր կար, մարդկութիւն, որ անգամ երաժշտութիւնն էր ծնւում այդ բարութիւնից: Նա ունէր գեղեցիկի բնատուր զգացում: Բաբաջանեանը մնաց լոյսի եւ ուրախութեան կոմպոզիտոր»²:

Մեծանուն պոետն այս գնահատականում շեշտում էր կարեւոր մի հանգամանք, որը բնորոշ է նաեւ Ա. Բաբաջանեանի մասին հնչեցրած նրա ժամանակակիցներից եւ գործընկերներից շատերի կարծիքներին, որոնք չէին ընկալում Բաբաջանեանի արւեստը, որպէս առանձին երեւոյթ, որպէս ինքնատիքեան կոմպոզիտորական տաղանդի դրսեւորում, այլ բոլորը միահամուռ կերպով կապում էին նրա երաժշտութիւնը իր մարդկային տեսակի եւ կերպի հետ՝ բխեցնելով մէկը միւսից եւ պայմանաւորելով նրա ստեղծագործական աշխարհը հեղինակի հոգեկերտուածքով: Իրականում հէնց դրանում էլ կայանում էր Բաբաջանեանի ֆենոմենը: Մարդու, ով իր պայծառ կերպով երջանկութիւն եւ խինդ էր պարգեւում հարազատներին, ընկերներին, շրջապատին, եւ կոմպոզիտորի, ով կարողացաւ իր շռայլ հոգին վերածելով աննման մեղեդու՝ հասու դարձնել այն միլիոնների եւ ընդմիջտ նուաճել նրանց սրտերը, վայելել աներեւակայելի ժողովրդականութիւն, որը պատահական բան չէր: Նա չէր խաղում, պարզապէս այդպիսին էր՝ անմիջական, մարդասէր, իր շուրջը անմիջապէս տօն էր ստեղծում, ամէն ինչ ուրախութեամբ լցնում:

¹ Խաչատրեան Հ., Հայոց հնօրեայ գուարճախօսները, Երեւան, «Ամարաս», 2003, էջ 50:

² Գրիգորեան Ռ., Սիրահարուած կեանքին, Տե՛ս <https://www.shantnews.am/news/view/582018.html> (01.02.2021):

Առնօ Բաբաջանեանը ծնունել է 1921 թ. Յունուարի 21-ին ուսուցիչ, մաթեմատիկոս Յարութին Բաբաջանեանի ընտանիքում: Արու գաւակի ծնունդը թէեւ անսահման ուրախութիւն եւ երջանկութիւն էր պարգեւել Բաբաջանեանների ընտանիքին, սակայն ոգեւորութեան հետ մէկտեղ հայրը մտահոգւում էր երկու աննշան պատճառով, որոնցից մէկը՝ մանուկը կարծես դիտաւորութեամբ ծնունել էր այն օրը, երբ մահացել էր ժողովուրդների առաջնորդ՝ Լենինը³, իսկ միւսը՝ նորածնի անհամաշափ մեծ քիթն էր, հանգամանք, որը կարող էր ողջ կեանքում յարուցել շրջապատի ծիծաղն ու վնաս հասցնել տղայի անձնական կեանքին:

Առաջին խնդիրը ծնողները չեզոքացրին անմիջապէս՝ ծննդեան վկայականում Յունուարի 21-ը փոխելով 22-ի, իսկ ահա քթի անհամաշափ մեծութեան հետ հարկ եղաւ պարզապէս համակերպուել: Մանկանը կոչեցին Առնօ, որով էլ նա ուղեգիր ստացաւ դէպի մեծ կեանք⁴:

Առնօյի նախնիների մէջ, ինչպէս եւ ընտանիքում մասնագիտութեամբ երաժիշտներ չեն եղել, սակայն հայրը, ոչ միայն երաժշտութեան մեծ սիրահար էր, այլեւ գերազանց ֆլէյտա, շուր եւ ֆիսհարմոն էր նուագում: Գուցէ հօրից էլ փոխանցուել էին նրա երաժշտական փայլուն ընդունակութիւնները, որովհետեւ դեռ չորս տարին չբոլորած՝ փոքրիկն արդէն փորձում էր նուագել ֆիսհարմոնի վրայ: Ինչպէս պարզուելու էր յետագայում, դա ոչ թէ խաղալու մանկական ձգտում էր, այլ երաժշտութեանը ինքնամոռաց սիրահարուելու արտայայտութիւն:

Ճակատագրի բերմամբ մանկապարտէզի աւարտական խմբում այլ երեխաների շարքում Առնօյի լսողութիւնը ստուգել էր մանկապարտէզ այցելած Արամ Խաչատրեանն ու խորհուրդ տուել լրջօրէն նուիրուել երաժշտութեանը:

Ծնողները, հետեւելով մեծ կոմպոզիտորի յորդորներին, 1928 թ.-ին 8-ամեայ Առնօյին ընդգրկեցին Երեւանի կոնսերվատորիային կից գործող տաղանդաւոր մանուկների երաժշտական խմբակ: Յայտնուելով երաժշտական միջավայրում՝ փորձառու ուսուցիչների ուշադրութեան եւ հսկողութեան ներքոյ, փոքրիկը ուսման մէջ դրսեւորեց աներեւակայելի ընդունակութիւններ: Ընդ որում, բացի դաշնամուրի դասերը փայլուն իւրացնելուց, նա սկսեց նաեւ երաժշտութիւն գրելու փորձեր անել:

Առաջին գործը իննամեայ Առնօյի՝ հարազատ մանկապարտէզին նուիրուած «Պիոներական քայլերգն» էր, որը 1932 թ.-ին 1000 օրինակ տպաքանակով հրատարակեց Հայպետհրատը՝ Ե. Չարենցի նախաձեռնութեամբ: «Մի անգամ, յետագայում յիշում է Հայպետհրատի երաժշտական բաժնի ղեկավար Մ. Մազմանեանը, Չարենցը մեզ յայտնեց իր հիացմունքը նախորդ օրը մի շնորհալի երեխայի ունեցած ելոյթի մասին. Առնօյի հեղինակած «Պիոներական քայլերգը» նրան շատ էր դուր եկել: Տեսնելով երեխայի ինքնատիպ տաղանդը, Չարենցը որոշում է խրախուսել նրան եւ լոյս ընծայել քայլերգը»⁵: Բնագրի վրայ Չարենցը մականգրում է *opus 1*:

1933 թուականին երիտասարդ երաժիշտների հանրապետական մրցոյթում Առնօն ստացաւ իր առաջին մրցանակը՝ գերազանց կատարելով Բեթհովենի 4-դ սոնատը եւ Մենդելսոնի «Ռոնտօ Կապրիչիոզա»-ն: Ոգեւորուած առաջին յաջողութիւններից, 1936 թ.-ին 16-ամեայ Առնօն սկսեց մասնաւոր դասեր վերցնել Սերգէյ Բարխուդարեա-

³ Յարութին Բաբաջանեանը դրանում ոչ մի յանգամ ու դժբախտութիւն չէր տեսնում, սակայն այն տարիներին տիրող կոմունիզմի մոլուցքը մթագնել էր բոլորի ուղեղները: Ուստի մանուկը կարող էր խնդիրներ ունենալ կեանքում միայն այն բանի համար, որ յանդգնել էր երջանկացնել ծնողներին՝ Իլլիչի մահուան շարաքաստիկ օրը լոյս աշխարհ գալով:

⁴ Յարութինեան Ա., Առնօ Բաբաջանեան... Տե՛ս <https://www.vnews.am/culture/arno-babadjanyan/> (01.02.2021)

⁵ Թաշեան Ս., Առնօ Բաբաջանեան, Երեւան, 1961, էջ 12-13:

նի եւ Վարդգէս Տալեանի մօտ, որը անուանի ժողովրդական երգիչ գուսան Շերամի որդին էր:

Երկու տարի անց՝ 1938 թ.-ին, Առնօն մեկնեց Մոսկուա՝ նպատակ ունենալով ընդունուել Գնեսենների հանրայայտ դպրոցը: Ուսումնարանի քննական յանձնաժողովը, ապշած Առնօյի կատարողական վարպետութեամբ, անմիջապէս ընդունեց նրան աւարտական դասարան:

Առնօն հանճարեղ դաշնակահար էր: Դաշնամուրն իր ձեռքերի տակ խօսում էր, երգում, ապշեցնում գոյների արտայայտութեամբ, սակայն Բաբաջանեանը այնուհանդերձ աշխարհին յայտնի էր դառնալու որպէս կոմպոզիտոր եւ այդ բնագաւառում էր նուաճելու իր մեծ փառքը:

1947 թ.-ին դրսեկութեան կարգով աւարտում է Երեւանի պետական կոնսերվատորիայի ստեղծագործական ֆակուլտետը՝ Վարդգէս Տալեանի դասարանը, իսկ 1948 թ.-ին Մոսկուայի կոնսերվատորիայի՝ անուանի երաժիշտ Կոնստանտին Իգումնովի դաշնամուրային դասարանը: «Դիպլոմային ծրագիրը հնչեց 1948 թ. Յուլիսին Մոսկուայի կոնսերվատորիայի փոքր դահլիճում, որը լէփ-լեցուն էր ունկնդիրներով, քանզի Բաբաջանեանը շատ հանրայայտ էր կոնսերվատորիայի ուսանողների եւ դասախօսների շրջանում: Տանէւի պրելիւդի եւ ֆուգայի կատարումը գերազանցեց բոլոր սպասելիքները: Ռախմանինովի պրելիւդները հնչեցին այնպէս, որ ծերունազարդ երաժիշտներից շատերը խոստովանեցին՝ «Փակում ես աչքերդ, եւ թւում է, թէ նուագում է ինքը՝ Սերգէյ Վասիլեւիչը», իսկ համերգի աւարտին հնչած Ռախմանինովի կոնցերտը դարձաւ իսկական կուլմինացիա: Թէ ինչ էր կատարում դրանից յետոյ արտիստական սենեակում՝ դժուար է պատկերացնել. շատերի աչքերին արցունքներ, հիացական բացականչութիւններ, ջերմ գրկախառնութիւններ...»⁶: Ուսումնառութեան երկար տարիների ընթացքում Ա. Բաբաջանեանը կուտակել էր ահռելի պաշար, վաստակել վիրտուոզութիւն, որոնց շնորհիւ էլ շատ արագ զբաղեցրեց նոր սերնդի հայ երաժիշտների առաջին շարքերը:

1950 թ.-ին Ա. Բաբաջանեանը վերադառնում է հայրենիք եւ դասաւանդում Երեւանի կոնսերվատորիայում: Այդ ժամանակամիջոցում զերծ չմնալով ազդեցութիւններից (Ս. Ռախմանինով, Ա. Խաչատրեան), նա հասունութիւնը դիմաւորում է վառ գեղարվեստական անհատականութեան յաղթական հաստատումով եւ այնուհետեւ, թէեւ ոչ յաճախակի, բայց հայ ու խորհրդային երաժշտութեան մէջ կարեւոր ուղենիշներ հանդիսացող գործեր հեղինակելով: Իսկ նրա անհատական ոճը լիարժէք դրսեւորում է «Հերոսական բալլադում» եւ «Դաշնամուրային տրիոյում»: Շուտով ստեղծում է Զութակի եւ դաշնամուրի սոնատը, Թաւջութակի կոնցերտը եւ Լարային № 3 կվարտետը՝ նուիրուած Դմիտրի Շոստակովիչի յիշատակին⁷:

1956 թ.-ին Առնօ Բաբաջանեանը տեղափոխւում է Մոսկուա՝ ապրելու եւ աշխատելու, քանի որ սովետմիութեան մայրաքաղաքը գերազանց հնարաւորութիւններ էր ընձեռում կոմպոզիտորների համար եւ ծառայեցնում նրանց տաղանդը ուսական մըշակոյթին: Արդէն Մոսկուայում Բաբաջանեանը աննախադէպ արգասաբեր համագործակցութիւն է ունենում անուանի ուս պոետ Ռոբերտ Ռոժդեստվենսկու եւ երգիչ, բարիտոն ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Մուսլիմ Մագոմաեւի հետ՝ «Շնորհակալ եմ քեզ», «Գեղեցկութեան թագուհին», «Կապոյտ Տայգա», «Ժպտայ», «Եղիր ինձ հետ», «Անսպասելի ժամին», «Հանդիպում», «Յուշ», «Կանչիր ինձ», «Յանկութիւն պահիր»,

⁶ Յարութիւնեան Ա., Առնօ (Երաժշտական Հայաստան, 2006, № 4 (23), էջ 12):

⁷ Տէս Ասատրեան Ա. Գ., Առնօ Բաբաջանեան (Մննդեան 90-ամեակի առթիւ), Լրաբեր հասարակական գիտութիւններ, 2011, № 3, էջ 311:

«Հարսանիք», «Իմ տիեզերքը», «Քանի դեռ յիշում եմ, ես ապրում եմ»⁸ եւ այլն: «Ես գտայ Բաբաջանեանին, Բաբաջանեանը գտաւ ինձ, մենք երկուսով գտանք Ռոժդեստովենսկուն: Այդպէս էլ քայլեցինք մինչեւ վերջ», - յետագայում խօսատուանել է Մուսլիմ Մագոմաեւը⁹:

Բացառիկ յաջողութիւն ունեցան նաեւ Բաբաջանեանի այն երգերը, որոնք նա հեղինակել էր Եւգենի Եւտուշէնկոյի («Մի շտապիր», «Սատանայի անիւ», «Քո հետքերը»), Ա. Վոզնէսենսկու («Սիրոյ տարին», «Մոսկուայ գետ», «Վերադարձու ինձ երաժշտութիւնը», «Փարիզեան ձիւն») եւ Լ. Դերբենյովի («Երկրագնդի լաւագոյն քաղաքը», «Ասնպասելի ժամ», «Դու երազիր ինձ») հետ համատեղ: Կարճ ժամանակահատուածում Առնօ Բաբաջանեանը հեղեղում է Մոսկուան իր անզուգական երգերի տարափով: Դա աներեւակայելի մի բան էր, երկնում էր մէկը միւսին չգերազանցող ստեղծագործութիւններ, ընդունում նորերը գրելու պատուէրներ: Երգի ժանրը դեռ վաղուց էր հետաքրքրել Առնօյին, սակայն շատերի համար անհասկանալի էր այն իրողութիւնը, թէ ինչպէ՞ս կարող էր խոստումնալից կոմպոզիտորը շեղել իր ուշադրութիւնը դասական երաժշտութիւնից եւ աւելի շատ սեւեռուել ջազի եւ էստրադայի վրայ:

Ֆենոմեն էր նաեւ Բաբաջանեանի կինոերաժշտութիւնը: 1958 թ.-ին խորհրդային էկրան բարձրացաւ «Առաջին սիրոյ երգը» հայկական կինոնկարը, որը հաշուած օրերի ընթացքում գրաւեց հանրութեան ուշադրութիւնը: Բոլոր առումներով ֆիլմն ինքնին յաջողուած էր, եւ դրա գաղտնիքն այնտեղ հնչող երգերն էին՝ «Երգ առաջին սիրոյ», «Սիրոյ երգ» եւ «Իմ Երեւան»: Ֆիլմից յայտնի «Սերենադը» (Երեւանի սիրուն աղջիկ) վաղուց մեզանում դարձել է «ժողովրդական», եւ քչերին է յայտնի, որ այդ երգի հեղինակը եւս Առնօ Բաբաջանեանն է:

Սակաւաթիւ ֆիլմերից մէկն էլ, որում աշխատեց Ա. Բաբաջանեանը «Հարսնացուն հիւսիսից» ֆիլմն է: Առնօն համաձայնել էր այդ ֆիլմի համար գրել երաժշտութիւն սոսկ այն պատճառով, որ գլխաւոր հերոսի կերպարի համար ընտրել էին նրա որդուն՝ Արա Բաբաջանեանին, եւ կէսկատակ-կէսլորջ պայման էին դրել կոմպոզիտորի առաջ, թէ Արան կը զրկուի դերից, եթէ հայրը հրաժարուի օգնել երաժշտութեան հարցում: Արդիւնքում լոյս աշխարհ եկաւ անզուգական մի կատակերգութիւն, որն իր յաջողութեան մեծ բաժինը վաստակել էր՝ շնորհիւ ֆիլմի հիմքում ընկած բաբաջանեանական մեղեդիների¹⁰:

Առնօյի մատները դաշմնամուրի ստեղծների հետ բարեկամութիւն անելուց բացի, լաւ զգացել են նաեւ վրձնի հարուածները: Քչերը գիտեն, որ Բաբաջանեանը նաեւ կըտաւներ է ստեղծել: 1960-ականներին անուանի նկարիչներ Հ. Իգիթեանն ու Մինասը այցելել են Առնօյին, ուսումնասիրել նրա հաւաքածոն, որից յետոյ Առնօն նրանց ցոյց է տուել իր սեփական կտաւները ու կարծիք հարցրել՝ առանց զգուշացնելու, թէ ով է դրանց հեղինակը: Իգիթեանը իր շափանիշներով առաջնորդուելով՝ քննադատել է, յետոյ նկատել է, որ Առնօյի տրամադրութիւնն ընկել է: Զրոյցի ընթացքում, երբ նորից սկսել են կերպարուեստի թեման շօշափել, այս անգամ Մինասից է կարծիք հարցրել: Ի տարբերութիւն Իգիթեանի՝ Մինասը դրական կողմեր էր գտել, նրան դուր էին եկել դինամիկան, գոյնը, էքսպրեսիան, որից յետոյ Առնօն հանգիստ խոստովանել է, որ դրանք իր աշխատանքներն են, եւ աւելացրել. «Երաժշտութիւնը չլիներ, նկարիչ կը դառնայի»:

1950-ական թուականների վերջից Բաբաջանեանը թէեւ հիմնականում բնակւում

⁸ Սոյն երգերը գրուած են ռուսերէնով: Տե՛ստում բերուած երգերի վերնագրերը տրուած են թարգմանաբար:

⁹ Տե՛ս նոյն տեղում, էջ 312:

¹⁰ **Յարութիւնեան Ա.**, Առնօ Բաբաջանեան... Տե՛ս <https://www.vnews.am/culture/arno-babadjanyan/> (03.02.2021)

էր Մոսկուայում՝ ամէն տարի մի քանի ամիս անցկացնում էր Երեւանում, իսկ 1963 թուականից՝ Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տանը: Սիրում էր կըրկնել, որ ապրում է Երեւանում, բայց բնակւում՝ Մոսկուայում: Նա իր մոսկովեան բոլոր ընկերներին եւ գործընկերներին հրաւիրում էր հիանալու արեւի եւ քարերի երկրով: Նման իւրաքանչիւր այցելութիւնը նա կարող էր վիթխարի տօնի վերածել՝ էքսկուրսիաներով եւ հիւրասիրութեամբ: Առանց կատակների նա չէր պատկերացնում իր գոյութիւնը: Նրա կատակների մասին լեզենդներ են հիւսել, ըստ որում՝ նա դա անում էր բացարձակապէս առանց չարութեան նշույլի: Ասում են՝ հայհոյում էր, յատկապէս, երբ պարտւում էր նարդի խաղալիս:

Ա. Բաբաջանեանը անշափ նրբանկատ էր նաեւ ազգային պատկանելիութեանը վերաբերող հարցերում: Նա հետեւում էր հայկական բոլոր աւանդոյթներին եւ որդուց պահանջում էր իր մտքերը միայն մայրենի լեզուով շարադրել: Զլսելու դէպքում՝ ապտակում էր, քանի որ դաստիարակութեան հարցում խիստ էր: Մոսկուայում ապրելու տարիներին էլ, երբ չորս տարեկան Արային հարցրել են՝ ի՞նչ ազգութեան է պատկանում, երեխան պատասխանել է, որ հրեայ է, քանի որ ոչ մի ազգութեան մասին պատկերացում չունէր, իսկ մոսկովեան շէնքի բնակիչները հիմնականում հրեաներ էին: Դրանից յետոյ նա ստացաւ հօր հերթական ապտակը եւ միայն յետոյ պարզաբանումը, որ ինքը հայ է:

1960-ականներին Բաբաջանեանի առողջութիւնը սկսեց նահանջելու նշաններ ցոյց տալ, հիւանդութիւնը գլուխ էր բարձրացրել դեռ 32 տարեկանում: Բժիշկները սպիտակարիւնութիւն էին ախտորոշել, սակայն ազգականները սկզբում վախենում էին խոստովանել նրան եւ թաքցնում էին: Իսկ երբ Բաբաջանեանը իմացել էր ճշմարտութիւնը անսահման վրդովել էր, որովհետեւ նա ոչ թէ պարզապէս ապրում էր իր կեանքը, այլ քամում էր կեանքի իւրաքանչիւր պահից ու ակնթարթից այն ամէնը, ինչ հնարաւոր էր: Քամում էր խորը հոգեբանութեամբ՝ ճիշդ այնպէս, ինչպէս վերապրում էր իր նուագի ամէն մի նոտան ու հնչիւնը: Հիւանդութիւնը բացարձակապէս չէր ընկճել կենսուրախ ու հոգու անսահման ուժ ունեցող մարդուն, բայց եւ այնպէս ներքուստ լիարժէք չէր կարողանում ուրախանալ կոմպոզիտորը, որովհետեւ սաստկացող հիւանդութիւնը մաշում էր նրան: Բայց վարպետը չէր պատրաստւում յանձնուել՝ երեսուն տարի պայքարեց հիւանդութեան դէմ եւ յաղթեց: Յաղթեց ապրելու անսահման ցանկութեամբ ու իր մեծ, սիրով լեցուն հոգով, բայց կարողացաւ անել միայն այդքանը եւ երկրային կեանքին հրաժեշտ տուեց 1983 թ.-ի նոյեմբերի 11-ին:

Ո՞վ կը պատկերացնէր, որ ապրելուն այդքան ծարաւ մարդը կարող է մի օր մահւանը թոյլ տալ ընդհատել իր կեանքի անզուգական մեղեդին:

ՆԵՐՍԵՏ ԱՐԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՆՈՐ ԳՏԱԾՈՆԵՐ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ «ՎԱՐԴԱՊԵՏԱՅ ԶԲՕՍԱՆԱՅ ՊԱՐՏԷԶ»-ԻՆ ՄԷՋ

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան երբեմնի «Վարդապետաց զբօսանաց պարտէզ»-ը կը գտնուի Հին քաղաքի պարիսպի եւ Սրբոց Յակոբեանց վանքին միջեւ: Պարտէզը վանքէն կը բաժնէ Եաֆայի դուռէն Սիոնի դուռ երկարող «Հայոց Պատրիարքարանի փողոց»-ը:

1975 թուականին Երջանկայիշատակ Տ. Եղիշէ Արք. Տէրտէրեան Պատրիարքի ջանքերով, Ալէքս եւ Մարի Մանուկեաններու բարերարութեամբ «Վարդապետաց զբօսանաց պարտէզ»-ի մէկ մասին վրայ կառուցուեցաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի նոր շէնքը¹, իսկ անոր քովիկը՝ «Պատրիարքարանի պարտէզ»-ը:

«Պատրիարքական պարտէզի» եւ Հին քաղաքի պարիսպի միջեւ ընկած մնացեալ տարածքէն մաս մը տարիներ ի վեր կը գործածուի Պատրիարքարանի եւ պաշտօնեաներու կողմէ, իսկ ընթարձակ մասը՝ Սաղիմաբնակ մեր ժողովուրդին կողմէ որպէս ինքնաշարժներու կայան:

2021 թուականի առաջին ամիսներուն Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան «Վարդապետաց զբօսանաց պարտէզ»-ին մէջ ձեռնարկուեցան շինարարական աշխատանքներ, նախ մաքրուեցաւ պարտէզին հսկայական հողաթուղթը, ապա նոյն վայրին մէջ կատարուեցան նաեւ հնէաբանական պեղումներ, որոնք ընթացքին երեւան եկան պատմական հնագոյն շէնքեր (նկ. 1), գտածոներ եւ խճանկար (մոզայիք) յատակներ²:

Պատմութենէն գիտենք, որ Սուրբ Երկիրն իր գոյութեան ընթացքին եղած է տարբեր իշանութիւններու տիրապետութեան տակ: Երուսաղէմ ենթարկուած է յիսուն եւ երկու յարձակումներու, գրաւուած է քառասուն եւ չորս անգամ եւ աւերուած՝ երկու անգամ: Սակայն պէտք է ըսել, որ տիրող իշխանութիւններէն իւրաքանչիւրն իր հետքն ունի Սուրբ Երկրի պատմութեան մէջ եւ այդ պատմական շէնքերն են, որ պեղումներու շնորհիւ երեւան կու գան եւ մեզի կը պարզեն տուեալ ժամանակաշրջանի մշակութային, կրօնական եւ հասարակական կարգերու մասին արժէքաւոր տեղեկութիւններ (նկ. 2):

«Վարդապետաց զբօսանաց պարտէզ»-ը, որ յայտնի է նաեւ «Կովերու պարտէզ» անունով³, Հայոց Պատրիարքութեան արժէքաւոր կալուածներէն է, եւ կը գտնուի Հին Երուսաղէմի հարաւ-արեւելեան կողմը: Պատմիչներու վկայութեամբ Երկրորդ Տաճարի ժամանակաշրջանին (538 Ն. Ք.-70 Ք. Ե.) եղած է քահանայապետներու կեցավայրը⁴, իսկ Հռոմէական շրջանին (70-330 Ք. Ե.)՝ հռոմէական բանակի 10-րդ լեգէոնի բանա-

¹ Ժառանգաւորաց Վարժարանը եւ Ընծայարանը հիմնադրած է Զաւարիա Կոփեցի Պատրիարք, 1843 թուականին, Ռամլէի մէջ, ապա տարի մը ետք փոխադրած է Երուսաղէմ:

² Պեղումներու ղեկավար՝ Իսրայէլի Հնագիտական բաժնի, Երուսաղէմի տարածաշրջանի հնագէտ եւ ուսումնասիրող՝ Դոկա. Ռինա Աւներ:

³ XIX դարու վերջաւորութեան, այս տարածքին վրայ կովեր կը պահէին, այդ պատճառով ժողովուրդի մէջ լայն տարածում գտած է «Կովերու պարտէզ» անուանումը:

⁴ Dan Bahat, Carta's historical atlas of Jerusalem. Page 16.

կատեղին⁵, որ կազմուած էր հայազգի ռազմիկներէ: Իսկ Բիւզանդական շրջանին (330–638 Ք. ե.) Եւրոկիրա կայսրուհիի կողմէ այդ վայրին վրայ կառուցուեցաւ Սուրբ Սաբայի անունով եկեղեցի մը⁶:

Մովսէս Կաղանկատուացի եւ ուրիշ յիշատակագիրներ Սուրբ Երկրին մէջ Հայոց սեփական եօթանասունէ աւելի վանքեր կը թուեն: Այդ վանքերէն շատերը ըստ VII դարու յիշատակագիր՝ Անաստաս Վարդապետի⁷, Տրդատի եւ Ս. Գրիգորի ժամանակէն կը մնային, ու մեր նախարարներէն ու հայրապետներէն շինուած էին «ի փրկութիւն հոգւոց եւ ի յիշատակ ազգիս Հայոց»⁸: Անաստաս Վարդապետ Սուրբ Երկրի հայկական վանքերու ցանկին մէջ Սբ. Յակոբեանց, Սբ. Հրեշտակապետաց եւ Սբ. Փրկչայ վանքերէն զատ Սիոնի բարձունքին գտնուող երեք այլ վանքեր եւս կը յիշատակէ⁹:

X-XI դարերէն սկսեալ այս հողատարածքը կը համարուի Հայոց Պատրիարքութեան սեփականութիւնը, սակայն Մամլուքեան եւ Օսմանեան շրջաններուն (մինչեւ 18-րդ դար), այն քանիցս առգրաւուած եւ վերագրաւուած է: Վերջնականապէս վերագնած եւ հաստատած է Գրիգոր Շղթայակիր Պատրիարքը:

Վերջին պեղումները համեմատական կարգով եւ ժամանակագրութեամբ, ինչպէս ըսինք, մեր առջեւ կը բանան Երուսաղէմի երբեմնի իշխանութիւններու մշակութային շերտերը, որոնցմէ առաջինը գրեթէ հաւասար է ժամանակակից բնակելի շերտին:

Պեղումներու ընթացքին այդ շերտէն յայտնաբերուեցան Օսմանեան շրջանի զգալի քանակութեամբ յախճապակեայ եւ կաւէ սպասքի բեկորներ (նկ. 3): Յաջորդ շերտը, որմէ մեծաւ մասամբ պահպանուած են զանազան կառոյցներու մնացորդներ, կը պատկանի Մամլուքեան շրջանին: Այս կառոյցներու յատակագիծը շատ նման է բնակելի տունի կամ արտադրամասի մը յատակագիծներուն, որոնց յատակները ծածկուած էին սովորականէն աւելի խոշոր, միագոյն խճաքարերով: Յայտնաբերուած յատակներու տակ կան գետնափոր սրահներ, որոնք, հաւանաբար, ծառայած են որպէս ջրամբարներ, ինչը շատ տարածուած է Երուսաղէմի մէջ (նկ. 4): Հետաքրարական են յատկապէս գետնի մակերեսովէն բարձր կառուցուած փոքրիկ աւազանները: Ասոնք ալ թերեւս գործածուած են կերպասներ ներկելու կամ օճառ պատրաստելու նպատակով:

Մամլուքեան շերտը հնէաբաններու կողմէ ծածկուեցաւ յատուկ նիւթերով, ապագային՝ աւելի պատեհ առիթով ուսումնասիրելու համար:

Պեղումներու ընթացքին գրեթէ երկու մեթր խորութեան վրայ յայտնաբերուեցաւ բաւականին լաւ պահպանուած հայկական խաչքար մը (նկ. 5), որ քիւ կամ ճակատ չունի, այլ՝ ուղղանկիւնաձեւ է, ունի երկու եզրագօտի որուն կեղրոնը պատկերուած է կոթողային, գեղեցիկ ծաղկեալ խաչ մը, իսկ թեւերուն տակ քանդակուած են եռաթել ոլորահիւս յօրինուածքով երկու այլ՝ փոքր խաչեր: Այս խաչերէն սկիզբ կ'առնէ խաչքարի վարի մասը ծածկող եօթաթերթ ծաղիկներով զարդարուած գորգանման յօրինուածքը: Մեծ խաչի վերին երկու անկիւնները զարդարուած են խաղողի երկու ողկոյզներով, որոնք իրենց կարգին խաչքարի ներքին գօտին եզերող եռատերեւ բուսական զարդամոթիւի

⁵ Տե՛ս նոյն տեղը, էջ 30:

⁶ Տե՛ս նոյն տեղը, էջ 36: Այս մասին տե՛ս նաեւ John Wilkinson, Jerusalem pilgrims before the Crusades.

⁷ Անաստաս Վարդապետ Յերայոյսեցի, Վասն վանօրէից, որ ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ, Առաջաբանը եւ քննական բնագիրը Պ. Զօպանեանի, «Մատենագիւղի հայոց», հ. ե., է. դար, Անթիլիաս, 2005, էջ 1271-1279: Տե՛ս նաեւ Պատմա-բանասիրական հանդէս, 2001, Թիւ 1, էջ 27-46:

⁸ Սաւաղանեանց Տ. Հ. Թ., Պատմութիւն Երուսաղէմի Ա. եւ Բ. Հատոր, հ. Ա., Երուսաղէմ, 2000, էջ 242:

⁹ Ամբողջական ցանկը տե՛ս նոյն տեղը, էջ 243-246:

շարունակությունն են: Արտաքին գոտին աւելի լայն՝ եռաթել հանգուցահիւս զարդագոտի մը կը ներկայացնէ: Թէ՛ ներքին, եւ թէ՛ արտաքին գոտիները ուղղագիծ երկաթագիր «Ո» գիրի կը նմանին: Խաչքարի վարի մասը աչէն ձախ շեղաձեւ վնասուած է՝ կըտրուած: Արձանագրութեան պահպանուած հատուածը ճիշդ հոն է, որ ցաւօք ստոյգ թուագրելու հնարաւորութիւն չի տար, այլ միայն վարկածներ առաջ քաշելու: Այդուհանդերձ խաչքարի ոճային կոթողայնութիւնը, յօրինուածքը եւ զարդամոթիւնները թոյլ կու տան ենթադրել, որ այն XI-XII դարերու կը պատկանի:

Չնայած արձանագրութեան վնասուած ըլլալուն, փորձ ըրինք վերծանել այն եւ պահպանուած գիրերու շնորհիւ արգիւնքի մը հասնել: Արձանագրութիւնը կը գրտնուի խաչքարի վարի մասը «ծաղկաւոր գորգի» եւ եզրագոտիներէ վար: Ներքին եզրագոտին փոքր-ինչ վեր է արտաքին եզրագոտիէն եւ «ծաղկաւոր գորգի» ստորին մասէն: Կը նշմարուի արձանագրութեան երկու ոչ կանոնաւոր տող: Առաջինը՝ «ծաղկաւոր գորգի» աչ ու ձախ կողմերը, որու համեմատաբար փոքր տարածքին մէջ հազիւ 5-6 գիր կը տեղաւորի: Ձախ կողմը գրուած է «Ա[ստուծոյ]Յ ՔՐ[իստոս]Ի», իսկ աջը պահպանուած չէ: Երկրորդ տողը կը սկսի «ԽԱՉՍ ՊԱՔ[...]:» եւ այնուհետեւ պահպանուած չէ: Ձախ կողմը՝ արտաքին եզրագոտիի տակ, վերոյիշեալ երկու տողերու միջտողային հորիզոնական հարթութեան վրայ յստակ կ'երեւի «Շ» գիրը եւ միաստեղն գրի վերնամասն ու ստորին հատուածի աչ թեքուած ելուստը: Միաստեղն գիրերէն ամենա-համապատասխանողը «Լ» գիրն է: Եթէ անգամ փորձենք այլ գիր ընթերցել եւ վերծանել որեւէ տառ, տարածութիւնը «Շ» գիրէն մինչեւ երկու տողերու սկիզբը շատ փոքր է եւ հազիւ երեք գիրի տեղ ունի: «Շ» գիրի ճիշդ վարը պահպանուած է «Թ»-ի ոլորուած մասը: Մեր կարծիքով արտաքին եզրագոտիի տակ եղած գիրերու խումբը առանձին պէտք է ընթերցել, իսկ հիմնական արձանագրութեան գրութեան տարածք համարել ներքին եզրագոտիէն վար ինկած հատուածը: Եթէ մեր ենթադրութիւնը ճիշդ է, ապա աչ եզրագոտիի տակ հաւանաբար խաչքարի կանգնեցման թիւն է, որ է.

ՇԼ[...]	«Ա[ստուծոյ]Յ ՔՐ[իստոս]Ի»
Թ[իւն]	«ԽԱՉՍ ՊԱՔ(Ա)[...](Յ՞)»

«ՇԼ» (1081) կամ եթէ «Լ» գիրէն յետոյ այլ գիրեր եւս եղած են, ապա խաչքարը եղած է 1081-1090 թուականներու միջեւ: Երկրորդ տողի կիսատ բառի «ՊԱՔ(Ա)Յ(Յ՞)» տառերը կրնային ըլլալ Բագրատունեաց տան անուան սկիզբը, քանի որ յունարէնի ազդեցութեամբ Բագրատունեաց տոհմանունը՝ ոչ յաճախ, բայց կը հանդիպի նաեւ «Պակրատունեաց» կամ «Պաքրատունեաց» ձեւերով:

Արդեօ՞ք յայտնաբերուած եկեղեցին Անաստաս Վարդապետի՝ Սուրբ Երկրի հայկական վանքերու ցանկին մէջ յիշուած Կարնեցւոց վանքն է՝ «Կարնացւոց վանք, զոր շինեաց Սմբատ Բագրատունի»¹⁰: Յայտնաբերուած կոթողային յօրինուածքներով խաչքարը յիշարժան դէպքի մը կամ նշանաւոր անձի մը կրնար վերաբերիլ: Ուշագրաւ զուգահիւսութեամբ մեր ընթերցած թուականը մօտ է Գագիկ Բ. Բագրատունի թագաւորի եղբրական մահուան՝ 1080 թուականին: Յայտնի չէ Գագիկ թագաւոր երբեւէ այցելած է Երուսաղէմ թէ ոչ, բայց մէկ այլ նշանաւոր յիշատակ անոր անունով կը պահուի Սրբոց Յակոբեանց Ձեռագրատան մէջ՝ «Գագիկ թագաւորի Աւետարան»-ը, որ յայտնի է նաեւ «Կարսի Աւետարան» անունով (ձեռ. թիւ 2556)¹¹: Գագիկ թագաւորի Աւետարանը նշանաւոր է ոչ միայն իր հնութեամբ, այլեւ թագաւորական ընտանիքի մանրանկարով, ուր

¹⁰ Նոյն տեղը, էջ 245:

¹¹ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ը., Երուսաղէմ, 1977, Ձեռ. թիւ 2556, էջ 245-248:

պատկերուած են Գագիկ թագաւոր, Գորանդուխտ թագուհի եւ անոնց միջեւ Մարիամ «արքայադուստրը»¹²։ Աւանդութեամբ յայտնի է, ձեռագիրը Սրբոց Յակոբեանց միաբանութեան նուիրաբերած է Գագիկ Բ. թագաւոր, սակայն աւելի հաւանական է, որ այն նուիրաբերած ըլլայ Գորանդուխտ թագուհի՝ ի յիշատակ ամուսնոյն։

XI դարու ձեռագրին մէջ պահպանուած են հետեւեալ յիշատակագրութիւնները.

Թղ. 135բ «Զստացոյ Սրբոյ Աւետարանիս զԳագիկ Շահնշահ, զորդին Աբասայ յիշեսջիք ի Տ[է]ր Յ[իսու]ս Ք[րիստո]ս»¹³։

Թղ. 371բ. «Զստացոյ Սրբոյ Աւետարանիս զԳագիկ Շահնշահ՝ որդի Աբասայ և զԳորանդուխտ թագուհի և զՄարեմ յիշեսջիք ի Տէր Յիսուս Քրիստոս»։

Արքայական ընտանիքի մանրանկարին ետեւը գրչութեան վնասուած յիշատակարանն է՝ ա. սիւնակ. «...Երրորդութեանն յոր բնակէ Հոգին Սուրբ ի գեղեցիկ վարս սորա, և լցեալ հոգով երկիւղի Տեառն, անարատ վարիւք, վարժեալ քննէր զամենայն տառս հոգեգա[...],»

բ. սիւնակ. «[...Գո]րանդուխտ [սու]րբ թագուհոյն և վասն Մարեմայ նոցուն զարմին, զի շնորհեսցէ զնոսա Ա[ստուա]ծ եկեղեցոյ իւրոյ երկայն աւուրս, խաղաղական ամեամ առ [...],»

Ձեռագրին գրչութեան վայրն անյայտ է, իսկ գրչութեան թուականը երջանկայիշատակ Նորայր Եպս. Պողարեան կը համարէ 1029-1064-ի միջեւ։ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան նուիրաբերելու յիշատակարանը կը բացակայէ, սակայն արքայական ընտանիքի մանրանկարի դարձերեսի յիշատակարանի ա. սիւնակի պահպանուած հատուածը, կարծէք, կը վերաբերի ձեռագրին ստացողներէն Գագիկ թագաւորին։ Յատկապէս «...անարատ վարիւք, վարժեալ քննէր...» անցեալով արտայայտութիւնը կը թուի արդէն հանգուցեալ արքայի մասին է։ Ուստի կրնանք ենթադրել, որ ձեռագիրը միաբանութեան նուիրած է Գորանդուխտ թագուհի։ Ըսուածին աւելցնենք, որ բ. սիւնակին սկիզբը կարելի է թերեւս վերծանել «[...Աստուած ողորմի ասացէ՛ք Գո]րանդուխտ [սու]րբ թագուհոյն...», որտեղ «[սու]րբ թագուհոյն» արտայայտութիւնը քիչ մը տարօրինակ է, քանի որ թագուհին սրբադասուած չէր (չնայած «սուրբ» բառին ներքոյ կարելի է հասկնալ նաեւ «սրբակենցաղ»)։ Այդուհանդերձ՝ «[սու]րբ» բառին փոխարէն եթէ ընթերցենք «[ն]րբ», նկատի ունենալով այրիացեալ թագուհին, յիշատակարանը Գագիկ թագաւորի զոհուելէն ետք կրնար գրուած ըլլալ, ուստի եւ ձեռագրին գրչութեան կամ նուիրատուութեան թիւը ընդունել 1081 թուականը։ Այս բոլորէն հետեւցնելով արդեօ՞ք կրնանք ենթադրել, որ «Վարդապետաց զբօսանաց պարտէզ»-ին մէջ յայտնաբերուած եկեղեցին Անաստաս Վարդապետի ցուցակին մէջ յիշուած Բագրատունեաց «Վարնացոց վանքն» է, որտեղ գտնուած նորայայտ խաչքարը նոյն թուականին ի յիշատակ Գագիկ թագաւորի կրնար կանգնել տուած ըլլալ Գորանդուխտ թագուհի։ Այս ենթադրութիւններն, անշուշտ վարկածներ են միայն, սակայն Բագրատունեաց հարստութեան վերջին տիրակալի յիշատակին միաբանութեանը նուիրաբերած Աւետարանը եւ կանգնեցուած խաչքարը պէտք է տրամաբանական համարել։

Այստեղ կ'ուզենք անդրադառնալ նաեւ Գագիկ Բ. թագաւորի ողբերգական մահուան հանգամանքներուն։

1076 թուականին Գագիկ Բ. իր զօրքով կ'արշաւէ Կիլիստրայ (կամ Կեղոսկավիս)

¹² Գագիկ Կարսեցիի ընտանեկան պատկերը (Յաւելուած Ա.) տե՛ս **Յովսէփեան Գարեգին**, Նիւքեր եւ ուսումնասիրութիւններ Հայ արուեստի պատմութեան, հ. Բ., Երեւան, 1987, էջ 335-338։

¹³ Նոյնը կրկնուած է թղ. 222բ1-ին մէջ։

բերդին վրայ, որ կը պատկանէր երեք յոյն իշխաններու՝ Մանդալեւի որդիներուն։ Գագիկն իր զօրքէն առաջ անցնելով՝ երեք հոգիի ուղեկցութեամբ, ձիով կ'երթայ իրեն դիմաւորելու եկած եղբայրներուն, որոնք նախօրօք դարանակալ զօրք մը պատրաստած էին։ Ասոնք մօտենալով Գագիկին, կ'երկրպագեն եւ ողջագուրուելու պահուն յանկարծ երեքով կը յարձակին արքային վրայ եւ քաշելով ցած կը գլորեն զինք։ Նոյն պահուն դուրս կը նետուին դարանակալ զինուորները, իսկ Գագիկի ուղեկիցները ետ կը փախին՝ լուր տանելով անոր զօրքին։ Վերջիններս լուրն առնելով կը ցրուին՝ միայնակ ձգելով արքային, իսկ եղբայրները կ'առնեն Գագիկը ու կը տանին իրենց բերդը։ Գագիկն ազատելու նպատակով Բիւզանդիոյ մէջ գտնուող հայ իշխաններէն շատեր փորձեցին արշաւել Կիզիստրայ բերդին դէմ, սակայն բերդին անառիկութեան պատճառով չաշողեցան։

1080 թուականին, յոյներ Բագրատունեաց թագաւորութեան վերջին շառաւիղ՝ Գագիկ Բ.-ին աղեղի լարով խեղդամահ ըրին եւ մարմինը մէկ օր կախեցին պարիսպէն, ապա թաղեցին անոր արտաքին կողմը։ Արքայի մտերիմները գիշեր ատեն առին անոր մարմինը եւ տարին Պիզոն քաղաք, եւ անդ թաղեցին վանքին մէջ։

Գագիկի մահուան վրէժը լուծեց Թորոս Ա. Իշխանը, 1111-ին սպաննելով երեք եղբայրներուն՝ ետ առաւ Գագիկին թագը¹⁴։

Ուրեմն՝ կրնանք եզրակացնել, որ Գագիկ Բ. թագաւորի մահէն տարի մը ետք Երուսաղէմի մէջ գտնուող իր տոհմական վանքին մէջ կանգնեցուած է այս խաչքարը՝ ի յիշատակ դաւադրութեան զոհ դարձած արքայի։

Շարունակելով ներկայացնել պեղումներու ընթացքը պէտք է ըսել, որ հնագէտներու հայեացքներն աւելի կեդրոնացած էին Բիւզանդական ժամանակաշրջանի ենթաշերտն աւելիով բացայայտելուն։ Աշխատանքներու ընթացքին ի յայտ եկան բիւզանդական ժամանակաշրջանին պատկանող վանական համալիրի աւերակներ՝ երեք սրահներով։ Յայտնաբերուեցաւ դէպի այս համալիր տանող հարաւային մուտքը, սակայն եկեղեցւոյ գլխաւոր մուտքը, խորանները, ինչպէս նաեւ մեծ սրահի հիւսիսային պատը հնարաւոր չեղաւ յայտնաբերել։ Մեր կարծիքով ատոնք կործանուած են Մամլուքեան շրջանին, քանի որ յայտնաբերուած խճանկար-յատակները բոլոր կողմերէն շրջապատուած են Մամլուքեան շինութիւններով, եւ անոնցմէ քանի մը հատը ուղղակի կառուցուած էին խճապատկերներու վրայ, ինչի հետեւանքով խճապատկերներէն գլխաւորը զգալիօրէն մասնատուած եւ փճացած էր։ Այսպիսով՝ եկեղեցւոյ հարաւային կողմէն եթէ մուտք գործենք ներս, կը յայտնուինք փոքրիկ քառանկիւն գաւիթի մը մէջ, որ ունի ծաղիկներով զարդարուն խճապատկեր-յատակներ (նկ. 6)։

Այս գաւիթէն աչ կայ մէկ այլ երկարաւուն սրահ մը, որուն յատակը նոյնպէս ծածկւած է խճապատկերով, սակայն այս մէկը միագոյն, ճերմակ խիճերով։ Հաւանաբար այն մատուռ մը եղած է, քանի որ փոքրիկ նախասրահէն ձախ կայ մոյթ մը, որ մեր կարծիքով մոմավառութեան համար ծառայած է, մանաւանդ որ պահպանուած պատերու մնացորդները ամբողջութեամբ սեւցած են մոմի ծուխէն։ Իսկ փոքրիկ գաւիթի մարմարէ բարձրաւանդակով մուտք մը կայ դէպի համալիր, որ հաւանաբար գլխաւոր եկեղեցին եղած է։ Սրահին յատակը եւս զարդարուած է գունագեղ եւ տպաւորիչ չափեր ունեցող խճապատկերով (նկ. 7)։ Վերջինս, սակայն տեղ-տեղ վնասուած կամ ոչնչացուած է, յատկապէս արեւելեան կողմը, ուր ենթադրաբար պիտի գտնուէր եկեղեցւոյ խաչքարը։ Չնայած պակսող մասերուն, խճապատկերը անշափ զմայլելի տեսք ունի եւ կատարւած է մեծ վարպետութեամբ։ Կազմուած է երկու լուսանցքային գօտիներէ, որոնք կը

¹⁴ Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Երուդ գիրք, Վաղարշապատ, 1898։

ներկայացնեն բուսական եւ երկրաչափական յօրինուածքներ, իսկ ներքին դաշտը զարդարուած է բիրեղներ յիշեցնող երկրաչափական զարդապատկերներով: Ցաւօք այն որեւէ յիշատակարան չունի:

Պահպանուած են նաեւ եկեղեցւոյ հարաւային պատերու մնացորդները, որոնց ծէփաշերտերուն առկայ են զիկզակաւոր քերծուածքներ (նկ. 8): Այս կը վկայէ, որ պատերը ժամանակին ծածկուած եղած են որմնանկարներով, քանի որ նման մեթոտ կը կիրառէին եւ կը կիրառեն որմնանկարիչ վարպետները, որպէսզի որմնանկարի շերտն աւելի ամուր փակի պատին:

Մեր վարկածն առաւել փարատուեցաւ, երբ պեղումներու ընթացքին յայտնաբերուեցան ներկաշերտերով, գունաւոր ապակիով եւ քարերով զարդարուած ծէփաշերտ բեկորներ (նկ. 9, 10, 11), որոնցմով հաւանաբար զարդարուած էին եկեղեցւոյ պատերը, առաստաղը եւ գմբէթը:

Պեղումներու կարճ ժամանակի, ինչպէս նաեւ նիւթական սուղ միջոցներու պատճառով Հոռմէական շերտը գրեթէ չպեղուեցաւ, պարզապէս քանի մը նմոյշներ առնուեցան՝ փաստելու ատոր գոյութիւնը: Այս շրջանի գտածոներն են՝ հոռմէական սպասք, ամբողջական պահպանուած լամպ մը (նկ. 12), ինչպէս նաեւ հոռմէական շրջանի կրակարան (օճախ), որ կը փաստէ տարածքի 10-րդ լեգէոնի բանակատեղի ըլլալը: Գտածոներէն յատկապէս հետաքրքրական են մէկ տասնեակէ աւելի բիւզանդական եւ հոռմէական մետաղադրամները (նկ. 13):

Այսպիսով՝ յստակ չենք կրնար ըսել արդեօք խճապատկեր-յատակներով պահպանուած եկեղեցին Եւդոքսիա կայսրուհիի կառուցած եկեղեցին է՝ նուիրուած Սբ. Սաբայի, թէ Բագրատունիներու կառուցածը, ուր հաւանաբար Գագիկ Բ. արքայի յիշատակին նուիրուած խաչքար մը կանգնեցուած է 1081 թուականին:

Մեր առաջադրած վարկածներէն որեւէ մէկը հաստատող հիմնական փաստարկ մը առայժմ չկայ, սակայն լիայոյս ենք, որ պեղումներու ընթացքին յայտնաբերուած գտածոներու ուսումնասիրութիւնը կը հաստատէ այդ վարկածներէն մին կամ միւսը, կամ ապագային, աւելի յարմար առիթով կը շարունակուին պեղումները եւ նոր բացայայտումներով կը ճշդուի եկեղեցին պատկանելիութիւնը:



Նկ. 1 Հնէաբանական պեղումներ «Վարդապետաց զբօսանաց» պարտէզին մէջ:
Լսնկ.՝ S. Halevi, Իսրայէլի հնագիտական բաժին:



Նկ. 2 պատմական հնագոյն շերտեր:
Լսնկ.՝ S. Halevi, Իսրայէլի հնագիտական բաժին:



Նկ. 3 Օսմանեան շրջանի յախնապակեայ եւ կաւ սպասի բեկորներ:



Նկ. 4 Գետնափոր սրահ, հաւանաբար ջրամբար: Լսնկ.՝ S. Halevi, Իսրայէլի հնագիտական բաժին:



Նկ. 6 Բիզանդական շրջանի խնապատկեր յատակ:



Նկ. 7 Բիզանդական շրջանի խնապատկեր յատակ: Լսնկ.՝ S. Halevi, Իսրայէլի հնագիտական բաժին:



Նկ. 5 Հայկական խաչքար: Հաւանաբար 11-13-րդ դդ.:



Նկ. 8 Եկեղեցիի ծեփաշերտերուն առկայ գիկզակաւոր ֆերժուածքներ: Լսնկ.՝ S. Halevi, Իսրայէլի հնագիտական բաժին:



Նկ. 9, 10, 11 Ներկաշերտերով, գունաւոր ապակիով եւ փաւերով զարդարուած ծեփաշերտ բեկորներ, որոնցմով հաւանաբար զարդարուած էին եկեղեցւոյ պատերը, առաստաղը եւ գմբէթը:



Նկ. 10



Նկ. 11



Նկ. 12 Հոռմեական շրջանին պահպանուած
ամբողջական լամբ:



Նկ. 13 Բիզանդական եւ Հոռմեական
մետաղադրամներ:

ԱՐՇԱԿ ԱԲԵՂԱՅ ԴԱԶԱՐԵԱՆ

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ**ՏԵԼԻՉԵԱՆ ԽՆԴԻՐԸ****Դ.****Ս. ԳԻՐՔ ԵՒ ԲԱԲԵԼՈՆ**

Պերլինի թանգարանը ունի անգնահատելի գանձ մը, կճաքար մը, որուն վրայ պատմուած է թէ ինչպէս նախամարդը իր անմահութիւնը կորսնցուց կամ դրախտէն արտաքսուեցաւ: Այս կճաքարը գտնուած է Թէլ-Էլ-Ամառնայի մէջ: Հին Եգիպտացի գիտնականներ զբաղեր եւ նշաններ են ըրեր այս բաբելական բնագրին վրայ: Հարկաւ Բաբելոնի ազդեցութիւնը մինչեւ Եգիպտոս տարածուած էր:

Բաբելացիք իրենց պատմութիւնը երկու մասի կը բաժնէին. առաջինը՝ Զրհեղեղէն առաջ եւ երկրորդը՝ անկէ ետք: Բաբելոն Զրհեղեղի համար բնական մեծ յարմարութիւն ունէր եւ որքան որ դաշտերը արգասաւոր էին, այնքան ալ անոնք ենթակայ կիկլոններու, որոնք ծովէն ելլելով եւ գետերուն հետեւելով երբեմն սոսկալի վնասներ տրւած են: Այսպէս զոր օր. 1867-ին, Պենկալի ծոցէն թաթառ մը ելաւ ու միանալով ահռելի փոթորկի մը 300 քիլոմետր հեռու գտնուող նաւերուն իսկ կայմերը տարաւ, եւ վերջապէս ան մօտեցաւ Գանգէսի բերանը եւ հսկայական լայնութեամբ ու զօրութեամբ կարճատեւէն ալիքները ծածկեցին 141 աշխարհագրական քառակուսի մղոն տարածութիւն մը 45 ոտք բարձրութեամբ ջուրով. 215,000 մարդիկ խեղդուեցան, մինչեւ որ ջրեղէն այս զանգուածը փշուրեցաւ բարձրագիւր լեռներուն զարնուելով: Կարելի է երեւակայել թէ ո՞րպիսի աւեր կը գործէր այսպիսի կիկլոն մը Բաբելոնի դաշտին վրայ, ուր բարձր լեռներ բոլորովին կը պակսին եւ որպիսի անջնջելի տպաւորութիւն պիտի ընէր այդ տեղական բնակչութեան վրայ: Զրհեղեղի այն նկարագրութիւնը, զոր մենք բաբելական բնագրի համապատասխան տողերու թարգմանութեամբ պիտի տանք, գտնուած է Սաղմաբալի ապարանքի աւերակներուն մէջ, որ Նինուէ կը գտնուէր եւ գրուած էր Քրիստոսէ 2000 տարի առաջ: Վիեննացի նշանաւոր երկրաբան՝ Էտուարտ Զիլա ցուցուցած է արդէն, որ այս Զրհեղեղը կիկլոնի մը նկարագրութիւնն է:

Զրհեղեղի բաբելական պատմութեան համար քանի մը վառիւմտներ ունինք: Մենք նախ պիտի տանք անոնցմէ ամենէն լիակատարը, ապա հետզհետէ պիտի անցնինք միւսներուն: Բաբելոնեան այս դիցաբանական զրոյցը իսկապէս Կիլկամէշի¹ Ս. Գրոց՝ Ներքովի վէպին մէկ մասն է, որ 12 երգով կը ներկայացնէ ասորական Հեռակէսի քաջագործութիւնները: Այս վէպը բովանդակող 11-րդ տախտակը կը ներկայացնէ Կիլկամէշ, Ուրուգ քաղաքին հերոսը, որ ստորին աշխարհ (հոգիներու կայանը) կ'իջնէ իր պապ՝ Ուղնաբիշդիին քով, եւ անկից կը խնդրէ կեանքի խոտը, իր մտերիմ բարեկամ դիւցազնը՝ զէա-Պամին յարուցանելու համար, եւ հոս Ուղնաբիշտի անոր կը պատմէ իր պատմութիւնը, հետեւաբար, ի միջի այլոց, ջրհեղեղի սա՛ պատմութիւնն ալ, որուն տողերը կը նշանակենք բնագիր արձանագրութեան տողերուն թիւերով:

**ԶՐՀԵՂԵՂԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԲԱԲԵԼՈՆԵԱՆ
ԲՆԱԳՐԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ**

8) Ուղնաբիշդի ըսաւ անոր՝ Կիլկամէշի,

¹ Ասորեէն համապատասխան բառը կարելի է նաեւ կարդալ Շամ-խազի եւ Իս-տու-պար:

- 9) Ես, ո՛վ Կիլկամեշ, գաղտնի բան մը պիտի յայտնեմ քեզ:
 10) Եւ աստուածներու որոշումը պիտի պատմեմ քեզ:
 11) Շուրիբբակ քաղաքը, զոր դուն կը ճանչնաս,
 12) Որ Եփրատի ափերուն վրայ շինուած է,
 13) Այդ քաղաքը հնուց ի վեր գոյութիւն ունի իր աստուածներով:
 14) Մեծ աստուածներուն սիրտը ուզեց ջրհեղեղ ընել,
 15) Անոնց ցեղի պետն էր Անու,
 16) Իրենց առաջնորդը՝ Բէլ դիւցազն.
 17) Նիմիպ իրենց պատգամաւորն էր,
 18) Էն-Նու Կի իրենց տեղակալը.
 19) Իմաստութեան տէրը, էա խօսեցաւ անոնց հետ²
 20) Եւ մատնեց անոնց ըսածը Քիֆֆիշուի³ մը.
 20ա) «Ո՛վ Քիֆֆիշու, Քիֆֆիշու, ո՛վ Իկարու, Իկարու (= պատ).
 21) Լսէ՛ Քիքքիշու, ունկն դի՛ր Իկարու,
 22) Ո՛վ այրդ Շուրիբբակցի, որդի Ուպարադուի,
 23) Տունը քանդէ եւ նաւ շինէ,
 23ա) Թո՛ղ գոյք ու կահքդ, եւ կեանքդ փրկէ,
 24) Թո՛ղ ստացուածքդ եւ կեանքդ ազատէ,
 25) Ամէն տեսակի կենդանի արարածներ բեր նաւդ.
 26) Այն նաւը, զոր դուն պիտի շինես
 27) Պէտք է ունենայ... կանգուն մեծութիւն,
 28) ... Կանգուն երկարութիւն եւ լայնութիւն.
 29) Թող անիկա ովկիանոսի վրայ (?)»:
 30) Ես հասկցայ եւ ըսի իմ տիրոջ «էա»-ին.
 31) «Կործանէ՛ Տէր իմ, ինչ որ դուն կամիս,
 32) Ես պիտի հետեւիմ եւ կատարեմ.
 33) Սակայն ի՞նչ պիտի ըսեմ քաղաքին, ժողովուրդին եւ աւագներուն»:
 34) Էա խօսեցաւ եւ ըսաւ.
 34ա) Ինծի ըսաւ, իր ծառային.
 35) «Այսպէս պիտի ըսես դուն անոնց.
 36) Որովհետեւ Բէլը զիս կ'ատէ,
 37) Ես պիտի չբնակիմ ձեր քաղաքին մէջ, Բէլի երկրին վրայ պիտի չմնամ,
 38) Դէպի ովկիանոս պիտի իջնեմ ես՝ իմ Տէր էաին հետ բնակելու համար.
 39) Զեր վրայ սաստիկ անձրեւ տեղալ պիտի տայ նա (Բէլ).
 (40-45 կա՛մ կիսկատար է բնագիրը եւ կա՛մ բոլորովին անընթեռնելի):

Հատուած Բ.

- 1) Իր նաւի պատերը 120 կանգուն բարձր էին,
 2) 140 կանգուն իր տանիքին եզերքը.
 3) Ես նկարեցի իր բունը, ես գծեցի զայն.
 4) Ես շինեցի զայն վեց յարկանի.
 5) Եօթնպատիկ բաժնեցի զայն,

² Ասորերէն «Իդ դի-շու-նու դա-մէ» կրնայ նաեւ նշանակել «դաւադրութիւն ըրաւ անոնց դէմ»:

³ Քիք-քի-շու կը նշանակէ ասորերէն եղէգնի ցանկապատ:

- 6) իր ներսը 9 մասերու բաժնեցի ես.
 7) Զուր... սրսկեցի ես անոր մէջ.
 8) Թի պատրաստեցի ես եւ անօթներ դրի հոն.
 9) Զիւթով ծեփեցի ես զայն արտաքուստ (3 սար)
 9ա) Կուպրով ծեփեցի ես զայն ներքուստ (3 սար)
 10) Երեք սար ձէթ տարին նաւին բեռնակիրները,
 11) Բայց մէկ սար ձէթ, որ գործածուեցաւ զոհերու համար,
 12) Ես պէտք ունեցայ երկու սար նաւաշէններու ձէթի:
 13) Մարդերուն համար արջառ մորթեցի ես,
 14) Գառներ մորթեցի ես ամէն օր.
 15) Խնձորօղիով, գարեջուրով, ձէթով եւ գինիով
 16) Զրեցի ես ժողովուրդը ինչպէս գետի ջուրով,
 17) Այնպիսի տօն մը տօնեցի ես, որպէս Աքիդուի տօնը,
 (18-21 տողերը դարձեալ եղծեալ են բայց մնացած քանի մը բառերը կը յայտնեն նաւի պատրաստութիւնը).
 22) Ինչ որ ունէի անով լեցուցի ես նաւը
 23) Որքան որ արծաթ ունէի անով լեցուցի ես զայն,
 24) Որքան որ ոսկի ունէի անով լեցուցի ես զայն.
 25) Որքան որ կենդանիներ ունէի անոնցմով լեցուցի ես զայն:
 26) Նաւի վրայ տարի իմ ընտանիքի արական եւ իգական սեռի անդամները.
 27) Ընտանի կենդանիներ, վայրենի կենդանիներ, գործաւորներ տարի ես հոն:
 28) Շամաշ (շէմս=արեւ) հաստատուն ժամանակ մ'որոշած էր:
 29) «Եթէ փոթորկալից անձրեւ առաքողները երեկոյեան անձրեւ տեղալ տան.
 30) Այն ատեն մտիր նաւդ եւ գոցէ զայն»:
 30ա) Այն որոշեալ ժամանակը հասաւ,
 31) Քուքքիի վարիչները երեկոյեան անձրեւ տեղացուցին
 32) Օրուան շառագնէլէն վախցայ ես,
 33) Օրը տեսնելէ կը վախնայի ես:
 34) Ես նաւ մտայ դուռը գոցեցի.
 35) Նաւը վարելու հոգը թողուցի ես նաւավար Բուզուր-Բէլին,
 36) Ամբողջ շէնք մը իր բոլոր ունեցածով:
 37) Երբ արշալոյսը սկսաւ բացուիլ,
 38) Երկինքի հիմքերէն սեւ ամպեր բարձրացան,
 39) Հատաւտ (փոթորկի Աստուած) կայծակներ դարբնեց հոն.
 40) Մինչ Նեպօ եւ Մալիֆ առջեւէն կ'երթային,
 41) Երկուքն ալ իբր պատուիրակներ լեռներու եւ դաշտերու վրայէն,
 42) Ներկալ խլեց նաւին մէկ մասը,
 43) Նիմիպ յաջողեցաւ եւ ջուրի հոսանք մը թափեց վար,
 44) Անուննաֆի ջահեր բարձրացուցին,
 45) Լուսաւորելով իրենց փայլով ամբողջ երկիրը:
 46) Հատաւտի փոթորիկը ամբողջ երկինքի վրայ տարածուեցաւ
 47) Ինչ որ փայլ ունէր խաւարեցուց,
 48) (աղաւաղեալ) Անիկա ջուրով ողողեց երկիրը....:

Հատուած Գ.

- 1) Մինչ ջուրերը կը բարձրանային լեռնաշղթային վրայ.
- 2) Պատերազմի փոթորկի նման յարձակեցան անոնք մարդոց վրայ.
- 3) Այնպէս որ անոնք զիրար չտեսան.
- 3ա) Մարդիկ երկինքի մէջ չճանչցուեցան:
- 4) Աստուածներն ալ կը վախնային փոթորկալից հոսանքէ,
- 5) Անոնք յետ քաշուեցան եւ բարձրացան Անուի երկինքը⁴
- 6) Աստուածները փախած էին եւ պարիսպին տակ իջեւանած.
- 7) Իսդար կը կանչէր ինչպէս երկունքի ցաւով բռնուած կին մը:
- 8) Կը կանչէր աստուածներու տիրուհին, գեղաձայնը,
- 9) «Անցեալը վերջացաւ.
- 10) Որովհետեւ ես գերագոյն երկինքի դէմ շարիք գործեցի,
- 11) Որպիսի շարիք գործեցի ես գերագոյն երկինքի դէմ,
- 12) Իմ մարդերուս ոչնչացման համար եղած կռիւն կարգեցի,
- 13) Բայց այժմ ես կը հարցնեմ. «Արդեօք մարդիկ անո՞ր համար ծնած են
- 14) Որպէս զի իբր ձուկ ծովը լեցնեն»:
- 15) Անունաբի զայն աստուածները լացին անոր հետ
- 17) Անոնց շրթունքները ծածկուած էին...
- 18) Վեց օր վեց գիշեր
- 19) Քամին փչեց, մինչ ջրհեղեղը եւ փոթորիկը գերկիր կը սրբէին:
- 20) Երբ եօթներորդ օրը եկաւ ջրհեղեղը դադրեցաւ, փոթորիկը մեղմացաւ,
- 21) Որ բանակի մը նման աւերած էր ամէն ինչ
- 22) Ծովը հանդարտեցաւ, փոթորիկը քչացաւ, ջրհեղեղը դադրեցաւ.
- 23) Բոլոր մարդիկ կրկին հող դարձած էին,
- 25) Ինչպէս ուրի տարածուած էր իմ աչքերուս առջեւ դաշտը,
- 26) Ես պատուհանը բացի եւ լոյսը դէմքիս վրայ ընկաւ.
- 27) Ես նստեցայ կերայ եւ լացի.
- 28) Եւ իմ դէմքիս վրայ արտասուքը հոսեցաւ:
- 29) Ես երկրի վրայ նայեցայ եւ միայն ծով տեսայ,
- 30) 12 (օրերէ) ետք երկիր մը երեւցաւ,
- 31) Նիսիւր լեռան ուղղութեամբ մղուեցաւ նաւը՝
- 32) Նիսիւր սարը նաւը բռնեց եւ անշարժ պահեց զայն,
- 33) մէկ օր, երկրորդ օր Նիսիւր լեռը բռնեց զայն, եւայլն:
- 33ա) Երրորդ օրը, չորրորդ օրը Նիսիւր սարը բռնեց զայն եւայլն
- 34) հինգերորդ օրը վեցերորդ օրը, եւլն.
- 34ա) երբ եօթներորդ օրը հասաւ,
- 35) ես աղանի մը դուրս հանեցի եւ զայն ի բաց արձակեցի,
- 35ա) աղանին թռաւ եւ վերադարձաւ,
- 36) Որովհետեւ թառելու տեղ չկար վերադարձաւ ան:
- 37) Ես ծիծեռնակ մը դուրս հանեցի եւ զայն ի բաց արձակեցի,
- 37ա) ծիծեռնակը թռաւ եւ վերադարձաւ.
- 38) որովհետեւ թառելու տեղ չկար, ան վերադարձաւ:
- 39) Ես ագռաւ մը դուրս հանեցի եւ զայն ի բաց արձակեցի,

⁴ Այսինքն հիւսիսային կամ վերին երկինքը:

- 40) ագռու թռաւ եւ տեսաւ ջուրերու նուազիւր
 41) ագռու թռաւ ո՛չ հեռու կարկաչելով, եւ կրկին թռչելով ա՛լ չվերադարձաւ:
 42) Այն ատեն ես ամէնքն ալ ազատ թողուցի չորս քամիներու ուղղութեամբ, զո՛հ մը մատուցի,
 43) լերան գագաթին վրայ նուիրաբերութիւն ըրի.
 44) երկու անգամ եօթն զոհի անօթներ կանգնեցուցի.
 45) անոնց մէջ թօթափեցի խնկեղէգ, մայրափայտ եւ խնկեղէն
 46) աստուածները հոտոտեցին բուրմունքը,
 46ա) աստուածները հոտոտեցին անուշահոտութիւնը,
 47) աստուածները ժողովեցան իբրեւ ճանճ զոհողին շուրջ:
 48) Երբ վերջապէս «Աստուածներու Տիրուհին» մերձեցաւ:


Հատուած Գ.

- 1) Անիկա առաւ լաւագոյնները... զորս Անու իր բաղձանաց համաձայն պատրաստած էր.
 2) այս աստուածները — կ'երգնում ես, պիտի չմոռնամ,
 3) այս օրերը ես պիտի յիշեմ, զանոնք յաւիտեանս պիտի չմոռնամ,
 4) աստուածները թող երթան նուիրաբերութեանց քով
 5) Բէլ թող չերթայ նուիրաբերութեանց քով
 6) որովհետեւ անիկա չմտածեց, ջրհեղեղին պատճառ եղաւ.
 7) եւ մարդկութիւնս պատժի ենթարկեց

ՏՕՔԹ. Յ. ԹՕՓՃԵԱՆ

Բերա - Կ. Պոլիս

(Շար. 3)



ՎԻՄԱԳՐԱԿԱՆ**ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԵԼԻՔ ՀԱՅԿԱԶ Բ.-Ի
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԻՑ****Մուտք**

Սիրենաց Ժէ-ԺԸ. դդ. պատմա-ճարտարապետական յուշարձանների շարքում առանձնակի տեղ են զբաղեցնում անապատային համալիրները, որոնք, սովորաբար, բաղկացած են թաղածածկ դահլիճի յօրինուածքով (բազիլիկ) եկեղեցուց, հիմնականում արեւմտեան մուտքին կցակառույց կամարակապ գաւիթ-սրահից, անապատականների խցերից, սեղանատնից, տնտեսական եւ օժանդակ այլ շինութիւններից, իսկ ողջ համակառույցը շրջափակում է ամրակոռ, երբեմն աշտարակներով համակցուած պարսպապատը (Հալիձորի Հարանց անապատ, Տաթեւի Մեծ անապատ, Շինուհայրի Կուսանաց անապատ, Տանձափարախի (Բեխի) անապատ եւ այլն): Հայկական ուշմիջնադարեան ճարտարապետութեան պատմութեան խորագիտակ Մուրադ Հասրաթեանի բնորոշմամբ՝ վանքերի եւ անապատների հիմնական տարբերութիւնը «նրանց կանոնադրութիւնների մէջ է, իսկ բնակավայրերից հեռու գտնուելը պարտադիր է ոչ բոլոր անապատների համար»¹: Այսու, բնակավայրերից հեռու էին կառուցուած «արանց» կամ «հարանց» անապատները, իսկ «կուսանաց» մենաստանները մօտ էին բնակավայրերին կամ պարզապէս գտնուում էին դրանց կազմում²:

Սոյն ուսումնասիրութեան խնդրոյ առարկան Սիրենաց անապատների «նախահայր» Հալիձորի Հարանց կամ Տաթեւի նախկին Մեծ անապատի նորայայտ վիմագրերից մէկն է, որն ընդօրինակել եւ վերծանել ենք 2019 թ. Օգոստոսին, երբ Տաթեւի վանքի եւ շրջակայ յուշարձանների վիմագրական ժառանգութեան համալիր ուսումնասիրութեան շրջանակներում առիթ ունեցանք լինելու նաեւ այդ հինաւուրց մենաստանում (նկ. 2): Ժէ. դարասկզբին հիմնադրուած անապատը տարբեր առիթներով յիշատակել են ոչ միայն մատենագիրները (Գրիգոր Դարանաղցի³, Առաքել Դարիժեցի⁴, Զաքարիա Ազուլեցի⁵), այլեւ բազմաթիւ ուսումնասիրողներ (Միքայէլ Զամչեանց⁶, Մաղաքիա Արք. Օրմանեան⁷, Մեսրոպ Արք. Տէր-Մովսիսեան⁸, Մուրադ Հասրաթեան⁹ եւ այլք)¹⁰,

¹ Հասրաթեան Մ., Սիւնիի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Երեւան, 1973, էջ 9:

² Նոյն տեղում:

³ Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ, հրատարակեց՝ Նշանեան Մեսրոպ Վրդ., Երուսաղէմ, 1915, էջ 287-291:

⁴ Առաքել Դարիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրութեամբ՝ Լ. Խանլարեանի, Երեւան, 1990, էջ 215-222, գլ. ԻԱ.:

⁵ Զաքարիա Ազուլեցու Որագրութիւնը, յերեւան, 1938, էջ 75-76:

⁶ Զամչեանց Միքայէլ, Հայոց պատմութիւն, հ. Գ., Երեւան, 1984, էջ 562-567:

⁷ Օրմանեան Մաղաքիա Արք., Ազգապատում, հ. Բ., Սբ. Էջմիածին, 2001, սիւն 2730-2736:

⁸ Տէր-Մովսիսեան Մեսրոպ Արք., Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դաղի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղէմ, 1938, էջ 59:


⁹ Հասրաթեան Մ., նշուած աշխ., էջ 37-42:

¹⁰ Վերջերս անդրադարձել ենք նաեւ անապատի գրչութեան դպրոցում ընդօրինակուած եւ նկարագարողուած մէկ տասնեակից ավելի ձեռագրերին, որոնց մեծ մասը պահուում է Մաշտոցեան Մատենադարանի հաւաքածոյում (տե՛ս Յարութիւնեան Ա., Հալիձորի Հարանց կամ Տաթեւի նախկին Մեծ անապատը՝ գրչութեան կենտրոն,

ուստի մեր խօսքը համառոտելով՝ դառնանք արձանագրութեան տեղին եւ բովանդակութեանը:

Հալիձորի Հարանց անապատի Մր. Յովհաննէս եկեղեցին եւ վիմագիրը

Որոտանի աջ ափին՝ ժայռապատ բարձր հարթութեան վրայ գտնուող Հալիձորի Հարանց անապատի եկեղեցուն հիւսիսից կից են փոքրաչափ երկու այլ կառույցներ (գրծանկ. 1): Դրանցից մէկն աւերուած է, գտնուում է անմիջապէս եկեղեցու հիւսիսային մուտքի դիմաց եւ, ինչպէս Մ. Հասրաթեանն է նշում, «գաւթի դեր է կատարել, որովհետեւ առանձին մուտք ունի դէպի դուրս»¹¹ (գծանկ. 2/Ա, նկ. 3): Երկրորդ՝ աւելի փոքր կառույցը, կից է եկեղեցու հիւսիսային աւանդատանը եւ մուտք ունի ինչպէս վերջինիս, այնպէս էլ գաւթի հետ¹² (գծանկ. 2/Բ, նկ. 4): Երրուանդ Լալայեանը, առանց յաւելեալ հիմնաւորումների, այն մատուց է համարել՝ նշելով, որ ներսում պահպանուել է անարձանագիր մի գերեզմանաքար¹³: Լալայեանին յղելով՝ կառույցը մատուց է համարել նաեւ Մ. Հասրաթեանը՝ յիշատակելով նաեւ անարձանագիր տապանաքարը եւ այն, որ այս փոքր սենեակը դրսի հետ չի հաղորդակցուում¹⁴: Այդ երեւում է նաեւ ներքոնշեալ ընդհանուր յատակագծում (կից գծանկարում արուած մուտքի յաւելումը մերն է - Ա. Յ.), ինչից կարելի է ենթադրել, որ Մ. Հասրաթեանի չափագրումների ժամանակ գաւթի արեւելեան պատն ամբողջովին փակել է մատուցի արտաքին մուտքը եւ այդ սենեակ մտել են միայն եկեղեցու հիւսիսային աւանդատնից: Հէնց այս շինութեան՝ գաւթի հետ հաղորդակցուող մուտքի վերնամասի ուղղանկիւնածեւ քարի ճակատային նեղ նիստին էլ պահպանուել է քննութեան ենթակայ վիմագիրը:



Գծանկ. 1, 2. Հարանց անապատի եկեղեցու եւ հիւսիսից կից կառույցների յատակագիծը (չափագրութիւնը՝ Մ. Հասրաթեանի)

Նախքան վիմագրին դառնալը՝ նշենք, որ ենթադրեալ մատուցը հիմնականում կիսամշակ քարերով կառուցուած, գրեթէ քառակուսի հատակագծով թաղակապ սրահ է, արտաքուստ՝ 5,0 X 4,50 մ, ներքուստ՝ 3,40 X 2,90 մ չափերով: Ունի երկու մուտք՝

«Երիտասարդական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ» (Երեւան, Նոյեմբերի 28-30, 2017 թ.), Երեւան, 2018, էջ 316-342):

¹¹ Հասրաթեան Մ., նշում աշխ., էջ 40:

¹² Այս սենեակը եկեղեցու հիւսիսային աւանդատան հետ հաղորդակցող մուտքի վերնամասում իբրեւ շինափայտ է օգտագործուել մարդու գրաֆիկ պատկերով եւ ժԵ-ԺԶ. դդ. բնորոշ ուղղանկիւնածեւ մի տապանափայտ:

¹³ Լալայեան Եր., Սիւսիան. Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, «Ազգագրական հանդէս», գիրք Գ., 1898, Հ^մ 1, էջ 147:

¹⁴ Հասրաթեան Մ., նշում աշխ., էջ 40: Նշենք, որ սրահի կենտրոնում է գտնուում ուսումնասիրողների կողմից յիշատակուած տապանափայտը. այն 1,0 X 0,68 մ չափերով եւ մօտ 0,50 մ բարձրութեամբ սրբատաշ քար է, որի տապանափայտ լինելը, անշուշտ, վիճելի է: Տրամաբանական կը լինի կարծել, որ սրահի կենտրոնում ընկածը մատուցի վէմ քար է, որը կանգնեցուած է եղել արեւելեան կողմում կամ, ինչպէս կը տեսնենք մեր յետագայ շարադրանքից, բացառուած չէ, որ այն մկրտութեան աւազանի համար պատուանդան է հանդիսացել (նկ. 6):

հարաւից, որը բացւում է եկեղեցու հիւսիսային աւանդատան մէջ, եւ արեւմուտքից՝ դէպի փոքր գաւիթ (նկ. 7, 8): Վերջինս, ամենայն հաւանականութեամբ, կառուցուել է աւելի ուշ, քանի որ, ինչպէս վերը նշեցինք, կցուած լինելով թուացեալ մատուռին՝ քողարկել է նրա արեւմտեան պատն ու արտաքին մուտքը (ենթադրելի է, որ մուտքը վերջերս է վերաբացուել): Սրանով կարելի է բացատրել ուսումնասիրողների կողմից վիմագիրը չնկատելը: Առաջին հայեացքից այն ներկայումս եւս նկատելի չէ, քանի որ գաւթի արեւելեան պատը փաստացի ծածկում է մուտքի վերնամասը (նկ. 5), եւ գիրը կարելի է տեսնել միայն նախքան մատուռ մտնելը՝ գաւթի արեւելեան եւ մատուռի արեւմտեան որմերի միջնամասում՝ մատուռի մուտքի վերին ուղղանկիւնաձեւ քարի արեւմտահայեացք նեղ նիստին, շտող (նկ. 1ա, բ).

ԿԱՄԻ ԱՅԵՍԿ ԱՅԿԱԶԻՆԻԱՆ ՇԻՆԵՑԻ ՍԲԵԿԼԵՍ
ՍԲՅՈՎԱՆ ԵՍԱՇԿԻՆԸ ԵՆՈ ՂՆԻՄՍԱՐԱԻԻՆ ԵՍԻՅՍԵՐԷ:



Նկ. 1ա, բ. Արձանագրութեան գրչանկարն ու լուսանկարը (հեղինակի, 2020 թ.)

ԿԱՄԱԼԻՆ՝ ԱՅ, ԵՄ՝ ՀԱՅԿԱԶ ԻՇԽԱՆ, ՇԻՆԵՑԻ ՍԲԵԿԼԵՍԵՅԻՍ / ՍԲԵՅՈՎԱՆԵՍ,
ՅԻՇԼԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂՆ ԻՄ՝ ՍԱՐԱԻԻՆ, ՅԻՇԼԵՅԻՔ Ի՝ ՔՍ, ԹՎԻՆ ԼԻԿ. (1611):

Բովանդակութեամբ շինարարական արձանագրութեան համաձայն՝ ենթադրեալ մատուռը Սբ. Յովհաննէս եկեղեցին է, որը կառուցուել է 1611 թ. ոմն Հայկազ իշխանի կողմից, իր եւ մօր՝ Սարաւի յիշատակին: Դատելով վկայուած թուականից՝ «թվին Կ.», եւ արձանագրութեան հնագրական առանձնայատկութիւններից՝ փորագրիչը թուականի Ռ. հազարաւորը բաց է թողել կամ, որ քիչ հաւանական է, այն պիտի կարդանք «թվին» փակագրում: Փաստելի է, որ այս շինութիւնը Ժէ. դարի առաջին տասնամեակի վերջերին հիմնադրուած անապատի սկզբնական կառոյցներից է, չնայած, որ Մ. Հասրաթեանը, բացի բուն եկեղեցուց, միւս շինութիւնները համարում է յետագայում, մասնաւորապէս՝ 1658 թ. երկրաշարժից յետոյ կառուցուած¹⁵:

Վիմագրում իբրեւ եկեղեցու կառուցող վկայուած Հայկազ իշխանը եւ նրա մայր Սարաւը յիշատակուած են նաեւ այլ աղբիւրներում: Հայկազ իշխանը Քաշաթաղ-Խնածախի նշանաւոր Մելիք-Հայկազեաններից Հայկազ Բ.-ն է (1534/6-1621/3 թթ.), մելիք Հախնազարի եւ Սարաւի որդին, որը պատմութեան մէջ յայտնի է նաեւ իր «շինարարական ու մշակութանպաստ գործունէութեամբ»¹⁶: Մինչ նրա մասին խօսելը՝ համառօտ անդրադառնանք Ժէ. դարից յայտնի Քաշաթաղ-Խնածախի մելիքութեանը:

Քաշաթաղ-Խնածախի մելիքութիւնը

Այս մելիքութեան հիմնադիրն իրաւամբ համարուում է Խաղբակեան-Պոռշեան իշխա-

¹⁵ Հասրաթեան Մ., նշուած աշխ., էջ 39:

¹⁶ Ղուլեան Ա., Աղբախի եւ Սիւնիքի մելիքական ապարանքները, ՀՃՈԻ գիտական ուսումնասիրութիւններ, գիրք Դ., Երեւան, 2001, էջ 23-24:

նատոհմից սերուած Հայկազ Ա. իշխանը, որը, ըստ անուանի հայագետ Մորուս Հասարաթեանի, «մեծ Պոռշի (-1284) թոռան (Էաշիի) թոռ Միրիշիկի (մօտ 1400-1470) չորս որդիներից մէկն էր (Պարոն Հայկազ, Ամիր Վասակ, Հաղբակ, Ամիր Հասան)»¹⁷: Նրանց անունները երկիցս յիշատակուած են Բոլորածորի անապատում (Վայոց ձոր) կամ առաւել յայտնի Սպիտակաւոր Սբ. Աստուածածին վանքում՝ 1475 թ. ընդօրինակուած Աւետարանի (ՄՄ 2634) եւ 1476 թ. նորոգուած Ճաշոցի (ՄՄ 2781) յիշատակարաններում¹⁸, որոնց հիմամբ՝ Վայոց ձորի տէր Զումայ իշխանի վերոնշեալ եղբորորդիներին քանիցս յիշատակում է նաեւ մեծավաստակ Գարեգին Յովսէփեանը¹⁹:

Մելիք Հայկազ Ա.-ին է վերագրուած ԺԵ. դարավերջով թուագրուող Քաշաթաղի՝ ներկայումս կիսաւեր ապարանքի կառուցումը, որը գտնուում է Աղանոյ գետի Ծիծեռնավանից վտակի ձախ ափին՝ նախկին Սուլթանքենդ կոչուած քղաբնակ գիւղում²⁰: Մորուս Հասարաթեանի կարծիքով, նախքան մելիք Հայկազի՝ Քաշաթաղում հաստատուելը, այստեղ իշխել են շահունեցիները, իսկ ԺԵ. դարի վերջերին միեւնոյն աւանում է հիմնաւորուած նշանաւոր մելիք Հայկազը, որն էլ կառուցում է երկյարկանի քարաշէն ապարանքը՝ «մաքուր հայկական ոճով»²¹:

Յայտնի է, որ ԺԶ. դարասկզբին Հայկազ Ա. իշխանի որդի եւ Հայկազ Բ.-ի հայր Հախնազարը մելիքութեան աթոռանիստը Քաշաթաղից տեղափոխել է ոչ հեռու զբոսնրող Սիւնեաց խնածախ գիւղը, որտեղ կառուցել է ապարանք՝ դարձնելով մելիքութեան նոր աթոռանիստը²²: Ճարտարապետ Արտակ Դուլեանի բնորոշմամբ՝ մելիքանիստի տեղափոխումը խնածախ բնաւ Քաշաթաղի դերը չի նուազեցրել, այն «իր յարմարաւէտ աշխարհագրական դիրքի, ինչպէս նաեւ Ծիծեռնավանքի հարեւանութեան շնորհիւ յետագայում էլ շարունակում էր մնալ գաւառի նստոց-կենտրոններից մէկը»²³: Մելիք Հախնազարի երեւելի համբաւի մասին է վկայում խնածախում երբեմնի գոյութիւն ունեցած նրա քանդակազարդ տապանաքարի արձանագրութիւնը, որը 1926-ին ընդօրինակել է Մորուս Հասարաթեանը, այն աւելորդ չենք համարում յիշատակել. «Ես՝ Սարաւս²⁴, կ(ա)նգ(նեցի) Սբ. խաչս կողակցին իմ՝ Հախնազարին, որ Մէծ իշխան էր ի մէջ թագօ(=աւ)որաց: Եւ որդին իմ Հայկազ, կ(անգ)ն(ե)ցօ(=աւ) գեղիս առաջնորդ, թվին Ռ. (1551): Ես՝ Ստեփանոս հպէղաս, կազմեցի այս տապանս»²⁵ (ընդգծումը մէրն է - Ա. Յ.):

Դատելով խաչքարային յիշատակագրութիւններին բնորոշ տապանագրի բովանդակութիւնից՝ կոթողը կանգնեցրել է մելիք Հախնազարի կողակցից եւ մեր նորայայտ վիմագրում յիշատակուած Հայկազ իշխանի մայր Սարաւը՝ 1551 թ., իսկ քարգործ վարպետը Ստեփանոս արեղան է: Տապանագրին հանգամանօրէն անդրադարձած Մորուս Հասարաթեանի համոզմամբ՝ գիրը թոյլ է տալիս յստակեցնել նաեւ Հայկազ Բ. իշխանի ծննդեան մօտաւոր ժամանակն ու զբաղեցրած պաշտօնը, ըստ այդմ՝ Հախնազարի որ-

¹⁷ Հասարաթեան Մ. Ս., Քաշաթաղ-խնածախ, «Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ», Երեւան, 1985, էջ 158:

¹⁸ ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն երկրորդ (1451-1480 թթ.), կազմեց՝ Խաչիկեան Լ., Երեւան, 1958, էջ 375, Հմբ 474, էջ 400, Հմբ 501:

¹⁹ Յովսէփեան Գ., Խաղբակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմութեան մէջ, Բ. հրատարակութիւն, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 123, 125, 126:

²⁰ Դուլեան Ա., նշում աշխ., էջ 17:

²¹ Հասարաթեան Մ. Ս., նշում աշխ., էջ 160, 162:

²² Նոյն տեղում, էջ 158: Ուսումնասիրողներից Ն. Պապուխեանն ապարանքի կառուցումը վերագրում է մելիք Հայկազ Բ.-ին (Պապուխեան Ն., Սիւնիքի ժողովրդական ճարտարապետութիւնը, Երեւան, 1972, էջ 71, ծմբ. 32):

²³ Դուլեան Ա., նշում աշխ., էջ 17:

²⁴ Մորուս Հասարաթեանն անունը կարդացել է Սերաւ, մինչդեռ, ըստ նորայայտ վիմագրի, ճիշտ ենք համարում անուն Սարաւ տարբերակը: Տապանագրի սղումները վերականգնել ենք կոր փակագծերով:

²⁵ Հասարաթեան Մ. Ս., նշում աշխ., էջ 162:

դի Հայկազ Բ. իշխանն ապրել է առնուազն 88-89 տարի, քանի որ հօր մահուան ժամանակ, այսինքն՝ 1551 թ., պէտք է որ 16-17 տարեկան եղած լինէր, որ կարողանար նաեւ իշխանաւորի (առաջնորդի) պաշտօն զբաղեցնել, ուստի եւ՝ ծնուած պիտի լինի 1534/6 թթ. միջակայքում²⁶։ Հստ Մորուս Հասրաթեանի՝ մելիք Հախնազարի աւատական իրաւունքները պահպանուած էին նաեւ Խոզնաւար եւ Վաղատուր (Բայանդուր) գիւղերի նկատմամբ, հետեւաբար, ինչպէս ստորեւ կը տեսնենք, Հայկազ Բ.-ն, Խնածախի առաջնորդը լինելուց բացի, որոշակի իրաւունքներ է ունեցել նաեւ հարեւան յիշեալ երկու գիւղերի նկատմամբ²⁷։

Ինչ վերաբերում է մելիք Հախնազարի կողակից եւ Հայկազ Բ.-ի մայր Սարաւին, ապա նրա անունը վկայուած է նաեւ 1495 թ. ընդօրինակուած մի ձեռագիր Աւետարանի՝ 1603 թուականից յետոյ գրուած ստացողի յիշատակարանում (ՄՄ 5303, միայն յիշատակարանը՝ ՄՄ 6332)։ Գրիչը նախ նկարագրում է Պարսից շահ Աբաս Ա.-ի գլխաւորած զօրքերի եւ օսմանցիների՝ 1603 թ. բախումները Թաւրիզում, ապա Պարսից զօրքերի կողմից մի շարք բերդերի գրաւումն ու աւարառութիւնները։ Դառնալով ձեռագրի՝ պարոն Հայկազ աղայի կողմից «ի հալալ ընչից» գնմանը, գրիչն ընթերցողներից հայցում է յիշման արժանի անել մելիք Հայկազին «եւ ծնողաց, հաւրն՝ պարոն Հախնազարին, պապին՝ պարոն Հայկազին (Ա.-ին, այլ ձեռքով լրացուած է նաեւ Աղայ-ջանին - Ա. Յ.) եւ մաւրն իւր՝ Սաւարին...»²⁸։ Յիշատակուած են նաեւ տատի՝ Շամամի, որդիների՝ Աղաջանի, Հախնազարի, Գասպարի, Նազարի, դուստրերի՝ Դովլաթի, Զատի, Հումայի, ինչպէս նաեւ եղբայրների եւ քոյրերի անունները։ Յիշատակարանի ուշագրաւ դրուագներից է այն, որ նշուած ապստամբութիւնների ժամանակ մելիք Հայկազ Բ.-ին օսմանցիները ձերբակալել եւ տեղափոխել են Գանձակի (Գեանջայի) բերդը, որտեղից դուրս գալով՝ նա գնացել է Սպահան՝ «առ շահ Ապասն», որից ստացել է «խալաթ»²⁹ եւ պարոնութիւն երկրիս Քաշաթաղոյ»³⁰։ Նկատենք, որ չնայած յիշատակարանը թուակիր չէ, սակայն վկայուած դէպքերը թոյլ են տուել ուսումնասիրողներին հաւանական համարել 1606 թուականը³¹։

Ինչպէս արդէն պարզուեց, Հախնազարից մելիքութիւնը ժառանգել է որդին՝ խընդ-րոյ առարկայ վիմագրում յիշատակուած մելիք (իշխան) Հայկազ Բ.-ն, որը, ըստ պատմագիր Առաքել Դաւրիժեցու հաղորդման, սերում էր «ի Քշտաղս (Քաշաթաղ - Ա. Յ.) երկրէն՝ ի Խանածախ գեղջէն»³²։ Վերոնշեալ յիշատակարանից դատելով՝ նա ակտիւ մասնակցութիւն է ունեցել Ժէ. դարասկզբին տեղի ունեցած թուրք-պարսկական պա-

²⁶ Նոյն տեղում, էջ 163։

²⁷ Նոյն տեղում։

²⁸ Ժէ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, հ. Ա. (1601-1620 թթ.), կազմեցին՝ Յակոբեան Վ., Յովհաննիսեան Ա., Երեւան, 1974, էջ 207, Հ^մ 258։ Ժողովածոյի կազմողները չեն բացառում նաեւ մելիք Հայկազի մօր անուան Սայար ընթերցումը (նոյն տեղում, ծնթ. 19)։ Ասեմք, որ ՄՄ 5303 ձեռագրի վերջից մի քանի թերթ ընկած է, եւ ուսումնասիրողները, ինչպէս եւ իրենք են նշում, պակասատր յատուածը լրացրել են՝ օգտուելով Ղետնոյ Վրդ. Փիղալեմեանի կազմած «Նշխարք պատմութեան Հայոց» ձեռագիր աշխատութեան Ա. հատորի (ՄՄ 6332) նիւթերից (նոյն տեղում, ծնթ. 18)։ Մենք տեղում ստուգեցինք բնագիրը, ուր յստակ ընթերցելի է անւան Սաւար տարբերակը։ Ստորեւ կը տեսնենք, որ մելիք Հայկազի մայրն այս անունով է յիշում նաեւ Միծեռնավանքի որոշ յիշատակագրութիւններում։

²⁹ Այսպէս է կոչում յարգանքի եւ մեծարման նպատակով տրուած նուէրը, որը հիմնականում շէղ եւ քանկարժէք հագուստ է (տե՛ս Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը. I, Հրովարտականք, պրակ երկրորդ (1601-1650 թթ.), կազմեց՝ Փափազեան Հ., Երեւան, 1959, էջ 220)։

³⁰ Ժէ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, հ. Ա., էջ 207։

³¹ Նոյն տեղում, ծնթ. 21։

³² Առաքել Դաւրիժեցի, էջ 63, գլ. Գ.։ Առաւել պատմագիրը մելիք Հայկազին յիշատակում է նաեւ երկրի երեւելի այրերի՝ խօջայ Նազարի, խօջայ Սուրբանումի, Միւրուկի անունների շարքում, ովքեր մշտապէս պայքարում էին Մելիքսէր կաթողիկոսի անօրէն գործողութիւնների դէմ (նոյն տեղում, էջ 195, գլ. ԺԸ.)։

տերազմին՝ վայելելով շահ Աբաս Ա.-ի բարեացակամ վերաբերմունքը, որից էլ ստացել էր «Ծեր առիւծ» («Գոջայ ասլան») մականունը³³։ ԺԶ-ԺԷ. դդ. նշանաւոր եկեղեցական գործիչ, փիլիսոփայ եւ բանաստեղծ Ներսէս Մոկացիին, 1621թ. Սիւնեաց Մեծ անապատում՝ Փիլիպոս դպիրի (յետագայում կաթողիկոս Փիլիպոս Ա. Աղբակեցի - 1633-1655 թթ.) խնդրանքով գրուած չափածոյ ներբողեանում, յատկանշում է ոչ միայն անապատի հիմնադիր չորս այրերի՝ մելիք Հայկազի, Պօղոս Վրդ. Մոկացու, Սարգիս Եպս. Արենեցու եւ Կիրակոս Քհնյ Պոնտացու անունները, այլեւ շահ Աբասի համակրանքը քաջամարտիկ եւ պատերազմից յաղթանակով դուրս եկած մելիք Հայկազի նկատմամբ, որին, իբրեւ վարձատրութիւն, յանձնում է Սիւնիքի իշխանութիւնը³⁴.

«Կացոյց զնա իշխան երկրի՝
Հանեալ ի պարիւ մեծութեան,
Մեծարգոյ փառօք պարունաց
Եւ կոչեաց զնա իւր սիրական:
Հախնազար հայրըն նորա
Յորջորջեալ զնա սեռական,
Հայկազն անուանէր զնա՝
Նմանիլ Հայկազնին Տիգրան...»³⁵:

Թերեւս Պարսից առաջնորդի հովանաւորութիւնը վայելելու եւ իշխանութիւն ձեռք բերելու հանգամանքներով էլ պիտի պայմանաւորել մելիք Հայկազ Բ.-ի իրականացրած շինարարական-նորոգչական աշխատանքների մասին վկայութիւնները:

Մելիք Հայկազ Բ.-ի գործունէութիւնը Հալիձորի Հարանց անապատում

Այժմ տեսնենք, թէ ի՞նչ կապ կարող էր ունենալ Հայկազ Բ. իշխանը Սիւնեաց նորահիմն անապատի հետ: Առաքել Դաւրիժեցու հաղորդմամբ՝ անապատական շարժման վերազարթօնքը Սիւնիքում չորս սրբակենցաղ այրերի՝ Երուսաղէմ ուխտի մեկնած Սաղմոսավանքի առաջնորդ Սարգիս Եպս. Արենեցու (Ամբերդցի, պարոնտէր), Տրապիզոնից եկած Կիրակոս Քհնյ Պոնտացու, ինչպէս նաեւ՝ Պօղոս Վրդ. Մոկացու եւ Արիստակէս Վրդ. Շամբեցու անունների հետ է կապուած, իսկ կառուցուելիք անապատի տեղի ընտրութիւնը վերապահուած էր մեր երկրորդ Լուսաւորիչ Մովսէս Վրդ. Տաթեւացուն (յետագայում կաթողիկոս՝ 1629-1633 թթ.)³⁶։ Տաթեւի հռչակաւոր վանքից ոչ հեռու հիմնադրուած անապատի համբաւն արագ տարածուած եւ իր շուրջն է համախմբում մի շարք քրիստոսաւանդ այրերի, որոնք յետագայում եւս դարձան անապատների հիմնադիրներ (Թովմա Եպս. Տաթեւացի, Կարապետ Եպս. Էջմիածնեցի, Արիստակէս Վրդ. Բարկուշատցի, Դաւիթ Եպս. Շամբորեցի, Ներսէս Մոկացի եւ այլք)։ Նրանցից Հ. Ղեւոնդ Ալիշանն առանձնացնում է Վանայ լճի Լիմ եւ Կտուց կղզիներում հաստատուած անապատների հիմնադիր, վերոյիշեալ Ներսէս Մոկացուն (մականւամբ՝ Բեղլու)³⁷, որի գրչին պատկանող ներբողեանում վերջինս փառաբանում է Սիւնեաց Մեծ անապատի չորս հիմնադիրներին, միայն այն տարբերութեամբ, որ Սարգիս Եպիսկոպոսի, Կիրակոսի Քահանայի եւ Պօղոս Վարդապետի անուններից առաջ, իբրեւ «անապատի սիւն», յիշատակում է մելիք Հայկազին, որը.

³³ Հասարթեան Մ. Ս., նշուած աշխ., էջ 165:

³⁴ Դոլուխանեան Ա., Ներսէս Մոկացի (կեանք, գործունէութիւնը), Սբ. Էջմիածին, 2009, էջ 78-80:

³⁵ Ներսէս Մոկացի, Բանաստեղծութիւններ, աշխատասիրութեամբ՝ Ա. Դոլուխանեանի, Երեւան, 1975, էջ 46-47:

³⁶ Առաքել Դաւրիժեցի, էջ 239, գլ. ԻԴ.:

³⁷ Հ. Ղեւոնդ Ալիշան, Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 248:

*«Խոնարհ էր եւ հեզ բարուք,
Եւ սիրով աստուածաշարժութեան:
Անապատի սիւն լինէր
Եւ գրգէր գոյով հայրական,
Մինչ յիշխանութեան սիջին
Ջանք դնէր անապատական»³⁸:*

Փաստօրէն, Հայկազ իշխանի անմիջական ջանքերով ու հովանաւորութեամբ է հիմնադրուել Հալիձորի Հարանց կամ Սիւնեաց Մեծ անապատը, որի եկեղեցուն հիւսիսից կցակառուցուել է Սբ. Յովհաննէս Մկրտչի անուանակիր փոքր, մատուանման եկեղեցին: Այս կառույցի գործառութեային բուն նշանակութիւնը, իբրեւ եկեղեցի, փոքրինչ կասկածելի է, առաւել եւս, որ դեռեւս վաղ միջնադարից սկսած անապատների առանձնաշատկութիւններից էր նաեւ միայն մէկ պաշտամունքային կառույց ունենալը³⁹: Աւելին, քառակուսի յատակագծով թաղակապ սրահն արեւելեան կողմում բեմ չունի եւ, ըստ էութեան, չի էլ ունեցել, իսկ զոյգ մուտքերի առկայութիւնը, ընդ որում՝ մէկը եկեղեցու հիւսիսային աւանդատան մէջ, իսկ միւսը դէպի դուրս, թոյլ է տալիս ենթադրել, որ մենք գործ ունենք դեռեւս վաղ եւ զարգացած միջնադարում աւանդական դարձած մատուռ-մկրտարանի հետ, մանաւանդ, որ վիմագրում յիշատակուած Սբ. Յովհաննէս անունը, ի դէմս Սբ. Յովհաննէս Մկրտչի, նոյնպէս այդ է վկայում: Ճիշտ է՝ Սբ. Գրիգոր Լուսաւորչի սահմանած կանոնախմբի Ի. «Վասն անապատականաց» յօդուածում յըստակ նշուած է, որ կանոնը չի պարտադրում «անապատականաց մկրտութիւն առնել եւ ւարէնս տալ ժողովրդեան կամ պսակ դնել, զի այս գործ առաջնորդաց է»⁴⁰, այդուհանդերձ, ինչպէս նշում է Սբ. Էջմիածնի միաբան Յուսիկ Արք. Տէր-Մովսիսեանը, արդէն ուշ միջնադարում անապատականների կենցաղավարութիւնը զգալի փոխուել էր՝ նմանուելով «աշխարհիկ եկեղեցականներին ու եկեղեցիներին»⁴¹: Առաքել պատմագրի յիշատակած Սիւնեաց անապատականների կանոնադրութեամբ եւս նման ծիսակարգերն արգելող որեւէ կանոն սահմանուած չէ⁴²: Ասուածի առհաւատչեան նաեւ անապատների մի շարք եկեղեցիներում գոյութիւն ունեցած մկրտութեան աւազաններն են (Տանձափարախի (Բեխի) անապատ, Շինուհայրի Կուսանաց անապատ, Հալիձորի Հարանց անապատին հարակից Սբ. Պօղոս-Պետրոս մատուռ-տապանատուն⁴³ եւ այլն, նկ. 11-13):

Միջնադարեան մկրտարաններին նախկինում անուղղակիօրէն անդրադարձել է հայ ճարտարապետութեան ականաւոր տեսաբան Թորոս Թորամանեանը⁴⁴, ուստի համառօտ անդրադառնալ նրա դիտարկումներին:

³⁸ Ներսէս Մոկացի, Բանաստեղծութիւններ, էջ 49:

³⁹ Տէր-Մինասեան Եր., Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա., Սբ. Էջմիածին, 1908, էջ 281. հմմտ. Հասարակեան Մ., Սիւնիքի XVII-XVIII դարերի հարտարապետական համալիրները, էջ 15:

⁴⁰ Կանոնի ՍրբոյնԳրիգորի [Լուսաւորչի], «Կանոնագիր Հայոց», հ. Ա., աշխատասիրութեամբ՝ Վ. Յակոբեանի, Երեւան, 1964, էջ 247:

⁴¹ Տէր-Մովսիսեան Արք. Յուսիկ, Անապատականներ եւ վանականութիւն, «Արարատ»-ի ժառանգութիւնը, Բ., Երկերի ժողովածոյ, հրատ. պատրաստեց Եզնիկ Արք. Պետրոսեանը, Սբ. Էջմիածին, 2009, էջ 330:

⁴² Առաքել Դարիժեցի, էջ 219-221, գլ. ԻԱ.:

⁴³ Առաքել պատմագրի հաղորդմամբ՝ այս մատուռ-տապանատանն են հանգչում Սիւնեաց Մեծ անապատի հիմնադիրներ Սարգիս եպս. Արեւեցի, Պօղոս Վրդ. Մոկացի, Արիստակէս Վրդ. Շամբեցի եւ «առաքինագործ» Տէր Բարսեղ Արեղան (Առաքել Դարիժեցի, էջ 225, գլ. ԻԲ.): Տեղացիներին այն առաւել յայտնի է «Զորս սրբի» դամբարան անունով, իսկ Մեսրոպ Մագիստրոսն այն Սբ. Պօղոս-Պետրոս մատուռ է կոչում (Տէր-Մովսիսեան Արք. Մեսրոպ, նշուած աշխ., էջ 59-60):

⁴⁴ Թորամանեան Թ., Նիւթեր հայկական հարտարապետութեան պատմութեան, Երեւան, 2013, էջ 200-203 (վերահրատարակութիւն):

Եկեղեցի, թե՛ մատուռ-մկրտարան

Մեր հոգեւոր հայրերի սահմանած եւ եկեղեցական ժողովներում մշակուած կանոնների հիմամբ Թ. Թորամանեանը որոշակիացնում է միջնադարեան մկրտարանների տեղն ու գործառույթը ժամանակի համապատկերում: Ուշագրաւն այն է, որ ի սկզբանէ դրանք կառուցուել են եկեղեցիներին կից, կամ աւազանը տեղադրուել է եկեղեցու հիւսիսային աւանդատանը. այդ է փաստում Սբ. Սահակ Պարթեւի՝ քորեպիսկոպոսներին ուղղուած Բ. կանոնը, ըստ որի՝ աղօթքի տաճարը, որտեղ սուրբ Սեղանն է, հարկ է մշտապէս զարդարուն պահել, անխափան խնկարկել ու մոմ վառել, իսկ «մերձ ի նա մկրտատուն շինեսցեն յաւանս, որպէս եւ սովորութիւն իսկ է, եւ յայլսն՝ ի նմին կանգնեսցի աւազան մկրտութեան...»⁴⁵: Այս առումով հետաքրքիր է Թ. Թորամանեանի տեսակէտը, երբ նշում է, որ Սբ. Սահակի ապրած ժամանակաշրջանում (387-439 թթ.) եկեղեցիները դեռեւս իրենց նախնական ձեւի մէջ էին եւ մկրտատուն ծառայելու համար առնուազն աւանդատներ չունէին⁴⁶, ինչից էլ ենթադրում է, որ աւազանները կից շինութիւններում են եղել: Նա կարծում է, որ միայն Ն. դարավերջից մինչեւ է. դարի կէսերը կառուցուած որոշ եկեղեցիների (Սբ. Էջմիածնի Մայր տաճար, Սբ. Հռիփսիմէ, Բագարանի Սբ. Թէոդորոս, միգուցէ նաեւ՝ Աւանի տաճար) արեւելեան աւանդատների ունեցած արտաքին մուտքերը հիմք ընդունելով՝ կարելի է հաւանական համարել, որ դրանք մկրտարաններ են եղել⁴⁷:

Դուինի եկեղեցական Բ. ժողովի (555 թ.) ԺԵ. «Ձառնել ի տունս մկրտութիւնս» կանոնն արգելում է մկրտութեան կարգ կատարել տանը, փոխարէնը սահմանում է. «Եւ աւազանն կանգնեսցի յեկեղեցւոյն կամ ի տան պաշտամանն»⁴⁸, այսինքն՝ թոյլատրում է կարգ անել միայն եկեղեցու ներսում (թերեւս՝ աւանդատանը) կամ կից շինութեան մէջ, որտեղ աւազան է կանգնեցուել: Ինչ վերաբերում է Դուինի Ե. ժողովի (719 թ.) ԺԳ. «Վասն սրբոյ աւազանին» կանոնին, ապա այստեղ պայմանն աւելի յստակ է՝ հարկ է «աւազան քարեղէն հաստատել ի նմին իսկ յեկեղեցւոյն, եւ կամ անդէն մերձ յեկեղեցին ի մկրտատունն»⁴⁹, այսինքն՝ քարէ աւազանը պիտի լինի եկեղեցու մէջ կամ կցակառոյց մկրտատանը: Այդուհանդերձ, տեղին է Թ. Թորամանեանի նկատառումը, թէ եկեղեցու մէջ մկրտութեան աւազան ունենալու թոյլատրումը բնաւ չի բացառում նոյն եկեղեցուն կից մկրտատանի անհրաժեշտութիւնը⁵⁰: Այս առումով խիստ յատկանշական է Երուսաղէմի Մակար Եպիսկոպոսի եկեղեցական կանոնադրութեան Բ. յօդւածը, ըստ որի՝ եկեղեցին պիտի մկրտատուն ու աւազան ունենայ, որպէսզի անհրաժեշտութեան դէպքում մկրտութեան կարգ կատարուի. «եթէ եկեղեցիս ունիմք, պարտ է եւ մկրտատունս առնել եւ աւազան, յորում մկրտէ, որ գայցեն յուղիղ հաւատս բերեպաշտութեան»⁵¹, իսկ Ը. յօդուածում յստակ նշում է եկեղեցու մէջ աւազանի ստոյգ

⁴⁵ Կանոնի Սրբոյն Սահակայ Հայոց հայրապետի, «Կանոնագիր Հայոց», հ. Ա., էջ 368. հմմտ. **Մելիք-Թանգեան Վրդ. Ներսէս**, Հայոց եկեղեցական իրաւունք, առաջաբանով եւ ծանօթագրութիւններով հրատարակութեան պատրաստեց **Ա. Բոզոյեանը**, Սբ. Էջմիածին, 2011, էջ 431:

⁴⁶ Թ. Թորամանեանի այս տեսակէտը վիճելի է, քանի որ Բիսպոսական ընդունման վաղ փուլում կառուցուած մի շարք եկեղեցիներ յատկազօծուած աւանդատներով են (Տեկոր, Երեւոյ, Ծիծեռնավանք, Աշտարակի Ծիրանաւոր եւ այլն):

⁴⁷ **Թորամանեան Թ.**, նշուած աշխ., էջ 202-203:

⁴⁸ Կանոնի Ներսէսի կաթողիկոսի եւ Ներշապհոյ Մամիկոնից Եպիսկոպոսի, «Կանոնագիր Հայոց», հ. Ա., էջ 485. հմմտ. **Մելիք-Թանգեան Վրդ. Ներսէս**, Հայոց եկեղեցական իրաւունք, էջ 310:

⁴⁹ Կանոնի տեւոն Յովհաննիսի Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի, «Կանոնագիր Հայոց», հ. Ա., էջ 521. հմմտ. **Մելիք-Թանգեան Վրդ. Ներսէս**, Հայոց եկեղեցական իրաւունք, էջ 337:

⁵⁰ **Թորամանեան Թ.**, նշուած աշխ., էջ 201:

⁵¹ Երանելոյն Մակարայ՝ սրբոյ Բաղաթիւն Երուսաղէմի հայրապետի կանոնական թուղթի հայս, «Կանոնագիր Հայոց», հ. Բ., աշխատասիրութեամբ՝ **Վ. Յակոբեանի**, Երեւան, 1971, էջ 222. հմմտ. **Մելիք-Թանգեան Վրդ.**

տեղը. «աւազանն յետոյ առ նմին տամբ, եւ պատուով հաստատեալ յաջմէ (խորանից աջ, հիւսիսային կողմում - Ա. Յ.)»⁵²: Այս երեւոյթը յետագայում արտացոլուել է նաեւ Մաշտոց ծիսամատեանի՝ աւազանի աւրհնութեան կանոնում, որտեղ ուղղակիօրէն նըշուում է, որ «չէ կատարեալ եկեղեցի, որ ոչ ունի զծնունդս որովայնի իւրոյ (նկատի ունի մկրտութեան աւազանը - Ա. Յ.)»⁵³:

Վերոյիշեալ կանոնները յստակ շեշտում են ոչ միայն առանձին մկրտարանների անհրաժեշտութիւնը, այլեւ աւազանի՝ իբրեւ եկեղեցու անքակտելի մասը լինելու հանգամանքը: Մկրտարանի եւ եկեղեցու փոխկապուածութեան առնչութեամբ ուշագրաւ է Թ. Թորամանեանի յիշատակած օրինակը՝ կապուած ծննդավայր Շապին-Գարահիսարի եկեղեցու հիւսիսային մատուռ-աւանդատան հետ: Պարզուում է՝ մկրտութեան աւազանը գտնուել է եկեղեցու նշուած սրահում, որը մուտք է ունեցել նաեւ դրսից, որտեղից էլ ներս են բերել մկրտուողին եւ միայն «աղամական մեղքի դատակնիքէն» սրբուելուց յետոյ, արդէն եկեղեցու հետ հաղորդակցուող մուտքից նոր մկրտուածին տարել են բուն աղօթարահ⁵⁴: Այսինքն՝ ճիշտ Հարանց անապատի պէս, միայն այն տարբերութեամբ, որ այստեղ մկրտարանն անապատի եկեղեցու հիւսիսային աւանդատանը կից առանձին շինութիւն է:

Ուսումնասիրութիւնները պարզում են, որ մեզանում մկրտարաններ (նաեւ՝ եկեղեցիների աւանդատներում) ունենալու աւանդոյթը պահպանուել է մինչեւ ԺԳ-ԺԴ. դդ.⁵⁵, իսկ առանձին դէպքերում նաեւ՝ ուշ միջնադարում: Իբրեւ այդպիսին նշելի է Զուարթնոցի տաճարի կենտրոնում՝ 1903 թ. Խաչիկ Վրդ. Դադեանի յայտնաբերած շրջանաձեւ, սրբատաշ քարերով շարուած կառոյցը (տրամագիծը կենտրոնում՝ 0,88 մ, խորութիւնը՝ 1,25 մ), որի՝ մկրտութեան աւազան լինելու հետազօտողների համոզմունքը⁵⁶ հիմնաւոր փաստերով ժխտել է Ստեփան Մնացականեանը՝ հաւանական համարելով այն, որ կառոյցն ի սկզբանէ մասունքարան է եղել, որի վրայ նաեւ յուշասիւն է կանգնեցուել⁵⁷: Յետագայում Յովսէփ Օրբելին, առանց որեւէ հիմնաւորման, մկրտարան է համարել Անիի Մայր տաճարի հարաւարեւելեան կողմում գտնուող՝ այսպէս կոչուած «ութանկիւն» աւերուած մատուռը⁵⁸, իսկ Կարսի Առաքելոց եկեղեցու նորոգման ժամանակ՝ ռուսների կողմից փաստագրուած մատուռանման կառոյցի յատակի խաչաձեւ փորուածքը համարուել է մկրտութեան աւազան⁵⁹: Ուշմիջնադարեան կառոյցներ

Ներսէս, Հայոց եկեղեցական իրաւունք, էջ 404-405:

⁵² Նոյն տեղում, էջ 228. հմմտ. **Մելիք-Թանգեան Վրդ. Ներսէս**, Հայոց եկեղեցական իրաւունք, էջ 406:

⁵³ Մայր Մաշտոց, հ. Ա., գիրք Ա., Հստ հնագոյն երկաթագիր ձեռագրերի եւ համեմատութեամբ Աստուածաշունչ մատեանի, բնագրական եւ կանոնացանկային յաւելումով, աշխատասիրութեամբ՝ **Գ. Տէր-Վարդանեանի**, Սբ. Էջմիածին, 2012, էջ 137:

⁵⁴ **Թորամանեան Թ.**, նշուած աշխ., էջ 202:

⁵⁵ Հակուած ենք մատուռ-մկրտարան համարելու նաեւ Բիւրականի Արտաւազիկ եւ Մայիսեանի Տիրամատուռ վաղմիջնադարեան եկեղեցիների հիւսիսարեւելեան խաչաքեւին կցուած եւ իբրեւ հիւսիսային աւանդատուն հանդիսացած թաղակապ փոքր սրահները (**Գրիգորեան Վ.**, Հայաստանի վաղմիջնադարեան կենտրոնագմբէք փոքր յուշարձաններ, Երեւան, 1982, էջ 45-46, տախտակ XV):

⁵⁶ **Տէր-Մովսիսեան Վրդ. Մեսրոպ**, Էջմիածին եւ հայոց հնագոյն եկեղեցիներ, պրակ Ա., Սբ. Էջմիածին, 1904, էջ 54: Թ. Թորամանեանը Զուարթնոցի մկրտութեան աւազանի գոյութիւնը պայմանաւորել է տաճարի ձեւի բացառիկութեամբ եւ «Շինողի (Ներսէս Գ. Տայեցու - Ա. Յ.) օտարոտի» հակումներով, քանզի առնուազն մինչեւ ԺԴ. դարը կառուցուած եկեղեցիներում նա աւազան չի փաստագրել (**Թորամանեան Թ.**, նշուած աշխ., էջ 201):

⁵⁷ **Մնացականեան Ստ.**, Զուարթնոցը եւ նոյնատիպ յուշարձաններ, Երեւան, 1971, էջ 46-47, 90:

⁵⁸ Краткий путеводитель по городу Ани, составил **Орбели И.**, С. Петербург, 1910, էջ II (74) (վերջից). տե՛ս նաեւ **Թորամանեան Թ.**, նշուած աշխ., էջ 201. **Մաթևոսեան Կ.**, Անի. եկեղեցական կեանքը եւ ձեռագրական ժառանգութիւնը, Սբ. Էջմիածին, 1997, էջ 165:

⁵⁹ **Թորամանեան Թ.**, նշուած աշխ., էջ 201: Անիում մկրտութեան ֆառէ աւազաններ են ունեցել 1151 թ. նորոգուած Սբ. Սարգիս («Սարկաւագի») եկեղեցին, Գագկաշէն Սբ. Գրիգոր զուարթնոցատիպ տաճարը, վիմափոր եկեղեցիներից մէկը (**Март Н.**, Ани (книжная история города и раскопки на месте городища), Ереван, 2011, էջ 116:

րից յատկանշելի է ժԹ. դարում վերակառուցուած Երեւանի Սբ. Սարգիս եկեղեցին, որն ունի արտաքին մուտքով հիւսիսային աւանդատուն-մկրտարան⁶⁰։ Յաւօք, միջնադարեան մկրտարանների մասին տեղեկութիւններն աղբիւրներում խիստ կցկտուր ու թէական են, ուստի հարցի մանրագնին քննարկումը մեր խնդրից դուրս համարելով՝ բաւարարուենք բերուած օրինակներով։

Մենք ընդարձակեցինք մեր ասելիքը՝ ցոյց տալու համար, որ հակուած ենք խընդրոյ առարկայ վիմագրում վկայուած Սբ. Յովհաննէս եկեղեցին համարելու Հարանց անապատի մատուռ-մկրտարանը, որը վիմագրում կարող էր եւ եկեղեցի կոչուել, ինչպէս յաճախ եկեղեցի են կոչուել խորանները, երբեմն էլ՝ զանգակատներն ու տապանատները, որոնցում ծիսակարգ է արուել⁶¹։ Կարծում ենք՝ չպէտք է տարակուսել այն մըտքից, որ շինութիւնը գտնուում է անապատային համալիրի կազմում, քանզի, ինչպէս վերը նշեցինք, ուշմիջնադարեան անապատների եկեղեցիներին նոյնպէս բնորոշ են ինչպէս խորանն ու աւանդատունը, այնպէս էլ հիւսիսային պատի մէջ ամփոփուած մկրտութեան աւազանը⁶²։ Սա հիմնաւորում է նաեւ վերոբերեալ կանոններով, որոնցում յստակ նշուած է, որ իւրաքանչիւր եկեղեցի պիտի ունենայ մկրտատուն կամ աւազան։ Այսու, կարծես թէ որոշակի է դառնում անապատի եկեղեցու հետ գրեթէ միաժամանակ կառուցուած Սբ. Յովհաննէս եկեղեցու՝ իբրեւ մատուռ-մկրտարան լինելու մեր ենթադրութիւնը։ Կարելի է փաստել, որ Քաշաթաղ-Խնածախի նշանաւոր մելիք (իշխան) Հայկազ Բ.-ի նախաձեռնութեամբ իր եւ մօր՝ Սարաւի յիշատակին կառուցուած շինութիւնը, շնորհիւ մուտքի ճակատակալ քարի արձանագրութեան, ամենայն հաւանականութեամբ, Ժէ. դարասկզբից մեզ հասած մատուռ-մկրտարան է, բացառիկ շինութիւն հայկական ուշմիջնադարեան ճարտարապետութեան մէջ⁶³։

Ի յաւելումն նշենք, որ մելիք Հայկազ Բ.-ի շինարարական գործուէութիւնը սրանով չի սահմանափակուել։ Նրա անունը, իբրեւ շինարարութեան նախաձեռնող, վրկայուած է եղել Ծիծեռնավանքի պարսպի նորոգման 1613 թուակիր վիմագրում, որը կրող քարը, ըստ պատմաբան, արեւելագէտ Ալեքսան Յակոբեանի, վերջին ժամանակներում ոչնչացուել է տեղի քրդաբնակների կողմից⁶⁴։ Յուշարձանագէտ Սամուէլ Կա-

հմմտ. Թորամանեան Թ., Զուարթնոց, Գազկաշէն, Երեւան, 1984, էջ 96), ինչպէս նաեւ Իգանորում՝ Պարոնի պալատից հիւսիս գտնուող զոյգ եկեղեցիները, որոնցից մէկում երկու աւազան է եղել (Մաթևոսեան Կ., նշուած աշխ., էջ 172)։ Մկրտութեան ֆարէ աւազան ունի նաեւ Միրաֆ գիւղի (ՀՀ Արագածոտնի մարզ) վաղմիջնադարեան եկեղեցին, որը կարելի է թուագրել առնուազն ԺԳ-ԺԷ. դդ. (Sargsyan G., Harutyunyan A., Excavations of the Single-Nave Church of Mirak, 2012-2013, Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies, 2015, vol. IX/1, էջ 181, աղ. XLIV/1)։

⁶⁰ Յարութիւնեան Վ., Երեւանի եկեղեցիները (հանրամատչելի տեղեկագիր), Երեւան, 1997, էջ 33։

⁶¹ Յարութիւնեան Ա., Յակոբեան Հ., «Եկեղեցի» եւ «խորան» բառերի նոյնականութեան դրսեւորումը վիմագրերում, «Տարեգիրք» գիտական յօդուածների ժողովածոյ, հ. ԺԱ., Երեւան, 2016, էջ 87-96։

⁶² Մեր գործընկեր, աստուածաբան Լուսինէ Թումանեանը տեղեկացրեց, որ մկրտութեան աւազանի մի ուշագրաւ նմոյշ է պահպանուել Գեղարդավանքից արեւմուտք գտնուող Մխիթար Այրիվանեցու ֆարայրում՝ ժայռակերտ մատուռի արեւմտեան պատին (Սարգսեան Է., Սարգսեան Մ., Գեղարդի վիմափոր կառոյցների մի խումբ, «Լրաբեր հասարակական գիտութիւնների», 1981, ՀՊ 4, էջ 107)։ Նոյն մատուռի արեւելեան կողմում Այրիվանեցու անուան յիշատակմամբ ԶԼԸ. (1289) թուակիր յայտնի արձանագրութիւնն է, որի յիմամբ էլ կարելի է թուագրել աւազանը (արձանագրութեան վերձանութիւնը տես Յովսէփեան Գ., Խաղբակեանք կամ Պոռնեանք Հայոց պատմութեան մէջ, էջ 328, յաւելում Ա./117)։ Աւազանի՝ ոչ թէ հիւսիսային, այլ արեւմտեան պատի մէջ փորուած լինելու հանգամանքը պայմանաւորում ենք ֆարայրի բնական առանձնայատկութիւններով։

⁶³ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում՝ 2008 թ. ներկայիս ՀՀ Նախագահ Արմէն Սարգսեանի մեկենասութեամբ կառուցուած Սբ. Վարդան եւ Սբ. Յովհաննէս Մկրտիչ մատուռ-մկրտարանն այսօրինակ կառոյցների մերօրեայ լաւագոյն օրինակներից է։ Ըստ մուտքի աշակողմեան պատին կազմուած շինարարական արձանագրութեան՝ «յաւազանէ մկրտարանիս ծնցին մանկունք առաքելահաստատ եկեղեցոյս մերոյ իբրեւ ժառանգորդ արհայրութեան երկնից եւ տանաւ հոգոյն սրբոյ, ի զօրացուցանել ազգիս Հայկազեան հաւատով, տէրունաշնորհ արդիւնագարդեալ բարի վարով եւ գործով առաքինութեան...»։

⁶⁴ Յակոբեան Ա., Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ (Արցախ եւ Ու-

րապետեանի հաւաստմամբ՝ քարը տեղում է եղել մինչեւ 1988 թ., իսկ արձանագրութիւնը բովանդակել է հետեւեալը. «Կամաւն Ա(ստուծոյ), նորոգեցաւ պարիսպս ի ձեռն Հայկազ իշխանին, ի առ(ա)ջն(որ)դութի(ւն) Մկ(ր)տ(ի)չ եպ(իսկոպո)ս(ին), թվ(ին) ՌԿԲ. (1613)»⁶⁵; Բացի այս, Հայկազ իշխանի եւ մօր՝ Սարաւի անունները յիշատակուած են նոյն Ծիծեռնավանքի բազիլիկ եկեղեցու հարաւային պատի՝ խաչքանդակներին կից պահպանուած յիշատակագրութիւններում: Եկեղեցու վերականգնման աշխատանքների ընթացքում (2000 թ.) դրանք առաջինն ընդօրինակել եւ հրատարակել է Ալ. Յակոբեանը: Վիմագրերից մէկը թուակիր է. «Սբ. խ(ա)չս բարիխաւս Սարաւին՝ մայրն պարուն Հէգագին, թվ(ին) ՌԾԹ. (1610)»⁶⁶; Սարաւի անունը երկիցս յիշատակուած է նաեւ առանձին՝ «Սաւարին» ձեւով⁶⁷: Կարելի է հետեւութիւն անել, որ մեծահամբաւ մելիք Հայկազ Բ.-ը եւ իր մայր Սարաւը շարունակել են իրենց նպաստը բերել մեր հոգեւոր կենտրոնների բարեգարգմանը, ինչի համար էլ յիշման արժանի լինելու իրաւունք են ստացել:

Աւելի ուշ, մելիք Հայկազ Բ.-ի անունն աղբիւրներում յիշատակում է իբրեւ կալւածատէր (մլքատէր), որը սեփականատիրական իրաւունքներ ունէր Քաշաթաղի եւ Ղափանի շրջաններում գտնուող կալուածքների վրայ: Այդ են փաստում ոչ միայն մելիք Հայկազի որդի Աղաջանի (վիմագրում՝ Աղան)՝ ինաժախի հիւսիսային բարձունքին կանգնեցրած խաչքարի 1620 թ. երկլեզու (նաեւ՝ պարսկերէն) վիմագիրը, որն աւարտում է «...երկրիս մոյլքն պ(ա)ր(ո)ն Հայկազին էր»⁶⁸ բառերով, այլեւ շահ Աբաս Ա.-ի կողմից մելիք Հայկազի սեփականատիրական իրաւունքները վերահաստատող՝ դարձեալ 1620 թուակիր պարսկերէն հրովարտակը, ըստ որի՝ «Քուշթասիֆի (Քաշաթաղի - Ա. Յ.) եւ Ղափանի [շրջաններում] գտնուող որոշակի մուքերի առանձին մասեր, մելիք Հայկազի օրինական իրաւունքն են, եւ նա [այդ մասերին] տիրում է որպէս մալիք (սեփականատէր - Ա. Յ.)»⁶⁹:

Պակաս ուշագրաւ չէ նաեւ մելիք Հայկազի կնոջ՝ Գուլաբի խանումի 1651 թ. ընդարձակ տապանագիրը, ըստ որի՝ պարոն Հայկազի որդիներից Գասպարը, Շահնազարն ու Բեկնազարն իրենց մօր յիշատակին կոթող են կանգնեցրել, որը ԼԳ. (38)⁷⁰ տարի այրի մնաց եւ «...բազում անգամ ի դուռն թագաւորաց եւ խաներաց գնաց եւ հայրենիք մլքերն անկեալ էր ի ձեռաց, թագաւորէն դաբալայ (կալուածագիր - Ա. Յ.) էառ այսքան գեղի՝ ինաժախ, Պայինդուր, Խոզնաւար»⁷¹: Այսինքն՝ կինը պայքարել է վերականգնելու ամուսնու՝ դեռեւս շահական հրովարտակով հաստատուած սեփականատիրական իրաւունքները, իսկ այն, որ բացի ինաժախից նրանց ժառանգական տիրոջներին կազմում էին նաեւ Վաղատուր (Բայանդուր) եւ Խոզնաւար գիւղերը, հաստատուում է նաեւ յիշեալ տապանագրով:

Ինչ վերաբերում է մելիք Հայկազ Բ.-ի վախճանին, ապա Ներսէս Մոկացու վերոյիշեալ ներբողեանում, իբրեւ անապատի հիմնադիր չորս այրերի ի Տէր փոխման թուա-

տիք), Վիեննա-Երեւան, 2009, էջ 206:

⁶⁵ «Դիւան հայ վիմագրութեան», պրակ V, Արցախ, կազմեց՝ Ս. Բարխուդարեան, Երեւան, 1982, էջ 193, առձ. 690. Հասրաթեան Մ. Ս., նշում աշխ., էջ 236. Կարապետեան Ս., Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ատրպէյնանին բռնակցուած շրջաններում, Երեւան, 1999, էջ 149. Յակոբեան Ալ., նշում աշխ., էջ 206:

⁶⁶ Յակոբեան Ալ., նշում աշխ., էջ 37:

⁶⁷ Նոյն տեղում:

⁶⁸ Հասրաթեան Մ. Ս., նշում աշխ., էջ 164. Յակոբեան Ալ., նշում աշխ., էջ 376, ծմբ. 97:

⁶⁹ Մատենադարանի պարսկերէն վաւերագրեր. I, Հրովարտակներ, պրակ երկրորդ, էջ 99-100, վաւ. 15:

⁷⁰ Թերեւս պիտի լինի ԻԸ. (28)՝ նկատառելով նաեւ այն, որ Մորուս Հասրաթեանը մելիք Հայկազի մահուան թուական է նշում 1623-ը, հետեւաբար՝ 1651-28=1623:

⁷¹ Հասրաթեան Մ. Ս., նշում աշխ., էջ 164. Յակոբեան Ալ., նշում աշխ., էջ 388, ծմբ. 121:

կան է նշում Հայոց Ռէ., այսինքն՝ 1621 թուականը.

*«Չորս կարգէս քրիստոնէից
Ըսք միոյ-միոյ ընկրեցան՝
Իշխանն ընդ վարդապետին,
Հայրապետն և առանձնականն:
Ի հագար և եօթանասնին
Յաւելեալ հայոց թուականն (1621)
Եղև կապարումն սոցա,
Որք ի մէնջ առ Տէր փոխեցան»⁷²:*

Մաղաքիա Արք. Օրմանեանի դիպուկ բնորոշմամբ՝ հայրապետը Սարգիսն է, առանձնականը՝ Տէր Կիրակոսը, իշխանը՝ Հայկազ Հախնազարեանը, իսկ վարդապետը՝ Պօղոս Մոկացին⁷³: Չնայած սրան, Մորուս Հասրաթեանը մեկիւք Հայկազի իշխանութեան տեւողութիւնը նշում է 72 տարի, այսինքն՝ 1551-1623 թթ.՝ յաւելելով, որ խնածախի գերեզմանոցում գտնուող նրա համեստ ու անարձանագիր տապանաքարն աչքի է ընկել յարգարանքում հանդիպակաց օձաքանդակներով, որոնք էլ պահպանել են «առիւծ ննջեցեալին»⁷⁴:

Եր. Լալայեանի գրառած մի աւանդութեան համաձայն՝ դեռեւս մեկիւք Հայկազի կենդանութեան օրօք իր որդիներից մէկը (անունը չի նշում) մեկիւքութիւնը հօրից խլելու փորձ է արել եւ շահի մօտ գնալով՝ մահմեդականութիւն է ընդունել, կրել Ալահ-վերդի անունն ու զօրքով եկել հօր դէմ, սակայն հայրն արդէն վախճանուած է եղել: Յետագայում նա մի մզկիթ է կառուցել ու սկսել մեկիւքութիւն անել, սակայն անժառանգ է մնացել ու սրանով Քաշաթաղ-խնածախի մեկիւքութեանը վերջ է դրուել⁷⁵:

Եզրակացութիւն

Ամփոփելով վերոշարադրածը՝ արձանագրենք, որ Հալիձորի Հարանց անապատի եկեղեցուն հիւսիսից կից շինութեան արեւմտեան մուտքի ճակատակալ քարի նորայայտ երկտող վիմագրում յիշատակուած է Քաշաթաղ-խնածախի մեկիւք Հայկազ Բ.-ն, որի նախաձեռնութեամբ 1611 թ. կառուցուել է համալիրի Սբ. Յովհաննէս եկեղեցին՝ իր եւ մօր՝ Սարաւի յիշատակին: Ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս հաւանական համարել, որ վիմագրում եկեղեցի կոչուած կառոյցը, ըստ իր անուան, տեղի, ունեցած զոյգ մուտքերի եւ այլ յատկանիշների, ամենայն հաւանականութեամբ, մատուռ-մկրտարան է եղել:

Միջնադարեան մկրտարանների վերաբերեալ մեզ հասած սուղ տեղեկութիւնները փաստում են, որ սրանք հիմնականում եկեղեցիներին կից կառոյցներ են եղել, կամ աւազանը պարզապէս կանգնեցուել է եկեղեցու հիւսիսային աւանդատանը, որը, սովորաբար, արտաքին մուտք է ունեցել: Անկախ շինութեան իրական գործառութային նշանակութիւնից, ի դէմս նորայայտ վիմագրի, մեկիւք Հայկազ Բ.-ի շինարարական աշխատանքների թիւն աւելացաւ եւս մէկով: Այն վերահաստատում է Սիւնեաց անապատի հիմնադիր չորս առաքինի այրերին ձօնուած Ներսէս Մոկացու ներբողեանը, որտեղ ցայտուն են հայրենասիրութիւնը մարմնաւորող կերպարի՝ մեկիւք Հայկազի աւանդն ու անմնացորդ նուիրումը՝ ի շահ մեր քրիստոնէական ակունքների:

⁷² Ներսէս Մոկացի, Բանաստեղծութիւններ, էջ 61-62:

⁷³ Օրմանեան Արք. Մաղաքիա, Ազգապատում, հ. Բ., սիւն 2735-2736:

⁷⁴ Հասրաթեան Մ. Ս., նշում աշխ., էջ 165:

⁷⁵ Լալայեան Եր., Զանգեզուր. Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, «Ազգագրական հանդէս», գիրք Դ., 1898, Հ. 2, էջ 14. հմմտ. Ալ. Յակոբեան, նշում աշխ., էջ 380, ծմբ. 104:

Լուսանկարներ

Նկ. 2. Հարանց անապատի ընդհանուր տեսքը հարաւից (լսնկ.՝ հեղինակի, 2020 թ.)



Նկ. 3. Կիսաւեր փոքր գաւթի հիւսիսային կամարակալ մուտքը (լսնկ.՝ հեղինակի, 2020 թ.)



Նկ. 4. Ենթադրեալ մատուտ-մկրտարանի՝ գաւթի հետ հաղորդակցուող մուտքը (լսնկ.՝ հեղինակի, 2020 թ.)



Նկ. 5. Մելիք Հայկազ Բ.-ի արձանագրութիւնը կառոյցի մուտքի ճակատակալ քարին (լսնկ.՝ հեղինակի, 2020 թ.)



Նկ. 6. Մատուտ-մկրտարանի կենտրոնում գտնուող քուացեալ տապանը (լսնկ.՝ հեղինակի, 2020 թ.)



Նկ. 7, 8. Մատուտ-մկրտարանի արեւմտեան եւ հարաւային մուտքերը՝ ներքուստ (լսնկ.՝ հեղինակի, 2020 թ.)





Նկ. 9. Մխիթար Այրիվանեցու
փարայրի մկրտության ավազանը
(լսնկ.՝ Էդգար Սրկ. Օհանեանի,
2019 թ.)



Նկ. 10. Սբ. Պողոս-Պետրոս մատուռ-տապանատունը հարա-
արեւմուտքից (լսնկ.՝ հեղինակի, 2019 թ.)



Նկ. 11. Տանձափարախի անա-
պատի եկեղեցու մկրտության
ավազանը (լսնկ.՝ Արման Նալ-
բանդեանի, 2012 թ.)



Նկ. 12. Շինուհայրի Կուսանաց
անապատի եկեղեցու մկրտության
ավազանը (լսնկ.՝ Սողոմոն
Մաթևոսեանի, 2014 թ.)



Նկ. 13. Սբ. Պողոս-Պետրոս մատուռ-
տապանատան մկրտության ավազանը
(լսնկ.՝ հեղինակի, 2019 թ.)

ԱՐՍԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության
ինստիտուտ, Մաշտոցեան Մատենադարան

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԱՅԼԵԿԱՅԼՔ****ԻՍՐԱՅԷԼԻ ՄԷՋ ՌՈՒՄԻՈՅ ԴԵՍՊԱՆ՝
ՏԻԱՐ ԱՆԱՏՈԼԻ ՎԻՔԹՈՐՈՎ ԱՅՅԵԼԵՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ**

4 Յունուար, 2021-ին, Իսրայելի մէջ Ռուսիոյ դեսպան՝ Տիար Անատոլի Վիքթորով այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ: Հանդիպման ընթացքին Տիար Վիքթորով Պատրիարք Սրբազանի յանձնեց Ռուսիոյ Նախագահ Տիար Վլատիմիր Փութինի ուղղուած 20 Նոյեմբեր, 2020 թուակիր նամակի պատասխանը, որու մէջ ան նախագահի անունէն երախտագիտութիւն կը յայտնէր Լեռնային Ղարաբաղի խընդրին վերաբերեալ Պատրիարք Սրբազան Հօր՝ նամակին մէջ արտայայտած մտահոգութիւններու համար: Իր նամակին մէջ դեսպանը կը յայտնէր, որ Պատրիարք Սրբազան Հօր խնդրանք-մտահոգութիւնները հաշուի առնուած են եւ յատկապէս կ'ընդգծէր, որ Ռուսիոյ ղեկավարութիւնը յատուկ հսկողութիւն սահմանած է ապահովելու համար փախստականներու անվնաս վերադարձը իրենց բնակարաններ, Լեռնային Ղարաբաղի մէջ գտնուող մշակութային եւ կրօնական յուշարձաններու պաշտպանութիւնը, ինչպէս նաեւ այս շրջանի կարգավիճակի հարցը:

ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՄԷՋ

18 Յունուար, 2021-ին, առաւօտեան ժամը 9:30-ին, ոստիկաններ այցելեցին Պատրիարքարան Պատրիարք Սրբազան Հօր Ս. Ծնունդը շնորհաւորելու եւ դէպի Բեթղեհէմ թափօրին հսկողութիւնն ապահովելու համար: Ժամը 9:45-ին Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը քանի մը ինքնաշարժերու շարանով ճամբայ ելաւ դէպի Բեթղեհէմ: Ծամբու կիսուն Յունաց Ս. Եղիա վանքին առջեւ Պատրիարք Սրբազան Հօրը դիմաւորելու եկած էին Պէյթ-Սահուրի եւ Պէյթ-Ճալայի քաղաքապետները եւ պետական ներկայացուցիչներ: Ապա ինքնաշարժներու թափօրը շարժուեցաւ դէպի Բեթղեհէմ, ուր քաղաքի մուտքին, ինքնաշարժներէն դուրս ելլելով, Պատրիարք Սրբազան Հայրը եւ Միաբանութեան անդամները քալելով յառաջացան մինչեւ հրապարակ՝ դիմաւորուելով Բեթղեհէմի ընդհանուր ոստիկանապետի, քաղաքապետի, կառավարիչի եւ Պաղեստինի Կրօնից եւ զբօսաշրջութեան նախարարներու եւ պաշտօնեաներու կողմէ: Ապա «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ, եւ Տաճարին զանգերու ղողանջին ներքոյ թափօրը բարձրացաւ Ծննդեան Տաճարի Հայկական վանքը, ուր ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Բեթղեհէմի քաղաքապետը, ապա Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորեց եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն:

Յետ միջօրէի ժամը 2-ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»-ով մուտք կատարուեցաւ Ս. Ծննդեան Տաճար եւ Ս. Այր: Ծրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատոյց Հոգեշնորհ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան: Ապա՝ Միաբանութիւնը բարձրացաւ Հայոց Վանք. բակին մէջ կարդացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարանը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»:

19 Յունուար, 2021-ին, կէս գիշերէն առաջ ժամը 10-ին, Գիշերային պաշտամունքէն յետոյ, Միաբանութիւնը իջաւ Ս. Ծննդեան Այր, ուր շարունակուեցաւ «Փառք ի բարձունս»-ի երգեցողութիւնը: Ապա Պատրիարք Սրբազան Հայրը Ծննդեան իր պատգամը տուաւ ներկաներուն, որմէ յետոյ պաշտամունքները շարունակուեցան Տաճարին մէջ: Աւագ սեղանին վրայ պատարագեց Հոգեշնորհ Տ. Տիրան Աբեղայ Յակոբեան: Պատարագին յաջորդեց Զրօրհնեաց արարողութիւնը՝ հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, որ եւ ճաշու ժամերգութենէն ետք պատարագեց Ս. Ծննդեան Այրին մէջ: Պաշտամունքներու աւարտին, առաւօտեան ժամը 6:00-ին, Միաբանութիւնը թափօրով եւ երգեցողութեամբ բարձրացաւ Հայոց վանք, ուր կարդացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարանը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս», ապա Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ:

ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԳԷՊԻ ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏ

24 Յունուար, 2021-ին, յետ սուրբ եւ անմահ պատարագի, Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ՝ միաբան հայրերու եւ ժողանգաւոր սաներու մեկնեցան դէպի Յորդանան գետ, ուր տեղի ունեցաւ ամենամեայ Զրօրհնեաց արարողութիւնը: Յորդանանեան կողմէ գետափ եկած էին Յորդանանահայոց առաջնորդ՝ Տ. Աւետիս Ծ. Վրդ. Իփրաճեան իր գաղութի հաւատացեալներու հետ միասին:

Այս տարի Քորոնա ժահրին ստեղծած դժուարին կացութեան պատճառով Զրօրհնէքի հոգեպարար արարողութեան ներկայ էին փոքրաթիւ հայեր:

ԼԱՏԻՆԱՅ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՅՅԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

30 Յունուար, 2021-ին, Երուսաղէմի Լատինաց նորանշանակ Պատրիարք՝ Ամեն. Տ. Փիերպատիսթա Արքեպիսկոպոս Փիցաբալա կատարեց իր առաջին պաշտօնական այցը Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՅԱԽԱՊԱԿԵԱՅ ՊԱՏԿԵՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ի ՆԱԶԱՐԷԹ

15 Փետրուար, 2021-ին, Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան ընկերակցութեամբ Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեանի եւ Տիար Վիգէն Լէփէճեանի մեկնեց Նազարէթ եւ օրհնեց Աւետման կաթոլիկ եկեղեցւոյ գաւիթին մէջ գետեղուած Աստուածամօր եւ Մանուկ Յիսուսի նուիրուած հայկական յախճապակեայ պատկերը:

Գրիգոր Խանջեանի Աստուածամօր սոյն պատկերը շրջապատուած է հայ ժողովուրդի խորհրդանշական եկեղեցիներով, Ծիծեռնակաբերդով, խաղողով ու նուռերով, իսկ Աստուածամօր գլխավերը պատկերուած է Բիբլիական Արարատ լեռը:

Գծագրիչ՝ Տիար Վիգէն Լէփէճեան:

ԲԵԹՂԵՀԷՄԻ ԶԻՆՈՒՈՐԱՊԵՏԻՆ ԱՅՅԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

2 Մարտ, 2021-ին, Բեթղեհէմի զինուորապետ Տիկին Տալի Ահարոն ընկերակցութեամբ քրիստոնէական բաժնի պատասխանատու՝ տիար Քասիմ Մարայինի, ընդունալով Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հրաւերին՝ այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Նորին Ամենապատուութեան հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Պատրիարքութեանս առնչուող հարցեր:

ՕԾՈՒՄ Ս. ԵՂԻԱ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆՈՐԱՀԱՍՏԱՏ ԽՈՐԱՆԻ Ի ՀԱՅՅԱ

Շաբաթ, 6 Մարտ, 2021-ին, Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան ընկերակցութեամբ՝ Հոգշ. Տ. Կորին Վրդ. Բաղդասարեանի եւ Հոգշ. Տ. Աղան Աբղ. Գոգշեանի մեկնեցան Հայֆայի Սուրբ Եղիա եկեղեցի, ուր ձեռամբ՝ Լուսարարապետ Սրբազան Հօր, օծուեցաւ Ս. Եղիա եկեղեցւոյ նորահաստատ խորանը: Օծումէն անմիջապէս յետոյ նորած խորանին վրայ սուրբ եւ անմահ պատարագ մատուց Ս. Եղիա եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Տիրայր Քհնյ Յովակիմեան: Պատարագի ընթացքին քարոզեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Թող օրհնեալ ըլլայ կամքը Ամենակալ Աստուծոյ որ մեզ արժանացուց այս օրւան, ծառայելու Իրեն եւ սպասարկելու Իր Տան:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԱՍՈՐԻՈՅ Ս. ՄԱՐԿՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Երուսաղէմի մէջ Եպիսկոպոսական եկեղեցին հաստատուած ժամանակ նուազած ու անշքացած էր Ասորւոց եկեղեցին, որ հին դարերու մէջ ծաղկեալ վիճակ մը ունեցած էր իր բազմաթիւ վանքերով եւ ժողովուրդով: Այժմ միակ վանքն է, որ մնացած է Ասորիներուն ձեռքը, Մարկոս Աւետարանիչի Տուն կոչուածը, այն ալ ժամանակին կը գտնուէր Հայոց պահպանութեան ներքեւ, եւ Ս. Յակոբի միաբան վարդապետներէն մէկը կը նստէր հոն եւ կը հոգար եկեղեցիին պէտքերը: Երուսաղէմի մէջ ժողովուրդ անգամ չունէին անոնք բացի միակ ասորի ընտանիքէ մը:

1740-ական թուականներուն Գրիգոր Շղթայակիր Պատրիարք բազմաթիւ նորոգութիւններու կարգին մարդասիրաբար կը հրամայէ նորոգել Ասորիներու Ս. Աստուածածնի անուամբ եկեղեցին, որ խարխլած էր, եւ ըստ աւանդութեան՝ կը գտնուէր Մարկոս Աւետարանիչի տունը: Ապա, երբ իրենց պատրիարքին կողմէ Ապունա Ապտուլ Նուր Եպիսկոպոսը կը հասնի Երուսաղէմ (1841 Օգոստոս 8), Հայերը անոր կը յանձնեն վանքըն ու եկեղեցին, եւ նորոգութիւններու համար Ս. Աթոռին ըրած ծախքերուն փոխարէն ստակ մը անգամ չեն պահանջէր անկէ: Սակայն Ապտուլ Նուր եսասիրութեամբ եւ ամբարտաւանութեամբ լեցուած՝ փոխանակ շնորհապարտ ըլլալու Հայոց՝ եկեղեցին նորոգելու պատրուակով կը ջնջէ բոլոր հայերէն յիշատակարանները, որոնք հայ վարդապետներու տեսչութեան ժամանակ տեղի ունեցած նորոգութիւններուն առթիւ նուիրատուներուն անունները կը կրէին: Կը ջնջէ նաեւ խորանի խաչկալի հայերէն յիշատակարանը:

Քրիստոնէութեան նախկին դարերուն եւ Խաչակիրներու ժամանակ բազմաթիւ եկեղեցիներու հետ կրօնաւորներու հոծ թիւ մըն ալ ունէին Ասորիները, իսկ հիմա անոնց եկեղեցականներուն թիւը երկուքէն կամ երեքէն անդին չանցնիր: Տարին ան-

գամ մը, Բուն Բարեկենդանի նախընթաց Ուրբաթ օրը, Հայերը սուրբ պատարագ կը մատուցանեն Ասորիներու եկեղեցիին մէջ, նոյնը կ'ընեն նաեւ ամէն տարի Ս. Գէորգի տօնին՝ Ղպտիներու եկեղեցիին մէջ:

Այս տարի եւս, համաձայն հնաւանդ սովորութեան, Ուրբաթ, 12 Մարտ, 2021-ին, հանդիսապետութեամբ Հոգեշնորհ Տ. Թէոդորոս Ծ. Վարդապետ Զաքարեանի Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը եւ Ժառանգաւոր սաներ մեկնեցան Ասորոց Ս. Մարկոս եկեղեցի, ուր Սուրբ Պատարագ մատուց Հոգեշնորհ Տ. Աղան Աբեղայ Գոգչեան:

Պատարագէն ետք Միաբանութիւնը պատուեցաւ Ասորի միաբաններու կողմէ՝ իրենց Տեսչարանին մէջ:

ՍԱՐԿԱԻԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնն ու Երուսաղէմի Հայ համայնքը հոգեւոր ցընծութեան օրեր ապրեցան 19-20 Մարտ, 2021-ին:

19 Մարտ, 2021-ին, խաղաղական ժամերգութենէն եւ Սբ. Թէոդորոս Զօրավարի նախատօնակէն ետք, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի ձեռամբ կատարուեցաւ Սարկաւագական կոչման արարողութիւնը՝ Սուրբ Աթոռոյս Ուրարակիրներէն Տրց. Սերգէյ Անտինեանի, Տրց. Դաւիթ Մինասեանի, Տրց. Սերգէյ Գազանչեանի եւ Սբ. Յարութեան Տաճարի ծառայող միաբաններէն Տրց. Մկրտիչ Ստեփանեանի: Ընծայեալները ծնրադիր յառաջացան դասի մուտքէն եւ Ձեռնադրիչ Սրբազան Հօրմէն ստացան Կիսասարկաւագութեան աստիճան: Արարողութեանց խարտաւիլակն էր Հոգշ. Տ. Թէոդորոս Ծ. Վարդապետ Զաքարեան, իսկ առընթերական՝ Հոգշ. Տ. Կորիւն Վարդապետ Բաղդասարեան:

Ձեռնադրութենէն ետք, ընծայեալները կարմիր բազկուրարներ իրենց թեւերուն, մեկնեցան Ս. Յարութեան Տաճար՝ մասնակցելու Տնօրինական Ս. Տեղեաց թափօրին:

20 Մարտ, 2021-ին, Սբ. Թէոդորոս Զօրավարի տօնին, Պատարագի սկիզբն ազդարարող կոչնակի հարուածներու եւ Կոմիտասեան եղանակով «Խորհուրդ խորին» շարականին հետ կը սկսի Պատարագը ու կը շարունակուի մինչեւ Ճաշու գրքին ընթերցումը:

Ընծայեալներ, որոնք մինչ այդ կը հետեւէին արարողութեանց, կը ծնրադրեն ատեան եւ լուռ ու վերացած կ'ունկնդրեն կրկին անգամ երգուող «Ուրախ լեր» շարականը. վիճակ մը՝ որ լաւագոյնս պիտի կրնար բացատրել իրենց նուիրումի ոգիին տարողութիւնը եւ եկեղեցւոյ ուրախութիւնը, մանաւանդ երբ ատիկա իրենցմով կ'ըլլար եւ այդ ուրախութեամբ հետագային իրենք պիտի երջանկանային: Բոլորին ձայներուն մէջ ուրախութեան դող մը կար ու քաղցր սարսուռ մը՝ անոնց հոգիներուն խորը: Որովհետեւ որքան ալ որ ուրախալի է անոնց այդ աստիճան կանխահա հաւանութիւնը, այնքան եւ յուզիչ անոնց խանդը՝ իրենց տակաւին նոր զօրացող ուսերուն վրայ առնելու ծանր բայց քաղցր լուծը Քրիստոսի եւ Ազգին: Որքան ծանր այդ լուծը, նոյնքան եւ փշոտ՝ ճամբան:

Ձեռնադրութենէ առաջ հարկ էր որ ժողովուրդին առջեւ եւս կատարուէր իրենց ուխտը, ի գիտութիւն եւ ի լուր անոնց:

Ահա այդ ուխտը.

«Աստուածային եւ երկնային շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ *զՍերգէյ, զԴաւիթ, զՍերգէյ և զՄկրտիչ* ի կիսասարկա-

լագութենէ ի սարկաւագութիւն, սրբոյ եկեղեցւոյ ի սպասաւորութիւն ըստ վկայութեան անձանց իւրեանց եւ ամենայն ժողովրդեանս»:

Այլեւս պատրաստ են անոնք ձեռնադրութեան:

Հասաւ նաեւ այն պահը, երբ ընծայեալները ստացան ուրար որ այլեւս իրենց համար քաղցր է ու թեթեւ ինչպէս ամէն անոնց, որոնք իտէալի մը կրակը ունին իրենց հոգիներուն խորը:

Ստացան նաեւ բուրվառ, հրաման խնկարկելու Ս. Եկեղեցւոյ մէջ խունկի անոյշ բոյրով լեցնելու տաճարը, ապագային դառնալու մէջ-մէկ ծխացող կնդրուկներ հայ եկեղեցւոյ տաճարէն ներս:

Ձեռնադրութիւնը տակաւին չաւարտած նորընծաներէն՝ Բարեշնորհ Սերգէյ Սարկաւագ Անտինեան, Դաւիթ Սարկաւագ Մինասեան, Սերգէյ Սարկաւագ Գազանջեան եւ Մկրտիչ Սարկաւագ Ստեփանեան կ'առնեն բուրվառը, առաջին իսկ հերթին լաւագոյնս եւ անթերի կերպով կատարելու իրենց նոր յանձնուած պարտականութիւնը:

Ո՞վ կրնայ թարգմանել, ո՞ր գրիչը կրնայ նկարագրել այն զգացումներն ու ապրումները այնպէս ինչպէս անոնք գոյութիւն ունին նորընծաներու սրտին խորը...

Ունինք միայն անբացատրելի խանդ, անպատմելի ուրախութիւն եւ արդար յուզում մը՝ եկած ընծայման արարողութեան սրտառուչ գրաւչութենէն եւ խորհրդածութենէն, որոնք զուտ զգացական եւ ժամանակաւոր ապրումներ ըլլալէ աւելի, հայութեան դարաւոր կեանքին աւիշը հանդիսացած են եւ կը հանդիսանան այսօր ալ: Ու Սուրբ Աթոռը, որ այդ աւիշը տուող հազուագիւտ հաստատութիւններու լաւագոյններէն է, ամէն տարի անպակաս կ'ընէ նման առիթներ:

Այս առիթով, նորընծայ սարկաւագներուն, որոնցմով Սուրբ Աթոռոյս սարկաւագներուն թիւը կը բարձրանայ, շունինք նոր բարեմաղթութիւն, այլ սրտագինս կ'ըսենք.

«Բարեաւ գնացէք ընդ այս ճանապարհ...»:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՏ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ





ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Երեքշաբթի, 5 Յունուար. Սրբոցն՝ Դավթի Մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբայր Առաքելոյն (Տօն Առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի):

Հստ սովորութեան, Առաւօտեան ժամերգութեան ընթացքին Պատրիարք Սրբազան Հայրը, շուրջառ եւ եմփփորոն զգեցած, «Փառք ի բարձունս»-ին բարձրացաւ Տեառնեղբօր Աթոռի պատանդանին, ուր մնաց մինչեւ ժամերգութեան աւարտիլը, եւ ընդունեց Միաբանութեան եւ դպիրներուն շնորհաւորութիւնները:

Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի ընթացքին մասնաւոր բարեմաղթութիւններ ըրաւ Նորին Ամենապատուութեան բարօր կենաց համար:

Օրուան Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: «Հայր Մեր»-էն առաջ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Ս. Աթոռոյս հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտօնին:

Հինգշաբթի, 7 Յունուար. Սրբոյն Ստեփանոսի Նախասարկաւագին եւ Առաջին Մարտիրոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւանդատան մէջ գտնուող Ս. Ստեփանոսի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան: Քորոնա ժահրին պատճառով Սարկաւագաց հանգէս տեղի չունեցաւ:

Շաբաթ, 9 Յունուար. Սրբոց Առաքելոցն՝ Պետրոսի եւ Պօղոսի: Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատրան մէջ Ս. Պատարագը մատոյց Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Երկուշաբթի, 11 Յունուար. Տօն Սրբոց Որդւոց Որոտման՝ Յակոբայ Առաքելոյն եւ Յովհաննու Աւետարանչին: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ օրուան Ս. Պատարագը մատոյց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Հինգշաբթի, 14 Յունուար. Կաղանդ: Տարեմուտ 2021 թուականին Քրիստոսի (Հստ Հին Տոմար

րի): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Նոյն առաւօտեան Ս. Պատարագ մատուցուեցաւ նաեւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց եւ քարոզեց Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 17 Յունուար. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ ի յիշատակ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբան Տ. Մեղրիկ Եպս. Բարիքեանի հոգւոյն ի հանգիստ:

Երկուշաբթի, 18 Յունուար. Ճրագալոյց Ս. Ծննդեան: Առաւօտեան ժամը 9:45-ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը քանի մը ինքնաշարժերու շարանով ճամբայ ելաւ դէպի Բեթղէհէմ: Ճամբու կիսուն Յունաց Ս. Եղիա վանքին առջեւ Պատրիարք Սրբազանը դիմաւորելու եկած էին Պէյթ-Սահուրի եւ Պէյթ-Ճալայի քաղաքապետները եւ պետական ներկայացուցիչները: Քաղաքի մուտքին, ինքնաշարժներէն դուրս ելլելով, Պատրիարք Սրբազանը եւ Միաբանութեան անդամները յառաջացան մինչեւ հրապարակ:

Բեթղէհէմի հրապարակին վրայ դիմաւորուելով քաղաքապետէն եւ պաշտօնեաներէն, «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ թափօրը բարձրացաւ Ծննդեան Տաճարի Հայոց Վանքը:

Յետ միջօրէի ժամը 2-ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»-ով մուտք կատարուեցաւ Սիւնազարդ Գաւիթէն դէպի Ս. Ծննդեան Տաճարի Ս. Այրը: Ճրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատոյց Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան: Ապա Պատրիարք Սրբազանը նախագահեց Ծննդեան նախատօնակին, որմէ յետոյ Միաբանութիւնը զգեստաւորեալ, թափօրով

եւ երգեցողութեամբ Սիւնազարդ գաւիթէն անցնելով բարձրացաւ Հայոց Վանք: Բակին մէջ կարդացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարան եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»:

Երեքշաբթի, 19 Յունուար. Տօն Ծննդեան եւ Աստուածայայտնութեան: Կէս գիշերէն առաջ ժամը 10-ին սկսուած գիշերային պաշտամունքէն յետոյ, Միաբանութիւնը իջաւ Ս. Ծննդեան Այր, ուր շարունակուեցաւ «Փառք ի բարձունս»-ի երգեցողութիւնը: Ապա Պատրիարք Սրբազան Հայրը Ծննդեան իր պատգամը տուաւ ներկաներուն, որմէ յետոյ պաշտամունքները շարունակուեցան Տաճարին մէջ:

Երկրորդ Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատուց Տ. Տիրան Աբղ. Յակոբեան: «Ջրօրհնէք»-ի արարողութեան հանդիսապետեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, որ եւ ճաշու ժամերգութեանէն ետք պատարագեց Ս. Ծննդեան Այրին մէջ: Պաշտամունքներու աւարտին՝ առաւօտեան ժամը 6-ին, Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ:

Երուսաղէմի մէջ Ճրագալոյցի արարողութիւն կատարուեցաւ Ս. Յարութեան Տաճարին մէջ: Ս. Գերեզմանին վրայ պատարագեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան: Ապա Քրիստոսի Ս. Գերեզմանի առջեւ կատարուեցաւ «Ջրօրհնէք»-ի արարողութիւն:

Առաւօտեան Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան: «Ջրօրհնէք»-ի արարողութեան հանդիսապետեց Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան:

Չորեքշաբթի, 20 Յունուար. Բ. օր Ծննդեան: Յիշատակ Մեռելոց: Ըստ ընկալեալ սովորութեան Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ պատարագեց Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան:

Կիրակի, 24 Յունուար. Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հօր նախագահութեամբ՝ միաբան հայրեր, սարկաւազներ եւ ժառանգաւոր սաներ ինքնաշարժերով մեկնեցան Յորդանան գետ, ուր կատարուեցաւ «Ջրօրհնէք» արարողութիւն:

Երկուշաբթի, 25 Յունուար. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Երեքշաբթի, 26 Յունուար. Տօն Անուանակո-

չութեան Տեառն: Առաւօտեան միաբան հայրեր Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց Տ. Պարեո ծ. Վրդ. Երէցեան:

Դէպի վանք դարձին, Հայոց Թաղի մուտքէն Միաբանութիւնը «Լոյս ի Լուսոյ» շարականի երգեցողութեամբ շարժուեցաւ դէպի վարդապետաց սեղանատուն, ուր Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ կատարուեցաւ «Տնօրհնէք»-ի արարողութիւն, եւ տեղի ունեցաւ Միաբանական ճաշ՝ աւանդական «հարիսալով»:

Կիրակի, 31 Յունուար. Ա. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամաստան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Կիրակի, 7 Փետրուար. Բ. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան:

Շաբաթ, 13 Փետրուար. Սրբոյն Գրիգորի Աստուածաբանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Ներսէս Աբղ. Ալոյեան:

Կիրակի, 14 Փետրուար. Գ. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամաստան մէջ: Հանդիսապետն էր Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեան: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Շաբաթ, 20 Փետրուար. Սրբոյն՝ որդւոց եւ թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Կիրակի, 21 Փետրուար. Դ. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Ուրբաթ, 26 Փետրուար. Կէսօրէ ետք, Տեառն-ընդառաջի մեծահանդէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, որմէ ետք կատարուեցաւ «Անդաստան» եւ մոմավառութիւն, նախագահութեամբ՝ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ կատար-

ւեցաւ «Եկեցե՛ք»-ի հսկման կարգը: Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 27 Փետրուար. Տեառնընդառաջ: Տօն Քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի ի Տաճարն: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան:

Կիրակի, 28 Փետրուար. Ե. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Տիրան Արք. Յակոբեան:

Երեկոյեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Երկուշաբթի, 1 Մարտ. Սրբոյն Սարգսի Զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ չորեքտասան զինաւորացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգսի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան: Ըստ սովորութեան կատարուեցաւ Հոգեհանգրստեան պաշտօն հանգուցեալ ազգային բարերարներու՝ Գալուստ եւ Սարգիս Կիւլպէնկեաններու եւ համայն Կիւլպէնկեան գերդաստանի ննջեցեալներուն համար:

Շաբաթ, 6 Մարտ. Սրբոյն Իսահակայ Պարթեւ Հայրապետին մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 7 Մարտ. Զ. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Վազգէն Արք. Ալէքեան:

Զորեքշաբթի, 10 Մարտ. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Հինգշաբթի, 11 Մարտ. Ս. Վարդանանց Զօրավարացն մերոց (1036 Վկայիցն): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ ըստ սովորութեան պատարագեց եւ քարոզեց Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսուչ՝ Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան: «Հայր Մեր»-էն յետոյ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն վասն ննջեցելոց ազգիս հայոց նախագահութեամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր:

Ուրբաթ, 12 Մարտ. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Մարկոս Աւետարանչի եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքար-

եան: Ժամարարն էր Տ. Աղան Արք. Գոգչեան:

Շաբաթ, 13 Մարտ. Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն Հարիւր Յիսուն Հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ Աբրահամեան:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարի Աւագ Խորանը, սեղանները եւ գլխաւոր սրբապատկերները, «Համբարձի» շարականը երգուած ժամանակ վարագուրուեցան Լուսարարապետ Սրբազան Հօր եւ Հոգեշնորհ Հայրերու ձեռքով:

Կիրակի, 14 Մարտ. Ա. Քառասնորդաց: Բուն Բարեկենդան: Փակեալ Խորանի Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեան: Դպրապետի պաշտօնը վարեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Ուրբաթ, 19 Մարտ. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 20 Մարտ. Սրբոյն Թէոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան:

Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը, ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութիւն Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Կիրակի, 21 Մարտ. Բ. Քառասնորդաց. Արտաքսման: Առաւօտեան ժամը 6-ին միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ մեր վերնամատրան մէջ եւ ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ եռագարձ մեծահանդէս Թափօր Քրիստոսի Գերեզմանին եւ մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Շաբաթ, 27 Մարտ. Սրբոյն Կիրիլի Երուսաղէմայ հայրապետին եւ միւս Կիրիլի եպիսկոպոսին եւ մօրն նորա Աննայի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան մէջ գտնուող Ս. Կիրիլի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան: Ս. Պատարագէն ետք, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբ-

բազան Հօր կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ, վասն հոգւոցն Սուլթանի, Կարինէի, եւ ծնողացն Կարապետի եւ Մարիի եւ Կիւրեղեան գերդաստանի հոգիներուն ի հանգիստ:

Կիրակի, 28 Մարտ.- Գ. Քառասնորդաց. Անառակին: Ժամերգութիւնները եւ Ս. Պատարագը մա-

տուցուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարան էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Պատրաստեց՝ ՏՐՅ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Իմ մեղքերս կարելի է տասը մատներու վրայ հաշուել, սակայն մարդկութեան բոլոր մատները միասին առած՝ պիտի չբաւէին մեղքերդ համբելու:

Հաճոյքը կրնայ ցնորքներու վրայ հաստատուիլ, սակայն երջանկութիւնը անկասկած կը հանգչի ճշմարտութեան վրայ:

Թերեւս ամէն ճշմարտութիւն յարմար չէ ըսել, սակայն միշտ լաւ է զայն լսել:

Իրա՛ւ գեղեցկութիւնը Աստուծո՛մէ կու գայ եւ Անոր կը դառնայ:

Խաչը ապրուած Աւետարանն է, եւ Աւետարանը՝ քարոզուած խաչը:

Երջանկութիւնը նման է թաւալող գնդակին որուն ետեւէն կը վազենք, սակայն երբ կանգ առնէ՝ ոտքի հարուածով դարձեալ կը հեռուացնենք զայն:

Աստուածաբանութիւնը՝ Աստուծոյ խորհուրդն է դէպի մարդը խոնարհած, իսկ իմաստասիրութիւնը՝ մարդուն խորհուրդն է առ Աստուած բարձրացած:

Մարդ երջանիկ կ'ըլլայ միայն ուրիշները երջանկացնելով:

Սէրն է տիեզերքի ճարտարապետը:

Երբ բարի մարդ մը տեսնես, խորհէ՛ անոր նմանիլ, իսկ երբ տեսնես չար մարդ մը, դուն քու սիրտդ քննէ:

Զօրաւոր է ան, որ կրնայ յաղթել ինքզինքին:

Գոհ կը մնանք կեանքէն միայն՝ եթէ զայն լաւ օգտագործենք:

ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական հանդէսը հիմնուած է 1866-ին, պաշտօնաթերթն է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ լոյս կ'ընծայուի Սրբոց Յակոբեանց Տպարանէն:

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական նիւթերէ զատ, կ'ընդգրկէ նաեւ պատմական, եկեղեցական, լեզուական եւ հայ արուեստի վերաբերեալ ուսումնասիրութիւններ եւ այլ բնոյթով նիւթեր:

Յօդուածները կ'ընդունուին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով, նախընտրաբար 10-15 համակարգչային շարուածքով լման էջ՝ Word միջավայրին մէջ (Word 2007-2019), երկու կողմերէն հաւասարեցուած, առանց տողադարձերու, ծաւալը՝ A4 ֆորմատի, տառատեսակը՝ Arian Grqi, տառաչափը՝ 12 pt, տողերու հեռաւորութիւնը՝ 1.15 pt: Յղումներու տառատեսակը եւս պէտք է ըլլայ՝ Arian Grqi, տառաչափը՝ 10 pt: Հայերէն յօդուածները «Սիոն»-ի մէջ կը հրատարակուին դասական հայերէն ուղղագրութեամբ: «Սիոն»-ին յանձնուած յօդուածները պէտք է ըլլան անտիպ:

Մեր սրտագին բաղձանքն է որ «Սիոն» մուտք գործէ բոլոր հայ տուններէ ներս. Վստահ ենք թէ ամէն ընթերցող պիտի գտնէ անոր էջերուն մէջ գրութիւններ՝ որոնք համապատասխան ըլլան իր ճաշակին եւ նախասիրութեան:

Յօդուածներ եւ այլ թղթակցութիւններ, ուսումնասիրութիւններ պէտք է ուղարկուին «Սիոն»-ի հետեւեալ հասցէով.

E-mail: sionjournal@yahoo.com





Տօն Առաքելական Սուրբ Աթոռոյս Երուսաղէմի
Ամեն. Պատրիարք Սրբազան կեցած Յակոբոս Տեառնեղբօր գոհին դիմաց



Տօն Առաքելական Սուրբ Աթոռոյս Երուսաղէմի
Պատարագիչ՝ Լուսարարպետ Տ. Սեան Արք. Դարիպեան



Տօն Որդւոցն Որոտման
Պատարագիչ՝ Տ. Սամուէլ Ծ. Վարդապետ Աղոյեան



Զրօրհնէք ի Բերդեհնէմ



Սուրբ Ծնունդի Բերդենիմ



Տօն Անուանակոչութեան
Թափօրով վերադարձ դէպի Մայրավանք



Օծում Հայֆայի Ս. Եղիա եկեղեցոյ նորահաստատ խորանի,
ձեռամբ Լուսարարապետ Սրբազան Հօր



Լատինաց նորանշանակ Պատրիարհ Ամեն. Տ. Փիերպարիստա Արք. Պիցարալլա կատարեց իր
ատաշին պաշտօնական այցը Հայոց Պատրիարհարան



Կիսասարկաւագական աստիճանի տըշուրին



Սարկաւագական Ձեռնադրութիւն Տրց. Սերգէյ Անտինեանի,
Տրց. Դաւիթ Մինասեանի, Տրց. Սերգէյ Գազանչեանի եւ Տրց. Մկրտիչ Ստեփանեանի

«ՍԻՈՆ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՍԻՈՆ»-ի խմբագրությունը կը փորձէ ամբողջացնել եւ արդիականացնել բաժանորդներու ցանկը: Բաժանորդագրուեցէ՛ք Նոր շրջանի «ՍԻՈՆ»-ին, զոր կրնաք ստանալ նամակատան միջոցաւ եւ կամ այցելելով մեր կայքէջը:

Հաճեցէ՛ք ներքեւի կտրոնը յստակ եւ զլիազիր տառերով ամբողջացնել եւ փութով մեր
E-mail: sionjournal@yahoo.com հասցէին ղրկել:

ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԻՈՆԻ

Անուն, Մականուն. _____

Տիտղոս. _____

Կազմակերպութիւն. _____

Հասցէ. _____

Կայքէջ. _____ E-mail address _____

Տարեկան բաժանորդագրութիւն՝ \$150 USD

NOTICE TO SUBSCRIBERS

The Armenian Patriarchate of Jerusalem is driving up a new updated list to its official periodical SION. To ensure that your name is on the list, you are kindly requested to fill in the form below and send it back to us, with your remittance as soon as possible. You can also write to our E-mail: sionjournal@yahoo.com.

Name, Surname. _____

Title. _____

Organization. _____

Address. _____

Annual Subscribtion \$ 150 USD

Send your checks to: Armenian Patriarchate of Jerusalem P.O.Box 14235 Jerusalem, Israel

Tel: +972 (0)2-6282331

Fax: +972 (0)2-6264861

E-mail: sionjournal@yahoo.com

